

Երևանի պետական համալսարան

Հովհաննիսյան Վիոլետա Վիկտորի

«Բնական մարդը» Դեյվիդ Հերբերտ Լոուրենսի փոքր արձակում

Ատենախոսություն

Ժ. 01.07 «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ

բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար

Գիտական ղեկավար՝

բ.գ.դ., պրոֆեսոր Տիգրան Սիմյան

Երևան-2017

Բովանդակություն

Ներածություն	3
Գլուխ 1. Դ.Հ. Լոուրենսի «արյան գիտակցության» տեսության դրսնորումը հեղինակի գեղարվեստական համակարգում	14
Գլուխ 2. Անհատական և հասարակական գիտակցության խնդիրը Դ.Հ. Լոուրենսի 1925-30թթ. պատմվածքներում	54
Գլուխ 3. Մարդու և տիեզերքի կապի արտացոլումը Դ.Հ. Լոուրենսի պատմվածքներում եվ էսսեներում	103
Եզրակացություններ	146
Գրականության ցանկ	151

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն ատենախոսությունը նվիրված է 20-րդ դարասկզբի անգլիացի գրող Դ.Լ. Լոուրենսի արձակի ուսումնասիրությանը, մասնավորապես՝ արձակում «բնական մարդու» բացահայտմանը: Որպեսզի կարողանանք ավելի լավ հասկանալ Դ.Լ. Լոուրենսի արձակի առանձնահատկությունները, նրա պատկերացումները «բնական մարդու» և առհասարակ կյանքի վերաբերյալ, անհրաժեշտ է ուսումնասիրել այն ժամանակաշրջանը, որում ստեղծագործել է գրողը: Բացի այդ՝ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել քաղաքական, սոցիալ-տնտեսական այն իրադարձություններին, որոնք մեծապես ազդել են այդ ժամանակաշրջանի գրողների մտածելակերպի, ինչպես նաև գործունեության վրա՝ հետագայում արտացոլվելով նրանց ստեղծագործություններում:

19-20-րդ դդ. գրականությանը բնորոշ է զարգացման բարդ գործընթացը, որում արտացոլում են հետզհետե սրվող և վատթարացող սոցիալական և դասակարգային հակասությունները: 1914-1918 թթ. պատերազմը մեծ ազդեցություն է գործում անգլիացի գրողների գիտակցության վրա: Նոր պատմական իրադարձությունները փոխում են գրականության բովանդակությունը, բացում գործունեության նոր ասպարեզներ, ի հայտ են գալիս նոր դրամատիկ բախումներ: Սկսվում է նոր ժանրերի և ոճական կաղապարների հետազոտման և բացահայտման ինտենսիվ գործընթաց: Մարդկությունը մուտք է գործում սոցիալական և գիտատեխնոլոգիական հեղափոխությունների դար: Արյան և չարչարանքների մեջ ծնվում է նոր աշխարհի, նոր մարդ, նոր գիտակցություն: Հին աշխարհը կործանվում, ոչնչանում էր՝ իր ավերակների մեջ թողնելով նախկին համոզմունքները, իդեալները, կանոնները:

Համաշխարհային պատերազմով պայմանավորված ցնցումն իր ազդեցությունն է ունենում այնպիսի գրողների աշխարհընկալման վրա, ինչպիսիք են Լոուրենսը, Զոյսը, Վոլֆը, Էլիոթը և ուրիշներ, որոնք մտել էին գրական աշխարհ 1914-1915 թթ. կամ հետագա տարիներին: Պատերազմը և հետպատերազմյան իրավիճակը նրանց աշխարհընկալման մեջ այնպիսի տպավորություն է առաջացնում, որ քաղաքակրթությունը

ճգնաժամ է ապրում և այնպիսի կանխազգացում, որ մարդկությունը կործանվում է¹: Որոշ գրողների համար, որոնք այդ ժամանակ դեռ սակավաթիվ էին, ողջ աշխարհում տեղի ունեցող հեղափոխական զարգացումները նոր հեռանկարներ են բացում: Ոմանք ձգտում են ակտիվորեն հակազդել հեղափոխության ոգուն և դրա ազդեցությանը, մյուսները պատրանքային ուղիներ են փնտրում ավելի բարդ խնդիրներից խուսափելու համար, որոնք առաջացել էին պատմական փոփոխվող իրավիճակի հետևանքով: Հատկանշական է, որ հատկապես այս շրջանում է առաջանում «խքեյպիզմ» (անգլ. escape (փախուստ) եզրույթը, որը նշանակում է հեռանալ արտաքին աշխարհից դեպի մասնավոր և ինտիմ ապրումների աշխարհ: Հետպատերազմյան շրջանի գրողների ստեղծագործություններում «խքեյպիզմը» տարբեր ձևերով էր դրսնորվում՝ հանգեցնելով ստեղծագործական մի շարք արդյունքների²:

Գրողների մեծ մասը սկսում է զգալ, թե ինչպես են կյանքի մասին հին պատկերացումներն ու արժեքները կործանվում: Այդ ամենը սկսում են գիտակցել նաև այն գրողները, որոնք վճռականորեն մերժում էին հասարակության հեղափոխական վերափոխման ցանկացած հեռանկար (օրինակ՝ Թ. Ս. Էլիոթը): Այս իրավիճակն էլ բնորոշում է գրողների ստեղծագործությունների բնույթը, ստեղծագործողներ, որոնց դեռևս իրենց ժամանակակիցներն անվանել էին «կորուայլ սերնդի» գրողներ: «Կորուայլ սերնդի» գրողները հակված էին մտածելու, որ պատերազմի պատճառը տեխնիկայի գերզարգացածությունն է: Պատերազմի մյուս պատճառը նրանք համարում էին մարդու էռության այլասերումը: Ահա սա է ինդուատրացման և «մեքենայական» դարի նկատմամբ ունեցած նրանց ատելության պատճառը: Հենց այս գաղափարներն էին, որ արտահայտվում էին իրենց ստեղծագործություններում՝ նրանց մոտեցնելով մոդեռնիզմին³:

«Կորուայլ սերնդի» գրողները մասնավոր աշխարհը անվանում էին «private worldism», այսինքն՝ սեփական, ինտիմ աշխարհ: Հենց այս ժամանակաշրջանում է, որ

¹ Barlow A., The Great War in British Literature, Cambridge: Cambridge University Press, 2000, p. 13.

² Heilman R., The State of Letters, Escape and Escapism, Varieties of Literary Experience, Baltimore, Maryland: John Hopkins University Press, 1975 Vol. 83, p. 439.

³ Wohl R., The Generation of 1914, Cambridge, MA: Harvard University Press, 1980, p. 5.

Անգլիայում սկսում են մեծ ճանաչում ձեռք բերել Ֆրոյդի ուսումնասիրությունները, որոնք ամբողջովին բացահայտում էին մարդու գործունեության և արարքների բնույթը՝ ներառյալ նրա սոցիալական գործունեությունը, որ դրսևորվում են Ենթագիտակցական մակարդակում գտնվող կենսաբանական (մասնավորապես՝ սեքսուալ) բնագիներով։ Մի շարք անգլիացի գրողներ, որոնք կողմ էին «մասնավոր աշխարհում» առանձնանալուն, գրում էին իրենց ստեղծագործությունները՝ հենվելով Ֆրոյդի ուսումնասիրությունների վրա, և նրանց գրքերը, որոնք նվիրված էին առանձին մարդկանց հոգեբանությանը և ներաշխարհին՝ հիմնականում ոչ նորմալ և անհավասարակշիռ մարդկանց, վերածվում էին ինքնատիպ հոգեվերլուծության։ Եվ պատահական չէ, որ այս գրականությունը ստեղծվում էր ոչ բոլորի համար և ուղղված էր ոչ բոլորին⁴։

Երկու համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակահատվածը գրականության մեծ ուժերի հստակ առանձնացման ժամանակահատված է։ 20-րդ դարի 20-30-ական թվականների անգլիական գրականության հիմնական ուղղություններն էին ռեալիզմը և մոդեռնիզմը⁵։

20-ական թվականներին անգլիացի բոլոր գրողները նոր ուղիներ, գեղարվեստական արտահայտության նոր ձևեր էին փնտրում։ Եթե 19-րդ դարի 90-ական թվականներին հայտնի ռեալիզմի լավագույն ներկայացուցիչները (Գոլսուրսի, Շոու, Վելլս) դիմադրում են, ապա մյուաները (Հաքսլին և Լոուրենսը), որոնք հանդես էին գալիս ռեալիստական ավանդույթի ճյուղում, 20-ական թվականների սկզբին իրենց գաղափարական էվոլյուցիայի ընթացքում աստիճանաբար սկսում են խզել կապը դրա հետ, որն էլ մեծ ազդեցություն է թողնում իրենց ստեղծագործությունների վրա։ Ազդարարվում է մոդեռնիզմի սկիզբը։ Հենց այս փուլում է սկսում գրական գործունեություն ծավալել թ. Էլիոթը։ Անգլիական գրականության զարգացման հենց այս փուլում է, որ սկսում է հանդես գալ, այսպես կոչված, հոգեբանական դպրոցը, որը «ղեկավարում» էր Վ.

⁴ Morley C., Modern American Literature, Edinburgh, UK: Edinburgh University Press, 2012, p. 4.

⁵ Knoper R., Selected Works: Literature for Social Change: From Realism to Modernism, Amherst: University of Massachusetts Press, 2008, p. 414.

Վուլֆը: Ստեղծվում է Զոյսի «Ովիսեսը»⁶: «Գիտակցության հոսք» կոչվող գրական մեթոդը այլևս դառնում է մոդեռնիստական ստեղծագործության անբաժանելի մասը:

Երիտասարդ գրող-նորարարները (Զ. Զոյս, Վ. Վուլֆ, Դ. Լոուրենս), որոնց մոդեռնիստ էին անվանում, քննադատության էին ենթարկվում այն գրողների կողմից, որոնք 19-րդ դարի գրական ավանդույթի իրավահաջորդներն էին (Զ. Գոլսուրսի, Ա. Բենետ, Գ. Վելլս): Վերջիններս քննադատում էին նրանց ստեղծագործությունները քառսայնության, կյանքի և հասարակության նկատմամբ պատասխանատվությունից խուսափելու համար: Առաջիններն իրենց հերթին քննադատում էին մրցակիցներին կյանքը պատճենելու համար, որը, իրենց կարծիքով, զրկում էր ստեղծագործությունները կենդանությունից⁷: Նոր ուղղության ներկայացուցիչներից մեկը՝ Վիրջինիա Վուլֆը, մեղադրում էր «հակառակ ճամբարի» ներկայացուցիչներին նյութապաշտության մեջ՝ հերոսների նյութականի նկատմամբ չափից շատ հետաքրքրություն դրսնորելու մեջ⁸:

Բերգսոնի փիլիսոփայությունը, որը պնդում էր իրականության ռացիոնալ ճանաչողական անհնարինությունը՝ նախապատվությունը տալով բանականության նկատմամբ ինտուիցիայի գերակայությանը, ճանապարհ էր բացում դեպի միստիկա: Ֆրոյդի տեսությունը ամբողջովին բացատրում էր մարդկանց բարդ սոցիալական կյանքը՝ անգիտակցականի մակարդակում տեղակայված, սակայն մարդու հոգեբանության վրա ակտիվորեն ազդող բնազդների դրսնորմամբ⁹:

«Մոդեռնիզմ» եզրույթը սովորաբար կիրառվում է այնպիսի գրողների վերաբերյալ, ինչպիսիք են Է. Փառնդը, Շ. Էլիոթը, Զ. Զոյսը, Վ. Լյուիսը և Վ. Վուլֆը¹⁰: Ավելին, այս գրողները օժտված էին տարբեր գաղափարներով, որոնք նույնիսկ հակասում էին միմյանց: Սակայն կային մշակութային և գեղարվեստական մի շարք հստակ

⁶ Collinson D., Fifty Major Philosophers, London, UK: Croom Helm Ltd., 1988, p. 132.

⁷ Woolf V., Modern Fiction (Edited by McNeille Andrew), Vol. 4, London: Hogart: 1984, p.158.

⁸ Woolf V., Mr Bennet and Ms Brown, Collected Essays (Edited by Leonard Woolf), Vol. 1, London: Hogarth, 1966, pp. 319-337.

⁹ Collinson D., Fifty Major Philosophers, London, UK: Croom Helm Ltd., 1988, p. 131.

¹⁰ Black M., Lawrence and Modernism in the Cambridge Companion to D.H. Lawrence (Edited by Anne Farnough), Cambridge: Cambridge University Press, 2001, p. 179.

մտահոգություններ, որոնք կիսում էին նշյալ գրողները, նրանց թվում նաև՝ Լոուրենսը¹¹: Վերոնշյալ գրողների ընկալմամբ՝ նրա դերը մոդեռնիզմում առանցքային չէր, և նրանք գրեթե թշնամաբար էին վերաբերվում գրողին, սակայն հետագայում Լոուրենսը ամրապնդեց իր տեղը նրանց շարքերում¹²: Լոուրենսը սկզբնական շրջանում հրաշալի հարաբերություններ է ունենում Էզրա Փաունդի հետ: Սակայն նրանց ընկերությունը երկար չի տևում, և շուտով երկուսն էլ փոխադարձ հակակրանք են տածում միմյանց նկատմամբ: Չնայած Փաունդը Լոուրենսին նկարագրում էր որպես գարշելի մարդու, սակայն նա շարունակում էր գիտակցել, որ Լոուրենսը իր ստեղծագործություններում ժամանակակից խնդիրներին անդրադարձել է իրենից առաջ. մեծագույն հաճոյախոսություն, որ Փաունդը կարող էր անել ինչ-որ մեկին¹³: Սա կարևոր փաստ է: Լոուրենսի նկատմամբ վերոնշյալ գրողների անսահման կուրությունն ու թշնամությունը պայմանավորված էր այն բանով, որ վերջինս ամբողջությամբ ժխտում էր նրանց պատկերացումները այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են արվեստը, զգացմունքը, մարդու էությունը:

Անգլիայում պատերազմի ավարտից անմիջապես հետո Դ.Հ. Լոուրենսը մեծ ճանաչում է ձեռք բերում գրական-մտավորական աշխարհում: Նա արդեն իսկ սկսել էր ստեղծագործել պատերազմից երեք տարի առաջ: Անգլիացի գրողն այդ «աշխարհում» ուշադրություն է գրավում՝ բարձրածայնելով մարդու էության, նրա ցանկությունների մասին: Եվ եթե «կորուայալ սերնդի» համար տեսական հիմք էր ծառայում իդեալիստական փիլիսոփայությունը, և առաջին հերթին՝ Բերգսոնի փիլիսոփայությունը, ապա «մասնավոր աշխարհի» գրողների համար գրական ճանապարհ էին բացում Լոուրենսի ստեղծագործությունները: Նա օրինակ դարձավ 20-րդ դարի գրողներից շատերի համար¹⁴:

¹¹ Bell M., D.H. Lawrence: Language and Being, Cambridge: Cambridge University Press, 1992, p.179.

¹² Seelow D., Radical Modernism and Sexuality: Freud/Reich/D.H. Lawrence and Beyond. New York: Palgrave, 2005, p. 79.

¹³ Pound E., The Letters (Edited by D.D. Paige), New York: Harcourt, Brace and World Publisher, 1950, p. 17.

¹⁴ Bergson H. and British Modernism (Edited by Mary Ann Gillies), Montreal, Quebec: McGill Queen's University Press, 1959, p. 21.

Դ.Հ. Լոուրենսը միանշանակորեն 20-րդ դարի 30-ական թթ. Անգլիայի ամենատաղանդավոր և հայտնի գրողներից է, մինչդեռ այդ ժամանակաշրջանում նրան դասում էին ամենաբարդ և հակասական գրողների շարքին¹⁵: Ա. Բիլը գրում է, որ Լոուրենսի ստեղծագործությունները յուրահատուկ են, սակայն ընթերցողների լայն շրջանակի համար չեն ստեղծված¹⁶:

Լոուրենսն իր վրա մեծ ուշադրություն է գրավում անգլիական «տեխնոլոգիական քաղաքակրթության» նկատմամբ իր բացասական վերաբերմունքով¹⁷: Այդ քաղաքակրթությունից հեռանալու համար նա առաջարկում է մարդկանց հույսը դնել անգիտակցականի վրա, ինչն էլ հիմք է դառնում, որ «կորուսյալ սերնդի» գրողները սկսեն վերաբերվել նրան որպես մարզարեի, ուսուցիչ¹⁸:

Ժամանակակից քաղաքակրթությանը նա հակադրում է զգացմունքների ազատությունը և կիրքը: Նա երազում է մարդկության փրկության մասին և առաջարկում է մարդուն բնական, նախասկզբնական արմատներին վերադառնալու իր ուսուպիստական ծրագիրը¹⁹: Լոուրենսը ձգտում է իր ստեղծագործություններում ցույց տալ, որ մարդու էությունը գեղեցկանում է, երբ սկսում է ապրել ինտուիտիվ: Այս ձգտումով նա տարբերվում է Զոյսից և Վուֆից, քանի որ նրանք չեն հավատում մարդու էության կատարելագործմանը: Լոուրենսը կարևորում է մարդու էությունը, նրա հնարավորությունները և փորձում է ուղիներ գտնել նրա վերածննդի համար: Սակայն իր որոնումներում նա բացառում է մտքի, գիտակցության միջամտությունը և չափազանցնում է մարդու ֆիզիկական գործոնի ազդեցությունը մարդկանց կյանքում: Մարդու էության կատարելագործումը, նրա պատկերացմամբ, հնարավոր է սիրո, կրքի միջոցով:

¹⁵ Wuchina, D., Destinies of Splendor: Sexual Attraction in D.H. Lawrence, New York: Peter Lang, 2009, p. 1.

¹⁶ Beal A., D.H. Lawrence: Selected Literary Criticism, UK: W. Heinemann, 1955, p. 294.

¹⁷ Worthen J., D. H. Lawrence: The Early Years 1885-1912: The Cambridge Biography of D.H. Lawrence Vol. 1, Cambridge: Cambridge University Press, 1992, p. 98.

¹⁸ Reiff R., Brave New World Writers and their Works (Edited by Aldous Huxley), New York, Marshall Cavendish: New York Press, 2009, p. 43.

¹⁹ Worthen J., D.H. Lawrence: The Early Years 1885-1912: The Cambridge Biography of D.H. Lawrence, Vol. 1, Cambridge: Cambridge University Press, 1992, p. 445.

Կենդանության օրոք Լոուրենսի գրական ճակատագիրը ոչ մի կերպ հնարավոր չէ երջանիկ համարել²⁰: Թեպետ և քննադատների կողմից հավանության էին արժանացել նրա առաջին ստեղծագործությունները, սակայն շատ շուտով վերաբերմունքը գրողի նկատմամբ սկսում է փոխվել: Նրանց վրդովեցնում է Լոուրենսի բացասական վերաբերմունքը դեռևս վիկտորիանական ժամանակաշրջանից (1837-1901) իրեն շրջապատող երևույթների նկատմամբ: Գրողը թշնամանքով էր խոսում «տեխնոլոգիական քաղաքակրթության» մասին, որը, նրա կարծիքով, անվերադարձ փոխել էր մարդու էռությունը, դարձել էր անեծք ժամանակակից հասարակության համար, ինչը և դրդեց նրան խզելու կապերը ժամանակակից բուրժուազիական Անգլիայի հետ, որի հետ այլևս հուսեր չէր կապում, քանի որ այն կորցրել էր իր ուժը՝ դիմակայելու համընդհանուր թմրությանը, կեղծիքին: Լոուրենսի նկատմամբ ոչ պակաս ատելությամբ էր լցված բրիտանական պաշտոնական խավը:

Սակայն շուտով բրիտանական իրականությունում արդեն իսկ վերջնականորեն սկսում է ձևավորվել սոցիալական և հոգևոր-ինտելեկտուալ կառուցվածքը, որը պայմանավորված էր երկրորդ համաշխարհային պատերազմից հետո հասարակական զարգացման դինամիկայով, ինչն իր հերթին ստիպում է վերագնահատելու մի շարք հաստատված գրական չափանիշներ, որոնք, թվում էր, երբևէ չեն փոխվի: Այդ ժամանակաշրջանի գրողների՝ Ալան Սիլլիթոյի²¹, Սիդ Չափիլինի²², Ռեյմոնդ Վիլյամսի²³, Մելվին Բրեգի²⁴ ստեղծագործություններում ակնհայտորեն սկսեցին ի հայտ գալ թեմատիկ-ստեղծագործական և մեթոդաբանական Լոուրենսյան ավանդույթները: Նշենք, որ նա թերևս առաջինն էր անգլիական գրականության մեջ ստեղծել 20-րդ դարի հանքափորների և, առհասարակ, աշխատավոր դասի ամբողջական պատկերներ: Նրա

²⁰ Lawrence D., A Composite Biography, Vol. II (Edited by Edward Nehls), The University of Wisconsin Press, 1958, p. 187.

²¹ Graham P., D.H. Lawrence and Allan Sillitoe, From Critique to Critical Despair, British Columbia, Canada, Burnaby: Simon Fraser University Press, 1987, p. 4.

²² Hager A., Encyclopedia of British Writers, 1800 to the Present, Second Edition, New York: Infobase Publishing, 2009, p. 99.

²³ Williams R., The Social Thinking of D.H. Lawrence, New York: Columbia University Press, 1958, p. 66.

²⁴ Stade G., Karbiener K., Encyclopedia of British Writers, 19th Century and the 20th Centuries, New York: Infobase Publishing, 2003, p. 49.

վեպերում և պատմվածքներում գործող անձինք ոչ թե հնարված հերոսներ, այլ ժամանակաշրջանի անգլիական հասարակության իրական մարդիկ էին, որոնք առաջնորդվում էին սեփական կրքերով, դատողություններով:

Հսկայական է Լոուրենսի ստեղծագործական աշխատանքի վերաբերյալ անգլիական և ամերիկյան կեսդարյա գրաքննադատության ժառանգությունը: Ընդհանուր առմամբ, համադրելով և հանրագումարելով արևմտյան քննադատական տարբեր ուղղությունների և դպրոցների ներկայացուցիչների դիտողությունները, կարելի է ասել, որ Լոուրենսը դիտվում է որպես 1910-20-ական թթ. բրիտանական արձակի փորձարարական ճյուղի վառ ներկայացուցիչ, որը Զեյմս Ջոյսի և Վիրջինիա Վուֆի հետ միասին մեծ ազդեցություն է թողել գրականության կարևորագույն ժանրերի՝ վեպերի և պատմվածքների գեղարվեստական և արտահայտչական տեխնիկայի զարգացման վրա:

Սույն ատենախոսությունը գրվել է անգլերեն աղբյուրների, ինչպես նաև հայերեն թարգմանությունների հիման վրա: Արտասահմանյան հեղինակներից Դ.Լ. Լոուրենսին անդրադարձել են Ջ. Ալբոնը²⁵, Ֆ. Բեքեթը²⁶, Հ. Բերգոնը²⁷, Ի. Դելավեյը²⁸, Ֆ. Քարթերը²⁹, Ն. Չամանը³⁰, Ջ. Փեթերսոնը³¹, Ս. Սանդերսը³², Ռ. Ուիյամսը³³ և այլք: Հայ հեղինակներից Դ.Լ. Լոուրենսին անդրադարձել է, որքանով կարողացանք ճշտել, միայն Վահե Արսենյանը: Նա տպագրել է դասախոսությունների նյութեր՝ նվիրված «Լեդի Չաթըրլիի սիրեկանը» վեպին³⁴: Լոուրենսը հայ ընթերցողին է ներկայացել Սոնա Սեֆերյանի («Կնունք», «Հիվանդ հանքափորը», «Դայիլան և պարոն Բիրքմանշոն», «Կնոջ ձիրք», «Գործադուլային նպաստ», «Մի գդալ կուպր մեղրի տակառի մեջ»,

²⁵ Alcorn J., The Nature Novel from Hardy to Lawrence, London: Macmillan, 1977.

²⁶ Becket F., D.H. Lawrence: The Thinker as Poet, London: MacMillan, 1997.

²⁷ Bergson H. and British Modernism, Montreal: McGill Queen's University Press, 1959.

²⁸ Delavenay É., D.H. Lawrence and Edward Carpenter: A Study in Edwardian Transition, New York: Taplinger Publishing Co., 1971.

²⁹ Carter F., D.H. Lawrence and the Body Mystical, New York: Haskell House Publishers Ltd., 1972.

³⁰ Nahal Ch., D.H Lawrence: An Eastern View, New Delhi: Atma Ram & Sons, 1971.

³¹ Paterson J., Lawrence's Vital Source: Nature and Character in Thomas Hardy, Nature and the Victorian Imagination, Berkeley: University of California Press, 1977.

³² Sanders S., D.H. Lawrence, The World of the Major Novels, New York: Viking Press, 1973:

³³ Williams R., The Social Thinking of D. H. Lawrence, New York: Columbia University Press, 1958.

³⁴ Արսենյան Վ., Դեյվիդ Հըրբըրթ Լոուրենսի Լեդի Չաթըրլիի սիրեկանը վեպը, Երևան, ԵՊՀ հրատ., 2016:

«Ոսկեծաղիկների բույրը», «Սպիտակ գուլպան», «Կյանքի երազ»), Սամվել Մկրտչյանի («Կույսն ու գնչուն») պատմվածքների և Արամ Արսենյանի («Լեդի Չաթըրլիի սիրելեկանը») վեպի թարգմանությունների շնորհիվ:

Ատենախոսությունը լուս է սփռում Դ.Հ. Լոուրենսի «արյան գիտակցության» տեսության վրա, ինչի հիման վրա Լոուրենսի պատմվածքներում բացահայտվում են «բնական մարդու» գրողի պատկերացումները՝ միմյանցից հստակ տարանջատելով բնական և հասարակական գիտակցությունները: Եվ քանի որ պատմության տարբեր ժամանակաշրջաններում անհատի դերը, նրա ցանկությունը, կիրքը ճնշվում է հասարակության կողմից, և մարդը կորցնում է իր անհատականությունը, իր Ես-ը, նման թեմաները մշտապես արդիական են, որովհետև բացահայտվում են սեփական Ես-ը ճանաչելու, սեփական ցանկություններին հետևելու մեխանիզմները: Ասվածի վառ օրինակներից է «արյան գիտակցությամբ» առաջնորդվելը:

Սույն ատենախոսության ուսումնասիրության առարկան է Դ.Հ. Լոուրենսի պատմվածքներում «բնական մարդու» քննությունը:

Աշխատանքի նպատակն է ներկայացնել Դ.Հ. Լոուրենսի գաղափարները գրողի ստեղծագործություններում, մասնավորապես՝ նրա պատմվածքներում: Խնդիր ենք դրել Լոուրենսի «արյան գիտակցություն» տեսության հիման վրա ցոյց տալ, թե ինչ պատկերացումներ է ունեցել գրողը «բնական մարդ» ասելով, թե ինչպես է նա փորձել կերտել այդ կերպարը իր արձակում, ինչպես նաև հիմնավորել, թե ինչու է նա իր տեսության համար ընտրել «արյան գիտակցություն» եզրույթը:

Աշխատանքը նպատակ ունի նաև ցոյց տալ անգիտակցականի և գիտակցականի, բնագրի և բանականության միջև ընթացող պայքարը Լոուրենսի կերտած հերոսների կյանքում, և թե ինչի կարող է հանգեցնել, եթե մարդը ընտրի գիտակցական կյանքով ապրելը՝ անտեսելով անգիտակցականը:

Մեր նպատակներից է ուսումնասիրել, թե որ գրողներն ու ստեղծագործություններն են ազդեցություն ունեցել Լոուրենսի պատմվածքներում «բնական մարդ» հասկացության առաջացման հարցում: Աշխատանքում փորձ է արվում նաև ցոյց տալ, թե ինչպես են

տիեզերական մասնիկները, մասնավորապես՝ արևն ու լուսինը, ազդում Լոռութենսի արձակում մարդու ֆիզիկականի և ներաշխարհի վրա՝ նրան հասարակական էակից դարձնելով «բնական մարդ», ինչը «արյան գիտակցություն» տեսության առանցքային մասն է:

Աշխատանքում վերլուծվում են նաև Դ.Հ. Լոռութենսի առաջնային (գրական) տեքստերը, ներկայացվում Լոռութենսի նշյալ տեսության վերաբերյալ իր էսսեներում արտահայտված մտքերը, մեկնաբանվում է դրանց իմաստը:

Կերպարային համակարգի քննությունը հնարավորություն է տալիս հասկանալու, թե Լոռութենսն ինչպես է իր ստեղծագործություններում «բնական մարդուն» հակադրելով հասարակական էակին՝ ստեղծում բնազդներով, կրքով, ցանկությամբ առաջնորդվող կերպարներ, որոնք ընդվզում են նյութապաշտ հասարակության դեմ՝ բնական կենսակերպ վարելու համար:

Լոռութենսի հասարակություն/զույգ/անհատ մոդելի միջոցով ցոյց է տրվում, որ գրողը փորձում է հավասարակշռություն պահպանել անհատական և հասարակական գիտակցությունների միջև իր պատմվածքների հերոսների կյանքում՝ իր մոդելում ներառելով զույգ հասկացությունը, ինչն իր համար սեռական բնազդն արտահայտելու կարևորագույն պայման է:

Ատենախոսության մեթոդաբանության հիմքում ընկած են գիտության մեջ լայն տարածում գտած ինդուկցիայի և դեդուկցիայի մեթոդները: Աշխատանքը կառուցված է ավանդական տրամաբանությամբ: Փաստական (առաջնային) նյութը քննելիս օգտագործել ենք պատմահամեմատական մոտեցումը:

Աշխատանքում ներկայացվում է անգիտակցականի մասին Դ.Հ. Լոռութենսի տեսությունը: Քանի որ անգիտակցականի մասին առաջին տեսությունը պատկանում է Ֆրոյդի գրչին, ուստի փորձել ենք հասկանալ Դ.Հ. Լոռութենսի անգիտակցականի և Զ. Ֆրոյդի անգիտակցականի վերաբերյալ տեսությունների միջև կապը, դրանց տարբերությունները, ինչպես նաև առանձնահատկությունները: Փորձել ենք վերլուծել

Լոուրենսի տեսության և գրական տեքստերի կապը, այսինքն՝ պարզել, թե տեսությունն ինչպես է դրսնորվում իր գեղարվեստական տեքստերում:

Աշխատանքի նորույթն այն է, որ առաջին անգամ հայ գրականագիտության մեջ ուսումնասիրվում է անգիտակցականի մասին Լոուրենսի տեսությունը, որը նա անվանել է «արյան գիտակցություն», ինչի շնորհիվ իր պատմվածքներում բացահայտվում է գրողի հիացմունքը «բնական մարդկանց» կենսակերպի նկատմամբ, որոնք առաջնորդվում են տիեզերական գիտակցությամբ, բնական ազդակներով, ինտուիցիայով:

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

Դ.Հ. ԼՈՈՒՐԵՆՍԻ «ԱՐՅԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ» ՏԵՍՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ՀԵՂԻՆԱԿԻ ԳԵՂԱՐՎԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Այս գլուխը նվիրված է Լոուրենսի «արյան գիտակցություն» հասկացությանը, որը բնորոշվում է որպես Լոուրենսի առաջ քաշած անգիտակցականի սեփական տեսություն: Նախ և առաջ կարևոր է հասկանալ, թե ինչ է «արյան գիտակցությունը», և ինչպես է այն կապված մարդու էության հետ: Մինչև 1920-1921 թթ. «արյան գիտակցություն» եզրույթի ծագման մասին որևէ գրավոր վկայություն չի պահպանվել: Միայն այս տարիներին է Լոուրենսը «Հոգեվերլուծություն» և անգիտակցական և անգիտակցականի երևակայություն»³⁵ էսսեներում գրում այդ մասին: «Արյան գիտակցություն» եզրույթը վերցվել է «Անգիտակցականի երևակայությունը» («Fantasia of the Unconscious») գլուխ, սակայն չենք կարող միանշանակորեն պնդել, թե «արյան» վերաբերյալ Լոուրենսի պատկերացումները ի հայտ են եկել միայն վաղ 20-ականներին: Եթե 1915 թ. Ռասելին ուղղված նրա նամակը արժանահավատ է, ապա «արյան գիտակցության՝» որպես փիլիսոփայության հիմքի ձևավորման սկիզբը համընկնում է մոտավորապես 1905 թ., երբ նա դեռ 20 տարեկան էր³⁶:

Այսպես, Բերթրան Ռասելին ուղղված նամակում Լոուրենսը շարադրում է «արյան գիտակցության» վերաբերյալ իր մտքերը, որտեղ հանգամանորեն նկարագրում է, թե ինչ է «արյան գիտակցությունը»՝ բացատրելով, որ գոյություն ունի մեկ այլ գիտակցություն, որն անկախ է ուղեղի համակարգից, սակայն մարոկանց կյանքի ողբերգությունն այն է, որ միտքը իշխում է «արյան գիտակցությանը»³⁷: Ի պատասխան Լոուրենսի նամակի՝ Ռասելը գրում է, որ նա շեղվել է իրական ճանապարհից և դատապարտում է նրա խորհրդավոր,

³⁵ Lawrence D., *Fantasia of the Unconscious and Psychoanalysis and the Unconsciousness*, London: Heinemann Ltd., 1923.

³⁶ Lawrence D., *The Letters*, Volume II, June 1913 – October 1916 (Edited by George J. Zytaruk, etc.), Cambridge: Cambridge University Press 1981, p. 470.

³⁷ Նոյն տեղում, էջ 470:

միստիկ տեսությունն «արյան» վերաբերյալ՝ այն մեկ բառով անվանելով «աղբ»³⁸:

Այսպիսով, այս նամակն այն բանի ապացույցն է, որ 1915 թ. Լոուրենսն արդեն հավատում էր, որ արյունը մարդու էության կարևորագույն մասնիկն է, որը նրան առաջնորդում է դեպի բնազդային կյանք՝ հետևում թողնելով գիտակցական կյանքը³⁹: Նրա՝ այս նամակում արտահայտած մտքերը հիմք են տալիս քննադատելու Ֆրոյդի կենսահարաբերության վերաբերյալ գաղափարները, քանի որ այստեղ Լոուրենսը կենսահարաբերությունը նկարագրում է որպես «երկու արյան հոսքերի միաձուլում»⁴⁰: Լոուրենսը Ռասելին ուղղված նամակում գրում է. «Երբ ես ինտիմ հարաբերություն եմ ունենում կնոջ հետ, ինձ իշխում է «արյան գիտակցությունը»: Նրա և իմ արյան միջև անցում է տեղի ունենում, որը մեզ միաձուլում է այնպես, որ նոյնիսկ երբ նա հեռանում է, «արյան գիտակցությունը» մնում է մեր մեջ»⁴¹:

«Ամերիկյան դասական գրականության ուսումնասիրություն» («Studies in Classic American Literature», 1923) էսսեում Լոուրենսը գրում է. «Մեր էությունը բաժանված է երկու մասի: Օրինակ՝ արյան համար «ատելի» է այն, որ ճանաչվում է մտքի կողմից: Այդ դեպքում այն իրեն կործանված է զգում: Ահա սա է բնազդի էությունը, և չես կարող դրանից ազատվել: «Արյան գիտակցությունը» իշխում, ոչնչացնում է մտքի գիտակցությունը: Մտքի գիտակցությունը ոչնչացնում է «արյան գիտակցությունը» և «խմում է արյունը»: Մենք բոլորս գիտակցում ենք, որ կան երկու տեսակի գիտակցություններ, որոնք հակամարտում են մեզանում: Եվ այսպես կլինի միշտ: Դա մեր խաչն է: «Արյան գիտակցության» համար տարօրինակ է մարդու գիտակցության ճանաչումը: Այս երկու տարրեր գիտակցությունների միջև ներդաշնակություն պահպանելը շատ դժվար է»⁴²:

³⁸ LaChappelle D., D.H. Lawrence, Future Primitive, Texas: University of North Texas Press, 1996, p. 83.

³⁹ Lawrence D., The Letters, Volume II, June 1913 – October 1916 (Edited by George J. Zytaruk, etc.), Cambridge: Cambridge University Press 1981, p. 470.

⁴⁰ Նոյն տեղում, էջ 470:

⁴¹ Նոյն տեղում, էջ 470:

⁴² Lawrence D., Studies in Classic American Literature (Edited by Ezra Greenspan, etc.), Cambridge: Cambridge University Press, 2003, p. 83.

«Սուրբ Մավր» («St. Mawr», 1925) վիպակը ընթերցողին է ներկայացնում Լոուրենսի՝ գիտակցության և «արյան գիտակցության» հակադրությունը: Լու Վիթթի ամուսինը՝ Ռիկոն, և երեցը գիտակցական կյանքի կողմնակից են, մինչդեռ Սուրբ Մավր անունով ձին՝ իր երկու ծիապաններով՝ Լսիսով և Ֆենիքսով, այլ աշխարհ են ներկայացնում: Աշխարհ, որը զերծ է մարդկային գաղափարախոսությունից: Լուն բնազդաբար զգում է, որ Մավրի աշխարհը լի է «առեղծվածային կյանքով»⁴³: Նրան թվում է՝ լսում է այլ, ավելի մութ, ավելի վտանգավոր, ավելի ընդարձակ աշխարհից եկող ծայներ, և ցանկանում է գնալ այդ աշխարհ⁴⁴: Նրան տեսիլը է գալիս, իբր սեփական աշխարհի պատերը հանկարծակի փշրվում են՝ թողնելով իրեն մթության մեջ⁴⁵:

Այս պատմվածքում Լոուրենսն իր «տիեզերական գիտակցությամբ», որը ներառում է տիեզերքում գտնվող բոլոր տարրերը, այդ թվում՝ կենդանիներին, երկու տարբեր իրականություն է ներկայացնում⁴⁶: Կենդանու և մարդու միջև եղած հակադրությունը նկարագրվում է որպես երկու աշխարհների միջև տեղի ունեցող պատերազմ⁴⁷: Լուի ամուսին Ռիկոն այն մարդկանցից է, որը տարված է հասարակական սովորույթներով և գաղափարներով: Ռիկոն չափազանց «եսակենտրոն» է⁴⁸: Նա ամբողջովին ապրում է սեփական աշխարհում և անկարող է պատկերացնել մեկ այլ աշխարհ, որտեղ մարդիկ չեն իշխում ձիում⁴⁹: Երկու ծիապանները առաջնորդվում են «արյան գիտակցությամբ» և ինչպես Սուրբ Մավրն է մնում իր տերերի վերահսկողության տակ, այնպես էլ իրենք՝ տերերը, հաստատուն են և անկոտրում՝ ճանաչելով իրենց շրջապատող աշխարհը բնազդաբար՝ առանց մտածելու դրա մասին: Նրանք իրենց ողջ էությամբ զգում են, որ Լոնդոնի իրականությունը պատրանքի կամ բանտի է նման, որ քաղաքակրթությունը խոչընդոտում է բնական կյանքի ընթացքը: Այս պատմվածքի հիմնական նպատակն է

⁴³ Lawrence D., St. Mawr and Other Stories, Cambridge: Cambridge University Press 1983, p. 36.

⁴⁴ Նոյն տեղում, էջ 50:

⁴⁵ Նոյն տեղում, էջ 36:

⁴⁶ Spilka M., The Love Ethic of D.H. Lawrence. Bloomington: Indiana University Press, 1955, p. 127.

⁴⁷ Lawrence D., St. Mawr and Other Stories, Cambridge: Cambridge University Press 1983, p 42.

⁴⁸ Նոյն տեղում, էջ 40:

⁴⁹ Նոյն տեղում, էջ 42:

ցոյց տալ, որ «բնական մարդն», իր ինտուիցիային հետևելով, ավելի հզոր է, քան ռացիոնալ բանականությունը՝ իրականությունը ճանաչելու գործում⁵⁰:

1915 թ. Լոուրենսն ավելի և ավելի էր համոզվում, որ Անգլիան կործանվում է: Հասարակությունը, մտավոր գիտելիքի, բանականության գերին դառնալով, միմիայն կեղծ և ոչ իրական զգացմունքներ կարող է ունենալ⁵¹: Թերևս համաձայնվենք Լոուրենսի այն մտքին, որ այսօր էլ շատ մարդիկ ապրում և մահանում են առանց իրական զգացմունքներ ապրելու:

Այսպիսով, Լոուրենսի ընկալմամբ՝ ժամանակակից աշխարհը սահմանագիծ է դնում կամքի և զգացմունքի, բանականության և մարմնի, գիտակցականի և անգիտակցականի, ռացիոնալի և ինտուիցիայի միջև։ «Այն պահին, երբ մենք ընդունենք այդ անձանոթ, անհասկանալի անգիտակցականի գոյությունը և սկսենք հետևել դրան, երբ ինքներս մեր մեջ կարողանանք սահմանել դրա օրենքներն ու գործընթացները, ապա վերջապես կկարողանանք ապրել ինքնաբուխ, բնական, կազատվենք մահացած, կարծրացած գաղափարներից, սկզբունքներից և իդեալներից»⁵²:

Ճիշտ է՝ Լոուրենսը ցանկանում է, որ մարդիկ ապրեն իրենց մարմնի բնական ազդակներով, սակայն նա ամբողջովին չի մերժում բանականությունը, գիտակցությունը, որի վառ ապացույցն «արյան գիտակցություն» եզրույթի ընտրությունն է իր տեսության համար⁵³: Նա ձգտում է, որ բանականության և բնագդի միջև պահպանվի հավասարակշռությունը⁵⁴ Լոուրենսը կարծում է, որ նկարելիս կամ ստեղծագործելիս մարդը գործի է դնում թե՛ իր գիտակցությունը, թե՛ բնագդը և թե՛ ինտուիցիան: Այս դեպքում դրանք ձուլվում, դառնում են մեկ ամբողջություն: Բնագդը, ինտուիցիան, բանականությունը վերածվում են մեկ ամբողջական գիտակցության. «Այս ծները պետք է

⁵⁰ Նոյն տեղում, էջ 36:

⁵¹ Williams R., The Social Thinking of D.H. Lawrence, New York: Columbia University Press, 1958, p. 66.

⁵² Lawrence D., Fantasia of the Unconscious and Psychoanalysis and the Unconsciousness, London: Heinemann Ltd., 1923, p. 212.

⁵³ Travis L., D.H. Lawrence: The Blood-Conscious Artist, American Imago, 25(2), USA: Johns Hopkins University Press, 1968 p. 163.

⁵⁴ Bergson H., Creative Evolution, New York: Dover Publications, 1998, p. 291.

լրացնեն միմյանց»⁵⁵: Սակայն նա քաջատեղյակ էր, որ գիտնականների մեծ մասը գործի է դնում միայն իր բանականությունը և չի առաջնորդվում բնազդով: Լոուրենսը հիացած է ֆրանսիացի արվեստագետ Մեզանով, քանի որ վերջինս պայքարում էր կաղապարների դեմ: Նա ստեղծագործական ողջ կյանքում առաջնորդվել է ինտուիցիայով: Նկարում էր մարդկանց և բնապատկերներ՝ հետևելով իր բնազդներին, և անընդհատ պայքարում էր ազատվելու իր բանական գիտակցության միջամտությունից:

Ըստ Լոուրենսի՝ իրական արվեստագետը նա է, որն առաջնորդվում է ինտուիցիայով և բնազդներով⁵⁶: Լոուրենսը ցանկանում էր ապրել, խսկապես ապրել, ճանաչել աշխարհը բնական ազդակների միջոցով: Նրա կարծիքով, մարդու բնազդային գիտակցության պակասի արդյունքում անգլիական կտավներում բացակայում է զգացմունքայնությունը: Նրան թվում է, որ անգլիացի նկարիչների մեջ միակ բացառությունը Վիյամ Բլեյքն է. «Բլեյքը նկարում է՝ գործի դնելով իր ինտուիցիան, ազատություն տալով իր բնազդներին»⁵⁷: «Արվեստագետը կարող է ստեղծագործել միայն այն դեպքում, եթե զգում է տիեզերքից բխող ուժն իր մարմնում՝ իր արյան մեջ և իր ուկորներում»⁵⁸: «Միայն ինտուիցիայի և բնազդի միջոցով մարդը կարող է ճանաչել աշխարհը, դրանում գոյություն ունեցող ցանկացած բնական երևոյթ, որն ապրում և շնչում է իր կողքին»⁵⁹:

«Դալիլան և պարոն Բիրքամշոն» (*«Delilah and Mr. Bircumshaw»*, 1912) պատմվածքում Լոուրենսն իր հերոսին՝ Հարրի Բիրքամշոյին, նկարագրում է որպես «բնական մարդ», որին խորթ է այնպես քնելը, ինչպես սովորաբար քնում են քաղաքակիրթ մարդիկ: Նա սիրում է կոշիկները մահճակալի կողքին հանել՝ բարձրից նետելով դրանք հատակին, որով ասես ազդարարում է, որ պառկում է քնելու. «Պառկեց քնելու և արձանագրում է փաստը՝ կոշիկները հատակին խփելով, - դառնորեն ասաց

⁵⁵ Davies J., D.H. Lawrence on Hardy and Painting, Study of Thomas Hardy and Introduction to these Paintings (Edited with an Introduction by J. V. Davies), London: Heinemann Ltd., 1973, p. 152.

⁵⁶ Նոյն տեղում, էջ 146-147:

⁵⁷ Նոյն տեղում, էջ 138:

⁵⁸ Նոյն տեղում, էջ 140:

⁵⁹ Նոյն տեղում, էջ 134

երիտասարդ կինը»⁶⁰: Հարրիի կնոջ՝ Դալիլայի ընկերուիին, որը ժամանակակից հասարակության ներկայացուցիչ է, ապշում է Հարրիի վարքագծից՝ այն համարելով վայրի: Հարրիի շարժուձևը իսկապես շփոթեցրել էր տիկին Գիլաթին. «Սոսկ մի պահ նրա աչքերի դիմաց երևաց Բիրքամշոյի ջղային կերպարանքը կապուտ հագուատով, և դուռն աղմուկով փակվեց նրա ետևից»⁶¹:

Այս պատմվածքում Լոուրենսը զուգահեռներ է անցկացնում ժամանակակից մարդու և «բնական մարդու» վարքագծերի, աշխարհայացքների միջև: Այն, ինչ վայրի է թվում հասարակության կարծրատիպերով առաջնորդվող մարդկանց՝ Դալիլային և տիկին Գիլաթին, բնական է և նորմալ բնազդներով ապրող Հարրիի համար: Վերջինիս վարքագիծը իրեշային է թվում թե՛ Դալիլային, որը ցավով համակերպվել է ամուսնու պահվածքին, թե՛ տիկին Գիլաթին, որը, ի տարբերություն Դալիլայի, չի կարողանում հանդուրժել Հարրիի վարքագիծը. «Դու նրա հետ ավելի լավ ես վարվում, քան ես կվարվեի, լուրջ եմ ասում, - շարունակեց նա: - Դրան տես, վայրենի՛»⁶²:

«Բնական մարդուն» Լոուրենսն ընթերցողին է ներկայացնում մի տեսարանի միջոցով, երբ տղամարդը գիշերն արթնանում է և սկսում է ազահաբար հաց ուտել անկողնու մեջ նստած. «Ժամը մեկին մոտ տիկին Բիրքամշոն բացեց աչքերը: Ամուսինն անկողնում նստած, կոացել էր աթոռին դրված ափսեի վրա: Կորացած ձեռքի արանքից երևում էին եռանդուն կերպով աշխատող ծնոտն ու կոկորդը: Երբեմն կնոջը երևում էր ուտելիքից ուռած այտը: Նա արագ էր ուտում, համարյա ազահաբար՝ մինչև վերջին փշրանքը: «Տարօրինակ կենդանի», - մտածեց կինը և սրտանց ծիծաղեց մտքում»⁶³:

Լոուրենսի կերտած «բնական մարդը» երևում է ոչ միայն իր հերոսի վարքագծից, այլև արտաքինից: Հարրիին մկանուտ և հաղթանդամ տղամարդ է, որին նայելիս Դալիլան վախենում է ավելորդ հարց տալ. «Հարցի գայթակղությունը շատ էր մեծ, սակայն կինը

⁶⁰ Լոուրենս Դ., Թարգմանություններ, Դալիլան և պարոն Բիրքամշոն (թրգմ.՝ Ս. Սեֆերյան) / Գր. համալս., Խ, Երևան, 2004, Էջ 37:

⁶¹ Նոյն տեղում, Էջ 37:

⁶² Լոուրենս Դ., Թարգմանություններ, Հիվանդ հանքափորը (թրգմ.՝ Ս. Սեֆերյան) // Արտ. գրականություն, VII, 2011, Էջ 38:

⁶³ Նոյն տեղում Էջ 40:

վախեցավ, որ կխնգարի այդ ուժեղ կենդանու սնվելու ընթացքը: Սիրտ չարեց նրան կատաղեցնել: Տղամարդը վերցրեց կաթը և խմելիս ետ թեքվեց կնոջ վրա: Վերջինս փոքրինչ վախ, փոքրինչ զզվանք զգալով կուշ եկավ»⁶⁴: Ցանկացած շարժում կնոջը խորթ էր և անհասկանալի, քանի որ նրանք չափազանց տարբեր աշխարհայացքներ ունեին կյանքի վերաբերյալ:

Ըստ Լոուրենսի՝ գոյություն ունի բարոյականության երկու կատեգորիա՝ «բարոյականության փոքր համակարգ», որը ձևավորվում է մարդու գիտակցության շնորհիվ, և «բնական համակարգ»: Քանի որ վերջինս գերազանցում է մարդու՝ գիտակցության կողմից ձևավորված համակարգին, ապա փոքր համակարգին վիճակված է լինել բնական, մեծ համակարգի մի մասը⁶⁵:

Բլումսբրի-Քեմբրիջ խմբի անդամ Մեյնարդ Քեյնսը, որին Լոուրենսը ծանոթացել էր Ռասելի միջոցով և բոլորովին չէր հավանել, հետագայում իր հրապարակած հուշերում ընդունում է Լոուրենսի գաղափարները. «Մարդու էռթյունը հնարավոր չէ հասկանալ միայն մտքի միջոցով, ինչը և հանգեցնում է ճշմարիտ իրականության սխալ ընկալմանը: Այդ պատճառով պետք է նշեմ, որ ճշմարտություն կար Լոուրենսի արտահայտած մտքերում»⁶⁶:

Դանիել Շնայդերը «Դ.Հ. Լոուրենսի գիտակցությունը» («The Consciousness of D. H. Lawrence», 1927) գրքում խոսում է այն մասին, թե ինչ ազդեցություններ է կրել Լոուրենսի մտքի և մարմնի հասկացությունը: Եթե Լոուրենսը դեռ քան տարեկան էր, սկսել էր կարդալ Շոպենհաուեր և փորձել էր կապել նրա փիլիսոփայությունը Դարվինի, Հաքսլի, Սպենսերի, Հեգելի գաղափարների հետ: Նրանց գիտական տեսակետները հետագայում մեծ ազդեցություն են ունեցել Լոուրենսի «Հոգեվերլուծություն և անգիտակցական» էսեի վրա⁶⁷:

⁶⁴ Նոյն տեղում, էջ 40:

⁶⁵ Davies J., D.H. Lawrence on Hardy and Painting, Study of Thomas Hardy and Introduction to these Paintings (Edited with an Introduction by J.V. Davies), London: Heinemann Ltd., 1973, p. 31.

⁶⁶ LaChappelle D., D.H. Lawrence, Future Primitive, Texas: University of North Texas Press, 1996, pp. 84-85.

⁶⁷ Schneider D., The Consciousness of D.H. Lawrence, University Press of Kansas, 1986, p. 50.

Ըստ Վիլյամ Ջեյմսի տեսության՝ ֆիզիոլոգիական գործունեությունը նախորդում է հոգական արձագանքին. «Ես չեմ հարվածում, քանի որ բարկացած եմ, ես բարկացած եմ քանի որ հարվածում եմ: Ես չեմ արտասվում, քանի որ դժբախտ եմ, ես դժբախտ եմ, քանի որ արտասվում եմ: Զգացմունքները, սերը կամ ատելությունը գիտակցական մտքի արդյունքում չեն առաջանում»⁶⁸: Ջեյմսի տեսությունը հաստատում է Շոպենհաուերի և Նիցշեի գաղափարների մասին Լոուրենսի այն տեսակետը, որ միտքը չի կարող իրականությունը ներկայացնել: Այն հնարավոր է միայն բնագրի և ինտուիցիայի շնորհիվ և ոչ թե մտքի⁶⁹:

Ինչպես նկատել է Շնայդերը, Լոուրենսի փիլիսոփայական մտքերի ձևավորման գործում մեծ է Էդվարդ Քարփենթերի գաղափարների ազդեցությունը: Գուցե ամենակարևոր միտքը, որ հիացրել է երիտասարդ Լոուրենսին, եղել է «նոր երկինք» և «նոր երկիր» ստեղծելու նախագիծը, որոնք այլևս չեն ենթարկվի քաղաքական և տնտեսական փոփոխությունների: Առողջ հասարակությունը պետք է հիմնված լինի «տիեզերական միասնության» վրա: «Տիեզերական միասնության» հիմքը զգացմունքներն են, բնական ազդակները⁷⁰: Այս գաղափարը արհամարհանքի և ծաղրի է արժանացել մտավորականների՝ Ռասելի և Բլումսբրի-Քեմբրիջ խմբի անդամների կողմից, որոնք կարծում էին, որ բանականությունը և գիտակցությունը ինքնավար գործիքի դեր են կատարում, որոնք ունակ են կառավարելու մարդու գիտակցությունը: Քարփենթերը հավաստիացնում էր, որ զգացմունքները և ցանկությունը կարող են ասոցացվել միայն մարմնի նյարդային համակարգի հետ և ոչ թե բանականության: Լոուրենսն ընդունում է վերջինիս տեսակետը և հետագայում այն կիրառում իր տեսության մեջ, ըստ որի՝ ցանկության միջոցով մարդը միավորվում է մյուսներին և, վերջիվերջին՝ տիեզերքին⁷¹:

⁶⁸ William J., The Principles of Psychology, Cambridge: Harvard University Press, 1984, p. 43.

⁶⁹ Schneider D., The Consciousness of D.H. Lawrence, University Press of Kansas, 1986, p 50.

⁷⁰ Նոյն սեղում, էջ 57:

⁷¹ Delavenay É., D.H. Lawrence and Edward Carpenter: A Study in Edwardian Transition, New York: Taplinger Publishing Co., 1971, էջ 129-130.

1913 թ. հունվարին Էրնեստ Քոլլինգսին ուղղված նամակում Լոուրենսը գրում է. «Իմ կրոնը իմ հավատքն է «արյան» մեջ, քանի որ վերջինս ավելի իմաստուն է, քան բանականությունը»⁷²:

«Արյան» կամ «արյան գիտակցության» վերաբերյալ իր պատկերացումները հեղինակը մանրամասն շարադրում է «Հոգեվերլուծություն և անգիտակցական» («Psychoanalysis and the Unconscious», 1921) և «Անգիտակցականի երևակայություն» («Fantasia of the Unconscious», 1922) աշխատություններում⁷³: Վերջինս «Հոգեվերլուծություն և անգիտակցական» աշխատության շարունակությունն է: Այս երկու աշխատություններում Լոուրենսը հորդորում է ընթերցողներին, որպեսզի ճանաչեն «արյան գիտակցությունը» որպես անգիտակցականի վերաբերյալ իր տեսություն, որը, ըստ նրա, հակադրվում է Զիգմոնդ Ֆրոյդի անգիտակցականի վերաբերյալ տեսությանը: «Հոգեվերլուծություն և անգիտակցական» աշխատության մեջ Լոուրենսը հիշում է, թե ինչպես էին ինքն ու իր ժամանակակիցները անհամբեր, միևնույն ժամանակ, վախի զգացումով հետևում Ֆրոյդին, որը դեռ նոր էր «ուղարվել» վտանգավոր ճամփորդության՝ դեպի մարդու գիտակցություն: Եվ Լոուրենսը անտարբեր չի մնում, երբ Ֆրոյդը գիտակցական աշխարհից հանկարծ քայլ է կատարում դեպի անգիտակցականը, որն իր ժամանակակիցների համար դեռևս ոչինչ էր, և հանկարծ այդ անգիտակցականը այլևս ոչինչ չէ⁷⁴:

«Հոգեվերլուծություն և անգիտակցական» աշխատության երկրորդ գլխում Լոուրենսը շարունակում է բացահայտել սեփական՝ «արյան գիտակցության» տեսության ձևավորման ակունքները: Նա բնութագրում է անգիտակցականը հետևյալ կերպ. «Անգիտակցականը (անգիտակցական) գիտակցականի ժխտումն է: Եվ ոչ մի կասկած չկա, որ հենց այս պատճառով է, որ Ֆրոյդը նախընտրել է այս եզրույթը: Նա անտեսում է այնպիսի բառը, ինչպիսին ենթագիտակցությունն է, քանի որ վերջինս ենթադրում է

⁷² Lawrence D., The Letters, Volume I, September 1901 – May 1913 (Edited by James T. Boulton), Cambridge: Cambridge University Press, 1979, p. 503.

⁷³ Murry J., Son of Woman: The Story of D.H. Lawrence, London: Jonathan Cape, 1954, p. 3.

⁷⁴ Lawrence D., Fantasia of the Unconscious and Psychoanalysis and the Unconscious, Chapter I, Psychoanalysis vs. Morality, Heinemann: London, 1931, p. 199.

գիտակցության մեկ այլ ծնունդ: Նա ցանկանում էր արտացոլել անգիտակցականում այն, ինչը չէր մտնում գիտակցության մեջ, ինչը հակադրվում էր բանականությանը»⁷⁵:

Ճիշտ է՝ «Հոգեվերլուծություն և անգիտակցական» աշխատության մեջ Լոուրենսը գրում է Ֆրոյդի մասին, որի գաղափարները նրան հոգեհարազատ էին և որի անգիտակցականի մասին տեսությունը հետագայում հիմք է դառնում իր իսկ տեսության ձևավորման համար, սակայն նրա և Ֆրոյդի անգիտակցականների միջև կային լուրջ հակասություններ: Ըստ Ֆրոյդի՝ անգիտակցական միտքը կամ անգիտակցականը բաղկացած է մտքում տեղի ունեցող գործընթացներից: Նրա համար անգիտակցականը մտքի անբաժանելի մասնիկ է: Ֆրոյդը միտքը բաժանում է գիտակից մտքի և անգիտակից մտքի: Նրա տեսության մեջ անգիտակցականը վերաբերում է մտավոր այն գործընթացներին, որոնցից անհատը բոլորովին անտեղյակ է⁷⁶:

Այսպիսով, անգիտակցականը, ըստ Ֆրոյդի, առաջանում է մտքի գործընթացների արդյունքում, մինչդեռ Լոուրենսն իր անգիտակցականի մասին տեսության մեջ հակադրվում է Ֆրոյդին՝ ամբողջովին բացառելով միտքը: Նա հստակ տարանջատում է միտքը, գիտակցությունը և անգիտակցականը: Նրա պատկերացմամբ՝ միտքը և անգիտակցականը գտնվում են տարբեր բևեռներում. «Մարդու գիտակցությունը բաղկացած է «գիտակցական մտքից», իսկ անգիտակցականը՝ «արյան գիտակցությունից: Անգիտակցականը գտնվում է ցածր հարթության վրա, այսինքն՝ զգայական մակարդակի, իսկ գիտակցականը վերին հարթության վրա է, այսինքն՝ հոգևորի»⁷⁷: Լոուրենսի գլխում այս մտքերն առաջացել են շատ ավելի վաղ, նախքան «Անգիտակցականի երևակայություն» (1922) աշխատության լույս տեսնելը: 1913 թ. Քոլլինզսին ուղղված նամակում նա իր անհանգստությունն է հայտնում մտքի անտեղի միջամտության և այն բանի վերաբերյալ, որ մարդիկ ծիծաղելիորեն մտազբաղ են («mindful»)⁷⁸:

⁷⁵ Lawrence D., *Fantasia of the Unconscious and Psychoanalysis and the Unconscious*, Chapter II, the Incest Motive and Idealism, Heinemann: London, 1931, p. 205.

⁷⁶ Նոյն տեղում, էջ 205:

⁷⁷ Lawrence D., *Psychoanalysis and the Unconscious and Fantasia of the Unconscious* (Edited by. Bruce Steele), Cambridge: Cambridge University Press, 2004, p. 88.

⁷⁸ Lawrence D., *The Letters*, Volume I, September 1901 – May 1913 (Edited by James T. Boulton), Cambridge: Cambridge University Press, 1979, p. 503.

Լոուրենսի «արյան գիտակցությամբ» կենսահարաբերություն ունենալու գաղափարը հակադրվում է Ֆրոյդի «Կենսահարաբերության տեսության երեք էսսեներ»-ում գրված գաղափարներին («Three Essays on the Theory of Sexuality», 1905)⁷⁹: Ֆրոյդի տեսությունը ստիպում է Լոուրենսին կարծել, որ հոգեվերլուծությունը կենսահարաբերությունը դիտարկում է որպես ամոթայի գործընթաց, որի ցանկությունը պետք է ճնշել մտքում⁸⁰: Լոուրենսը հակադրվում է Ֆրոյդի տեսությանը՝ պնդելով, որ կենսահարաբերության ժամանակ միտքը կամ մտավոր գիտակցությունը տեղի է տալիս մեկ այլ գիտակցության, որը ոչ մի կապ չունի ուղեղի համակարգի հետ⁸¹:

Լոուրենսի անհամաձայնությունը Ֆրոյդի հետ պայմանավորված է այն բանով, որ վերջինս գիտականորեն է մոտեցել անգիտակցականի վերաբերյալ իր տեսությանը⁸²: Այսօր Ֆրոյդի հոգեվերլուծությունը ոչ մի կերպ չի առնչվում բժշկության որևէ ճյուղի հետ, սակայն Լոուրենսը միակը չէր, որի կարծիքով Ֆրոյդը գիտական տեսանկյունից է փորձում բացատրել իր տեսությունը⁸³: Ֆրոյդն ինքն էլ այդ կարծիքին էր:

Զեյմս Քովանը Լոուրենսի և Ֆրոյդի հարաբերության մասին գրում է, որ Լոուրենսը կտրականապես դեմ էր գիտության «հաստատագրված օրենքներին» և «փակ համակարգերին», ինչը զուգորդվում է Ֆրոյդիկմի հետ⁸⁴: Իհարկե, անժխտելի է այն փաստը, որ մեծ է Ֆրոյդի անգիտակցականի տեսության ազդեցությունը Լոուրենսի գաղափարների ձևավորման վրա, թեև որևէ գրավոր վկայություն չկա այն մասին, որ Լոուրենսը կարդացել է Ֆրոյդի աշխատությունները:

Լոուրենսի «արյան գիտակցության» տեսությունը ձևավորվել է Զեյմս Ֆրազերի «Ուկե ճյուղը» («The Golden Bough») և «Տոտեմիզմ և Էքզոգամիա» («Totemism and Exogamy») գրքերը կարդալուց հետո: Միանշանակ է Ֆրազերի «մարդաբանական և

⁷⁹ Freud S., Three Essays on the Theory of Sexuality, London: Hogarth, 1953, pp. 255-266.

⁸⁰ Freud S., General Psychological Theory, New York: Macmillan Publishing Company, 1965, p. 116.

⁸¹ Lawrence D., The Letters, Volume II, June 1913 – October 1916 (Edited by George J. Zytaruk, etc.), Cambridge: Cambridge University Press 1981, p 470.

⁸² Նոյն տեղում, էջ 471:

⁸³ Նոյն տեղում, էջ 218:

⁸⁴ Cowan J., D.H. Lawrence and the Trembling Balance. London: Pennsylvania State University Press, 1990, p. 127.

խորհրդավոր» ուսումնասիրությունների ազդեցությունը «արյան գիտակցության» ձևավորման վրա: Ինչպես Լոոլենսը, այնպես էլ մի շարք հայտնի մոդեռնիստ գրողներ պատերազմը կործանարար ուժ էին համարում և հույսի մի շող էին փնտրում այլընտրանքային հավատքների միջոցով⁸⁵:

Դառսիզմը պնդում է, որ իրականությունը բանականության սահմաններից դուրս է: Այն չի կարող ենթարկվել ռացիոնալ վերլուծության և միայն անմիջական ինտուիցիայի շնորհիվ կարելի է ընկալել, ճանաչել իրականությունը⁸⁶: Լոոլենսն «անմիջական ինտուիցիա» բառակապակցությունը փոխարինում է «հոգի», «անգիտակցական», «արյան գիտակցություն» գաղափարներով: Դառսիզմում նաև ընդունված է կարծել, որ բանական գիտակցությունը կարող է միայն փորձ կուտակել վերլուծական նկատառումներով: Այն մտքերն ու գաղափարները, որոնք ծնվում են մտածելու արդյունքում, պարտադիր չեն, որ ճիշտ լինեն: Այսպիսով, կարիք չկա կառչելու միայն բանականությունից և թույլ տալու, որ այն իշխի մեր բնագդներին և ինտուիցիային⁸⁷: Ըստ Լոոլենսի՝ այն, ինչ մարդը մտածում է, չի համապատասխանում իրականությանը, քանի որ ռացիոնալ բանականությունը կուտակված փորձի կամ գիտելիքի պահեստ է⁸⁸:

Նիցեն Լոոլենսի համար թերևս ամենաազդեցիկ փիլիսոփան էր միտք-մարմին կաղապարի տեսանկյունից: Ըստ Նիցեի՝ մարդը չի կարող ճանաչել իրականությունը գիտակցության կամ բանականության միջոցով: Դա հնարավոր է միայն ազդակների շնորհիվ՝ անմիջական մարմնի և մեծ ցանկության շնորհիվ: Բնագդը և ցանկությունն են դրդում մարդուն ապրելու, այլ ոչ թե հոգին կամ բանականությունը: Ըստ նրա՝ այն ամենը, ինչ լավ է, բնագդային է, իսկ այն ամենը, ինչ վատ է և սխալ, կապ չունի բնագդի հետ⁸⁹: Նա արդարացնում է «ազնվական մարդու» հպարտությունը, որի առաքելությունն է

⁸⁵ Marcus P., A Healed Whole Man: Frazer, Lawrence and Blood-Consciousness (Edited by Frazer, R., Sir James Frazer, etc.), London: MacMillan, 1990, pp. 232-252.

⁸⁶ Willis B., The Tao of Art, London: Century Hutchinson Ltd., 1987, p. 55.

⁸⁷ Նոյն տեղում, էջ 106:

⁸⁸ Lawrence D., The Posthumous Papers, Education of the People (Edited with an Introduction by Edwards D. McDonald), London: William Heinemann Ltd., 1936, p. 629.

⁸⁹ Nietzsche F., A Nietzsche Reader (Selected and translated by R. J. Hollingdale), Middlesex: Penguin books Ltd. 1983, p. 113.

ստեղծել մի «նոր աշխարհ», որտեղ բնագդներով ապրելը կլինի բնական: Լոուրենսը, ինչպես և Նիցշեն, «ազնվական մարդու» բնագդային կյանքի ջատագովն էր:

Այսպիսով, կան մի շարք գործոններ, որոնք ազդել են Լոուրենսի «արյան» վերաբերյալ տեսության ձևավորման վրա: Լոուրենսը տարանջատում է մարմինը մտքից, նոյն կերպ՝ «արյունը» բառից, քանի որ «արյունը» մարմինն է, իսկ գիտակցությունը՝ խոսքը: Հետաքրքիր է այն փաստը, որ Լոուրենսն իր տեսությունն անվանել է «արյան գիտակցություն», քանի որ հակադրում է «արյունը» մտքին, գիտակցությանը, բանականությանը: Հարց է առաջանում, թե ինչու Լոուրենսն իր տեսությունը չի անվանել «արյան անգիտակցություն»: Սա թերևս կարելի է բացատրել այն հանգամանքով, որ Լոուրենսը գիտակցում էր՝ գիտակցությունը անհրաժեշտ է ապրելու, գոյությունը և «արյան» կարևորությունը պահպանելու համար:

Լոուրենսի պատմվածքներում արտացոլվում են «բնական մարդու» վերաբերյալ նրա պատկերացումները, որոնք հետևում են իրենց բնագդներին: «Հիվանդ հանքափորը» («A Sick Collier», 1934) պատմվածքում նա իր հերոսին՝ Հորսփոլին, նկարագրում է որպես մկանուտ, կենտրոնացած, ինքնամոռաց մի մարդու, որն ասես եռանդուն կենդանի լինի: Առանց լվացվելու նստում է հաց ուտելու և չի սիրում ձևականություններ. «Էդ ճերմակ սփոռոցների կարիքը առավոտը չկա: Մեկ-մեկ կարող եմ ուտելիս թափթիել, եթե հավեսս գա»⁹⁰: Կեղտոտ ձեռքերով ուտելը այն բանի նշան է, որ նա շատ է տարբերվում քաղաքակիրթ մարդկանցից, որոնց Լոուրենսը միշտ փորձել է հակադրել իր հերոսներին: Հանքափորը կեղտոտ շորերով և անլվա ձեռքերով է հացի նստում թե՛ հանքում, որտեղ պայմաններ չկան, թե՛ տանը, որտեղ նա հնարավորություն ուներ լվացվելու և մաքուր հագուստ կրելու, սակայն նա նախընտրում է ապրել «բնական մարդու»նման. «Այ քեզ բան: Տիկին, ոնց եմ հանքում առանց լվացվելու ուտում»⁹¹:

«Բնական մարդու» կերպարը, որ Լոուրենսը մեզ է ներկայացնում այս պատմվածքում, ընդվզում է քաղքենի սովորութների և մարդկանց դեմ, որոնք

⁹⁰ Լոուրենս Դ., Թարգմանություններ, Հիվանդ հանքափորը (թրգմ.՝ Ս. Սեֆերյան) // Արտ. գրականություն VII, 2011, էջ 31:

⁹¹ Նոյն տեղում, էջ 31:

առաջնորդվում են գիտակցությամբ: Նրան խորթ է ժամանակակից մարդու ապրելակերպը: Այս պատմվածքում Լոուրենսը ժամանակակից և «բնական մարդկանց» իրար է հակադրում: Ժամանակակից մարդը հանքափորի կինն է, որի համար անընդունելի է առանց լվացվելու սեղանի շուրջ նստելը, որը ցանկանում է գեղեցկացնել իր սեղանը ճերմակ սփոռոցով՝ ճաշելը հաճելի դարձնելու համար: Իսկ ամուսինը անտարբեր է նման բաներում: Նա բավարարվում է սեղանին լրագիր գցելով, ինչը վկայում է, որ նրա էությանը խորթ է ժամանակակից մարդկանց հատուկ նյութապաշտությունը:

Ուշագրավ է, որ Լոուրենսի մահից տասնամյակներ անց մարդու բանականության բժշկական հետազոտությունները ցույց տվեցին, որ ուղեղի աջ և ձախ կիսագնդերը տեղեկատվությունը մշակում են տարբեր կերպ: Բեն Վիլիսը «Արվեստի դաս» («The Tao of Art», 1987) էսսեում արևելյան մտածելակերպը ուսումնասիրելիս նշում է, որ ուղեղի ձախ կիսագունդը պատասխանատու է խոսքի, գիտական վերլուծության համար: Հետազոտությունները պարզել են, որ ուղեղի յուրաքանչյուր կիսագունդ պատասխանատու է տարբեր գործառույթների համար, մշակում է տարաբնույթ տեղեկատվություն և գործ ունի տարատեսակ խնդիրների հետ: Աջ կիսագունդը գործ ունի ինտուիցիայի, երևակայության, զգացմունքների հետ: Եվ խնդիրն այն է, որ ժամանակակից աշխարհը նախապատվությունը տալիս է ձախ կիսագնդին, որտեղ խոսքերը, հաշվարկներն ու տրամաբանությունն են իշխում, իսկ մեր բնության ավելի ստեղծագործական, ինտուիտիվ, զգացմունքային կողմը հաճախ գտնվում է ստորադասի ռերում և ամբողջովին արհամարհված ու մոռացված է⁹²:

Լոուրենսը համամիտ էր Բեն Վիլիսին: Նրան անհանգստացնում էր այն, թե ինչպես են երեխաները կրթություն ստանում: Նրա կարծիքով, դա վտանգավոր է երեխաների համար, քանի որ այս կերպ փոխվում է երեխայի էությունը: Գրողը հորդորում է, որ երեխաները ճանաչեն իրականությունը իրենց մարմնի զգայարաններով⁹³: «Անգիտակցականի երևակայություն» («Fantasia of the Unconscious», 1922) էսսեում գրում

⁹² Willis B., The Tao of Art, London: Hutchinson Ltd, 1987, p. 33.

⁹³ Cobb E., The Ecology Imagination in Childhood, Dallas: Spring Publications, 1998, p. 32.

Է. «Երեխան փոքրիկ տեսախցիկ չէ: Նա փոքրիկ կենսական մի օրգանիզմ է, որը կարիք ունի շփվելու արտաքին աշխարհի երևոյթների հետ, որոնք նույնքան և բնական են, որքան ինքը՝ երեխան»⁹⁴: Շատ կարևոր է երեխային հաճախ մենակ թողնել, որպեսզի ճանաչի աշխարհը»⁹⁵: Ապա հավելում է. «Երեխաներին անհրաժեշտ է ցույց տալ իրականությունը ընկալելու իրական և ճշմարիտ ճանապարհը, դաստիարակել բնական եղանակով և ոչ արհեստականորեն՝ նրանց մեջ սերմանելով սեր միայն ակադեմիական գիտության նկատմամբ: Ուղղակի հանցագործություն է երեխայի ուղեղը անհեթեթությամբ լցնելը»⁹⁶:

«Որդիներ և սիրեկաններ» վեպի նախաբանում («Foreword to Sons and Lovers», 1913) «արյուն» ու գիտակցությունը միավորելով՝ Լոռիենսը հաստատում է, որ «անգիտակցական արյուն» ու «գիտակցական միտքը», ինչպես և մարմինն ու բանականությունը, միշտ հավասարակշռված կլինեն մարդու մեջ»⁹⁷: Ընդհանուր առմամբ՝ Լոռիենսն իր տեսությունն ավարտուն չի համարել: Հակառակ՝ շարունակ մտածել է, թե ինչպես գտնի տարբեր ուղիներ այն արտահայտելու և ավելի հասանելի դարձնելու համար, քանի որ նա ավելի շուտ փորձել է ստեղծել անգիտակցականի երևակայություն, քան տեսություն դրա մասին»⁹⁸:

Լոռիենսի «արյան գիտակցության» տեսությունը դժվար է ըմբռնել այն պատճառով, որ գրողը գործածել է փոխաբերությամբ խճճված տողեր: Մենք նշեցինք, որ «արյան գիտակցությունը» մարմնի անգիտակցականն է, այսինքն՝ մարդու բնագդները:

«Հոգեվերլուծություն և անգիտակցական» էսեում Լոռիենսը փոխնիփոխ գործածում է հոգին և անգիտակցականը՝ հաստատելով, որ հոգին հենց նույն անգիտակցականն է, և որ հոգին ավելի լավ բառ է այն նկարագրելու համար»⁹⁹: Թեև «արյան գիտակցությունը»

⁹⁴ Pearce Ch., Magic Child, New York: E. P. Dutton, 1977, p. 27.

⁹⁵ Lawrence D., Education and Sex, Fantasia of the Unconscious and Psychoanalysis and the Unconsciousness, London: Heinemann Ltd., 1923, p. 87.

⁹⁶ Նոյն տեղում, էջ 88:

⁹⁷ Lawrence D., Foreword to Sons and Lovers (Edited by Helen Baron, etc.), Cambridge: Cambridge University Press 1992, p. 467.

⁹⁸ Becket F., D.H. Lawrence: The Thinker as Poet, London: MacMillan, 1997, p. 55.

⁹⁹ Lawrence D., Psychoanalysis and the Unconscious, Cambridge: Cambridge University Press, 2004, p. 17.

փոխարինվում է «հոգի» և «անգիտակցական» բառերով, այն շատ անծանոթ երևույթ է: «Հոգի» բառը Լոուրենսի համար հնացած էր թվում և չէր արտահայտում այն, ինչ նա ցանկանում էր ասել «արյան գիտակցություն» եզրույթով, քանի որ մարդիկ «հոգի» բառը գործածելիս նկատի ունեն անձ, ոգի, սիրտ, մինչդեռ իր համար դա «արյան գիտակցություն» եզրույթի հոմանիշն էր¹⁰⁰: Լոուրենսը փորձում էր բացատրել, որ «արյան գիտակցությունը», որն ամբողջովին կապված է մարմնի հետ, միևնույն ժամանակ անկախ է դրանից: Նա փորձում էր բացատրել իր ընթերցողներին, որ «արյան գիտակցությունը» չհասկանան և հետագայում չներկայացնեն որպես զուտ կենսաբանական արյուն:

Ուշագրավ է «Ինչո՞ւ է վեպը կարևոր» («Why the Novel Matters», 1925) էսան, որտեղ Լոուրենսը բացատրում է մարմնի և հոգու կապը. «Հետաքրքիր մտքեր ունենք մեր անձի վերաբերյալ: Մենք մեր անձը ներկայացնում ենք որպես մի մարմին, որի մեջ կա հոգի, կամ մի մարմին, որն ունի միտք: Ծիծաղելի է: Ինչո՞ւ պետք է ես նայեմ իմ ձեռքին, որն այնքան գրագետ գրում է այս տողերը և որոշեմ, որ այն ոչինչ է՝ համեմատած մտքի հետ, որն ուղղորդում է այն: Իմ ձեռքը կենդանի է, այն կյանքով լի է: Այն շոշափում է տարբեր իրեր, ուսումնասիրում է դրանք»¹⁰¹:

Այս տողերից ակնհայտ է դառնում, որ Լոուրենսը կշեռքի հավասար նժարների վրա է դնում իր մարմնի ցանկացած օրգան և գիտակցությունը, միտքը, ուղեղն ավելի բարձր չի դասում իր ձեռքից, որի միջոցով նա ստեղծում է գլուխգործոցներ, միայն այն պատճառով, որ միտքն է ուղղորդում ձեռքին:

«Մարդն ամենից առաջ հոգի է» («Man is essentially a soul»..., 1918) էսաեւմ Լոուրենսը բացատրում է՝ ինչ է «հոգին». «Մարդն ամենից առաջ հոգի է: Հոգին ո՞չ մամինն է և ո՞չ էլ ոգին (spirit): Այն բնագդներով է առաջնորդվում»¹⁰²: Այս գաղափարը ներկայացված է Լոուրենսի՝ հեծանիվի և հեծանվորդի զուգանմանության միջոցով. «Իմ մարմինն իմ հեծանիվն է, իմ մարմնի մեջտեղի հատվածը հեծանիվի թամբն է, որտեղ

¹⁰⁰ Նոյն տեղում, էջ 17:

¹⁰¹ Lawrence D., Why the Novel Matters (Edited by Buce Steele), Cambridge: Cambridge University Press, 1985, p. 193.

¹⁰² Lawrence D., Reflection on the Death of a Porcupine and Other Essays (Edited by Michael Herbert), Cambridge: Cambridge University Press, 1949, p. 389.

նստում է իմ հոգու հեծյալը, իսկ ղեկն իմ գլուխն է»¹⁰³: Հեծանիվի պատկերը, որը Լոուրենսը մեզ ներկայացնում է, ցոյց է տալիս, որ հոգին, առաջնորդվելով բնազդներով, կառավարում է մարմնի բոլոր օրգանները:

1915 թ. ղեկտեմբերին, Քորնվոլ տեղափոխվելուց հետո, նա լրջորեն սկսում է մտածել «արյան գիտակցության» և բանականության հակառակության մասին: Քորնվոլը Լորեսնի կյանքում ազդարարում է նոր սկիզբ, որն իր հերթին մեծ ազդեցություն է ունենում Լոուրենսի մտածողության վրա: Այս հեռավոր կելտական բնակավայրում նա տեսնում է նախաքրիստոնեական քաղաքակրթության մնացորդները և հանդիպում է մարդկանց, որոնք պահպանում էին անցյալի հետ հնագույն կապը: Այս ընթացքում տարբեր գաղափարներ են ծագում նրա մտքում, որոնցից ամենաուշագրավը այն էր, որ նա սկսում է կապել «արյան գիտակցության» տեսությունը «բնական մարդկանց» հետ: Ավելին, նա ամուր կապ է տեսնում «արյան գիտակցության» և Զեննորի միջև, որտեղ բնակություն էր հաստատել: Գրանիտե քարերը, որոնք նախնակենցաղ մարդկանց էին հիշեցնում, մեծ տպավորություն են թողնում նրա վրա:

Վիյամ Թինդալը, իմանալով, որ Լոուրենսը ամուր կապ է տեսնում նախնակենցաղ մարդկանց և «արյան գիտակցության» միջև, գրում է. «Լոուրենսին հիացնում էր Քորնվոլը: Այս վայրում, միայն այստեղ է, որ նա կարողանում էր զգալ անցյալի շունչը: Տեղանքը հիշեցնում էր նրան նախնադարյան մարդկանց, որտեղ կարող էր պատկերացնել, թե ինչպես էին նրանք երկրպագում քարերին, արյուն զրհաբերում, ինչպես նաև ապրում բոլոր նախաքրիստոնեական օրերի առեղծվածները»¹⁰⁴: Լոուրենսի համար Քորնվոլը ավելին էր, քան հերթական մի վայր, ուր նա կարող էր փախչել քաղաքակրթությունից: Լ. Դ. Քլարքը գրում է. «Այս վայրը Լոուրենսի համար առանձնահատուկ նշանակություն էր ձեռք բերել: Հետևաբար, Քորնվոլը պետք է դասվի այն վայրերի շարքին, որոնք ներդրում ունեցել են նրա տեսության ձևավորման գործում»¹⁰⁵:

¹⁰³ Lawrence D., *Fantasia of the Unconscious* (Edited by Bruce Steele), Cambridge: Cambridge University Press, 2004, p. 97.

¹⁰⁴ Tindall W., D.H. Lawrence and Susan his Cow, New York: Cooper Square Publishers Inc., 1972, p. 103.

¹⁰⁵ Clark L., *The Minoan Distance: The Symbolism of Travel in D.H. Lawrence*, Tucson: University of Arizona Press, 1980, p. 180.

«Կինը, որ հեռացավ» («The Woman Who Rode Away», 1928) պատմվածքում Լոուրենսը, սպիտակամորթ կնոջը զոհաբերելով հնդկացիական ցեղերին, ցոյց է տալիս, որ նախնադարյան իրականության ընկալումը դուրս է բանական գիտակցության սահմաններից: Կնոջ կյանքը իմաստագրկվել է, ինչը նրան բնազդաբար դրդել է միանալու հնդկացիական ցեղերին, որոնց մեջ նա հասկանում է, որ «սպիտակ և կարմիր գիտակցությունների» միջև մեծ տարբերություն կա: Հնդկացիները չեն գործում եսասիրությունից դրդված, նրանք ապրում են բնազդներով, կրքով: Նրանց սերն ու ատելությունը «արյան գիտակցության» ազդակներն են: Լինելով սպիտակամորթներից ամբողջովին տարբերվող այս մարդկանց մեջ՝ կնոջ «սպիտակ գիտակցությունը» աստիճանաբար զիջում է հնդկացիների «տիեզերական գիտակցությանը»: Սովորական գիտակցությունն աստիճանաբար լքում է կնոջը, որին փոխարինելու է գալիս «տիեզերական գիտակցությունը»: Կինը թմրել էր՝ ասես թմրադեղերերի ազդեցության տակ լիներ: Հնդկացիները նրան այնպիսի վիճակի էին հասցրել, որ նա այլևս անկարող էր դիմադրել¹⁰⁶: Լոուրենսը փորձել է այս պատմվածքում սպիտակամորթ կնոջ գիտակցությունը փոխարինել հնդկացիական ցեղերի գիտակցությամբ:

Լոուրենսը երկար ժամանակ հաստատում էր, որ մարդու գիտակցությունը երկակի է՝ իրարից զատելով «արյան» և «մտավոր» գիտակցությունները: Նա կարծում էր, որ «արյան» մասին գիտելիքը մարդը կարող է ծեռք բերել կենսահարաբերության միջոցով¹⁰⁷: Այս գաղափարը նրա մեջ ծնվում է Քորնվոլում 1915-1917 թթ.: Սակայն քննադատները կարծում են, որ Քորնվոլում ապրած ժամանակահատվածն ավելի շատ նրա կենսագրության վրա է ազդել, քան մտածողության:

1910 թ. Լոուրենսի Քորնվոլ տեղափոխվելու ցանկությունն արտացոլված է իր հարսնացու Լուի Բըրովին ուղղված մի շարք նամակներում: Վերջինս չէր ցանկանում տեղափոխվել Քորնվոլ, և գրողը փորձում էր համոզել նրան՝ նկարագրելով տեղանքի

¹⁰⁶ Lawrence D., *The Woman Who Rode Away and Other Stories*, Harmondsworth, England: Penguin Books Ltd., 1970, p. 76.

¹⁰⁷ Lawrence D., *The Letters*, Volume II, June 1913 – October 1916 (Edited by George J. Zytaruk, etc.), Cambridge: Cambridge University Press 1981, p 470.

գեղեցկությունը¹⁰⁸: Լոուրենսն անգամ համաձայնվում է ամուսնանալ Եկեղեցում, ինչից հետո ուր էլ գնար՝ կինը պիտի հետևեր իրեն¹⁰⁹: Այսքանից հետո էլ, այնուամենայնիվ, նա չի կարողանում համոզել Լուիին և ստիպված է լինում գրել. «Երբ ես մեկնեմ Քորնվոլ, դու էլ պիտի գաս, հակառակ դեպքում՝ գնա գրողի ծոցը»¹¹⁰: Քորնվոլ մեկնելու Լոուրենսի մեջ ցանկությունը կապված էր «իին աշխարհի» կարևորությունն ամբողջովին հասկանալու և «նոր աշխարհ» ստեղծելու հետ¹¹¹: Նա գրում է իր նամակներից մեկում. «Ես այնքան տխուր եմ իմ երկրի համար: Երկու հազար տարեկան քաղաքակրթությունն այժմ կործանվում է... Կարծում եմ՝ ամեն ինչ ավարտին է մոտենում: Անգլիան և քրիստոնեական դարը կործանվում են»¹¹²:

Մարք Շորերը գրում է. «Գրականության պատմության մեջ գոյություն չունի մեկ այլ գրող, որի աշխատանքների վրա այդքան ուժեղ ազդած լինի վայրը, որտեղ նա ստեղծագործում է»¹¹³: Լոուրենսը Քորնվոլի մասին նկարագրության մեջ նշում է, որ այդ վայրը պատկանում է նախաքրիստոնեական դարաշրջանին, կելտերին: Այն շատ է տարբերվում Անգլիայից, քանի որ մարդիկ այստեղ պարզ կենսակերպ են վարում, և զգացվում է Արթուր թագավորի ժամանակների մարդկանց շունչը: Նա Քորնվոլի և նախնակենցաղ մարդկանց միջև զուգահեռներ է անցկացնում, որոնք առաջնորդվում էին կենսահարաբերման ցանկությամբ և հավատում էին տիեզերքի ուժին¹¹⁴: Այնքան մեծ էր Քորնվոլից ստացած տպավորությունը և ազեցությունը Լոուրենսի գաղափարների ձևավորման վրա, որ թվում էր՝ նա չի կարողանա հեռանալ այնտեղից: Մարք Քինքհե-Վիկսը գրում է. «Թվում է՝ Լոուրենսը երբեք չի ցանկանա հեռանալ Քորվոլից»¹¹⁵:

¹⁰⁸ Lawrence D., The Letters, Volume I, September 1901 – May 1913 (Edited by James T. Boulton), Cambridge: Cambridge University Press, 1979, p. 207.

¹⁰⁹ Նոյն տեղում, էջ 218:

¹¹⁰ Նոյն տեղում, էջ 214:

¹¹¹ Նոյն տեղում, էջ 426:

¹¹² Նոյն տեղում, էջ 431, 433:

¹¹³ Schorer M., Modern British Fiction. Oxford: Oxford University Press, 1969, p. 282.

¹¹⁴ Lawrence D., The Letters, Volume II, June 1913 – October 1916 (Edited by George J. Zytaruk, etc.), Cambridge: Cambridge University Press 1981, pp. 493-505.

¹¹⁵ Kinkead-Weekes M., D. H. Lawrence: Triumph to Exile 1912-1922, Cambridge: Cambridge University Press, 1996, p. 311.

«Ամերիկյան դասական գրականության ուսումնասիրություն» աշխատության մեջ Լոուրենսը դիմում է առասպելաբանությանը՝ փորձելով Ադամի և Եվայի աստվածաշնչյան պատմության միջոցով նկարագրել «արյան և մտավոր գիտակցությունների» տարբերությունը. «Սկզբում Ադամը ճանաչեց Եվային, ինչպես վայրի կենդանին է ճանաչում իր կողակցին իր «արյան գիտակցության», ոչ թե բանականության շնորհիվ: Հետո սկսվում է խնձորի պատմությունը: Գիտակցությունը դրդում է Ադամին զգալ, թե ինչ է ամոթը: Նա սկսում է գիտակցել, որ մարմինը նախ և առաջ անհրաժեշտ է սնունդ հայթայթելու համար: Այսինքն՝ մարմինը պետք է տքնածան աշխատի, որպեսզի սնվի: Գիտակցությունը մարդու մեջ ինքնազնիաբերության զգացում է առաջացնում: Այնուհետև իին Ադամի մտածելակերպը չորս հազար տարվա ընթացքում հետզիետե սկսում է փոխվել»¹¹⁶:

Ժամանակակից մարդու ինքնակործանումը Լոուրենսը նկարագրում է հետևյալ կերպ. «Քանի դեռ մարդն ընդունակ չէ ապրել իրական զգացմունքներ, նա դատապարտված է ինքնակործանման: Մեր էությունը կարիք ունի զգալու այն բոլոր հաճելի զգացումները, որոնք բնությունը շնորհել է մարդուն: Մարդը զգայական էակ է, սակայն նա սահմանափակել է իր զգացմունքները բանականության անտեղի միջամտության պատճառով»¹¹⁷: Այս հատվածը նկարագրում է մարդկությանը բնորոշ պայքարը բնագդի և բանականության միջև:

Ինչպես Ֆրումն է պնդում, մարդիկ ձգտում են խուսափել զգացմունքներից, որպեսզի չզգան իրենց անհատականությունը¹¹⁸: Ըստ Լոուրենսի՝ սա ինքնասպանության գործընթաց է. «Բոլոր մարդիկ անում են այն, ինչ իրենց նախնիներն էին անում՝ նրանք սպանում են իին Ադամի մարմնի զգացմունքները, կարիքները: Սա նման է ինքնասպանության»¹¹⁹:

¹¹⁶ Lawrence D., Phoenix, The Posthumous Papers of D. H. Lawrence (Edited by Edward D. McDonald), New York: The Viking Press, 1968, p. 770.

¹¹⁷ Lawrence D., Studies in Classic American Literature (Edited by Ezra Greenspan, etc.), Cambridge: Cambridge University Press, 2003, p. 82.

¹¹⁸ Fromm E., The Art of Loving, New York: Harper and Brothers, 1956, p. 11.

¹¹⁹ Lawrence D., Phoenix, The Posthumous Papers of D. H. Lawrence (Edited by Edward D. McDonald), New York: The Viking Press, 1968, p. 771.

Այս բառերում ճշմարտություն կա: Ինքնակործանման վառ օրինակներից են պլաստիկ վիրահատության միջամտությունները, պիրսինգների և տատուների գործածումը, ալկոհոլի և թմրանյութերի ազդեցության տակ մարմնի խեղաթյուրումը, հեռուստատեսությամբ հայտնի ծրագրերում մարմնի ցուցադրումը, որը ոչ այլ ինչ է, քան անբարոյականություն: Մարմինն ավելի «գեղեցկացնելու», փոխելու փորձերն ավելի շատ վերաբերում են կանանց, քան տղամարդկանց, ինչպես վկայում են անորեքսիայով հիվանդ կանանց բարձր ցուցանիշները: Մարդու մարմինը վտանգված է:

Ժամանակակից դարաշրջանը մարմինը դիտում է որպես զգվելի երևոյթ, որի հիմնական պատճառներից մեկը նյութականի նկատմամբ մարդկանց ձգտումն է, որն էլ ստիպում է մարդուն ավելի «կատարելագործել» մարմնի այս կամ այն հատվածը: Գիտակցությունը զբաղված է «շտկելով» բնության ձեռագիրը բոլոր բնագավառներում և մարդու մարմինը բացառություն չէ: Մարդու մարմինը փոփոխման առարկա է դարձել, և այդ փոփոխությունը պետք է համահունչ լինի տղամարդու կամ կնոջ «իդեալին»: Պոռնոգրաֆիկ նյութերի տարածումը մարմինը ստորացնում է և խորացնում է այն անդունդը, որը կա մտքի և մարմնի միջև, ինչի մասին և գրում է Լոուրենսը իր աշխատություններում:

«Կենսահարաբերություն, գրականություն և գրաքննություն»՝ «Քոմիաս» հրատարակության գրքի նախաբանում Հարրի Մուրը գրում է. «Ուշադիր կարդացողները շուտով հայտնաբերում են, որ Լոուրենսն իրականում իմաստուն մարդ է, որին ոչ թե կենսահարաբերությունն է հետաքրքրում, այլ կյանքն առհասարակ: Իսկ կյանքը բաղկացած է ոչ միայն կենսահարաբերությունից, այլ հաճելի զգացմունքներից և սիրուց՝ որպես մեխանիկական քաղաքակրթության հիմնական հակադրություն¹²⁰:

Ինչպես ասվել էր նախկինում, Լոուրենսը շեշտում է մարմինը միայն մարմնի և բանականության միջև հազարավոր տարիների ընթացքում առաջացած անհավասարակշռությունը շտկելու համար: Մուրը այս մասին եվս գրում է իր գրքի նախաբանում. «Լոուրենսը ժամանակակից աշխարհում փորձում է հավասարակշռություն

¹²⁰ Lawrence D., Sex, Literature and Censorship, Edited by H. Moore), London: Heinemann, 1956, p. 8.

պահպանել մտավոր և զգայական համակարգերի միջև, որին դասվում է ոչ միայն կենսահարաբերությունը, այլև մարդու մյուս բոլոր զգացմունքները: Նա շեշտում է կիրքն ու զգացմունքները, որովհետև մարդկությունն այդքան ժամանակ արհամարհել է դրանք: Նա չի ցանկանում ոչնչացնել մտավոր գործընթացները, այլ փորձում է դրանք բնականոն կերպով հավասարակշռել զգացմունքների հետ»¹²¹:

Սա այն բանի ճշգրիտ նկարագրությունն էր, ինչ Լոուրենսը փորձում էր անել: Հին Շվարցը մի քանի պատճառ է նշում, թե ինչու Լոուրենսի մտքերը չեն ընդունվում գրական աշխարհում. «Լոուրենսը կրքուտ գրող է, իսկ մեր ճաշակն այլ է, մենք անսիրտ ենք: Քաղաքական և սոցիալական ցնցումների դարձել են մարդկանց լավագույն ընկերները»¹²²:

Ադելմանի գոքի նախաբանում Սանդրա Գիլբերտը ժամանակակիցների շրջանում Լոուրենսի մտքերի ճիշտ չընկալվելու առնչությամբ նույն պատճառներն է թվարկում. «Նա չափազանց լուրջ է, նրա մեջ բացակայում է հեգնանքը: Եվ նա տեղյակ է այդ մասին: Լոուրենսը շատ դժգոհ է, որ իր ժամանակակիցները կեղծում են զգացմունքները»¹²³:

Լոուրենսը ցավով նշում է, որ ժամանակակից աշխարհի կործանման հիմնական պատճառներից է այն, որ մենք սովորել ենք զգացմունքներին չտրվել, քանի որ դրանք կարող են մեզ լրջորեն վնասել. «Մի՛ վստահիր ոչ մեկին, մի՛ տրվիր զգացմունքներին,- ահա սա է այսօրվա կարգախոսը: Վստահի՛ր մարդկանց՝ դատելով նրան ըստ կարողության: Նյութապաշտությունը սպանում է զգացմունքները, կիրքը, սերը միմյանց նկատմամբ, քանի որ մարդու հովզերը մարդկանց համար ծիծաղելի են և ճղճիմ: Նրանք վստահում են միայն բանականությանը: Բնագդների և բանականության միջև անդունդը շատ մեծ է: Իրական զգացմունքները հնարավոր է զգալ միայն մարմնի միջոցով: Մարմնական կյանքը զգացմունքային և հուզական կյանքն է: Մարմինը զգում է իրական քաղց, իրական ծարավ, ուրախություն, արևի ջերմություն, ցուրտ, իրական հաճույք, վարդերի բույրը, իրական բարկություն, սեր, կիրք, ատելություն, ցավ: Բոլոր այս

¹²¹ Նոյն տեղում, էջ 27:

¹²² Adelman G., Reclaiming D. H. Lawrence: Contemporary Writers Speak Out, Lewisburg: Bucknell, 2002, p. 42.

¹²³ Նոյն տեղում, էջ 3:

զգացողությունները անհնար է զգալ ուղեղի համակարգի միջոցով: Այդ զգացմունքները պատկանում են մարմնին և ճանաչվում միայն գիտակցության կողմից»¹²⁴:

Սա, իսկապես, հետաքրքիր վարկած է, և Լոուրենսը այն պնդում է անընդմեջ՝ տարբեր ձևակերպումներ տալով նոյն գաղափարին: Ըստ Լոուրենսի՝ մենք ամեն ինչ զգում ենք մեր մարմնով: Միտքը պարզապես գրանցում է փաստերը՝ մարմնի զգացողությունները: Սա թերևս անբնական թվա, սակայն այս հայտարարության մեջ ճշմարտություն կա, եթե մարդը սկսի լրջորեն խորհել այդ մասին: Զգացմունքները կասկածի տակ են դրվում բանականությանը հակվածների կողմից: Սակայն նոյնիսկ նրանք չեն կարող հստակ բացատրել, թե որտեղ են սկզբում առաջանում զգացմունքները՝ գլխուղեղո՞ւմ, թե՝ մարմնում: Արդյո՞ք ուղեղն է առաջինը զգում դրանք, ապա ազդանշանը փոխանցում մարմնին, թե՝ մարմինն է ավելի շուտ զգում, ապա ուղեղը գրանցում է այդ փաստը; Ճնշվածությունը, սթրեսը, անհանգստությունը մարմինն ավելի շուտ է զգում, քան ուղեղն ունակ է այն գրանցելու:

1929 թ. գրված «Այս նկարների նախաբանը» («Introduction to These Paintings») էսսեում Լոուրենսն առաջ է քաշում հետաքրքիր մի վարկած արևամտյան ավանդույթում Վերածնդից սկսած մարմնի կարիքները ստորադասելու վերաբերյալ: Լոուրենսի կարծիքով, անգլիացիներն ու ամերիկացիները կաթվածահար են եղել վախից և այդ օրվանից ի վեր սկսել են ստորադասել մարմնի բնական ցանկությունները, պահանջմունքները¹²⁵: Այս վախի զգացումն առաջացել է դեռևս Շեքսպիրի ժամանակաշրջանում՝ հասարակական հորի երևույթների, մասնավորապես սիֆիլիսի տարածման պատճառով: Կենսահարաբերությունը սարսափ էր ներշնչում մարդկանց¹²⁶:

Սիֆիլիսը նոր երևույթ էր Անգլիայում 15-րդ դարավերջին. «Անգլիայում անգամ թագավորական ընտանիքները տառապում էին սիֆիլիսից: Էդվարդ VI-ը և Էլիզաբեթ ծնվել էին՝ ժառանգելով այդ հիվանդությունը իրենց նախնիներից»¹²⁷: Թյուդորներն ու

¹²⁴ Lawrence D., A Propos of Lady Chatterley's Lover, Phoenix II, (Edited by Harry T. Moore, etc), New York: Viking, 1968, pp. 82-111.

¹²⁵ Lawrence D., Selected Literary Criticism (Edited by Anthony Beal), New York: Viking Press, 1986, p. 53.

¹²⁶ Նոյն տեղում, էջ 53:

¹²⁷ Նոյն տեղում, էջ 54:

Ստյուարդները մահացել են այդ հիվանդությունից: Այս ժամանակահատվածում Անգլիայի և Շոտլանդիայի առօրյայում արդեն ձևավորվել էր «ροχ ὡν γου» արտահայտությունը, որն անեծքի մի տեսակ էր՝ գործածելով սիֆիլիս բառը: Սա թերևս ցույց է տալիս, որ վախի զգացումը այդ հիվանդության նկատմամբ իրական էր և պղտորում էր այդ ժամանակաշրջանի մարդկանց հոգեկան աշխարհը՝ մեծապես ազդելով նրանց սեռական կյանքի վրա: Ազնվական խավը անգամ սկսում է սահմանափակել մարմնական զգացմունքները՝ հիվանդությունից խուսափելու համար: Իրական, բնական կենսահարաբերությունն անհնար էր ունենալ նման վախը սրտներում¹²⁸:

Այսպիսով, այս վախը բույն է դնում մարդկանց գիտակցության մեջ, և կենսահարաբերությունը սկսում է նոյնացվել վախի զգացումի հետ: Լոուրենսի կարծիքով՝ այս վախը նաև ստիպում է մարդուն սահմանափակել իր շփումը մարդկանց հետ, ինչն էլ հանգեցնում է այն բանին, որ մարդիկ սկսում են ավելի շատ վստահել բանականությանը, քան բնագդներին¹²⁹: «Բնագդների միջոցով է հնարավոր, որպեսզի մարդիկ ճանաչեն իրար մարմնապես: Միայն բնագդաբար է հնարավոր զգալ որմացինի հոգերն ու ապրումները: Տեղեկատվությունը մարդը ստանում է բնագդի և ոչ թե բանականության շնորհիվ: Երկու մարդկանց միջև իրապուրանքը բնագդաբար է ծագում և ոչ թե գիտակցաբար»¹³⁰:

Լոուրենսի կարծիքով, ժամանակակից մարդիկ, մասնավորապես՝ Անգլիայում և Ամերիկայում, իրականում չեն զգացել իրական, ճշմարիտ սեր, կիրք, քանի որ սպանել են իրենց մեջ բնագդներին հետևելու ցանկությունը¹³¹: Հասարակական խնդիրներով գրաղվող գիտնականներին Լոուրենսի գաղափարները կարող են չափազանցություն թվալ, սակայն նրանք հաստատում են, որ Լոուրենսի արտահայտած մտքերում ճշմարտություն կա: Ինչպես Գարրի Վոթսոնն է հաստատում «Դ.Հ. Լոուրենս և խղճուկ մարմին» էսեում, Լոուրենսն իր պնդումները վերցրել է Մաքս Վեբերի տեսությունից՝ ավելացնելով սեփական գաղափարներն իր էսեում: Վեբերի «Բողոքական էթիկան և

¹²⁸ Նոյն տեղում, էջ 57:

¹²⁹ Նոյն տեղում, էջ 58:

¹³⁰ Նոյն տեղում, էջ 58:

¹³¹ Նոյն տեղում, էջ 59:

կապիտալիզմի հոգին» աշխատության մեջ Լոուրենսն իրեն հոգեհարազատ մտքեր է գտնում և գրում է, որ բուրժուական գիտակցությունը վախ և ատելություն է սերմանում տղամարդկանց և կանանց հոգիներում բնազդային, ինտուիտիվ մարմնի նկատմամբ¹³²: Քանի որ վախն ու ատելությունը պատճառաբանված էին, մարդիկ սկսում են ճնշել բնազդները: Անշուշտ, այս գաղափարները տարածողները հասարակության մեջ մեծ ազդեցություն ունեցող մարդիկ են:

Ինչպես Փալմերն ու Բալթիքն են նկատել, անգլիական գրականությունը, պատմությունը, բարքերն ու սովորույթները որպես առարկա առաջին անգամ Հնդկաստանի քոլեջներում են դասավանդվել՝ երեխաներին ավելի քաղաքակիրթ դարձնելու համար: Այն կիրառվում էր որպես գեների և դասակարգերի վերահսկողության գործիք¹³³: Ըստ Լոուրենսի՝ ահա այս կեղծ բարոյագիտությունն է, որ մարդկանց դարձնում է ողբոտ:

Վոթսոնը նշում է, որ Լոուրենսը գործածում է «բուրժուա» եզրույթը կապիտալիզմի փոխարեն, սակայն նրա մտքերը շատ նման են Վեբերի տեսակետներին: Լոուրենսը ինդուստրալացումը չարիք էր համարում: Մենք կարող ենք նույնը ասել ներկա ժամանակների մասին: Նյութականի նկատմամբ հետաքրքրությունը ստիպում է մեզ մոռանալ մեր բնական ազդակների մասին: Քսանմեկերորդ դարում մարդկանց համար անընդունելի է իրենց ինտուիցիային վստահելը: Նրանք կրթվում են, ինքնակատարելագործվում, ինչը ապացուցում է, որ այսօվա մարդիկ չեն կարող «բնական մարդ» համարվել: Նրանք շատ են տարբերվում իրենց նախնիներից: Օրն այնքան հագեցած է լինում աշխատանքով, գումար վաստակելով, ֆինանսական ծախսերը հոգալու մտածմունքներով, որ մարդը ժամանակ չի ունենում սեփական ներաշխարհ ներթափանցելու, զգալու իր բնական էությունը:

Այսպիսով, ժամանակակից աշխարհը բնութագրվում է որպես փողի, մեքենաների, ստրուկների, նյութականի համար կյանքը վաճառող մարդկանց դարաշրջան:

¹³² Davies J., D.H. Lawrence on Hardy and Painting, Study of Thomas Hardy and Introduction to these Paintings (Edited with an Introduction by J. V. Davies), London: Heinemann Ltd., 1973, p 61.

¹³³ Slement S., Teaching and End of Empire, College Literature 19-20.3-1, 1992-1993, p. 153.

Փողի մոլուցի և նյութական հարստության՝ ժամանակակից մարդու իիվանդության մասին է Լոուրենսի «Ճոճաձիռ հաղթողը» («The Rocking-Horse Winner», 1926) պատմվածքը: Հեսթեր անունով երիտասարդ կինը, իր երեք զավակներին ուշադրությամբ, սիրով և ջերմությամբ շրջապատելու փոխարեն, տառապում է փողի մոլուցքով և, կարծես, նրա «իիվանդություն» անբուժելի է: Լոուրենսն այս պատմվածքում դիմում է խորհրդանշների, ոճական հնարների՝ անձնավորման և հեգնանքի օգնությանը: Ողջ տունն է ասես մարմին ստացել: Այն անընդհատ շշնջում է մարդու նման: Երեխաների մայրն ու հայրը երբեք բարձրաձայն չեն խոսում փողի մասին, սակայն տունը նրանց փոխարեն արտաքերում է ավելի և ավելի շատ փող ունենալու նրանց ցանկությունը: Տունն ազահորեն շշնջում է. «Ավելի և ավելի շատ փող», և խեղճ երեխաները լսում են այս զառացանքը¹³⁴: Տան ծայները խորհրդանշական են: Նրանք արտահայտում են մոր ազահությունը: Լոուրենսը նշում է պատմվածքում, որ այս ընտանիքը ապրում էր գեղեցիկ պարտեզով և մի քանի աղախիններով շքեղ, լավ կահավորված տանը և իրեն բարձր դասում հարևաններից: Տանտիրուիին բավականին մեծ կարողություն ուներ, սակայն չէր բավարարվում իր ունեցվածքով: Փոլը՝ տանտիրուի որդին, ցանկանալով բավարել մոր՝ ավելի և ավելի շատ փող ունենալու ցանկությունը, իր սենյակում քշում է ճոճաձին, ինչը նոյնպես խորհրդանշական է: Հեսթերը լսում է այդ հետզհետե ահազնացող ծայնը, որը գալիս է որդու սենյակից: Նա գիտեր, թե դա ինչ ծայն է: Դա ավելի և ավելի շատ փող ունենալու ծայնն էր: Երեխան բառացիորեն փորձում էր այս կերպ բավարարել մոր՝ շատ փող ունենալու ցանկությունը, և նրան թվում էր, թե որքան արագ «վարգի» ճոճաձին, այդքան շատ կգոհացնի իր մորը և այս կերպ կարժանանա մոր սիրուն և քնքանքին: Երեխան ցանկանում է իրականացնել մոր երազանքը, որի շնորհիվ կիրականանար նաև իր երազանքը՝ մոր սիրուն արժանանալը¹³⁵:

Հեգնանքն այս պատմվածքի կարևորագույն տարրերից է, որն ակնհայտորեն ներկայացված է ընթերցողին: Փոլը ցանկանում է վերջ դնել տան զառանցանքին ավելի

¹³⁴ Lawrence D., The Woman Who Rode Away (Edited by Dieter Mehl and Christa Jansohn), Cambridge: Cambridge University Press, 1995, p. 230.

¹³⁵ Նոյն տեղում, էջ 233-234:

արագ քշելով իր ճոճաձին, սակայն տունը շարունակում է Էլ ավելի բարձր հառաչել: Որքան շատ է Փոլը իր ճոճաձին հեծած «փող վաստակում», այնքան ավելի բարձր է շշնջում տունը: Եվ որքան էլ երեխան ջանում է դադարեցնել տան հառաչանքը, միևնույն է՝ անօգուտ է: Ուշագրավ է այն դրվագը, երբ երեխան մոր ծննդյան տարեդարձի առթիվ նրան որպես նվեր փող է ընծայում, որը շահել էր ծիարշավի խաղաղրույքով՝ կարծելով, թե դա կգոհացնի մորը, սակայն սխալվում է: Մայրն ուրախանալու փոխարեն զայրանում է, երբ կարդում է կից նամակը, որով նրան տեղեկացնում էին, որ այդ գումարը միանգամից ստանալ չի կարող:

Երեխայի մահը նույնպես խորհրդանշական է: Նախքան մահանալը նա սկսում է մտածել, թե որքան երջանիկ է: Միայն մահը նրան կարող է երջանկացնել, ազատել այս տառապանքից: Ահա այս պատմվածքում մենք ականատես ենք դառնում Լոուրենսի այն գաղափարին, որ մահը երբեմն կարող է ազատել նյութապաշտ հասարակությունից, այս դեպքում՝ մորից¹³⁶:

Մեր ժամանակակիցներին բնորոշ է ամեն ինչ ծանրութեթև անելը, վերլուծելը, քննարկելը, ինչը ռացիոնալ մտածողության արդյունք է: Ժամանակակից աշխարհը երիտասարդ սերնդին հրաշալի հնարավորություններ է ընձեռում աշխարհի տարբեր բուհերում ավելի բարձրակարգ կրթություն ստանալու: Արագափոփոխ իրականության մեջ մարդիկ չեն հասցնում ստանալ այնքան գիտելիքներ, որքան անհրաժեշտ է իրենց: Նոր սարքերի, համակարգերի ստեղծումը մարդուն ստիպում է կատարելագործվել, որպեսզի կարողանա կիրառել դրանք առօրյա կյանքում: «Բնական մարդն» այս աշխարհում տեղ չունի: Գիտակից մարդը կկործանվի, եթե հույսը դնի իր բնական ազդակների, զգացմունքների, ինտուիցիայի վրա¹³⁷:

Ներկայումս գրեթե բոլորը փորձում են այս կամ այն երևույթին գիտական բացատրություն տալ: Եթե բացատրությունը գիտական չինի և հիմնված լինի պարզապես հույզերի, զգացմունքների, ինտուիցիայի վրա, ապա այն չի կարող արժանահավատ

¹³⁶ Նույն տեղում, էջ 243:

¹³⁷ Herzinger K., D.H. Lawrence in his Time, 1908-1915, Lewisburg: Bucknell University Press, London and Toronto: Associated University Presses, 1982, p. 177.

համարվել: Սա ևս մեկ անգամ ապացուցում է, որ մենք ապրում ենք գիտակցական կյանքով: Մեզ մանկուց սովորեցնում են, որ գիտությունը երբեք չի կարող կեղծ պատկերացումներ տալ շրջապատող երևոյթների մասին, որ պետք է սովորենք բարեկեցիկ կյանք ունենալու համար՝ նույն կերպ դաստիարակելով մեր սերունդներին:

Այսպիսով, Լոռուրենսի այն գաղափարը, որ մարդը պետք է ուշադրություն դարձնի իր ցանկություններին, բնական պահանջմունքներին, չի կարող ընդունելի լինել ժամանակակից մարդու համար, քանի որ դրանք կարող են մարդուն ինքնակործանման տանել: «բնական մարդու» կերպարը շատ թե քիչ պահպանվել է այսօր գյուղական համայնքներում: Գյուղացիներն ապրում են օրվա հաց հայթայթելով: Նրանք իրենց բնական պահանջմունքները բավարարելու մասին են մտածում: Լինելով բնությանն ավելի մոտ՝ նրանք էներգիա, ուժ են ստանում բնության յուրաքանչյուր մասնիկից, և դա իրենց համար առաջնայինն է, քանի որ նրանց պատկերացմամբ դա է երկարակեցության աղբյուրը:

Եվ իսկապես, եթե ուշադիր հետևենք, ապա կտեսնենք, որ քաղաքում ապրող մարդիկ շատ ավելի նյարդային են, ոյուրագրգիռ, չեն կարողանում տեղափոխվել ժամանակի մեջ, միշտ վազքի մեջ են, ինչն էլ բերում է իր բացասական հետևանքները: Այս մրցավազքը հանգեցնում է այն բանին, որ վաղ տարիքից ձեռք են բերում բազմաթիվ հիվանդություններ, որոնց պատճառով կյանքից հեռանում են՝ չհասցնելով ծերանալ: Գիտակցությունը մարդուն դրդում է մրցակցելու բոլոր հաջողակ մարդկանց հետ, որպեսզի ինքն էլ կարողանա ունենալ այն ամենը, ինչին հասել է իր հարևանը, բարեկամը: Մարդը փորձում է անընդհատ ինքնակործվել, քանի որ ժամանակակից աշխարհը մեծ տեղ է տալիս կրթված, գրագետ մարդկանց: Գյուղացիներից շատերը, ի տարբերություն քաղաքում բնակվող մարդկանց, չունեն և չեն տեսնում այդ բոլոր հնարավորությունները, ուստի չեն ձգտում դրանց: Նրանք հուզական առումով ավելի զգայուն են և կարեկից: Իրենց ուղեղը չծանրաբեռնելով գիտելիք ստանալու, բարեկեցիկ կյանքի ձգտումով՝ ողջ էներգիան կենտրոնացնում են սիրելու և սիրված լինելու բնական գաղափարի վրա, որը իրենց է փոխանցվել նախնիներից: Իսկ քաղաքում մարդիկ մեծամասամբ սիրելու

ժամանակ չունեն: Նրանց ուղեղը կենտրոնացած է գիտելիք, լավ աշխատանք ունենալու վրա: Սերը երկրորդական է: Եվ որքան ժամանակակից աշխարհը կատարելագործվում է, այնքան մարդը հեռանում է իր արմատներից:

Լոուրենսի, ինչպես և Ֆրոմի պատկերացմամբ՝ կապիտալիստական համակարգը մերժում է զգացմունքները, մասնավորապես՝ սիրո զգացմունքը: «Սիրո արվեստ» էսսեում, Ֆրոմը հաստատում է, որ սերն իր բոլոր դրսնորումներով հազվադեպ երևույթ է արևմտյան հասարակության մեջ¹³⁸: Ըստ Ֆրոմի՝ կապիտալիզմը սիրային հարաբերությունները դատապարտում է: Մարդու համար կարևորը կուտակած փողն է, կարողությունը, որոնք մարդուն ավելի հզոր են դարձնում¹³⁹:

Փաստորեն, մարդկանց հաճույք է պատճառում անզգամ, լպիրշ և թերահավատ լինելը: Սա, իհարկե, մարդու ինքնապաշտպանողական ռեակցիան է, որպեսզի ազատ չարձակի իր բնական զգացմունքները. «Ժամանակակից կապիտալիզմը պահանջում է, որ մարդիկ ավելի և ավելի շատ ունենան: Այն թելադրում է, թե ինչի պետք է ձգտի մարդը՝ ազդելով նրա ճաշակի ձևավորման վրա: Այն ցանկանում է, որ մարդիկ ենթարկվեն իր կանոններին: Իսկ ի՞նչ շահ կունենա մարդը: Ժամանակակից մարդը հեռացել է բնությունից, բնական արմատներից¹⁴⁰: Նա իր կյանքն օգտագործում է միայն նյութական շահ ստանալու համար: Մարդկային հարաբերությունները դարձել են անտանելի: Բոլորը ձգտում են ինքնապաշտպանվել, սահմաններ են գծում, որպեսզի ուրիշները չկարողանան թափանցել իրենց ներաշխարհ: Արդյունքում մարդը մնում է միայնակ, անպաշտպան և խղճալի»¹⁴¹:

1956 թ. հետո Ֆրոմն առաջինն էր, որ խորը վերլուծություն կատարեց և հաստատեց այն նոյն գաղափարները, որոնց մասին Լոուրենսը խոսել էր դեռևս քառորդ դար առաջ:

Լոուրենսի հերոսները նոյնպես չեն կենտրոնանում նյութականի վրա: «Թոմաս Հարդի» գրքի չորրորդ գլխում Լոուրենսը գրում է. «Մարդը պետք է աշխատի միայն

¹³⁸ Fromm E., The Art of Loving, New York: Harper and Brothers, 1956, p. 83.

¹³⁹ Նոյն տեղում, էջ 84:

¹⁴⁰ Shepard P., Man in the Landscape: A Historic View of the Esthetics of Nature, Athens: University of Georgia Press, 2002, p. 150.

¹⁴¹ Fromm E., The Art of Loving, New York: Harper and Brothers, 1956, pp. 85-86.

գոյությունը պահպանելու համար: Սա է «բնական մարդու»էությունը: «բնական մարդը» միայն ուտելու և գլխավերևում տանիք ունենալու կարիք ունի: Նրան չեն հետաքրքրում լավ վարձատրվող աշխատանքները, թանկարժեք և գեղեցիկ հագուստը, համեղ կերակուրները: Նա ապրում է՝ հետևելով իր բնազդներին: Աշխատանքը պետք է գոյատևաման միջոց լինի: Մարդը, որ վայելում է իր աշխատանքը, նման է սարքի կամ գործիքի: Աշխատող մարդը շատ ժամանակ է ծախսում գումար վաստակելու վրա և այդպիսով ժամանակ չի ունենում հասկանալու, թե ինչ է իրականում ցանկանում: Փողը փոխում է անհատին: Երկրորդական կարիքների բավարարումը, որոնց թվում են նաև գիտությունը և կրթությունը, անիմաստ է: Այն շեղում է մարդու ուշադրությունը բնական ազդակներով առաջնորդվելուց»¹⁴²:

Մարդը, հեռանալով իր բնական էությունից, ակամա անբավարարվածության զգացում է ունենում: Տարբեր միջոցներ կան այս զգացողությունը հաղթահարելու համար՝ որոշ մարդիկ խորամուխ են լինում կրոնի, մյուսները՝ իրենց կարիերայի մեջ: Սակայն, ընդհանուր առմամբ, այս միջոցները միայն ժամանակավորապես են նրանց միսիթարում, քանի որ բնությունից տրված զգացողությունները շատ դժվար է զսպել:

Ըստ Լոուրենսի՝ մենք չենք կարող լեզվի միջոցով արտահայտել այն զգացմունքները, ինչ զգում ենք, որովհետև անզամ չենք ցանկանում ընդունել դրանց գոյությունը¹⁴³: Դժվար է կեղծել զգացմունքները՝ մենք կամ զգում ենք դրանք, կամ՝ ոչ: Զգացմունքներն անտեսելը սպանում է մարդու էությունը, և Լոուրենսը դատապարտում է նման վարքագիծը: Սա առողջ մարդու վերաբերմունք չէ: Սերը տղամարդու և կնոջ միջև գլխավոր թեմաներից է, որը Լոուրենսը քննարկում է իր «արյան գիտակցության» տեսության մեջ: Նա համաձայն է Բայրոնի՝ տղամարդու և կնոջ մասին տեսակետին: Նրա կարծիքով, տղամարդը և կինը հստակ առանձնացված գործառույթներ ունեն: Տղամարդը՝ որպես մտածող և գործող, միշտ ակտիվ է և դրական, իսկ կինը՝ բացասական: Մյուս

¹⁴² Lawrence D., Study of Thomas Hardy and Other Essays (Edited by Bruce Steele), Cambridge: Cambridge University Press, 1988, p. 21.

¹⁴³ Lawrence D., Phoenix, The Posthumous Papers of D. H. Lawrence (Edited by Edward D. McDonald), New York: The Viking Press, 1968, p. 797.

կողմից, որպես ավելի զգայուն էակ, կինը դրական է, իսկ տղամարդը՝ բացասական¹⁴⁴: Կինը սիրում է, իսկ տղամարդը՝ սիրվում: Եթե հարցը մտածելուն կամ գործելուն է վերաբերում, տղամարդն է նախաձեռնողը: Սակայն, պետք է նկատել, որ Լոուրենսը չի տարանջատում կնոջը տղամարդուց: Նա «Երևակայություն» էսեում գրում է. «Արդյո՞ք տղամարդն է առաջացել կնոջ կողուկրից, թե՛ կինը՝ տղամարդու»¹⁴⁵: Այս տողերում հստակ ներկայացված են Լոուրենսի՝ կնոջ և տղամարդու վերաբերյալ տեսակետը, որտեղ նա հավասար նժարների վրա է դնում երկու սեռերին¹⁴⁶: Եվ սա, իհարկե, բոլոր ժամանակների ամենահետաքրքիր հարցերից է. քանի դեռ մարդիկ ծնվում և ապրում են, այս հարցին տարբեր մարդիկ տարբեր կերպ կպատասխանեն: Լոուրենսն ինքը չի էլ փորձում այս հարցին պատասխան գտնել: Նա ցանկանում է իր ստեղծագործություններում երկու սեռերի միջև հավասարություն պահպանել, ինչին մեծ ուշադրություն է դարձել ֆեմինիզմի վաղ ներկայացուցիչներից մեկը՝ <. Սիմփսոնը¹⁴⁷:

Սիմփսոնը հաստատում է, որ կանայք ցանկացած բնագավառում կարող են իրենց դրսևորել տղամարդկանց նման¹⁴⁸: Այսօր որոշ ֆեմինիստներ, ինչպիսիք են Հելեն Սիքոսը և Լյուա Իրիգրեյը, նշում են, որ կանայք պետք է իրենց զգացմունքայնությունը դիտեն որպես առավելություն տղամարդու ռացիոնալության նկատմամբ¹⁴⁹: Ինչպես Վերմոնթ համալսարանի պրոֆեսոր Մարգարեթ Էդվարդսն է նշում «Արդյո՞ք այսօրվա կինն իսկապես ունի այսօրվա տղամարդու կարիքը» էսեում, կանայք այսօր շարժիչ ուժ են համարվում: «Ինչպես ընդհանուր ուսումնասիրություններն են փաստում,- գրում է Էդվարդսը,- զուգերը, որոնք լրացնում են միմյանց, ավելի մեծ շանսեր ունեն միասին

¹⁴⁴ Lawrence D., Psychoanalysis and the Unconscious: Fantasia of the Unconscious (Edited by Philip Rieff), New York: Viking Press, 1971, p. 132.

¹⁴⁵ Նոյն տեղում, էջ 133:

¹⁴⁶ Daleski H., The Forked Flame: A Study of D.H. Lawrence, London: Faber, 1965, p. 102.

¹⁴⁷ Schapiro, B., Literature and the Relational Self, New York: New York University Press, 1995, p. 76.

¹⁴⁸ Simpson H., D.H. Lawrence and Feminism, London: Croom Helm, 1982, p. 311.

¹⁴⁹ Lawrence D., The Real Thing, A Selection from Phoenix // Scribner's Magazine, 1930, p. 588.

լինելու, քան այն զուգերը, որոնց դերը տեղերով փոխված է, և տղամարդը ամենահին դեմ չէ ուժեղ կնոջ կողքին գտնվելու»¹⁵⁰:

Լոռիբենսը չի ցանկանում մեկին ստորադասել մյուսին, սակայն իր պատմվածքներում նա հերոսներին նկարագրում է որպես մկանուտ, ուժեղ անհատների, որով փորձում է ցոյց տալ նրանց առնականությունը և դոմինանտությունը: Պետք է նաև նշել, որ բնագդներին հետևելու տեսակետից նրա հերոսները և հերոսուիխները հավասարապես ազատ են անելու այն, ինչ ցանկանում են: Եվ եթե ժամանակակից աշխարհում կանանց համար անգամ անընդունելի և ամոթալի է զգացմունքներն ազատորեն դրսնորելը, Լոռիբենսի պատմվածքներում նրանք բաց են և ազատ նոր հարաբերություններ հաստատելու համար, ինչպես տղամարդիկ¹⁵¹: Լոռիբենսի հերոսուիխները չեն վախենում մտածել իրենց սիրելիների մասին, մտովի լինել նրանց կողքին, ապրել ողջ կյանքը նրանց հետ, չնայած այն հանգամանքին, որ ամուսնացած են, երեխաների մայր կամ պարզապես աստվածավախ ընտանիքի դուստր: Սա միանշանակ հաստատում է Լոռիբենսի այն տեսակետը, որ կանայք նույնական կարող են իրական զգացմունքներ տածել, քանի որ նրա համար թույլ և ուժեղ սեռեր չկան, այլ կան երկու հավասար սեռեր, որոնք բնական էակներ են և կարիք ունեն ազատորեն դրսնորելու իրենց բնական պահանջմունքները¹⁵²: Գրողի մտքերը հակադրվում են Կ. Վիդմերի այն տեսակետին, որ ժամանակակից կնոջ ազահությունն ազատության նկատմամբ կործանարար է զուգերի համար¹⁵³:

Այսօր կինը չի առաջնորդվում զգացմունքներով, նա առաջնորդվում է քանականությամբ: Կանայք ամաչում են իրենց զգացմունքներն արտահայտել, քանի որ քանամեկերորդ դարում նրանք դա դիտում են որպես թուլություն: Նաև ցանկանում են, որ իրենց չվերաբերվեն որպես տնային տնտեսուհու, այլ որպես գիտակից, քանական

¹⁵⁰ Edwards M., But does the New Woman Really Want the New Man? Critical Issues in Contemporary Culture (Edited by Christopher Gould and Ele Byington), Allyn & Bacon, 1996, p. 112.

¹⁵¹ Ben-Ephraim G., The Moon's Dominion: Narrative Dichotomy and Female Dominance in Lawrence's Earlier Novels, London: Associated University Presses, 1981, p. 21.

¹⁵² Schulze C., The Battle of the Sexes in D. H. Lawrence's Prose, Poetry and Paintings, Heidelberg: Universitätsverlag C., 2002, p. 38.

¹⁵³ Widmer K., The Art of Perversity: D.H. Lawrence's Shorter Fictions, Seattle: University of Washington Press, 1962, p. 103.

մարդու, որը կարող է կրթություն ստանալ, աշխատել և օգտակար լինել հանրությանը: «բնական մարդու» հատկանիշներն այլս տեղ չունեն ժամանակակից աշխարհում, քանի որ ժամանակ չկա տրվելու կրքին, զգացմունքներին, հույզերին: Եվ քանի որ նրանց համար զգացմունքները երկրորդական են, կարող են ողջ կյանքում միայնակ մնալ՝ չբացահայտելով իրենց մեջ բնական ցանկությունները: Նրանց համար դժվար է գտնել այնպիսի տղամարդու, որի հետ կցանկանան իրենց կյանքը կիսել:

Ինչպես գրում է Էդվարդսը, կանայք ձեռք են բերում տղամարդկանց բնորոշ այնպիսի հատկանիշներ, որ այլս տղամարդու կարիք չեն զգում¹⁵⁴: Վերադառնալով Լոուրենսին, սակայն, աետք է նշել, որ ըստ նրա՝ կինը տղամարդու առողջության համար շատ կարևոր դերակատարում ունի: Կինը տղամարդուն անհրաժեշտ է ոչ միայն սերնդի շարունակությունն ապահովելու համար, այլև որպեսզի տղամարդը հուզական առումով առողջ լինի. «Հրաշալի է այն ակնթարթը, երբ տղամարդն իր բոլոր զգայարաններով կիրք է զգում կնոջ նկատմամբ: Տղամարդը կարծես վերածնվում է: Տղամարդն ու կինը կախված են միմյանցից, սակայն տարբեր կերպ: Տղամարդու զգացմունքային լինելը Լոուրենսն անվանում է բացասական գործոն: Դա կարող է վնաս հասցնել վճռական քայլեր կատարելիս»¹⁵⁵: Էդվարդսը խոսում է հենց նույն տեսակի տղամարդկանց մասին իր էսսեում¹⁵⁶:

Լոուրենսը կարծում է, որ քրիստոնեական կրոնը կանանց ավելի հնագանդ և պարկեշտ է դարձնում, ինչն էլ բացասաբար է անդրադառնում նրանց բնական ցանկությունների դրսնորման վրա:

«Փախչող աքաղաղ» («The Escaped Cock», 1929) պատմվածքում աքաղաղը խորհրդանշում է մահացած մարդուն: Աքաղաղի կապանքներից ազատվելուն գուգահեռ՝ մահացած մարդը հարություն է առնում¹⁵⁷: Այս պատմվածքի հիմնական հերոսը Քրիստոսն

¹⁵⁴ Edwards M., But does the New Woman Really Want the New Man? Critical Issues in Contemporary Culture (Edited by Christopher Gould and Ele Byington), Allyn & Bacon, 1996, p. 113.

¹⁵⁵ Lawrence D., Psychoanalysis and the Unconscious: Fantasia of the Unconscious (Edited by Philip Rieff), New York: Viking Press, 1971, p. 134.

¹⁵⁶ Edwards M., But does the New Woman Really Want the New Man? Critical Issues in Contemporary Culture (Edited by Christopher Gould and Ele Byington), Allyn & Bacon, 1996, p. 111.

¹⁵⁷ Lawrence D., The Man Who Died, London: Dodo Press, 2008, p. 5.

է, ով, ի տարբերություն Աստվածաշնչի, չի մահանում երկինք համբարձվելու համար, այլ վերակենդանանում է՝ թափառելու երկրով մեկ, որպեսզի գտնի մարդկային գոյության իմաստը: Լոուրենսը փոխաբերության շնորհիվ արտահայտում է իր հակակրանքը քրիստոնեական հավատքի նկատմամբ: Նա վերակենդանացնում է իր հերոսին, որպեսզի նրա մարմինը կարողանա զգալ և ապրել: Քրիստոնեությունը նվաստացնում է մարմինը, մարմնի ցանկությունները՝ նախապատվությունը տալով հոգուն: Իսկ Լոուրենսի հերոսը վերակենդանանում է, որպեսզի կարողանա ազատություն գտնել և հասկանալ, թե որն է ապրելու ճշմարիտ ուղին¹⁵⁸: Մարմնի ցանկությունները ամենից բարձր դասելով՝ Լոուրենսը երկրորդ կյանք է շնորհում իր հերոսին հենց երկրի վրա: Պատմվածքի վերջում նա մեկուսանում է հեռավոր մի վայրում:

Այնիայտ է, որ Լոուրենսը այստեղ ևս կիսում է Նիցշեի հակաքրիստոնեական տեսակետը: Այս պատմվածքում Լոուրենսը Նիցշեի նման փորձում է ցուց տալ, որ խաչվելով մարդու երջանիկ կյանքը երկրի վրա ավարտվում է. «Եթե կյանքն ավարտվում է երկրի վրա, ապա երկնային կյանքն իմաստ չունի»¹⁵⁹: Ահա այս կերպ էր մտածում նաև Լոուրենսը, որը Գորդոն Քեմփբելին ուղղված նամակում գրում է. «Այժմ քրիստոնեությունը պետք է մեզ սովորեցնի, որ խաչվելուց հետո մութ գերեզմանից մենք հարություն կառնենք մեր իսկ մարմնում...»¹⁶⁰:

«Կույսն ու գնչուն» («The Virgin and the Gipsy», 1926) պատմվածքում Լոուրենսը հրաշալիորեն իրար է հակադրում քրիստոնեությունը և հեթանոսությունը: Մի կողմից նա նկարագրում է քահանայի բարեպաշտ, պարկեշտ ընտանիքը, որը հաշվի է առնում հասարակության կարծիքը՝ ապրելով ձանձրալի կյանքով, մյուս կողմից ազատությունը վայելող և բնազդներին հետևող գնչուներին, որոնք ապրում են միայն ներկայով:

Պատմվածքը սկսվում է հեղինակի խոսքերով, թե ինչպես է երեցի (որը հետագայում քահանա է դառնում) կինը փախչում չըավոր երիտասարդի հետ՝ հետևելով իր սեռական

¹⁵⁸ Նոյյն տեղում, էջ 6:

¹⁵⁹ Nietzsche F., The Antichrist: An Attempted Criticism of Christianity (Trans. by M. Ludovici), London: Wordsworth, 2007, pp. 93-163.

¹⁶⁰ Lawrence D., Democracy, Phoenix, The Posthumous Papers of D. H. Lawrence (Edited by Edward D. McDonald), New York: Viking, 1970, p. 249.

բնազդին՝ ամուսնու խնամակալությանը թողնելով երկու մանկահասակ աղջիկներին: Կինն անզուսապ էր, իսկ քառասունյոթամյա ամուսինն այլևս անկարող էր իր մեջ կիրք արթնացնել:

Այս պատմվածքում հրաշալիորեն ի հայտ է գալիս Լոուրենսի «արյան գիտակցության» վերաբերյալ գաղափարը, այն է՝ անձնատուր լինել բնազդներին, որոնք իշխում են գիտակցությանը, քանի որ ոչ մի գիտակից մայր չի կարող թողնել իր զավակներին և փախչել տնից՝ առանց որևէ պատասխանատվության զգացման նրանց նկատմամբ: Լոուրենսը քահանայի կնոջը՝ Սինթիային, հետևյալ կերպ է նկարագրում. «Նա տեղով կրակ էր, կյանքի հեղեղ, հավերժ շարժման մեջ»¹⁶¹: Լոուրենսը զուգահեռներ է անցկացնում մի կողմից քահանայի քառասունն անց քրոջ, որն իր ողջ կյանքը նվիրել էր ծեր մորը՝ առանց անձնական երջանկություն ունենալու, և քահանայի կնոջ՝ Սինթիայի միջև, որի երակներում կյանքն էր եռում: Լոուրենսը նկարագրում է երկու հակոտնյա անձնավորությունների, որոնք իրենք էին ընտրել, թե ինչպես ապրեն կյանքը: Գրողը Սինթիայի կյանքի, նրա երջանիկ լինելու մասին ընթերցողներին այլևս ոչ մի տեղեկություն չի տրամադրում պատմվածքի հետագա էջերում, սակայն հաճախ է գրում Սիսիի՝ քահանայի քրոջ դժբախտ լինելու, ձանձրալի, միապաղադ կյանքով ապրելու մասին, ինչը դարձրել էր նրան ագրեսիվ, անհանդուրժող, չար անձնավորություն, և ամբողջ չարությունն արտահայտվում էր եղբօր աղջիկների նկատմամբ ունեցած իր վերաբերմունքի մեջ, երբ նրանց պահվածքում կամ դիմագծերում տեսնում էր նրանց մոր պատկերը:

Աղջիկները հաճախ էին ըմբռստանում և վիճում տատի և հորաքրոջ հետ. «Վերահաս կրիվն անխուսափելի էր: Լուսիլը բարձրացրեց այլայլված հայացքը: Երկու քույրերի մեջ արթնացել էր Առաջվա Սինթիայի արյունը»¹⁶²:

«Արյան գիտակցության» գաղափարը, որ Լոուրենսը ներկայացնում է իր ընթերցողներին այս պատմվածքում հրաշալիորեն արտահայտվում են նաև այն տողերում,

¹⁶¹ Լորըն Դ., Թարգմանություններ (Կույսն ու գնչուն, թրգմ.՝ Սամվել Մկրտչյան), գիրք Ա, Երևան, 2009, էջ 454:

¹⁶² Նոյն տեղում, էջ 485:

որտեղ աղջիկները, դաստիարակված լինելով ավանդապաշտ, աստվածավախ տատի և հորաքրոջ կողմից, փոքր հասակից մտածել են սիրահարվելու, սիրո, տղաներով շրջապատված լինելու մասին և զզվանքով են լցվել իրենց քարացած, մոայլ կյանքի նկատմամբ, ինչը դրսնորվում էր երգչախմբում երգելով և ծխականներին օգնելով։ Հատկապես քահանայի կրտսեր դուստրը՝ Իվեթը, ժառանգել էր մոր՝ կյանքին թեթև նայելու, բնազդներին, կրծին տրվելու, տնից հեռանալու և ազատ ապրելու ցանկությունները, որոնց պատկերները անընդմեջ ընթերցողի առջև են բացվում պատմվածքում։ Նրան էին ձգում բանվորները, գնչուները, բաժանված և սիրեկանի հետ իրենց կյանքը վայելող կանայք, ինչպես տիկին Ֆուեթը, որը դեռևս չամուսնալուծված՝ բացահայտորեն սիրաբանում էր մայոր Իսթվուդի հետ։ Այս տիկնոց հետ Իվեթի մտերմությունը բարկացրել էր քահանային, քանի որ նման ապրելակերպը դեմ էր քրիստոնեությանը։ «Քահանան բարկացած էր. դեմքը կոպիտ, շնային և մի տեսակ ծաղրական արտահայտություն էր ստացել։ Հայրը վախենում էր, որ աղջկա մեջ զարգանում էին «Առաջվա» Սինթիայի տիսրահոչակ, արտասովոր հատկությունները»¹⁶³։

Հայրն ամեն կերպ փորձում էր հանգնել աղջկա մեջ բոցավառվող կրակը և թույլ չտալ, որ իր կնոց սխալը այս անգամ էլ իր դուստրը կրկնի՝ շրջապատված լինելով վատահամբավ մարդկանցով, որոնցից միայն անբարոյականություն կարելի է սովորել։ Սակայն հոր հետ գժտությունից հետո Իվեթն սկսեց ավելի շատ մտածել տնից հեռանալու, գնչուների նման ազատությունը վայելելու և մոր մասին։ «Միայն պառկում էր և երազում, թե ինքը գնչուի է։ Ապրել ճամբարում, ծածկասայլի մեջ, երբեք ոտք չդնել տուն, չիմանալ ծխական համայնքի գոյությունը, երբեք չմտնել եկեղեցի»¹⁶⁴։ Նրա մեջ այդ պահին արթնանում է արյան գիտակցությունը։ «Եվ միայն այս աղմկոտ գժտությունից հետո Իվեթը սկսեց գիտակցել իր հիգու և զգայուն, մաքուր մարմնի ու արյան մյուս սրբությունը»¹⁶⁵։

¹⁶³ Նոյն տեղում, էջ 477։

¹⁶⁴ Նոյն տեղում, էջ 480։

¹⁶⁵ Նոյն տեղում, էջ 479։

«Կնունք» («The Christening», 1934) պատմվածքում Լոռիբենսն իր արհամարհանքն է ցոյց տալիս քրիստոնեական ավանդույթների նկատմամբ հերոսուհու՝ Էմմայի միջոցով. «Էմման իիմա ատում էր աղոթող քահանային և այդ հոգիչ արարողությունը»¹⁶⁶: Չամուսնացած քրիստոնյա կինը իրավունք չունի կապվելու անձանոթ տղամարդու հետ, քանի որ արդյունքում կարող է ապօրինի երեխա ծնվել: Ինչպես բոլոր ավանդապաշտ, աստվածավախ ընտանիքներում, այդպես էլ Էմմայի ընտանիքի համար արտամուսնական կապից ծնված երեխա ունենալը խայտառակություն էր: Ընտանիքը քահանա էր կանչե՛ աղջկա մեղքերը քավելու և երեխային կնքելու համար: Լոռիբենսն այսպես ընդվզում էր ժամանակակից հասարակության կողմից ձևավորված «ճիշտ» վարքագծի դեմ: Նա կողմ էր ազատ կյանքին: Եթե Էմման ցանկացել էր կենսահարաբերվել մի տղամարդու հետ, ապա առաջնորդվել է «արյան գիտակցությամբ» և ոչ թե բանականությամբ:

«Արյան գիտակցությունը» Լոռիբենսի մտածողության գլխավոր մասն է կազմում, և փոքր արձակում նա ծգտում է իր հերոսների մեջ այդ գիտակցությունն արթնացնե՛ կենտրոնանալով իրենց մարմնի վրա: Սակայն շեշտը դրվում է ոչ թե հերոսների վերջույթների կամ օրգանների վրա, այլ այն բանի, թե ինչ կարող է լինել, երբ բնագդները սկսեն իշխել մարդու գիտակցությանը:

Բնագդի և բանականության հակադրությունը նոյնպես կարելի է ներկայացնել աղյուսակի տեսքով.

Բնագդ	Բանականություն
«Արև» պատմվածքում Զովիետը արևի ազդեցության ներքո սկսում է առաջնորդվել բնագդներով:	Զովիետի ամուսինը, տեսնելով արևի տակ պառկած մերկ կնոջը, զարմանում է, քանի որ ինքն առաջնորդվում է բանականությամբ և իր համար անընդունելի է կնոջ վարքագիծը:

¹⁶⁶ Լոռիբենս Դ., Կնունք (թղթմ.՝ Սոնա Սեֆերյան) // Արտ. գրականություն, 2011, VII, 2011, էջ 29:

<p>Շարունակությունն է</p> <p>«Մարդը, որ մահացավ»</p> <p>պատմվածքում աքաղաղը</p> <p>կենդանական, բնական աշխարհի</p> <p>խորհրդանշն է: Որպեսզի նա</p> <p>կարողանա բնազդներով</p> <p>առաջնորդվել, պետք է</p> <p>ազատության մեջ ապրի, որին և</p> <p>այդքան ձգտում է:</p>	<p>Գյուղացին և կինը, որոնք</p> <p>բանականությամբ են առաջնորդվում,</p> <p>կապել էին աքաղաղի ոտքերը,</p> <p>որպեսզի վերջինս չկարողանա</p> <p>փախչել:</p>
<p>«Տղամարդը, որ սիրում էր</p> <p>կղզիները» պատմվածքի հերոսը</p> <p>անպաճույք կյանքի կողմնակից է:</p> <p>Նրան նյարդայնացնում են</p> <p>ժամանակակից մարդկանց</p> <p>կենսակերպը և մտածելակերպը:</p>	<p>«Տղամարդը, որ սիրում էր</p> <p>կղզիները» պատմվածքում հերոսը</p> <p>երեք կղզի է փոխում, քանի որ</p> <p>առաջին և երկրորդ կղզիներում նա</p> <p>հանդիպում է բանականությամբ</p> <p>առաջնորդվող մարդկանց, որոնցից</p> <p>փախչում է:</p>
<p>«Արքայադուստր»</p> <p>պատմվածքում հերոսուիին</p> <p>ցանկանում է ազատվել</p> <p>բանականությունից, ապրել ազատ</p> <p>և ինքնարուիս, ուստի</p> <p>առանձնանում է մարդկանցից,</p> <p>որպեսզի ապրի բնազդներով:</p>	<p>Արքայադուստեր հայրը</p> <p>բանականությամբ է առաջնորդվում:</p> <p>Նա հասարակական մտածելակերպ</p> <p>ունի և շատ լավ է գիտակցում</p> <p>ժամանակակից մարդկանց էությունը,</p> <p>որոնք զբաղված են միայն նյութական</p> <p>իրեր կուտակելով, շաղակրատելով և</p> <p>ստելով միմյանց:</p>
<p>«Կոյսն ու գնչուն»</p> <p>պատմվածքում իվեթը ցանկանում</p>	<p>իվեթի հայրը, մորաքույրն ու</p> <p>տատը հասարակական</p>

<p>Շարունակությունն է</p> <p>Է ապրել բնազդաբար՝ գնչուների նման՝ հաշվի չառնելով, թե ինչ կմտածի հասարակությունն իր մասին:</p>	<p>գիտակցություն ունեն և միշտ զբաղված են հասարակության աչքին լավը երևալով: Նրանք հաճախ են հյուրեր ընդունում, որպեսզի հյուրընկալ երևան՝ գրուցելով աշխարհիկ թեմաների շուրջ, ինչը զայրացնում է իվերին:</p>
<p>«Մրմունջ» պատմվածքի հերոսը՝ Վիլը, սեռական բնազդով Է առաջնորդվում: Նա կենտրոնացած է միայն իր ցանկության վրա:</p>	<p>Ի տարբերություն նրա՝ կինը՝ Էդիթը, չի առաջնորդվում բնազդներով: Նա գիտակից կյանք է վարում և նրան անհասկանալի է ամուսնու՝ թլի վրա կենացելու ցանկությունը:</p>
<p>«Սուրբ Մավր» պատմվածքում Լուն ծգտում է բնական կյանքով ապրելու: Նա ցանկանում է ձիու նման բնական ազդակներով առաջնորդվել:</p>	<p>Լուի ամուսինը գիտակցական կյանքով է ապրում, ինչը հոգնեցրել էր կնոջը:</p>
<p>«Հիվանդ հանքափորը» պատմվածքում Լոռուրենսը Հորսփուլին նկարագրում է որպես «բնական մարդ», որին չի հետաքրքրում ժամանակակից կյանքը, նյութականը: Նա ապրում էր հնադարյան մարդկանց նման:</p>	<p>Հորսփուլի կինը, ընդհակառակը, սիրում է գեղեցիկ ապրել, ունենալ գեղեցիկ իրեր, ինչը բնորոշ է գիտակից մարդկանց: Նրա համար տարօրինակ է ամուսնու նման պահվածքը: Նա փորձում է ամուսնուն ցույց տալ, թե ինչպես են սնվում:</p>

<p>Շարունակությունն է</p> <p>«Դալիլան և պարոն Բիրքամշոն» պատմվածքում Հարրի Բիրքամշոն ևս նկարագրվում է որպես «բնական մարդ»:</p>	<p>Դալիլան՝ Հարիի կինը և իր ընկերուիին ապշում են Հարիի շարժումների վրա: Նրանց համար անընդունելի է, թե ինչպես է Հարիին բնագդաբար ապրում:</p>
---	---

1952 թ. Լոուրենսի մահվան 22-րդ տարելիցի կապակցությամբ Կալիֆորնիայի համալսարանի գրադարանում տեղի ունեցած բուռն քննարկման ժամանակ այն հարցին, թե ինչպիսի անձնավորություն էր Լոուրենսը, Ա. Հաքսլին պատասխանում է. «Նրա մեջ ինչ-որ արտառոց բան կար: Բնական կենսակերպ վարելու նրա բուռն ցանկությունը մեծ տպավորություն է թողել թե՝ իր ընկերների և թե՝ թշնամիների վրա»¹⁶⁷:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարող ենք եզրակացնել, որ Լոուրենսը «արյան գիտակցության» իր տեսությամբ փորձում էր ցույց տալ, որ բնական ազդակներին հետևող մարդն առաջնորդվում է իր ցանկությամբ և ինտուիցիայով: Նա անտեսում է հասարակության կարծիքը հանուն իր ազատությունն ամբողջությամբ վայելելու, ինչպես նաև կյանքից վերցնելու այն, ինչ իր Ես-ն է ցանկանում: Գիտակցության միջամտությունը մարդուն ստիպում է անել այնպիսի բաներ, որոնք նրան շեղում են բնական կենսակերպից, ինչին ձգտում էր Լոուրենսը: Լոուրենսի «տեսությունը» բնագդի և բանականության հակադրության մասին հրաշալիորեն արտացոլվել է իր պատմվածքներում, որոնցում պատկերելով բնագդներով առաջնորդվող մարդկանց կենսակերպը, նրանց վարքագիծը, նա ցույց է տալիս, որ այդ ամենն անընդունելի, տարօրինակ և անգամ վայրի է թվում հասարակությանը: Այսպիսով, Լոուրենսը բնական ազդակներին, ինտուիցիային հետևելու, կյանքը բնականացնելու ջատագով էր, քանի որ համոզված էր, որ դրա շնորհիվ մարդն ազատություն է ձեռք բերում:

¹⁶⁷ LaChappelle D., D.H. Lawrence, Future Primitive, Texas: University of North Texas Press, 1996, p. 15.

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ Դ.Հ. ԼՈՈՒՐԵՆՍԻ 1925-30 ԹՁ. ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐՈՒՄ

Նախորդ գլխում քննարկեցինք Լոուրենսի «արյան գիտակցության» տեսությունը, որով նա փորձել է իր պատմվածքներում կերտել բնական կերպարներ: Այս գլխում կփորձենք ուսումնասիրել Լոուրենսի անհատ/զուգ/հասարակություն մոդելը, որն արտացոլվել է իր փոքր արձակում: Այս մոդելով գրողը մի կողմից փորձում է հեռացնել իր հերոսներին հասարակությունից, որպեսզի նրանք կարողանան ազատվել վերջինիս ճնշող ազդեցությունից, ձեռք բերել ազատություն, վայելել կյանքը՝ կենտրոնանալով միայն իրենց բնագրների, բնական կարիքների վրա, մյուս կողմից, մինչև հասարակության մի մասնիկը դառնալը, այդ հերոսները փորձում են գտնել իրենց զուգին, որպեսզի սեռական՝ կենսահաղորդակցության բնագրը կարողանա բնականորեն և ազատորեն դրսնորվել:

Այսպիսով, ըստ այս մոդելի, զուգը գտնվում է անհատի և հասարակության միջև: Անհատին բնորոշ հատկանիշներ ձեռք բերելու համար մարդը պետք է ծնավորի անհատական գիտակցություն, իսկ հասարակական գիտակցությունը, ըստ Լոուրենսի, հատուկ է այն մարդկանց, որոնք հասարակության անբաժանելի մասն են: Անհատական և հասարակական գիտակցությունների միջև տարբերությունները Լոուրենսը մանրամասնորեն ընթերցողին է ներկայացնում «Անհատական գիտակցություն/հասարակական գիտակցություն» էսեում (1936)¹⁶⁸:

Լոուրենսը համոզված էր, որ հասարակության բացասական ազդեցության հետևանքով է, որ մարդը չի կարողանում ինքն իրեն լիովին ճանաչել և ազատ ապրել: Նա «Ժողովրդավարություն» (1936)¹⁶⁹ էսեում գրում է, որ խելացի մարդը, հանուն իր հոգու ազատության, պետք է պայքարի ընդդեմ մեխանիզմների և նյութապաշտության: Նրա բնորոշմամբ՝ ժամանակակից մարդու ուղղությունը «հաստատագրված» է, և այն փոխելն

¹⁶⁸ Lawrence D., The Individual Consciousness V. The Social Consciousness, Phoenix, The Posthumous Papers of D. H. Lawrence (Edited by Edward D. McDonald), New York: The Viking Press, 1968, p. 761.

¹⁶⁹ Lawrence D., Democracy, Phoenix, The Posthumous Papers of D. H. Lawrence (Edited by Edward D. McDonald), New York: Viking, 1970, p. 716.

անհնար է: «Հաստատագրված ուղղություն» ասելով գրողը նկատի ուներ անհատի նպատակները, որոնք մեզ արդեն քաջ հայտնի են նրա էսսեներից: Նպատակ ձեռք բերելու կարողությունը, հոչակը, ուժը, ըստ նրա, հոգու հիվանդություններ են և մարդուն հասցնում են ինքնակործանման: «Հաստատագրված ուղղությունը» նաև խոչընդոտում է մարդկանց միջև բարիդրացիական հարաբերություններ հաստատելը¹⁷⁰:

Լոուրենսն ատելությամբ է լցված արհեստական կյանքի նկատմամբ: Ըստ նրա՝ ժամանակակից գիտակցության պատճառով անհատը շեղվում է բնական կյանքով ապրելու ճանապարհից. «Տղամարդիկ, կանայք, մեծերն ու փոքրերն, ավա՞ղ, սեփական խելքը չունեն և չեն ապրում իրենց կյանքով»¹⁷¹: Մինչև հոգու խորքը հիասթափվելով հասարակության մտածելակերպից՝ Լոուրենսը «Խաղաղության իրականություն» (1936) էսսեում գրում է. «Միակ ելքը մահն է, ինչը հնարավորություն կտա ազատելու մեր հոգիները, մեր Ես-ը հասարակության ազդեցությունից»¹⁷²: Լոուրենսը կարծում է, որ հասարակությունը մեծ վնաս է հասցրել անհատին, քանի որ վերջինս չի կարողանում ազատորեն տնօրինել իր կյանքը:

Ճիշտ է՝ Լոուրենսը գիտակցում էր, որ մարդկանցից մեկուսանալը սխալ է, սակայն նրա հերոսները միշտ փորձել են փախչելով ազատություն ձեռք բերել: Այս գաղափարը կարելի է հանդիպել նրա «Տղամարդը, որը սիրում էր կղզիները» («The Man Who Loved Islands», 1928), «Արև» («Sun», 1928) «Կինը, որը հեռացավ» («The Woman Who Rode Away», 1928), «Տղամարդը, որը մահացավ» («The Man Who Died», 1929) պատմվածքներում:

«Տղամարդը, որը սիրում էր կղզիները» պատմվածքի հերոսը ցանկանում է մեկուսանալ մի անմարդաբնակ կղզում՝ միայն ինքն իրենով զբաղվելու համար: Այնտեղ, որտեղ նա ապրում էր, չափազանց շատ էին մարդիկ, ինչը նրան ամենսին դուր չէր

¹⁷⁰ Նոյն տեղում, էջ 717:

¹⁷¹ Lawrence D., The Individual Consciousness V. The Social Consciousness, Phoenix, The Posthumous Papers of D. H. Lawrence (Edited by Edward D. McDonald), New York: The Viking Press 1968, p. 761.

¹⁷² Lawrence D., The Reality of Peace, Phoenix, The Posthumous Papers of D.H. Lawrence (Edited by Edward D. McDonald), New York: The Viking Press, 1968, p. 673.

գալիս¹⁷³: Այս պատմվածքը բաղկացած է երեք մասից, որոնցից յուրաքանչյուրում նկարագրվող դեպքերը տեղի են ունենում առանձին կղզիներում: Եթե առաջին և երկրորդ կղզիները համեմատաբար բնակեցված են, ապա երրորդ կղզում պատմվածքի հերոսը միայնակ է, ամբողջովին կտրված արտաքին աշխարհից: Ինչպես նշել են որոշ քննադատներ, Լոուրենսի՝ հասարակությունից հեռանալու գաղափարն ամփոփող պատմվածքն արտացոլում է գրողի այն տեսակետը, որ մտքի ազդեցությունը մարմնի վրա շատ մեծ է, և այդ ազդեցությունից ազատվելու և ուշադրությունն իրենց մարմնին կենտրոնացնելու համար հերոսները մեկուսանում են, ինչը շատ դեպքերում, օրինակ, այս պատմվածքում, հանգեցնում է ինքնակործանման¹⁷⁴: Լոուրենսը այնպիսի հերոսներ է կերտում, որոնք ինքնակամ հրաժարվում են հասարակության մի մասնիկը լինելուց: Նա գրում է, որ ժամանակակից վեպերում, ինչպես օրինակ՝ Ջոն Գոլսուրսիի ստեղծագործություններում, իրական անհատներ չկան. «Մարդիկ՝ տղամարդիկ, կանայք, երեխաները, չունեն սեփական կարծիքը, չեն ապրում սեփական կյանքով: Այն պահին, երբ մարդը գիտակցում է իր անհատականությունը, նա հասկանում է, որ գոյություն ունի սուբյեկտիվ և օբյեկտիվ իրականություն»¹⁷⁵:

«Տղամարդը, որը սիրում էր կղզիները» պատմվածքում Լոուրենսը դիտավորյալ հեռացնում է իր հերոսին հասարակությունից, որպեսզի նա կարողանա վերադառնալ նախնակենցաղ կյանքին. «Տարօրինակ բան կատարվեց կղզիաբնակի հետ: Հանկարծ խորհրդավոր «զգացում» ունեցավ, որը երբևէ չէր զգացել նախկինում: Երկար մորուքներով հնադարյան մարդկանց ներկայությունը դեռևս զգացվում էր գիշերվա մեջ, որոնք ապրել են հին ժամանակներում այդ կղզու վրա և անհետացել: Նրանց հսկա, ահասարսութ մարմինները դեռևս երերում էին մթության մեջ»¹⁷⁶: Պետք է նշել, որ այս

¹⁷³ Lawrence D., *The Man Who Loved Islands in the Woman Who Rode Away and Other Stories*, Harmondsworth, England: Penguin Books Ltd., 1960, p. 149.

¹⁷⁴ Harris L., *The Island as a Mental Image of Withdrawal* (Edited by D.G. Russell, etc.) Dunedin, New Zealand: Human Performance Associates 1986, pp. 178-181.

¹⁷⁵ Lawrence D., *The Individual Consciousness V. The Social Consciousness*, Phoenix, The Posthumous Papers of D. H. Lawrence (Edited by Edward D. McDonald), New York: The Viking Press, 1968, p. 761.

¹⁷⁶ Lawrence D., *The Man Who Loved Islands in the Woman Who Rode Away and Other Stories*, Harmondsworth, England: Penguin Books Ltd., 1960, p. 152.

պատմվածքի հերոսը շատ նման է Ռոբինզոն Կրուզոյին: Թերևս միակ տարբերությունն այն է, որ վերջինս իր կամքով չի ընկել անմարդաբնակ կղզի¹⁷⁷:

Հոռորենսի հերոսները, ինչպես և նա, հատկապես այն գործերում, որոնք գրվել են համաշխարհային պատերազմից հետո, ձգտում էին մեկուսանալ, որպեսզի կարողանան ժամանակակից կենսակերպը փոխել և վերադառնալ արմատներին: Մեկուսանալով հասարակությունից՝ մարդը կարողանում է ավելի լավ հասկանալ իր էռությունը, քանի որ ավելի շատ ժամանակ է ունենում ճանաչելու իր Ես-ը: Ես-ի ճանաչման գործընթացը պայմանավորված է հնադարյան մարդկանց կենսակերպին վերադառնալով, ինչի մասին կխոսենք երրորդ գլխում¹⁷⁸:

Այս կղզում հերոսը կարող է անել այն, ինչ ցանկանում է, չմտածել գումարի, շքեղության մասին, իեռու լինել հասարակության ազդեցությունից: Նա վայելում է իր մենությունը «բնական մարդու» կենսակերպ վարելով: Արմատներին վերադառնալ նշանակում է նախնակենցաղ կենսակերպ վարել, պարզեցնել կյանքը և ապրել կենդանիների նման՝ առաջնորդվելով բնագրներով. «Անցյալում, երեխաները «անմեղ էին, ինչը նշանակում է, որ նրանք կենդանիների նման էին, և նրանց համար իրականությունը բաժանված չէր սուբյեկտիվի և օբյեկտիվի: Նրանք տիեզերքի մի մասնիկն էին, որն էլ անմեղություն էր խորհրդանշում, ինչն իր հերթին պահպանվում էր նրանց մեջ ողջ կյանքում և նրանց կյանքին հաղորդում կենդանություն, թարմություն, իրական անհատականություն»¹⁷⁹:

«Մարդը, որը մահացավ» պատմվածքը ևս ազատություն ձեռք բերելու մասին է, այն ի սկզբանե անվանվել է «Փախչող աքաղաղ» («The Escaped Cock», 1929), ինչը միանգամից ընթերցողի ուշադրությունը սկսում է փախուստի և ոչ թե մահվան գաղափարի վրա: Այս պատմվածքը բաղկացած է երկու մասից: Առաջին մասը նվիրված է գյուղացու և աքաղաղի նկարագրությանը: Աքաղաղն ամուր կապված էր, որպեսզի

¹⁷⁷ Karl F., Lawrence's the Man Who Loved Islands: The Cruso Who Failed (Edited by H. T. Moore), Carbondale: Southern Illinois, 1958, pp. 265-279.

¹⁷⁸ Beede H., The Art of the Self in D. H. Lawrence: Ohio: Ohio University Press, 1977, p. 137.

¹⁷⁹ Lawrence D., The Individual Consciousness V. The Social Consciousness, Phoenix, The Posthumous Papers of D. H. Lawrence (Edited by Edward D. McDonald), New York: The Viking Press, 1968, p. 761.

չփախչի, սակայն, ի վերջո, թոշնին հաջողվում է ազատվել և փախչել¹⁸⁰: Լոռիբենսը ցանկանում էր, որ մարդիկ աքաղաղի նման ազատվեն կապանքներից և հեռանան: Գյուղացու կերպարով նա նկարագրում է ժամանակակից հասարակությանը, իսկ աքաղաղը խորհրդանշում է անհատին, որն անազատության մեջ է, քանի որ չունի իր անձնական կարծիքը և չի կարող ապրել կյանքն այնպես, ինչպես ինքն է ցանկանում:

Լոռիբենսը ավելի մեծ տեղ է տալիս իր հերոսների ֆիզիկական նկարագրությանը: Պատմվածքը սկսում է այն տեսարանով, թե ինչպես է գյուղացին կապում աքաղաղի ոտքերը: Ազատվելով՝ աքաղաղը, կարծես, վերակենդանանում է: Ճիշտ է՝ կապկպված աքաղաղը սատկած չէ, սակայն գրողի համար նրա գոյությունը իմաստազրկվել է, քանի որ նա չի կարող անել այն, ինչ իր ես-ն է ցանկանում՝ վախենալով հասարակության կարծիքից: Հասարակության մեջ մարդու ձեռքերն ու ոտքերն ասես կապված լինեն: Աքաղաղին ազատ արձակելով և մահացած մարդուն վերակենդանացնելով՝ Լոռիբենսը նրանց մեկուսացնում է, որպեսզի նրանք հետևեն իրենց բնազդներին, որոնք անգիտակցական մակարդակում են: Վերակենդանացած հերոսի միջոցով գրողն այս պատմվածքում ևս իր հակակրանքն է արտահայտում գիտակցության, մտքի հանդեպ. «Նա կարող էր շարժվել: Նա դա գիտեր: Սակայն չէր ցանկանում: Նա հիշեց իր անցյալը և սրտխառնոց ունեցավ: Նա չէր ցանկանում վերադառնալ նույն իրականություն, որտեղ մարդիկ առաջնորդվում էին գիտակցությամբ»¹⁸¹:

Լոռիբենսը, իր կյանքի փորձից ելնելով, համոզված է, որ հասարակությունը փչացնում է անհատին: Մարք Գերթերին ուղղված նամակներից մեկում նա գրում է. «Անչափ հիասթափված եմ ժամանակակից մարդկանցից: Երբեք այդքան չեմ ատել նրանց, ինչպես այժմ: Ես կորցրել եմ հոյսս, որ անհատի մեջ մի օր փոխվելու ցանկություն կառաջանա, որ նա ինձ նման կգնահատի այն, ինչ բնական է»¹⁸². Միևնույն ժամանակ Լոռիբենսը գիտակցում է, որ լավ չէ ամբողջությամբ կտրվել մարդկանցից և հասարակությունից: Լոռիբենսի կարծիքով, մեզ շրջապատող բոլոր երևույթները

¹⁸⁰ Lawrence D., *The Man Who Died*, London: Dodo Press, 2008, p. 4.

¹⁸¹ Նոյն տեղում, էջ 5:

¹⁸² Lawrence D., *The Letters*, Volume III, October 1916 – June 1921 (Edited by James T. Boulton, etc.), Cambridge: Cambridge University Press, 1984, p. 194.

փոխագրում են և փոխկապակցված են: Նա «Արիստոկրատիա» (1949) էսսեում գրում է. «Այս կյանքում գոյություն ունեցող ցանկացած կենդանի երևոյթ անքակտելիորեն կապված է մյուս կենդանի երևոյթներին»¹⁸³:

Նրա հերոսները սովորաբար չեն պատկանում ոչ մի դասի, ոչ մի խմբավորման, ինչը հատուկ է ժամանակակից մարդկանց, սակայն, միևնույն ժամանակ, նրանք դժգոհ են մեկուսի ապրելուց: Դա նրանց կարծես չի երջանկացնում, քանի որ Լոռիենսը գիտակցում էր, որ մեկուսացնելով հերոսներին՝ զրկում է նրանց սիրելու և սիրված լինելու կարողությունից:

Դոկտոր Թրիգանտ Բրտովին ուղղված նամակում Լոռիենսը գրում է. «Ես տառապում եմ, որ մեկուսացել եմ մարդկանցից: Բայց ինչ կարող եմ անել: Ես ստիպված եմ ճգնավոր դառնալ, ինչն ամենաին իմ սրտով չեմ: Սակայն այլ ելք չեմ տեսնում»¹⁸⁴:

Մարդկանցից մեկուսանալու ավերիչ հետևանքների մասին է «Կողիներ սիրող մարդը» պատմվածքը: Մի մարդ կղզու վրա ապրում է ճգնավորի կյանքով՝ մեկուսանալով հասարակությունից, և մահանում է ձյունամրիկի ժամանակ: Լոռիենսն առաջարկում է, որ մարդը որոշ ժամանակով հեռանա հասարակության ճնշիչ ազդեցությունից՝ մենակ մնալով ինքն իր Ես-ի հետ, սակայն երբ նրա հոգին և մտքերը խաղաղվեն, պետք է վերադառնա հասարակությունը¹⁸⁵:

Այսպիսով, Լոռիենսի աշխարհընկալմամբ՝ աշխարհը ճանաչելու և կյանքը հասկանալու համար երկու ճանապարհ գոյություն ունի: Առաջինը՝ հասարակությունից մեկուսանալն է, ինչը լավագույն միջոցն է սեփական Ես-ը ճանաչելու համար, իսկ երկրորդ ճանապարհը հասարակության անքածանելի մասը կազմելն է՝ միավորվելը, ինչը հնարավոր է հավատքի միջոցով: Սակայն Լոռիենսը պնդում է, որ քրիստոնեական հավատքի և տիեզերքի միջև կապը վաղուց է խզվել¹⁸⁶: Քրիստոնեական հավատքը ոչ

¹⁸³ Lawrence D., Aristocracy, Reflection on the Death of a Porcupine and Other Essays (Edited by. Michael Herbert), Cambrigde: Cambridge University Press, 1949, p. 367.

¹⁸⁴ Lawrence D., The Letters (Edited with an Introduction by Aldous Huxley), London: William Heinemann Ltd., 1932, p. 687.

¹⁸⁵ Նոյն տեղում, էջ 688:

¹⁸⁶ Lawrence D., A Propos of Lady Chatterley's Lover, A Selection from Phoenix (Edited by A.A.H. Inglis), Harmondsworth: Penguin 1979, p. 357.

միայն չի դիտում տիեզերքը որպես նյութի և առեղծվածային ուժի ամբողջություն, այլև առանձնացնում է տղամարդուն կնոջից՝ իբրև երկու առանձին անհատականություն, ինչը, Լոուրենսի կարծիքով, արգելք է դառնում միավորման համար: Եթե մարդը մեկուսացած է հասարակությունից, նա անպայման դառնում է սպառնալիք հասարակության համար¹⁸⁷: Ըստ այդմ՝ երկար ժամանակով մեկուսացած մարդուն իշխում են վախի և թշնամանքի զգացմունքները. «Այսպիսի մարդկանց թիվը փոքր չէ ներկայիս հասարակության մեջ, որոնք խմբավորվելով դառնում են ընդդիմություն: Սա մեր կյանքի ողբերգությունն է»¹⁸⁸:

Պետք է նշել, որ Լոուրենսի՝ հասարակությունից հեռանալու և հասարակության անբաժանելի մասնիկը դառնալու այս գաղափարները բազմիցս քննադատության են արժանացել, քանի որ մի կողմից նա ընթերցողին կոչ է անում միանալ հասարակությանը, ինչի մասին հանգամանալից գրում է «Մարդու կրթություն» («Education of the People», 1936) էսսեում, մյուս կողմից պնդում է, որ «բնական մարդ»ը հասարակությունից հեռանալու կարիք ունի, քանի որ միայն այսպես նա կկարողանա ապրել բնագդներով¹⁸⁹: Այնուամենայնիվ, Լոուրենսը հստակորեն բացատրում է անհատականության և միասնության իր երկակի ըմբռնումը: Նրա կարծիքով, թեև մարդը ամենից առաջ անհատ է, սակայն նրա անհատականությունը կարևորվում և դրսնորվում է միայն հասարակական կյանքում. «Կյանքը բաղկացած է ընկերների, հարևանների, բարեկամների՝ միմյանց հետ շփումից, համագործակցությունից և միմյանց սիրելուց»¹⁹⁰: Լոուրենսը նշում է, որ հնարավոր է պարադոքսալ ինչի, բայց մարդն անհատ է միայն այն ժամանակ, եթե չի գիտակցում իր անհատականությունը, այսինքն՝ չի գիտակցում իր մեկուսացումը արտաքին աշխարհից, չի տարանջատում սուլբեկտիվ իրականությունը օբյեկտիվ իրականությունից: Այն պահին, եթե «Ես» և «Դու», «Ես և Նա» հասկացություններն ի հայտ են գալիս մարդու կյանքում, անհատական գիտակցությունը փոխարինվում է

¹⁸⁷ Նույն տեղում, էջ 357:

¹⁸⁸ Նույն տեղում, էջ 358-359:

¹⁸⁹ Stoll J., The Novels of D.H Lawrence: A Search for Integration, Columbia: University of Missouri Press, 1971, p. 31.

¹⁹⁰ Lawrence D., The Posthumous Papers, Education of the People (Edited with an Introduction by Edwards D. McDonald), London: William Heinemann Ltd., 1936, pp. 613-614.

հասարակական գիտակցությամբ: Լոռիքենսն անհատական գիտակցությունը բաժանում է երկու՝ սուբյեկտիվ և օբյեկտիվ մասերի, մի կողմից՝ «Ես», մյուս կողմից՝ «Դու» կամ «Նա»: Հենց որ մարդը գիտակցում է, որ իրենից բացի գոյություն ունի «Դու կամ Նա», արդեն իսկ ձեռք է բերում հասարակական գիտակցություն: Մարդը դառնում է հասարակական էակ, կորցնում է անհատականությունը, անմեղությունը, միամտությունը¹⁹¹: Անմեղ կամ անհատական գիտակցությունն ինքնին չի վերլուծում, այն խորհրդավոր է:

Այն պահին, երբ մարդը տարանջատում է սուբյեկտիվ իրականությունը օբյեկտիվ իրականությունից, ամեն ինչ սկսում է վերլուծել: Իհարկե, Լոռիքենսի կարծիքով, երկար ժամանակ է պահանջվում, որպեսզի անմեղ անհատը՝ իին Ադամը, վերածվի հասարակական գիտակցությամբ օժտված մարդու: Սակայն նշում է, որ իհմա անգամ փոքրիկ երեխան ծնվում է հասարակական գիտակցությամբ: Նա կարող է ասել՝ մայրիկ, ինչն արդեն նշան է, որ նա տարանջատում է իրեն մայրիկից՝ դրանով իսկ դառնալով փոքրիկ հասարակական, սուբյեկտիվ-օբյեկտիվ գիտակցությամբ օժտված էակ: Սուբյեկտիվ-օբյեկտիվ գիտակցությունը երբեք չի կարող հատուկ լինել անհատին: Հասարակական գիտակցությունը տարանջատելով «Ես»-ն ու «Դու»-ն, «Ես»-ն ու «Նա»-ն՝ մերժում է անմեղ, միամիտ և անհատին բնորոշ մյուս զգացմունքները: Այդ գիտակցությամբ առաջնորդվող մարդն է միայն ունակ այնպիսի զգացմունքներ տածելու, որոնք առաջանում են «Ես»-ի և «Դու»-ի կամ «Ես»-ի և «Նրա» միջև: Լոռիքենսը համոզված է, որ մարդը հեռանում է իր անմեղ «Ես»-ից ազահության պատճառով՝ երբ «Ես»-ը ցանկանում է կուլ տալ, ոչնչացնել «Դու»-ին կամ «Նրան»: Ուստի, Լոռիքենսի կարծիքով, նման մարդիկ նյութապաշտ են¹⁹²:

Այսպիսով, Լոռիքենսի աշխարհնկալմամբ՝ մարդու արձագանքը այս կամ այն երևույթին կարող է լինել կամ իրենը՝ որպես անհատ, կամ ձևավորված լինել հասարակության կարծրատիպերի արդյունքում:

¹⁹¹ Lawrence D., The Individual Consciousness V. The Social Consciousness, Phoenix, The Posthumous Papers of D. H. Lawrence (Edited by Edward D. McDonald), New York: The Viking Press, 1968, p 762:

¹⁹² Նոյն տեղում, էջ 762:

Լոռուրենսը կարծում է, որ Երիտասարդները ունակ են փոխելու հասարակության մտածելակերպը, սակայն, ընդհանուր առմամբ, Երիտասարդ սերունդը առաջվա նման գտնվում է հասարակության ազդեցության ներքո¹⁹³: Նրանք իրենց զգում են ինչպես բանտում, որտեղ լի են ստախոսները: Այդ պատճառով Երիտասարդների մեջ հանգչում է կենսահաղորդակցության էներգիան, սպառվում է ցանկության աղբյուրը: Երիտասարդները շղթայված են ստով, որը սպառում է կենսահարաբերություն ունենալու նրանց աղբյուրը¹⁹⁴: Ահա սա է պատճառը, որ Լոռուրենսի հերոսները հիմնականում Երիտասարդ սերնդի ներկայացուցիչներ են, որոնք դեմ են դուրս գալիս համընդիանուր կարծիքին՝ հանուն կրծի և ազատության: Նա բաց հարաբերությունների ջատագովն էր: Եթե մարդը ցանկանում է ունենալ նման հարաբերություն, դա արդեն իսկ բնական երևույթ է, քանի որ ցանկությունը բնազդների արդյունքում է առաջանում, իսկ բնազդն իր հերթին «արյան գիտակցության» արդյունքն է:

Լոռուրենսը հորդորում է մարդկանց, որ նրանք թույլ չտան, որպեսզի արտաքին աշխարհից եկող հասարակության կարծիքը ճնշի նրանց ներաշխարհի ցանկությունները¹⁹⁵: Նա վստահ էր, որ իր կյանքը մի գրոշ անգամ չէր արժենա, եթե հասարակությունը թելադրեր իրեն, թե ինչպես է պետք ապրել սեփական կյանքը: Ազատությունն ամենակարևոր արժեքն է: Պետք է ազատվել ստից, որը գոյություն ունի մեր մեջ¹⁹⁶: Միայն այն դեպքում, եթե մարդը վերջ դնի ստին իր ներաշխարհում, նա կկարողանա պայքարել արտաքին աշխարհի ստի դեմ: Այս է ազատության և հանուն ազատության պայքարի իմաստը: Նա եզրափակում է, որ անհատը չի դիմադրում հասարակության առջև հիմար վիճակում չհայտնվելու վախից¹⁹⁷:

Ֆրենսիս Քուքը գրում է. «Կենդանի էակների գոյությունը պայմանավորված է մյուս կենդանի էակների գոյությամբ: Նրանք փոխկապակցված են: Յուրաքանչյուր մարդ

¹⁹³ Lawrence D., The Posthumous Papers of D. H. Lawrence, Pornography and Obscenity (Edited with an Introduction by Edwards D. McDonald), London: William Heinemann Ltd., 1936, p. 177.

¹⁹⁴ Նույն տեղում, էջ 183:

¹⁹⁵ Նույն տեղում, էջ 183:

¹⁹⁶ Նույն տեղում, էջ 185:

¹⁹⁷ Նույն տեղում, էջ 187:

որպես անհատ ձեռք է բերում կարևորություն միայն այն ժամանակ, երբ ամբողջի մի մասն է կազմում: Եթե անհատը չի ցանկանում միավորվել հասարակությանը, ապա նրա գոյությունը իմաստազրկվում է»¹⁹⁸: Այս կարծիքը հետագայում կիսում է նաև Ալան Վոթսը. «Տիեզերքում ոչ մի երևոյթ չի կարող գոյություն ունենալ առանձին: Բոլոր երևոյթներն իմաստ են ձեռք բերում միայն այն դեպքում, երբ մի երևոյթի գոյությունը պայմանավորված է մյուսի գոյությամբ»¹⁹⁹: Քութի և Վոթսի տեսակետները հոգեհարազատ էին Լոուրենսին: Վերջինս նոյնպես այն կարծիքին էր, որ եթե փոխադարձ կապը և հարաբերությունները խզվեն մարդկանց միջև, ապա մարդիկ կդառնան ժամանակակից փոքրիկ էգոիստներ²⁰⁰: «Ենթագիտակցականի երևակայություն» («Fantasia of the Unconsciousness», 1923) էսեում Լոուրենսը գրում է. «Նոյնիսկ Աստծո գոյությունն անիմաստ կլիներ, եթե մարդիկ գոյություն չունենային: Որպեսզի մարդը պահպանի իր անհատականությունը, նա պետք է պահպանի կապը այլ մարդկանց հետ: Ահա այդ հարաբերություններում է կարևորվում իր անհատականությունը»²⁰¹:

«Կինը, որը հեռացավ» պատմվածքը ընթերցողին է ներկայացնում հասարակական և անհատական գիտակցության պայքարը: Լոուրենսը գիտավոր հերոսուհու միջոցով իր հակակրանքն է արտահայտում հասարակական գիտակցության նկատմամբ: Ամուսնացած կինը երջանիկ չէ: Նրա նյարդերը հետզիետե սկսում են տեղի տալ: Մի օր կնոցը հիացնում է իր հյուրերից մեկի ասածը: Հենց այդ հյուրի շնորհիվ նրա գիտում միտք է ծագում՝ հեռանալ ժամանակակից մարդկանցից, կտրվել առօրյա հոգսերից: Կինը ցանկանում է հեռու փախչել և բնակվել հնդկացիական ցեղերի մեջ: Լոուրենսը նրան նկարագրում է որպես բանտարկյալ սեփական տանը: Երկու երեխաների մայրը, չմտածելով իր երեխաների և ամուսնու մասին, ցանկանում է միայն մեկուսանալ հեռավոր մի վայրում, որտեղ ժամանակակից մտածելակերպն այլս չի կարող ազդել իր վրա և

¹⁹⁸ Cook F., The Jewel Net of Indra, Nature in Asian Traditions of Thought: Essays in Environmental Philosophy (Edited by J. Baird Callicott, etc.), New York: State University of New York, 1989, p. 223.

¹⁹⁹ Watts A., The Way of Zen, Pantheon Books, A Division of Random House, Inc. New York 1957, p. 63.

²⁰⁰ Lawrence D., We Need One Another, Phoenix: The Posthumous Papers of D. H. Lawrence (Edited by Edward D. McDonald), New York: Viking, 1936, p. 190.

²⁰¹ Lawrence D., Fantasia of the Unconscious and Psychoanalysis and the Unconscious, Harmondsworth, UK: Penguin Books, 1975, p. 15.

փոխել կյանքը: Նա հոգնել է ամեն ինչից: Ժամանակակից կյանքը այլս չի գոհացնում նրան: Նա ցանկանում է հասարակ կյանք վարել հնդկացիական ցեղերի նման²⁰²:

Լոուրենսն իր հերոսուհուն ազատում է հասարակական գիտակցությունից: Եվ թեպետ Լոուրենսը մեկուսացնում է իր հերոսուհուն, նա գիտակցում է դրա պատճառած վնասները. «Այժմ եթե հարցնեմ մի կնոջ կամ տղամարդու, թե արդյոք կցանկանա՞լինել լիովին ազատ, չշփվել հոր կամ մոր, եղբոր կամ քրոջ, ընկերոջ կամ հարևանի հետ, շատ դեպքերում պատասխանը կլինի՝ այո՛: Իսկ իրական վտանգն այն է, որ դու պարփակվում ես ինքդ քո մեջ, դառնում ես չշփվող և զգում ես, թե որքան դատարկ է քո կյանքը: Մեկուսացումը, սահմանափակումը մեր «Ես-ի» մեջ ամենավտանգավոր բանն է: Մենք դարձել ենք ժամանակակից փոքրիկ էգոիստներ: Աշխարհը լի է հիմարներով, որոնք խզել են բոլոր կապերը այլ մարդկանց հետ՝ դատապարտելով իրենց դատարկությանը: Եթե հմանովիլ Կանտը մեկուսանար և գրի չառներ իր իրաշալի մտքերը, այդ մտքերը այդպես էլ կպտտվեին իր գլխում»²⁰³:

Եթի Էսքուֆին ուղղված նամակում Լոուրենսն իր ատելությունն է արտահայտում պատերազմների նկատմամբ. «Պատերազմը ոչ միայն ֆիզիկապես է ոչնչացնում մարդուն, այլև հոգեպես, քանի որ մարդիկ խզում են իրենց կապը տիեզերքի հետ և պայքարում են պաշտոնի, տարածքի, փողի, սեփականության համար: Ինձ համար երբեմն անտանելի է դառնում այն փաստը, որ ապրում եմ հասարակության մեջ և նրա մի մասնիկն եմ»²⁰⁴: Հասարակությունից հեռանալ, ապրել մեկուսի նշանակում է դառնալ ճգնավոր, մենակյաց, իսկ մնալ անառողջ մտածելակերպ ունեցող հասարակության մեջ, կնշանակի հիվանդանալ նույն հիվանդությամբ, քանի որ այն վարակիչ է և մեկ բառով կոչվում է նյութապաշտություն»²⁰⁵:

²⁰² Lawrence D., The Woman Who Rode Away in The Woman Who Rode Away (Edited by Dieter Mehl and etc.), Cambridge: Cambridge University Press, 2001, p. 39.

²⁰³ Lawrence D., We Need One Another, Phoenix, The Posthumous Papers of D.H. Lawrence (Edited by Edward D. McDonald), New York: The Viking Press, 1968, p.188.

²⁰⁴ Myers, W., Human Personality and its Survival of Bodily Death, New York: Dover Publication, 2005, p. 19.

²⁰⁵ Lawrence D., The Letters (Edited with an Introduction by Aldous Huxley), London: William Heinemann Ltd., 1932, p. 379.

Մարդը պետք է սովորի ապրել՝ անտեսելով այլ մարդկանց կարծիքը: Ահա այսպես է ապրել Լոուրենսը: Նա չի կարևորել հասարակության կարծիքը: Նա գիտակցում էր, որ միայն ինքն է պատասխանատու սեփական կյանքի համար: Ահա այսպես, հաշվի չառնելով հասարակության կարծիքը, նա ամուսնանում է գերմանացի ազնվական մի կնոջ՝ Ֆրիդայի հետ, ով չափազանց տարբեր էր իրենից:

«Արև» պատմվածքի հերոսուհին ստիպված մեկուսանում է հեռավոր մի գյուղում, որտեղ ձեռք է բերում անհատական գիտակցություն: Հասարակությունից հեռանալը նրա վրա դրական ազդեցություն է ունենում²⁰⁶: Նա ազատվում է համընդհանուր կարծիքից և սկսում է ապրել «բնական մարդու»նման:

Լոուրենսը հակադրում է «բնական մարդու» հատկանիշները հասարակական գիտակցություն ունեցող մարդուն: «բնական մարդ»ը ձգտում է փախչել այն իրականությունից, որտեղ միայն նյութապաշտ մարդիկ են ապրում, ինչպես օրինակ՝ «Կինը, որը հեռացավ» պատմվածքի հերոսուհին: Կնոջ, որի անունը ընթերցողին այդպես էլ անհայտ է մնում, և իր ամուսնու՝ Լեդերմանի միջև ներքին հակասություններ կային, որոնք հետևանք են երկու տարբեր աշխարհայացքի: Տղամարդու և կնոջ հարաբերությունները սարսափելի վատ են, և Լոուրենսը նշում է դրա պատճառներից մի քանիսը: Լեդերմանը իդելալիս է: Նա օրուգիշեր աշխատում է հանուն գումարի և կարողության, ինչը վկայում է, որ նա բանականությամբ է առաջնորդվում և մերժում է բնազդները: Ժամանակակից մարդկանց նման փորձում է իր տեղը գտնել կյանքում և հպարտանալ իր ձեռքբերումներով: Իսկ Լեդերմանի կինը՝ կինը, որը հեռանում է, հակառակ իր ամուսնու, չի հետաքրքրվում նման բաներով: Առօրյա հոգսերը, հասարակության ստեղծած օրենքները հոգնեցրել են նրան²⁰⁷:

Դ.Հ. Լոուրենսը «Թոմաս Հարդի» գրքի երկրորդ գլխում գրում է օրենքների, հասարակական կարծիքի նկատմամբ իր բացասական վերաբերմունքի մասին. «Բայց օրենքը շատ տիաճ և արհեստական գործիք է: Օրենքները արհեստականորեն են

²⁰⁶ Lawrence D., Sun in The Woman Who Rode Away (Edited by Dieter Mehl and etc.), Cambridge: Cambridge University Press 2001, p. 21.

²⁰⁷ Lawrence D., The Woman Who Rode Away in the Woman Who Rode Away (Edited by Dieter Mehl and etc.), Cambridge: Cambridge University Press 2001, p. 39.

ստեղծվել հասարակության կողմից: Մարդիկ պետք է ազատ լինեն ուրիշների կարծիքներից և օրենքներից:

Արհեստական պայմանների հետևանքով մարդը չի համարձակվում առաջ գնալ, այնպես, ինչպես իր սիրտն է թելադրում, և մնում է նույն տեղում: Մարդիկ վախենում են լինել այնպիսին, ինչպիսին որ կան, ինչը նշանակում է իսկապես ապրել: Նրանք գերադասում են մնալ հասարակության մի մասնիկը, ինչը հավասարագոր է մահվան»²⁰⁸: Նույն գլուխ 36-րդ տողում նա ափսոսանք է հայտնում, որ, գտնվելով մի հզոր ուժի ազդեցության տակ, չի կարողանում գտնել իր Ես-ը. «Պետք է պայքարել, ինչի շնորհիվ մարդը կկարողանա հասնել այն բանին, ինչ ցանկանում է»²⁰⁹: Նույն գրքի երրորդ գլուխ Լոուրենսը հիացմունքով է խոսում այն մասին, որ Հարդիի հերոսները չմտածված բաներ են անում: Նրանք անսպասելի հեռանում են՝ չմտածելով փողի կամ հասարակության մեջ իրենց դիրքերն ամրապնդելու մասին:

«Արքայադուստր» պատմվածքում Լոուրենսը նկարագրում է իր հերոսուհու կյանքը, թե ինչպես է նրա հայրը միշտ որոշում, թե ուր գնա կամ ինչով գրաղվի: Աղջկա հայրը միշտ ասում է. «Իմ փոքրիկ Արքայադուստրը երբեք չպետք է այլ մարդկանց կարծիքը հաշվի առնի և չպետք է ուշադրություն դարձնի, թե նրանք ինչ են անում կամ խոսում, քանի որ նրանք իրականում չգիտեն, թե ինչ են խոսում: Նրանք շաղակրատում են և վիրավորում են միմյանց: Բայց դու չպետք է ուշադրություն դարձնես նրանց, իմ փոքրիկ Արքայադուստր, քանի որ այդ ամենը կարևոր չէ: Յուրաքանչյուր մարդու մեջ կա մեկ այլ էակ՝ սատանա: Դու պետք է մարդկանց ասածներն ու արարքները անտեսես»²¹⁰: Հայրը, մեկուսացնելով աղջկան հասարակությունից, ցանկանում է, որ նա չփոխի իր Էությունը:

Տղամարդու և կնոջ հարաբերությունները Լոուրենսի համար առաջնային տեղում էին: Նրա հերոսները երբեմն ցանկանում էին փախչել հասարակությունից մեկուսանալու, անհատական գիտակցություն ձևավորելու և բնագրներով առաջնորդվելու համար:

²⁰⁸ Lawrence D., Study of Thomas Hardy and Other Essays (Edited by Bruce Steele), Cambridge: Cambridge University Press, 1988, p. 17.

²⁰⁹ Նույն տեղում, էջ 19:

²¹⁰ Lawrence D., The Princess in St. Mawr and Other Stories (Edited by Brian Finney), Cambridge: Cambridge University Press 1983, p. 158.

Մեկուսացման ճանապարհին Լոուրենսի հերոսները հանդիպում են իրենց երկրորդ կեսին, որպեսզի սեռական բնագդը բնականորեն դրսևորվի: Նրանք մեծ մասամբ ձևականություններից հեռու, հասարակ կենսակերպով մարդիկ են. «Անհատականությունը կարևորվում է հասարակության մեջ, ուստի պիտի ընդունենք այդ փաստը: Նախքան այլ մարդկանց հետ շփվելը մենք գուտ անհատներ ենք, և այդ անհատականությունը ոչինչ չարժե:

Մարդու էությունը ձգտում է կապ հաստատել մեկ այլ մարդու հետ: Սա կենսաբանորեն հարաբերվելու ցանկությունն է: Սակայն սա ավելին է, քան կենսահաղորդակցությունը: Դա կենդանի շփում է: Այսպես ենք դառնում իսկական անհատներ: Քանի դեռ մենք կենդանի ենք, առողջ, մենք ձգտում ենք մարդկային հարաբերություններ հաստատել այլ մարդկանց հետ: Եվ այդ ցանկությունը անգիտակցական մակարդակում է տեղի ունենում: Գոյություն ունի երկու տեսակի հարաբերություն՝ կնոջ և տղամարդու միջև և կնոջ, տղամարդու և այլ մարդկանց միջև՝ հայր, մայր, եղբայր, ընկեր և այլն»²¹¹:

Քաղաքակրթությունից հեռանալու և «բնական մարդկանց» հետ միասին ապրելու գաղափարը մենք կարող ենք տեսնել «Արքայադուստր», «Արև», «Կույսն ու գնչուն» պատմվածքներում: «Արքայադուստր» պատմվածքում երեսունութամյա կինը, որն ամբողջ կյանքը անցկացրել է իր հետ, վերջինիս մահից հետո տեղափոխվում է իրենց ազարակ, որտեղ հանդիպում է Ռոմեո անունով մի մեքսիկացու: Այս մարդը ամրակազմ և թիկնեղ է: Լոուրենսը նրան նմանեցնում է հնդկացիների. «Սև աչքերով մեքսիկացիները երբեմն թշնամաբար են վերաբերվում, երբեմն էլ բարի են: Միշտ ունեն հնդկացիների այդ ճակատագրական հայացքը»²¹²: Ռոմեոն հանդիպում է արքայադստերը և նրան տանում է դեպի հեռու լեռները, որտեղ նրանք առաջնորդվում են բնագդներով:

«Կույսն ու գնչուն» պատմվածքում իվելթը սիրում է պառկել և երազել, որ ինքը գնչու է, քանի որ գնչուները ազատ կարող են ապրել այնպես, ինչպես իրենց սիրտն է

²¹¹ Lawrence D., We Need One Another, Phoenix, The Posthumous Papers of D.H. Lawrence (Edited by Edward D. McDonald), New York: The Viking Press, 1968, p. 189.

²¹² Lawrence D., St. Mawr and Other Stories (Edited by Brian Finney), Cambridge: Cambridge University Press, 2001, 170.

թելադրում: Իսկ Իվեթը հոգնել էր իր միապաղաղ կենսակերպից. «Ապրել ճամբարում, ծածկասայլի մեջ, երբեք ոտք չդնել տուն, չիմանալ ծիսական համայնքի գոյությունը, երբեք չմտնել եկեղեցի: Աղջկա սրտում նողկանք էր կոտակվել քահանայի տան հանդեպ: Զզվում էր այստեղից, նրանց առողջապահական կանոններից, նրանց վանող տեսքից: Ատում էր հայրական տունը և նրան վերաբերող ամեն ինչ: Լճացած այդ կյանքը, որ կոյուղու է նման: Որքան զզվելի է: Եթե գնչուները լոգարան չունեին, գոնե կոյուղի էլ չունեին: Նրանք միշտ թարմ օդ էին շնչում: Իսկ այս տանը երբեք թարմ օդ չկա: Նույնիսկ մարդկանց հոգիներում օդը փտում էր մինչև գարշահոտելը»²¹³:

Այս պատմվածքում Իվեթը ցանկանում է հեռանալ տանից, լինել գնչուի նման, գնչուի հետ: Գնչուն մարմնավորում է «քնական մարդ»ուն: Իվեթը, սիրահարվելով գնչուին, իր կյանքը պատկերացնում է միայն նրա հետ. աղջկան չի անհանգստացնում անգամ այն միտքը, որ գնչուն ամուսնացած է և երեխաներ ունի. «Եկավ ուրբաթը, և նա իր կամքին հակառակ՝ ամբողջ օրը մտածում էր Բոնալ Հեդի ճանապարհի մոտ գտնվող քարիանքի մասին»²¹⁴:

Լոուրենսի գաղափարները սիրային, ինտիմ հարաբերության վերաբերյալ քննադատության են արժանացել և բազմաթիվ հարցեր են առաջացրել քննադատների և հասարակության շրջանում²¹⁵: Նրանք ճիշտ չեն ըմբռնել նրա գաղափարները՝ վատ համբավ բերելով Լոուրենսին: Գրողն ինքը չէր հասկանում, թե ինչու է հասարակությունը թշնամաբար վերաբերվում իրեն: 1928 թ. «Լեդի Չաթերլիի սիրեկանը» («Lady Chatterley's Lover») վեպը տպագրվելուց հետո նա սկսում է գիտակցել, որ «կենսահաղորդակցություն» բառը սիսալ է ընկալվել ընթերցողների կողմից. «Այսպիսով, ես սկսեցի հասկանալ, թե որն է ինձ քննադատելու պատճառը: Նրանք միայն ինտիմ հարաբերության մի ձև են ճանաչում, որը պարտականություն է, երբեմն նյարդային, այսպես կոչված՝ «սպիտակ

²¹³ Լորրնս Դ., Թարգմանություններ, Զատիկ (թրգմ.՝ Սամվել Մկրտչյան), Գիղը Ա, Երևան, 2009, էջ 480-481:

²¹⁴ Նույն տեղում, էջ 483:

²¹⁵ Spilka M., D.H. Lawrence: A Collection of Critical Essays (A Spectrum book. Twentieth Century Views), USA: Prentice-Hall, 1964, p. 94.

հարաբերություն»: Ես միանգամայն համամիտ եմ, որ այս տեսակ ինտիմ հարաբերությունը կեղծ է»²¹⁶:

«Լեդի Չաթերլիի սիրեկանը» ոչ միայն Լոուրենսի ամենաքննարկվող վեպն է, որտեղ նկարագրված են սեռական հարաբերության մանրամասնություններ, այլև այն հրաշալի հնարավորություն է տալիս մեզ գործնականում տեսնելու, հասկանալու, որ այս վեպում, իսկ հետագայում նաև իր փոքր արձակում գրողի հիմնական նպատակը տղամարդու և կնոջ բարդ փոխհարաբերությունները ցույց տալն է. «Տղամարդիկ Կոնիի մեջ անչափ գնահատում էին ՄԱՐԴՈՒՆ և բավական դաժան էին կնոջ հանդեպ, արհամարհում էին նրան կամ ընդհանրապես անտեսում էին: Տղամարդիկ ահավոր բարի էին Կոնստանս Ռիդի կամ Լեդի Չաթերլիի հանդեպ, բայց նրա արգանդի հանդեպ նույն բարությունը բացակայում էր»²¹⁷: Այս վեպի մեկ այլ դրվագում Լոուրենսը նկարագրում է կենսահաղորդակցությունը որպես մեղիտացիայի գործընթաց, երբ հոգին, ասես, դուրս է գալիս մարմնից. «Կոնին դեռևս պառկած էր անշարժ, ասես քնի մեջ, անմասն ու անհաղորդ»²¹⁸:

Այս վեպն ավելի շատ բացահայտում է այն նուրբ զգացմունքները, որոնք թաքնված են մարդու մեջ: Դրանում երկու հասուն մարդկանց միջև բիոհաղորդակցական կապերը քննարկվում են որպես բնական գործընթաց, որպես հաճույքի աղբյուր և ոչ թե ամոթալի երևույթ: Ավելին, այնտեղ դրսնորվում է Լոուրենսի այն համոզմունքը, որ բիոհաղորդակցական կապը ներառում է սեր, զերմ զգացմունքներ և հույզեր: Վեպի հերոսը՝ անտառապահը, Կոնիի մեջ կին է տեսել: Նա, բնությանն ավելի մոտ լինելով, անկաշկանդ է իր ցանկություններն արտահայտելիս՝ այս դեպքում սիրելու ցանկությունը. «Զեղոք փափո՛մկ-փափո՛մկ փաղաքշում էր իր դեմքն անսահման, ինքնավստահ հանգստությամբ, և վերջապես նրա շուրթերի հպումը զգաց իր այտին»²¹⁹: Այս առումով, Ալաստեհի Նիրվենը նշում է, թե ինչ յուրօրինակ վերնագիր էր նախապես ընտրված այս

²¹⁶ Lawrence D., A Propose of Lady Chatterley's Lover, A Selection from Phoenix (Edited by A.A.H. Inglis), Harmondsworth: Penguin, 1979, p. 348.

²¹⁷ Լոուրենս Դ., Լեդի Չաթերլիի Սիրեկանը (թրգմ.՝ Արամ Արտենյան), Երևան, «Լուսակն», 2014, էջ 194:

²¹⁸ Նոյն տեղում, էջ187:

²¹⁹ Նոյն տեղում, էջ187:

վեպի համար՝ «Tenderness» («Քնքանք»), ինչը հստակ արտացոլում է Լոուրենսի մտադրությունը՝ ընդգծելու զգացմունքի և հավատարմության կարևորությունը կիստղամարդ հարաբերություններում²²⁰:

Ինչպես նշում է Սթիվեն Մարկուսը, վիկտորիանական դարաշրջանի անգիացի գրողների աշխատություններում կենսահաղորդակցության և պոռնոգրաֆիայի առկայության մասին իր ուսումնասիրության մեջ, պոռնոգրաֆիան կենսահաղորդակցությունն է՝ առանց սիրո²²¹:

Լոուրենսը կիրքը, խորը զգացմունքները, բուռն ցանկությունը համեմատում է կրակի հետ. «Անտառապահը խելահեղորեն և ամուր դեպի իրեն սեղմեց կանացի փափուկ, հովացած մարմինը, որ հպումից արագորեն տաքացել, բոց էր դարձել: Անձրւն անվերջ թափվում էր նրանց վրա, մինչև նրանց մարմիններից սկսեց գոլորշի դուրս գալ»²²²: Տրամաբանորեն սիրո, կրքի պակասը Լոուրենսը նկարագրում է որպես սառնություն²²³: «Ետաքրքիր են այն տողերը, որտեղ Կոնիի ամուսին Քլիֆորդը նկարագրվում է որպես սառը, անսիրտ մարդ. «Ինչ տարօրինակ արարած է, ինչ-որ թռչունի պես սրատես, սառն ու անկոտրում կամքով, և ջերմություն չկա, ջերմության ոչ մի նշով»²²⁴:

Լոուրենսը կարծում էր, որ բիոհաղորդակցվելու ցանկությունը երբեք անբարոյական չի կարող լինել, եթե այն բխում է սրտի խորքից: Նա վստահ էր, որ անբարոյականությունն այն է, երբ կանայք առանց սիրո և կրքի իրենց ողջ կյանքը նվիրում են ամուսիններին: Նա զարմանում էր, թե արդյոք արժե, որ մարդը սահմանափակի իր ազատությունը, որպեսզի հասարակությունը իրեն չըննադատի. «Քննադատել՝ առաջնորդվելով օրենքի տառով, անշնորհակալ և ձանձրալի բան է, առավել ևս, որ օրենքները չեն արտացոլում իրական կյանքը: Ասած վերաբերում է այն

²²⁰ Nirven A., D.H. Lawrence, The Novels. Cambridge: Cambridge University Press, 1978, p. 183.

²²¹ Marcus S., The Other Victorians: A Study of sexuality and Pornography in Mid-Nineteenth-Century England, New York: Besic Books, 1964, p. 238.

²²² Լոուրենս Դ., Լեդի Չաթըրլիի Սիրեկանը (թրգմ.՝ Արամ Արսենյան), Երևան, «Լուսակն», 2014, էջ 339:

²²³ Williams L., Sex in the Head: Visions of Femininity and Film in D. H. Lawrence, Detroit, Michigan: Wayne State University Press, 1993, p. 1.

²²⁴ Լոուրենս Դ., Լեդի Չաթըրլիի Սիրեկանը (թրգմ.՝ Արամ Արսենյան), Երևան, «Լուսակն», 2014, էջ 219:

բանին, որ յուրաքանչյուր մարդու կյանքում պատահում է այնպիսի իրավիճակ, եթե նա կա՞մ պետք է մեծամասնության կողմն անցնի, կա՞մ պետք է անտեսի նրանց կարծիքը և ապրի անկախ»²²⁵:

Այսպիսով, ի՞նչ է իրենից ներկայացնում ինտիմ հարաբերությունը կամ կենսահաղորդակցությունը: Այս մասին նա գրում է «Սեր» («Love», 1918), «Մենք միմյանց կարիքն ունենք» («We need One Another», 1930), «Ոչ ոք ինձ չի սիրում» («Nobody Loves Me», 1930), «Խուճապի վիճակ» («The State of Funk», 1929), «Կենսահաղորդակցության կոչ» («Sex Appeal», 1928), «Լեդի Չաթերլիի սիրելանի վերաբերյալ» («A Propos of Lady Chatterley's Lover», 1936) էսեներում: Վերջին էսեում նա շարադրում է. «Ես ինտիմ հարաբերություն բառակապակցությամբ նկատի ունեմ «արյան հաղորդակցություն»: Սա բոլորովին տարբերվում է ժամանակակից կենսահաղորդակցությունից, որը սառը, նյարդային երևույթ է: Սա անձնական կենսահաղորդակցություն է (personal sex)»²²⁶: Ապա շարունակում է, որ նման կենսահաղորդակցության մասին չէ, որ ինքը գրում է: Դա այն չէ, ինչ ինքը ցանկանում է պատկերել: Նա կենսահաղորդակցությունը պատկերում է որպես կիրք («warm blood-desire»): Լոուրենսի ընկալմամբ՝ այս եզրույթը կյանքի հոմանիշն է, տղամարդու և կնոջ միջև նուրբ զգացմունքների արտահայտման միջոց: Այն տղամարդու և կնոջ միջև հարաբերությունների խորհրդանիշն է: Այն այնքան բնական է, որքան բնական են ֆիզիոլոգիական այլ կարիքները²²⁷:

«Կենսահաղորդակցության կոչ» էսեում Լոուրենսը գրում է. «Ավսոս, որ կենսահաղորդակցությունն այսքան տգեղ բառ է: Որտեղ կյանք կա, այնտեղ էլ կենսահաղորդակցությունն է: Կենսահաղորդակցությունն ու գեղեցկությունը մեկ ամբողջություն են, ինչպես հուրն ու կրակը: Եթե ատում ես կենսահաղորդակցությունն, ուրեմն ատում ես գեղեցիկը: Եթե սիրում ես ապրել, ապա կենսահաղորդակցության ցանկությունդ մեծ կլինի: Մի ողջ աշխարհ գոյություն ունի, որը պետք է բացահայտել

²²⁵ Lawrence D., Pornography and Obscenity, The Posthumous Papers of D. H. Lawrence (Edited with an Introduction by Edwards D. McDonald), London: William Heinemann Ltd., 1936, p. 170:

²²⁶ Նոյն տեղում, էջ 352:

²²⁷ Lawrence D., We Need One Another, Phoenix, The Posthumous Papers of D.H. Lawrence (Edited by Edward D. McDonald), New York: The Viking Press, 1968, p. 193.

բնազդների միջոցով: Մարդիկ մերժում են բնազդները՝ մերժելով գեղեցկությունն ու կենսահաղորդակցությունը»²²⁸:

Լոռիտենսի խորին համոզմամբ՝ կենսահաղորդակցությունը, ամուսնությունը և մարդու ողջ կյանքը պետք է համահունչ լինեն տիեզերքի ոհթմին. «Կենսահաղորդակցությունը, - գրում է նա, - տղամարդու և կնոջ միջև հավասարակշռությունն է տիեզերքում»²²⁹: Լոռիտենսը համոզված էր, որ կենսահաղորդակցությունը պետք է լինի մարդու առաջնային նպատակը և ոչ թե ամուսնական պարտավորություն, որը հասարակության մեջ շրջանառվող կարծրատիպերի արդյունք է: Այս հարաբերությունները հաճելի զգացողություններ են առաջացնում և կարծեն տղամարդուն և կնոջը ձուլում են տիեզերքին: Մարդու գոյությունը բիոհաղորդակցման, դրա կարևորությունը գիտակցելու արդյունք է: Ահա այսպես է նա վերագտնում իր «Ես»-ը և բավականություն ստանում իր անձից: Կենսահաղորդակցության գործընթացը բավականություն չի պատճառում ժամանակակից մարդկանց, քանի որ, ըստ Լոռիտենսի, մարդու բնությունը այլասերվել է: Սա մշակութային խնդիր է, որի մասին նա գրում է իր էսեում²³⁰: Ահա նոյնկերպ ամուսնությունը հոգնեցրել է «Լեդի Չաթրլիի սիրելիանը» վեպի հերոսուիի Կոնիին, ում նյարդերի վրա ազդում էր իր ամուսինը՝ իբրև անզգացմունք, բանական էակ. «-Այո՞ , - դանդաղ արտաքերեց Կոնին՝ մտածելով Քիֆորդի մասին, որը կլանված լսում էր ռադիոյի զգացմունքային ապուշությունը: - Մարդիկ ձևացնում են, իբր ապրումներ ունեն, իրականում ոչինչ էլ չեն զգում: Ենթադրում եմ, որ այդ ամենը պարզապես հնարանք է»²³¹:

Ալան Վոթսը բացատրում է, որ կենսահաղորդակցությունը գիտակցությունից, կամքից որոշ ժամանակով ազատվելու միջոց է²³². «Կենսահաղորդակցության ցանկությունն առաջանում է կրքից: Ոչ մի վատ բան չկա նրանում, ինչն առաջանում է

²²⁸ Lawrence D., Late Essays and Articles (Edited by James T. Boulton), Cambridge: Cambridge University Press, 2004, p.144.

²²⁹ Lawrence D., A Propos of Lady Chatterley's Lover, A Selection from Phoenix (Edited by A.A.H. Inglis), Harmondsworth: Penguin, 1979, pp. 351-352.

²³⁰ Նոյն տեղում, էջ 351-352:

²³¹ Լոռիտենս Դ., Լեդի Չաթրլիի Սիրելիանը (թրգմ.՝ Արամ Արսենյան), Երևան, «Լուսակն», 2014, էջ 219:

²³² Watts A., Introduction, Nature, Man and Woman, Vintage Book Edition, New York, 1991, p. 11.

ինքնըստինքյան»²³³: Լոուրենսը կիսում է սիրո և կենսահաղորդակցության արևելյան այս տեսակետը և հաճախ է հիշեցնում մեզ, որ սիրո նուրբ զգացումը գեղեցիկ է, քանի որ այն բխում է բնազդներից և բնական երևույթ է: «Կենսահաղորդակցությունից,-գրում է նա,- չպետք է վախենալ: Դրանից չպետք է ամաչել: Դրանից պետք է բավականություն ստանալ»²³⁴: «Մաքուր» («pure») բառը Լոուրենսը հաճախ է գործածում կենսահաղորդակցության մասին գրելիս, քանի որ, ըստ նրա, այդ հարաբերությունները պետք է ազատ լինեն ավանդական մտածողությունից և հիմնված լինեն մաքուր զգացմունքի վրա՝ անձնատուր լինելով բնազդներին: Բնազդը սիրո, կենսահաղորդակցության կամ ամուսնության ժամանակ «հոգու ազդակ» է (soul's impulse) և պետք է բավարարի մարմնի կարիքները: Ֆիզիոլոգիական այլ կարիքներից բացի, Լոուրենսը մեծ կարևորություն է տալիս կենսահաղորդակցության կարիքին՝ այն նկարագրելով որպես «քաղց» («hunger»)²³⁵:

Մորրիս Լ. Էրնեսթին գրած նամակում գրողը խրախուսում է ժամանակակից մարդկանց տրվել զգացմունքներին և կրքին ու զգալ ֆիզիոլոգիական շիման խորը ազդեցությունը մարդու ներաշխարհի վրա²³⁶: Դրանք բնազդային, ինքնաբուխ կյանքի անբաժանելի մասնիկն են, իսկ ինքնաբուխ, բնազդային կյանքը միակ ուղին է՝ զգալու տիեզերական առեղծվածը և հասնելու մարմնի ամբողջականությանը: Սա առողջ ցանկություն է, ի տարբերություն կոռուպցիայի, քանի որ այն համահունչ ընթանում է բնազդային կյանքի հունով: Լոուրենսը «Լեդի Չաթերլիի սիրեկանի վերաբերյալ» էսսեում գրում է. «Այս էսսեի հիմնական նպատակն այն է, որ ես ուզում եմ, որ տղամարդիկ և կանայք սկսեն մտածել կենսահաղորդակցության մասին որպես մաքուր, ազնիվ ցանկության, եթե նույնիսկ մենք չենք զբաղվում դրանով, որ բավականություն ստանանք»²³⁷:

²³³ Նոյն տեղում, էջ 188:

²³⁴ Lawrence D., The Complete Poems (Edited by Vivian de Sola Pinto, etc.), London: Penguin Books, 1993, p. 264.

²³⁵ Նոյն տեղում, էջ 264:

²³⁶ Lawrence D., The Collected Letters, Vol. II (Edited by Harry T. Moore), London, 1962, p. 1099.

²³⁷ Lawrence D., A Propos of Lady Chatterley's Lover, A Selection from Phoenix (Edited by A.A.H. Inglis), Harmondsworth: Penguin, 1979, p. 330.

Չաման Նահալը պնդում է, որ Լոուրենսը միշտ ասել է, որ կենսահաղորդակցությունը պետք է լինի միայն այն ժամանակ, երբ երկու կողմն էլ զգում են այդ ուժգին ցանկությունը: Նա զավածության և ոչ թե սանձարձակության քարոզիչ էր²³⁸:

Անբարոյականության և կենսահաղորդակցության վերաբերյալ Լոուրենսը մանրամասնորեն գրում է «Պոռնոգրաֆիա և անբարոյականություն» («Pornography and Obscenity», 1936) էսաեում, որտեղ բացահայտվում է գրողի աշխարհայացքը: Ըստ Լոուրենսի՝ կինը պետք է կարողանա գրավել տղամարդու ուշադրությունը, հակառակ դեպքում՝ նրան միայն «չորացած ձուկ» կարելի է անվանել²³⁹: Լոուրենսը երբեք չի քննադատել այն կանանց, ովքեր ազատորեն հարաբերություն են ունենում տղամարդկանց հետ: Իր ժամանակակիցները դա անվանել են անբարոյականություն: Մինչդեռ նրա ընկալմամբ այդ անբարոյական կանայք ավելի բարոյական են և պարկեցն²⁴⁰:

«Ես հիշում եմ, թե ինչպես ինչ-որ հոդվածում անբարոյականության վերաբերյալ կարդացի, որ այն արվեստի մի տեսակ է, որն առաջացնում է մարդու մեջ ինտիմ հարաբերություն ունենալու ցանկություն, իսկ ցանկությունը յուրաքանչյուր մարդու մեջ առաջանում է անգիտակցական և ոչ գիտակցական մակարդակում»²⁴¹: Այնուամենայնիվ, մարդկանց մեծ մասը, ըստ Լոուրենսի, կարծում է, որ կենսահաղորդակցությունն ինչ-որ ցածր, կեղտոտ, անտանելի երևոյթ է. «Մի խոսքով, մարդիկ դրան բացասաբար են վերաբերվում: Հարց է առաջանում՝ ինչո՞ւ: Որքան էլ ծնացնենք, թե բոլորովին անտարբեր ենք նման հարաբերություն ունենալու նկատմամբ, մեզանից շատերը դեմ չեն, որ իրենց մեջ էլ նման ցանկություն առաջանա: Այդ ցանկությունը ջերմացնում է մեզ, ինչպես ամպամած օրը, երբ արևն է ծագում ամպերի ետևից»²⁴²:

²³⁸ Nahal C., D.H. Lawrence: An Eastern View. New Delhi: Atma Ram & Sons, 1971, p. 110.

²³⁹ Lawrence D., Pornography and Obscenity, Phoenix, The Posthumous Papers of D. H. Lawrence (Edited with an Introduction by Edwards D. McDonald), London: William Heinemann Ltd., 1968, p. 170.

²⁴⁰ Նոյն տեղում, էջ 170:

²⁴¹ Նոյն տեղում, էջ 173:

²⁴² Նոյն տեղում, էջ 173:

Հետագայում «Խուճապի վիճակ» («The State of Funk», 1929) էսեում Լոոլենսը հստակեցնում է կենսահաղորդակցության վերաբերյալ իր տեսակետը. «Եթե գոյություն ունի մի բան, որը ես չեմ սիրում, էժանագին ու այլասերված կենսահաղորդակցությունն է: Եթե կա մի բան, որում ես այդքան վստահ եմ և կարող եմ պնդել, նուրբ զգացմունքների վրա հիմնված կենսահաղորդակցությունն է: Այն պետք է լինի շերմ զգացմունքների, համակրանքի արդյունքում և երբեք չպետք է լինի պահի ազդեցության տակ՝ կենդանական»²⁴³:

Այս տողերից կարելի է եզրակացնել հետևյալը. քանի որ կենսահաղորդակցությունը «էական» («vital»), նուրբ, փոխադարձ համակրանքի վրա հիմնված զգացում է, ապա այն պետք է հարգել՝ չվերաբերվելով դրան մակերեսորեն: Մյուս կողմից կենսահաղորդակցությունը, լինելով ֆիզիոլոգիական ցանկություն, ինքնաբուխ է և բնազդային: Այն մաքուր, գեղեցիկ և ազնիվ գործընթաց է, ուստի պետք է այս փաստն ընդունել առանց վախենալու:

Ըստ Լոոլենսի՝ քրիստոնեական մշակույթներում կենսահաղորդակցությունը չի մեծարվում, անգամ չի խրախուսվում այդ մասին խոսելը: Թույլատրվում է միայն մտածել այդ մասին: Այսպիսով, գրողը դեմ է հոգևոր սիրուն քրիստոնեական կրոնում, քանի որ այն մերժում է մարմինը, փոխանակ խրախուսելու, որ մարդիկ ընդունեն «կենդանի կենսահաղորդակցությունը» («living sex»). «Մեր միակ խնդիրը կենսահաղորդակցության մասին խոսելու կամ այն որպես բնական գործընթաց դիտելու համարձակություն չունենալն է: Մենք անբարոյական («sexual villains») չենք և ոչ ել սանձարձակ: Մենք պարզապես կենդանի էակներ ենք՝ կենդանի կենսահաղորդակցություն ունենալու ցանկությամբ: Հրաշալի կլիներ, եթե կենսահաղորդակցություն ունենալու այդ վախը մեզանում անհետանար»²⁴⁴:

Լոոլենսը «Խուճապի վիճակ» էսեում շարունակում է միտքը՝ գրելով, որ անգիտացիներն ապրում են իրենց սեփական ցանկությունները, բնական

²⁴³ Lawrence D., The State of Funk, in D.H. Lawrence, A Selection from Phoenix (Edited by. A.A.H. Inglis), Harmondsworth: Penguin, 1971, p. 370.

²⁴⁴ Lawrence D., A Propos of Lady Chatterley's Lover, A Selection from Phoenix (Edited by A.A.H. Inglis), Harmondsworth: Penguin, 1979, p. 368.

պահանջմունքները ճանաչելու վախը սրտներում. «Մեր քաղաքակրթությունը գրեթե ոչնչացրել է տղամարդու և կնոջ միջև բնական փոխհարաբերությունները: Եվ սա է, որ ցանկանում եմ վերականգնել մեր կյանքում: Սակայն համոզված եմ, որ մարդկանց մեծ մասը ունի նուրբ զգացմունքներ, որոնք երբևէ չի զգացել վախի, ճնշվածության պատճառով»²⁴⁵:

Ըրլ Բրևաթերը՝ Լոուրենսի բուդյիստ ընկերը, ով երկար ժամանակ ապրել է Լոուրենսի կողքին, նրան շատ լավ էր ճանաչում և ցանկանում էր արդարացնել Լոուրենսին, որպեսզի հասարակությունը կենսահաղորդակցության վերաբերյալ արտահայտած նրա մտքերը սխալ չըմբռնի: Նա գրում է. «Նրանց համար, ովքեր չեն ճանաչում Լոուրենսին մոտիկից, և այն ընթերցողների համար, ովքեր Լոուրենսի մտքերը տարօրինակ են համարում, պետք է նշեմ հետևյալը. Նա պուրիտան է, եզրույթ, որը վերագրել էին Լոուրենսին իր կենդանության օրոք, և որն ինքն ընդունել է: Նրանք, ովքեր կարդալիս այնպիսի են զգացում են ունեցել, թե Լոուրենսը քաջալերում է սանձարձակությունը, պետք է իմանան, թե ինչպես էր զգվում նա այդ երևույթից: Նա բնական ազդակներն ազատ արձակելու ջատագով էր:

Ճիշտ է, Լոուրենսին շատ է հետաքրքրել կենսահաղորդակցությունը, սակայն բժշկի նման, որը ցանկանում էր բուժել: Նա ցանկանում էր, որ ընթերցողը հասկանա իր մտքերը՝ անկախ նրանից՝ համամիտ է, թե ոչ: Պարզ է, որ նա տարանջատում է մտավոր և ֆիզիկական կյանքը միմյանցից: Այսօր մեզնից շատերը մերժում կամ ճնշում են կենսահաղորդակցության ցանկությունը և չեն գիտակցում դրա կարևորությունը: Ես կարծում եմ, որ նա հնդկացիական ցեղերի նման երկրագում է «շակտի» («shakti»)՝ կյանքը, տիեզերական ուժը, ամբողջականությունը: Նրա հետ իմ ապրած ուրախ, ազատ, կենսախինդ ժամանակահատվածում ես երբեք չեմ նկատել կամ լսել, որ Լոուրենսը գոեհիկ պատմություններ պատմի կամ գոեհիկ կատակներ անի կենսահաղորդակցության

²⁴⁵ Lawrence D., Late Essays and Articles (Edited by James T. Boulton), Cambridge: Cambridge University Press, 2004 p. 221.

վերաբերյալ»²⁴⁶: <. Գրեգորին իր «Ապոկալիպսիսի պանդուստ» («Pilgrim of the Apocalypse», 1957) գրքում նույնպես Լորենսին անվանել է պուրիտան²⁴⁷:

«Մրմունջ» պատմվածքը նվիրված է կին-տղամարդ հարաբերություններին: Մի կողմից զույգը հասարակության մի մասնիկն է, մյուս կողմից այն մեկուսացած է հասարակությունից և ապրում է իր ստեղծած աշխարհում: Տղամարդու կիրքը, սերը կնոջ նկատմամբ արթնանալու համար միջավայր է անհրաժեշտ, ուստի գրողը նրանց հեռացնում է ժամանակակից աշխարհից: Մեկուսանալով բոլորից՝ տղամարդու սեռական բնագդն արթնանում է, և նա մտածում է միայն կնոջ հետ կենսահաղորդակցություն ունենալու մասին: Պատմվածքը սկսում է մի քանի կանանց զրոյցից: Նրանք զրուցում են ընտրական իրավունքների շուրջ, քննարկում են մայրերի իրավունքների հարցը²⁴⁸: Լոուրենսը մանրամասն նկարագրում է այդ կանանց հագուստը, դրանց շքեղությունը և նրանց զրոյցը՝ փորձելով ցուց տալ, թե ինչ է պատահում, երբ մարդը հասարակության անբաժանելի մասնիկն է: Հասարակության մեջ մարդու՝ բնագդներով առաջնորդվելու ունակությունը անհետանում է, և նա սկսում է մտածել և խոսել այնպիսի թեմաների շուրջ, որոնք հետաքրքրում են մյուսներին. «Խոսելիս կինը շոշափում էր զգեստի կրծքամասին կախված ծանր, ողորկ մարգարտահատիկը: Թվում էր, թե արծաթյա ժանեկավոր զգեստը սևաթույր, խամրած կակաչի ծաղկաթերթիկներից հյուսված մի շղարշ էր»²⁴⁹:

Այնուհետև Լոուրենսը նկարագրում է Վիլ և Էդիթ Ռեշոներին, ովքեր կանգնած լսում են ընտրական իրավունքի շուրջը զրուցող մարդկանց: Լոուրենսը նկարագրում է նրանց կյանքը, որը կարծես կտրված լինի արտաքին աշխարհից. «Վիլ և Էդիթ Ռենշոներն կային՝ որպես ներդաշնակություն»²⁵⁰: Տղամարդը ցանկանում է կնոջը և նրան տիրանալու համար առաջարկում է միասին բարձրանալ կարմիր բլրի գագաթը. «Բլրի գագաթին՝ ժայռի եզրին, նա մի տեղ գիտեր, որտեղ ծառերը ետ էին քաշված՝ ազատելով ստվերականաչ մի

²⁴⁶ Brewster E., D.H. Lawrence: Reminiscences and Correspondence, London: Martin Secker, 1934, pp. 121-122.

²⁴⁷ Gregory H., Pilgrim of the Apocalypse, A Critical Study, New York: Grove Press, 1957, p. 24.

²⁴⁸ Լոուրենս Դ., Մրմունջ (թղթմ.՝ Սոնա Սեֆերյան) / Գր. համալս., X, Երևան, 2004, էջ 205-206:

²⁴⁹ Նոյն տեղում, էջ 205:

²⁵⁰ Նոյն տեղում, էջ 206:

բացատ՝ այնքան հեռու խոխոջուն գետակից և անկյանք գյուղից²⁵¹: Մեկուսանալով արտաքին աշխարհից՝ տղամարդը սկսում է առաջնորդվել սեռական բնազդով. «- Խնդրում եմ, - ասաց նա, - մերկացի՛ր և սիրի՛ր ինձ այստեղ: - Չեմ կարող,-պատասխանեց կինը: Տղամարդը նայեց լուսնին: Դժվար էր նորից խնդրել, բայց չէ որ իր համար այնքան կարևոր էր: Ոչ մի ձայն չէր լսվում գիշերվա մեջ: Տղամարդը սկսեց արձակել օձիքը»²⁵²:

Լոուրենսը դիտավորյալ հեռացնում է իր հերոսներին մի մեկուսի վայր, որպեսզի գոյգերին խանգարող ոչինչ չլինի: «Արքայադրություն» պատմվածքի հերոսուհուն Ռոմեոն տանում է դեպի հեռավոր լեռները, որտեղ ոչ մեկը չէր կարող խանգարել նրանց անդորրը: «Արև» պատմվածքում Զովիետը հայտնվելով հեռավոր գյուղում՝ տեսնում է դաշտում աշխատող մի գյուղացու և ցանկանում է բիոհաղորդակցվել նրա հետ²⁵³:

Լոուրենսը մտաբերում է, թե ինչպես էր ամաչում ինտիմ հարաբերության և ցանկությունների մասին իր մտքերից, երբ դեռ փոքր տղա էր. «Այս վախը մարմնի և գիտակցության միջև ընթացող հակամարտության տիաճ զգացում է»²⁵⁴: Երկար պայքարելուց հետո նա սկսեց ազատորեն ընդունել այդ ցանկությունը: Երջանիկ էր, որ սկսել էր արհամարհել հասարակության մտածելակերպը. «Այն տղան, որն ուներ այդ վախի և ամոթի զգացումը, հասարակական կարծրատիպերի գերին դարձած իմ եսն էր, մինչդեռ այն տղան, որը վայելում էր կենսահաղորդակցության վերաբերյալ մտքերը և զգացումները, տաքարյուն, կրքոտ իմ եսն էր: Ապրելով համահունչ, բնականոն իր ցանկության հետ՝ մարդը զգում է, թե որքան հաճելի է ազատվել այդ վախից: Իմ ցանկությունն իմն է, ինչպես իմ միտքը, և ոչ չի կարող ստիպել ինձ ամաչել դրանից»²⁵⁵:

«Լերի Զաթըրլիի սիրեկանի վերաբերյալ» էսեում Լոուրենսը ցույց է տալիս իր արհամարհանքը Ժամանակակից մարդկանց «նյարդային, խղճուկ» սիրո նկատմամբ և գովերգում է կրքոտ կենսահաղորդակցությունը, որը կենսունակ կապ է հաստատում

²⁵¹ Նոյն տեղում, էջ 208:

²⁵² Նոյն տեղում, էջ 209:

²⁵³ Lawrence D., The Woman Who Rode Away and Other Stories (Edited by Dieter Mehl, etc.) Cambridge: Cambridge University Press, 1995, pp. 37-38.

²⁵⁴ Lawrence D., A Propos of Lady Chatterley's Lover, A Selection from Phoenix (Edited by A.A.H. Inglis), Harmondsworth: Penguin, 1979, pp. 368-369.

²⁵⁵ Նոյն տեղում, էջ 368-369:

տղամարդու և կնոջ միջև²⁵⁶: Նրա կարծիքով, ինտիմ հարաբերություն ունենալու և մարմինն այս դիտանկյունից ճանաչելու վախն արդեն դարձել է ահագնացող հիվանդություն արևմտյան մշակույթներում. «Մենք զսպում ենք մեր բնագդները՝ փակելով բոլոր դռները բնագդային իրազեկվածության առջև, այսպիսով՝ աշխարհի առջև: Այժմ մարդիկ միմյանց ճանաչում են որպես հասարակական կամ քաղաքական սուբյեկտներ, որոնք սառն են և ոչ հոգական: Բնագդային տեսանկյունից մենք մեռած ենք մեկս մյուսիս նկատմամբ, մեր զգացմունքները սառչել են»²⁵⁷: Մարդկանց այդ անտարբերությունից, սառնությունից ազատելու հուսով Լոուրենսը իր պատմվածքներում գրում է կնոջ և տղամարդու միջև ինտիմ հարաբերությունների մասին: «Վախի վիճակ» էսսեում նա գրում է. «Ես ցանկանում եմ, որ բոլոր տղամարդիկ և կանայք լինեն իսկական սիրեկաններ: Սիրային հարաբերությունների շուրջ այդ սարսափելի կարծիքները միմիայն վախի հետևանք են»²⁵⁸: Լոուրենսը ցանկանում է, որ իր ընթերցողները ընդունեն կենսահաղորդակցությունը որպես բնական գործընթաց, որպեսզի այն տեղ գտնի իրենց գիտակցության մեջ: «Հայթահարե՛ք այդ վախը», - գրում է նա իր էսսեի վերջին տողերում, - «և վերականգնե՛ք լյանքի բնականոն հունը»²⁵⁹:

«Մրմունջ» պատմվածքն ամբողջովին կենտրոնացած է տղամարդու և կնոջ հարաբերությունների, կենսահաղորդակցություն ունենալու՝ տղամարդու բուռն ցանկության վրա. «Մերկացի՛ր և սիրի՛ր ինձ, - աղերսեց տղամարդը: Կինը մի պահ լուռ էր: Տղամարդը մեքենայորեն հանեց օձիքը և խցկեց գրպանը: Այժմ նա կարող էր մոտենալ կնոջը, լուսնի անկեղծ շողերի ներքո, առանց ամոթ զգալու, առանց ստվեր տեսնելու, այլ իր կատարելությամբ սիրելու կնոջ կատարելությունը. Ոչ մի ավելորդ բիծ, որ մի ստվեր՝ նոյնիսկ ծաղկի ստվեր չի լինի նրանց միջև: Նա ծարավ էր, ինչպես երբեք իր լյանքում»²⁶⁰: Վիլը մտածում է միայն կնոջը սիրելու մասին: Նա բնագդներով է

²⁵⁶ Նոյն տեղում, էջ 353:

²⁵⁷ Lawrence D., Study of Thomas Hardy (Edited by J.V. Davies), London: Heinemann Educational, 1973, p. 130.

²⁵⁸ Lawrence D., The State of Funk, A Selection from Phoenix (Edited by A.A.H. Inglis), Harmondsworth: Penguin, 1971. p. 370.

²⁵⁹ Նոյն տեղում, էջ 371:

²⁶⁰ Լոուրենս Դ., Մրմունջ (թղթամ.՝ Սոնա Սեֆերյան) / Գր. համալս., X, Երևան, 2004, էջ 209:

առաջնորդվում: Թեև կինը չի փոխադարձում նրան, սակայն նա չի դադարում խնդրել կնոջը՝ թույլ տալու իրեն սիրել այդ ամայի, բոլորից կտրված վայրում. «Բայց ես սիրում եմ քեզ... այնպես եմ ուզում քեզ... այստեղ: Քեզանից էլ երբեք ոչինչ չեմ խնդրի,- արագ ու կրքուտ վրա բերեց ու շրջվեց դեպի կինը: - Արա՛ ինձ համար: Քեզ էլ երբեք չեմ անհանգստացնի: Խոստանում եմ»²⁶¹: Կինը չի ցանկանում սիրուն տրվել այդ ամայի վայրում: Նա չի հասկանում, թե ինչու է ամուսինը խնդրում սիրել իրեն բլրի վրա: Լոռիթենսը ցանկանում է ընթերցողին ցույց տալ, որ մեկուսանալով մարդու էությունը սկսում է ձգտել իր բնական կարիքները բավարարելու: Տունը տղամարդուն հիշեցնում է, որ իրենք հասարակության մի մասնիկն են, ինչը խոչընդոտում է լիովին բնազդներով առաջնորդվելը. «Չեմ կարող: Ո՛չ այստեղ... ո՛չ հիմա,- պատասխանում է կինը: - Խնդրում եմ: Եթե ուզես կկարողանաս: - Չէ՞ որ տանը կարող ես ինձ սիրել: ինչո՞ւ ես այստեղ ուզում,- հարցրեց կինը: - Ուզում եմ: Սիրի՛ր ինձ, Էղիթ: Հիմա սիրի՛ր:- Ոչ,- կինը շրջվեց: - Ուզում եմ իջնել: - Ուրեմն չես սիրի: - Ո՛չ... չեմ կարող»²⁶²:

Լոռիթենսը նկարագրում է տղամարդու զգացմունքները, երբ կինը մերժում է նրան: Նա չի կարողանում ներել կնոջ պահվածքը. «Միասին քայլեցին բլուրն ի վար: Ինչպես նա ատեց կնոջը. Կարծես վերջինս զրկել էր նրան ավետյաց երկրից, որն արդարացիորեն իրենն էր՝ տղամարդունը»²⁶³: Սակայն տղամարդու սեռական բնազդը այնքան ուժեղ է արտահայտվում, որ նա չի կարողանում զսպել ցանկությունը. «Այդ երեկո նա, այնուամենայնիվ, սիրել էր կնոջը: Եվ այդ սերն անտանայի էր կնոջ համար, տղամարդու ատելությունն էր ոչնչացնել նրան: Ինչու էր ամուսինը խաբե՛լ այդ բանը սեր կոչելով»²⁶⁴: Տղամարդը այդպես էլ չի ներում կնոջը իր ցանկությունը մերժելու համար. «Բայց միշտ չարությամբ էր հիշում այն գիշերը, երբ բարձրացան Կարմիր բլուրը, և կինը չուզեց նրան սիրել: Միգուցե շատ պատճառներ կային քեն պահելու, սակայն մնացել էր այդ մեկը, որն իր իսկական մեղադրանքը պետք է լիներ Դատաստանի օրը: Ինչո՞ւ կինն այդպես վարվեց: Չէ՞ որ իր ամուսնու կողմից դա սուրբ ցանկություն էր, համարյա երկրպագություն

²⁶¹ Նոյն տեղում, էջ 209:

²⁶² Նոյն տեղում, էջ 210:

²⁶³ Նոյն տեղում, էջ 210:

²⁶⁴ Նոյն տեղում, էջ 210:

Աստծո առջև: Բայց նա մերժեց, նա, որ իր հավատամքն էր... Այս միտքն անտանելի էր տղամարդու համար»²⁶⁵:

Լոուրենսի համար բիոհաղորդակցվելու ցանկությունը բնական զգացմունք է, իսկ դրանից հրաժարվել կարող են միայն այն մարդիկ, որոնք առաջնորդվում են գիտակցությամբ: «Պոռնոգրաֆիա և անբարոյականություն» աշխատության մեջ Լոուրենսը քննադատում է այն արվեստագետներին, որոնք իրենց անհեթեթ հայացքներով փորձում են հավատացնել մարդկանց, թե այն գորերը և նկարները, որոնք ընթերցողի մեջ ինտիմ հարաբերություն ունենալու ցանկություն են առաջացնում, վատ ստեղծագործություններ են: Սակայն Լոուրենսը վստահ էր, որ սա բացարձակ հիմարություն է. «Չէ՞ որ նկարչության, երաժշտության, պոեզիայի և արձակի ոլորտներում աշխարհահոչակ ստեղծագործությունների կեսը հիանալի են և հոչակ են վայելում միայն այն պատճառով, որ մարդկանց մեջ կենսահաղորդակցություն ունենալու ցանկություն են առաջացնում: Տիցիանի նկարները («Paintings of Titian»), «Սոլոմոնի երգերը» («Songs of Solomon»), «Զեյն Էյրը» («Jane Eyre»), «Էննի Լորին»²⁶⁶ («Annie Laurie») և Մոցարտի օպերաները («Mozart's Operas») բոլորը գեղագիտական հաճույք են պատճառում մեզ և, միևնույն ժամանակ, ինտիմ հարաբերություն ունենալու ցանկություն: Կենսահաղորդակցությունը հզոր երևույթ է: Այն խթանիչ ուժ է մարդու համար, և մենք ուրախություն ենք ապրում, երբ դրա լուսավոր, բնական հոսքը անցնում է մեր միջով՝ շերմացնելով մեր մարմինը, ինչպես արևը»²⁶⁷:

Այսպիսով, Լոուրենսը մեզ բավականին շատ հիմքեր է տալիս Ժխտելու, որ արվեստում բիոհաղորդակցման շարժադիրի գոյությունը անպայման անբարոյականության նշան է: Նրա կարծիքով, այսպես կարող են մտածել այն մարդիկ, որոնք հոգեպես և ֆիզիկապես հիվանդ են, և մենք ուշադրություն չպետք է դարձնենք

²⁶⁵ Նույն տեղում, էջ 210-211:

²⁶⁶ «Էննի Լորին» հայտնի շոտլանդական երգ է, որը նվիրված է Էննի Լորի անունով (1682-1764) իրական անձնավորության: Երգի բառերը գրել է Վիլյամ Շուլզ, ում սերը մերժել էր Էննի Լորին, իսկ երաժշտությունը գրել է լեդի Ալեքսանդր 1835 թ:

²⁶⁷ Lawrence D., Pornography and Obscenity, Phoenix, The Posthumous Papers of D. H. Lawrence (Edited with an Introduction by Edwards D. McDonald), London: William Heinemann Ltd., 1968, p. 174.

նրանց անհեթեթ մտքերին. «Ընդունված է կարծել, որ արվեստում կենսահաղորդակցության ոչ մեծ չափաբաժինը բարոյական է, իսկ երբ չափաբաժինը մեծ է լինում՝ անբարոյականություն է: Սա կատարյալ հիմարություն է: Բոկաչչոյի ամենաբաց տեսարաններում ես ավելի քիչ անբարոյականություն եմ տեսնում, քան, օրինակ, «Պամելա» սիրավեպում («Pamela»): Միևնույն ժամանակ, Վագների «Տրիստան և Իզոլդա» («Wagner's Tristan and Isolde») օպերան շատ մոտ է անբարոյականությանը: Ինչո՞ւ է այդպես: Կարծում եմ՝ խնդիրը ո՞չ բիոհաղորդակցման շարժադիրների մեջ է և ո՞չ էլ գրողի կամ նկարչի մտադրություններում: Հնարավոր է՝ Բոկաչչոն նման մտադրություն ունեցել է, սակայն այլ կերպ է արտահայտվել իր ստեղծագործության մեջ: Մյուս կողմից, ես վստահ եմ, որ խեղճ Շառլուտե Բրոնտեի մտքում անգամ չի եղել ինտիմ հարաբերության ցանկություն առաջացնել ընթերցողի մեջ²⁶⁸: Ամեն դեպքում, իմ կարծիքով, «Զեյն Էյրը» ավելի շատ անբարոյականություն տարածող վեպ է, քան Բոկաչչոյի տեսարանները, որոնք ինձ թվում են շատ առողջ և հաճելի²⁶⁹: Եթե կենսահաղորդակցություն ունենալու ցանկությունը բնական է, չի արտահայտվում աննորմալ, հիվանդագին, անբնական կերպով, ապա ոչ մի վատ քան չկա դրա մեջ: Առողջ կենսահաղորդակցության շարժադիրը մարդու ամենօրյա կյանքում շատ անհրաժեշտ է և օգտակար: Առանց դրա կյանքը կլիներ ձանձրալի և գորշ²⁷⁰:

Այսպիսով, Լոուրենսը իրարից զատում է այն սեռական հարաբերությունները, որոնք տեղի են ունենում զուտ պահի ազդեցության ներքո կամ պարզապես ամուսնական պարտականություն են, այն հարաբերություններից, որոնք առաջանում են ուժգին ցանկության, սիրո, կրքի արդյունքում, որի ժամանակ իր հերոսները, ասես, կորցնում են տեղի և ժամանակի զգացումը և ձովվում են տիեզերքին. «Սեռական կյանքը տեղով ձանձրույթ է: Երբ հեռու ես այդ կյանքից՝ ուզում ես մոտենալ: Իսկ մոտենում ես, կամ սկսում ապրել այդ կյանքով, - Իվեթը բարձրացրեց գլուխն ու արհամարհաբար կնճոռտեց քիթը, - սկսում ես և ատել այն: - Է՞հ, գիտեմ, - ասաց Լուսիլը: - Բայց ես կուզեի մինչև

²⁶⁸ Նոյն տեղում, էջ 174:

²⁶⁹ Նոյն տեղում 174:

²⁷⁰ Նոյն տեղում, էջ 175:

ականջներիս ծայրը սիրահարվել մեկին»²⁷¹: Այս տողերով Լոռիքենսը ցանկանում է ցույց տալ ընթերցողին, որ նա մաքուր սիրո և այդ սիրուց առաջացած ցանկության կողմնակիցն է:

Նոյն էսաեում Լոռիքենսը շարունակում է գրել. «Անբարոյականությունն այն է, ինչը դեմ է մարդու բնական պահանջմունքներին: Որպես անբարոյականության օրինակ կարող եմ բերել այն գարշելի երևույթը, ինչպիսին է մեծ քաղաքներում անբարո տեսարաններով բացիկների առևտուրը: Այդ բացիկներից մի քանիսը ընկել են իմ աչքով, և երբ ես նայեցի դրանց վրա, պարզապես ուզում էի լացել: Որքա՞ն վիրավորական է մարդու մարմնի համար, որքա՞ն նվաստացուցիչ էին պատկերել մարդկային բնական հարաբերությունները: Այդ ինտիմ հարաբերությունը, որ պատկերված էր բացիկների վրա այնքան վանող էր, այնքան գարշելի, և միևնույն ժամանակ, այնքան խղճուկ: Այն ինչ պատկերված էր, կեղտոտ, ամոթալի, անբարոյական հարաբերություն էր: Նույնը կարելի է ասել գաղտնի կերպով վաճառվող գոքերի մասին: Դրանք այնքան զգվելի են, որ կարդալիս սրտիսառնոց են առաջացնում կամ այնքան անհեթեթ են, որ միայն հիմարները կարող են կարդալ դրանք, իսկ այդ գոքեր գրողները միայն խելապակասներ կարող են լինել»²⁷²:

«Կոյսն ու գնչուն» պատմվածքը ընթերցողին ցույց է տալիս, որ Լոռիքենսն իսկապես չի ցանկանում սանձարձակություն քարոզել իր հերոսների և հերոսուհիների վարքագծով, այլ, որ նա ճշմարիտ սիրո, կրքի կողմնակիցն է, երբ մարդու ուժերից վեր է լինում կառավարել իր ցանկությունները և չմտածել այդ մասին: Լոռիքենսի համար շատ կարևոր է ստեղծել այսպիսի միջավայր, որը խոչընդոտներով լի է: Իր հերոսները պետք է հաղթահարեին այդ խոչընդոտները՝ հանուն սիրո, կրքի, բնազներով ապրելու ցանկության: Արդյո՞ք խոչընդոտ չէ ամուսնացած լինել երեցի հետ, ունենալ երկու մանկահասակ զավակներ և փախչել երիտասարդի հետ՝ հանուն սիրո, կրքի: Արդյո՞ք խորընդոտ չէ ապրել աստվածապաշտ ընտանիքում, որտեղ միայն եկեղեցական

²⁷¹ Լորդնս Դ., Կոյսն ու Գնչուն/ Թարգմանություններ (թրգմ.՝ Սամվել Մկրտչյան), Գիրք Ա, Երևան, Հեղինակային հրատարակչություն, 2009, էջ 510:

²⁷² Lawrence D., Pornography and Obscenity, Phoenix, The Posthumous Papers of D. H. Lawrence (Edited with an Introduction by Edwards D. McDonald), London: William Heinemann Ltd., 1968, p. 175.

օրենքներն են իշխում և մտածել սիրո, կրթի, տանից հեռու ապրելու մասին, ինչպես մտածում էր Իվեթը: Առանց խոչընդոտների հաղթահարման կյանքը Լոուրենսի համար անհետաքրքիր է:

Ուշագրավ են այն տողերը, որտեղ նա նկարագրում է ժամանակակից, անհոգ երիտասարդներին, որոնց ծնողները նրանց համարյա ամեն ինչ թույլ են տալիս: Ոչ մի կապանք չկար կոտրելու, ոչ մի վանդակ՝ բացելու. «Երիտասարդներն, ուրեմն, զբոսանքի գնացին և աշխատում էին բարձր տրամադրության մեջ լինել: Իրոք, կարող էին անել իրենց սրտի ուզածը, բայց ի՞նչ անես, երբ անելու բան չկա. Մնում է նստել և քննադատել ուրիշներին, զբաղվել սիրախաղով և կնամեծարությամբ՝ ի՞նչ կա դրանից ձանձրացուցիչ: Երանի թե մի քանի «խիստ կանոններ» լինեին, որոնց հնարավոր լիներ ենթարկվել»²⁷³: Այս տողերից կարող ենք եզրակացնել, որ Լոուրենսի համար զգվելի են անզործությունից դրդված սիրային խաղերը, որոնք արհեստական են, չեն բխում հոգուց և կարծես պարտականություն լինեն, իսկ Լոուրենսի ժամանակակիցները հենց այսպես էին ապրում՝ չվայելելով իսկական կիրքը:

Լոուրենսի հերոսուիխները սիրելու և սիրված լինելու անսահման ցանկություն են զգում հասարակ մարդկանց շրջապատում, ինչպես «Արև» պատմվածքի հերոսուի Ձուլիետը, որը գեղջուկի հետ բիոհաղորդակցվելու ցանկություն է ունենում: Իսկ «Կույսն ու գնչուն» պատմվածքի հերոսուիխն՝ Իվեթը, գնչուի հանդեպ է կիրք զգում: Շրջապատված լինելով քաղքենի տղաներով՝ Իվեթի սիրտը բարախում էր միայն գնչուի համար: Նրան առաջին անգամ տեսնելուց ի վեր սրտում կրակ է բռնկվում և արհամարհանք է զգում Լեռյի և Բորի նման տղամարդկանց հանդեպ, ովքեր պտտվում են Իվեթի շուրջը:

Լոուրենսի հերոսուիխները սիրահարվում են առնական, մկանուտ տղամարդկանց, քանի որ կինը, որքան էլ ուժեղ լինի իր բնավորությամբ, միշտ հոգու խորքում ցանկանում է պաշտպանված լինել. «Նա ինձանից ուժեղ է: Նա ոչինչի մասին չի հոգում, - մտածեց Իվեթը»²⁷⁴: Ուժեղ տղամարդու ազդեցությունը Իվեթի վրա արտահայտվում է նաև այն

²⁷³ Լորդնս Դ., Կույսն ու Գնչուն/ Թարգմանություններ (թրգմ.) Սամվել Մկրտչյան), Գիրք Ա, Երևան, Հեղինակային հրատարակչություն, 2009, էջ 466:

²⁷⁴ Նոյն տեղում, էջ 466:

տողերում, երբ գնչուն պարզապես անցնում է նրա կողքով. «Եվ մինչ թեթևասահ անցնելով Իվեթի կողքով, աղջիկը մեկ անգամ ևս զգաց իր անզորությունը: Իր հանդիպած բոլոր տղամարդկանցից սա միակն էր, որ ուժեղ էր իրենից՝ ուժի մասին Իվեթի յուրովի պատկերացմամբ»²⁷⁵: Գնչուի մի հայացքից անգամ Իվեթի սիրտն սկսում է ուժգին խփել, և ծնկները թուլանում են: Գիտակցությունը մթագնում է, և արթնանում են նրան մոտ լինելու և նրա կողքից չհեռանալու ցանկությունները. «Գնչուն ևս նայեց աղջկա աչքերին՝ ցանկասիրության բացահայտ ակնարկով, որն Իվեթի վրա գործում էր ինչպես ոյութանք: Աղջիկը զրկվեց սեփական կամքից, թվաց, թե նրբին դեմքին նինջ է իշնում»²⁷⁶: Նրա մասին մտածելիս անգամ Իվեթի սրտի կրակը սկսում է բորբոքվել. «Հապա՛ Գնչուն: Իվեթի մարմնով սարսուռ անցավ, կարծես աղջիկը տեսավ այդ տղամարդու անվեհեր աչքերը՝ ցանկության մերկ ակնարկով լի: Աղջիկն անկաշկանդ շարժվեց անկողնում: Գնչուի մասին մտածելիս նրա մարմնի կապանքները փշովել էին»²⁷⁷: Իվեթը ողջ օրը մտքերով գնչուի հետ էր: Մտովի պատկերացնում էր նրա դեմքը, դիմագծերը և կրկին անսահման ցանկությունը խոցում էր նրա հոգին. «Ետո նա տեսավ գնչուի դեմքը, ուտիղ քիթը, բարակ աշխույժ շուրթերը, ևս աչքերի հանգիստ ու իմաստալից հայացքը, որն, ասես, առանց վրիպելու խոցում էր նրա կյանքի կենսական, դեռևս չհայտնագործված տեղերը»²⁷⁸:

Կիրքը, միասին լինելու ցանկությունը միակողմանի չէ այս պատմվածքում: Գնչուն, ամուսնացած և բազմազավակ հայր լինելով, մտածում է միայն աղջկան տիրելու մասին: Ահա սա է բնական ազդակներն ազատ թողնելու Լոուրենսի առաջ քաշած գաղափարի վառ օրինակը, երբ աշխարհում ոչինչ չի կարող խոչընդոտել գնչուին սիրելու աղջկան, քանի որ նա հեթանոս է, «բնական մարդ», որի մեջ արթնանում են բնական պահանջները: Մինչդեռ քրիստոնեության մեջ ամոթը, հասարակության կարծրատիպերը, ավանդապաշտությունը խոչընդոտում են Լոուրենսի հերոսուհիներին միանգամից անձնատուր լինելու իրենց կրքին: Ժամանակի ընթացքում հաղթահարելով վախը իրենց

²⁷⁵ Նոյն տեղում, էջ 474:

²⁷⁶ Նոյն տեղում, էջ 490:

²⁷⁷ Նոյն տեղում, էջ 481:

²⁷⁸ Նոյն տեղում, էջ 495:

մեջ, ապա ըմբոստանալով ժամանակակից ամբողջ աշխարհի դեմ, նրանք սկսում են գիտակցել իրական կյանքի քաղցրությունը, սկսում են ապրել ազատ, առանց կապանքների, երբ ցանկությունը իշխում է գիտակցությանը, երբ բանականությունն այլևս ի զորու չէ իշխել մարմնին. «Եվ նորից թռչունը աղջկա սրտում գահավիժեց և, կարծես, բախվեց քարերին: Ինչպես մշուշապատ երազում՝ Իվեթը ձեռքը մեկնեց ու վերցրեց սուրճի բաժակը: Նրա գիտակցության մեջ միայն գնչուի մարմինն էր՝ ստվերի պես գերանին նստած, էմալե բաժակը ձեռքին: Նա լուս խմում էր սուրճը: Աղջկա ձեռքերը թռվացել էին. Գնչուն կրկին իշխում էր նրան, նոյնիսկ իր ստվերով: Եվ գնչուն էլ, մինչ փչում էր տաք սուրճը, միայն մի բան էր գիտակցում, նրա կուսության խորհրդավոր պտուղը, նրա մարմնի կատարյալ քնքշությունը»²⁷⁹: Գնչուի մոտ աղջիկը դառնում է լրիվ կամազուրկ՝ գիտակցությանը փոխարինելու է գալիս «արյան գիտակցությունը»՝ սեռական բնագդը, որի մասին Լոուրենսի հերոսուիխները խոսում են այս պատմվածքում: Քոյրերի՝ Իվեթի և Լուսիլի շուրթերով Լոուրենսը փորձում է ընթերցողին բացատրել, թե ինչ է սեռական բնագդը. «Իսկ ի՞նչ է սեռական բնագդը: Չէ՞ որ դա ինչ-որ հասարակ բան չէ, ինչ-որ ցանկասիրություն: Չէ՞ որ դա ուրիշ բան է Լուսիլ: - Իմ կարծիքով, - ասաց Լուսիլը, - գոյություն ունի սեռական կյանքի ցածր տեսակ, և կա մեկ ուրիշը՝ բարձրը, որը սարսափելի բարդ է»²⁸⁰:

Գրողը համոզված է, որ իր պատմվածքները միայն սեր, ջերմություն, ազատություն կարող են քարոզել իր ընթերցողներին: Անբարոյականությունը, ըստ գրողի, այն պահվածքն է, երբ ճաշից հետո մարդիկ հավաքվում են ծխելու համար նախատեսված սենյակում և գարշելի պատմվածքներ են պատմում, որտեղ, որպես կանոն, բացի կեղտոտ, այլասերված մտքերից, որոնք արտահայտվում են ինտիմ հարաբերության մանրամասնություններով, ոչինչ չես լսի. «Ճիշտն ասած, մեր ժամանակակիցներից շատերը իսկապես խղճուկ են և վանող, իսկ կնոջ և տղամարդու միջև կենսահաղորդակցությունը նվաստացուցիչ է և գարշելի: Եվ մենք ոչ մի կերպ չենք կարող դրանով հպարտանալ: Դա միայն ապացուցում է, թե որքան է ցածրացել մեր

²⁷⁹ Նոյն տեղում, էջ 501:

²⁸⁰ Նոյն տեղում, էջ 509:

քաղաքակրթությունը: Ես վստահ եմ, որ ոչ մի այլ քաղաքակրթություն, անգամ իին հռոմեացիներինը, չէր կարող «պարծենալ» մարդկանց այդքան մեծ թվով, որոնց կենսահաղորդակցությունը լիներ այդքան կեղտոտ, գարշելի, տիաճ, որքան մերն է: Քանի որ ոչ մի այլ քաղաքակրթության մեջ կենսահաղորդակցությունը չի համարվել այնքան ցածր, որ դրանով զբաղվեն պետքարաններում: Փառք Աստծո, երիտասարդների մի որոշ խելամիտ մասը գիտակցում է, որ անհրաժեշտ է փոխել կենսահաղորդակցության վերաբերյալ հնուց եկած հիմար տեսակետները, և չի ցանկանում վերաբերվել ինտիմ հարաբերությանը որպես անթույլատրելի և ամոթալի երևույթի: Սա մեծ փոփոխություն է դեպի լավը, դա իսկական հեղափոխություն է: Ինձ չի դադարում զարմացնել մարդկանց պատրաստակամությունը ցեխն նետելու կենսահաղորդակցության վրա: Նրանց վերաբերմունքը կենսահաղորդակցության նկատմամբ ստորացուցիչ է: Հենց այսպիսի մարդիկ են, որ հումորային պատմվածքներ են պատմում, իրենց մոտ կեղտոտ, գարշելի նկարներ են պահում և անբարո գրքեր են կարդում²⁸¹: Նման մարդիկ անբարոյական դասի ներկայացուցիչներ են, որը բաղկացած է փողոցային տղամարդկանցից և կանանցից: Այս մարդիկ վերաբերվում են կենսահաղորդակցությանը նոյնպիսի ատելությամբ, ինչպես «գորշ» պուրիտանները: Սակայն երբ հասարակության մեջ են լինում, նրանք միշտ իրեշտակների կողմն են անցնում: Հենց նրանք են համոզված, որ ֆիլմի հերոսները պետք է լինեն անսեռ: Նրանք են համոզված, որ կենսահաղորդակցության ցանկություն առաջացնում են միայն անբարոյականները, չարամիտները: Նրանք կարծում են, որ Տիցիանի և Ռենուարի նկարները անբարո են, ուստի չեն ցանկանում, որ իրենց կանայք և աղջկները տեսնեն նրանց ստեղծագործությունները: Ինչո՞ւ: Որովհետև նրանք ճարակված են գորշ հիվանդությամբ, որն արտահայտվում է կենսահաղորդակցության նկատմամբ իրենց ատելությամբ²⁸²:

«Պոռնոգրաֆիա և անբարոյականություն» աշխատության մեջ Լոուրենսը բացատրում է, թե ինչու են մարդիկ կենսահաղորդակցությանը վերաբերվում որպես ստոր

²⁸¹ MacLeod Sh., Lawrence's Men and Women, London: Heinemann, 1985, p. 48.

²⁸² Lawrence D., Pornography and Obscenity, Phoenix, The Posthumous Papers of D.H. Lawrence (Edited with an Introduction by Edwards D. McDonald), London: William Heinemann Ltd., 1968, p. 175-176.

գործընթացի: Նրանք այդ գործընթացը դիտում են որպես ամոթալի մի երևույթ, քանի որ չեն առաջնորդվում բնազդներով: Կենսահաղորդակցությունը առանց բնազդներով առաջնորդվելու հավասար է կեղտի, իսկ կեղտը՝ բիոհաղորդացության: Այդ ժամանակ ինտիմ հարաբերություն ունենալու ցանկությունը վերածվում է կեղտի մեջ թափավելու ցանկության, իսկ ցանկացած հմայք կնոջ մեջ դիտվում է որպես մարդու բնության գարշելի արտահայտություն²⁸³:

Լոուրենսը կարծում էր, որ ժամանակակից մարդիկ ամուսնությունը դիտում են որպես պարտականություն, երբ այլս ոչինչ չկա անելու: Մինչդեռ նա խրախուսում էր իր ընթերցողին սիրով ամուսնանալ և զգալ իրական սիրո զգացումը²⁸⁴: Այս գաղափարը հրաշալիորեն ներկայացված է հետևյալ տողերում. «Իմ կարծիքով, - շարունակեց Լուսիլը, - մարդ ամուսնանալու մասին մտածում է այն ժամանակ, երբ զգում է, որ այլս հաճելի ժամանակ չի անցկացնում: Այդ դեպքում ամուսնացիր և տնավորվիր»²⁸⁵: Ինչպես Լուսիլը, իվերը ևս կարծում էր, որ ամուսնությունը անգործությունից խուսափելու մրջոց է: Երբ հրետիկին հարցնում է իվերին, թե արդյոք ուզում է ամուսնանալ, նա հետևյալ կերպ է պատասխանում. «Այդքան էլ չէ: Մանավանդ երբ զգում ես, որ ուրիշ ոչինչ չկա անելու: Ստիպված ես մտնել վանդակն ու փակվել»²⁸⁶: Իվերը համոզված է, որ մարդ պետք է լիարժեք կյանքով ապրի մինչև ամուսնությունը: Լիարժեք կյանքը տվյալ պահին նշանակում է գնչուն: Իսկ ամուսնությունը նշանակում է Լեռ կամ Զերի, որոնցից մեկի հետ հարաբերություն ունենալը իր համար կլիներ պարզապես պարտականություն:

Լոուրենսը իրական, ճշմարիտ սիրո կողմնակիցն էր: Այն բոլորովին ուրիշ զգացմունք է, երբ մարդու ողջ էռությունը ձգտում է մեկ ուրիշ եսի, որպեսզի դրանք միաձուվեն և դառնան մեկ մարմին: Այդ ազնիվ ցանկության մասին է ահա Լոուրենսը գրում այս պատմվածքում: Այս գաղափարը Լոուրենսը ներկայացնում է ընթերցողին

²⁸³ Նոյն տեղում, էջ 176:

²⁸⁴ Ellis H., Sex and Marriage: Eros in Contemporary Life (Edited by Garsworth, John), USA: Greenwood Press Publishers, 1977, էջ 60.

²⁸⁵ Լորրնս Դ., Կոյսն ու Գնչուն / Թարգմանություններ (թրգմ.՝ Սամվել Մկրտչյան), Գիրք Ա, Երևան, Հեղինակային հրատարակություն, 2009, էջ 511:

²⁸⁶ Նոյն տեղում, էջ 513:

իրեուիու սիրեկանի միջոցով, որը, լսելով Իվեթի՝ գնչուի նկատմամբ ունեցած զգացմունքի մասին, հետևյալ կերպ է արտահայտվում. «Իմ կարծիքով,- ասաց մայորը՝ ծխամորճը ձեռքը վերցնելով,- այդ ցանկությունը կյանքում ամենահրաշալի բանն է: Յուրաքանչյուր ոք, ով կարող է ունենալ այդ ցանկությունը, արքա է, և ես ոչ մեկին չեմ նախանձում»²⁸⁷: Մայորը չէր նախանձում, քանի որ գիտեր՝ ինչ է կիրքը, ցանկությունը, չէ՞ որ նա կապվել է իրեուիու հետ, որը դեռևս չի ամուսնալուծվել և վայելում է նրա ներկայությունը: Լոուրենսը մայորի միջոցով ևս մեկ անգամ արտահայտում է իր զգվանքը սիրաբանելու նկատմամբ, որը, ըստ, նրա գարշելի է. «Ես ամուսնանալու մասին ոչինչ չասացի,- ասաց Զարլզը: - Կամ սիրաբանելու: Հրեշավոր է: Սա սեր չէ: Դա պոռնկություն է»²⁸⁸:

Շուրջ մեկ դար է անցել Լոուրենսի արտահայտած մտքերից, սակայն կարող ենք վստահաբար ասել, որ այսօր ևս թիչ չեն այն ամուսնությունները, որոնք կառուցվում են ոչ թե սիրո, միասին ապրելու բուռն ցանկության, այլև հաշվարկի վրա, այն է՝ կարողությունը կամ պաշտոնը: Մինչդեռ ամուսինները պետք է լինեն ամենահարազատ մարդիկ աշխարհում: Այս միտքը Լոուրենսը ներկայացնում է հետևյալ տողերում. «Աղջիկն իջավ հեծանիվից: Կանաչ բլուզի տակից ուրվագծվող գնչուի նրբագեղ մարմինը, դեմքը շրջելու կերպը կրկին Իվեթի սիրտը լցրեց քնքությամբ: Աղջկան թվաց, թե գնչուն ամենամտերիմ մարդն է աշխարհում, նույնիսկ ավելի, քան Լուսիլը և հավիտյան իրեն է պատկանում»²⁸⁹:

Լոուրենսն ուզում է, որ կենսահաղորդակցություն ունենալու իր հերոսների ցանկությունը ընթերցողը ճիշտ ընկալի: Կենսահաղորդակցությունը պետք է հիմնված լինի անզուապ ցանկության վրա, ինչը բնական երևույթ է: Լոուրենսն այս պատմվածքով հորդորում է, որ ընթերցողները լինեն ավելի խիզախ, չվախենան այն բանից, թե հասարակությունն ինչ կմտածի իրենց մասին, ազատ արձակեն իրենց բնագդները և ապրեն ավելի բնական: Նա գնչուի միջոցով հորդորում է մարդկանց լինել խիզախ.

²⁸⁷ Նոյն տեղում, էջ 515:

²⁸⁸ Նոյն տեղում, էջ 514:

²⁸⁹ Նոյն տեղում, էջ 524:

«Խիզախ Եղի՛ր սրտով, թե չէ տանու կտաս: Խիզախ Եղի՛ր մարմնով, թե չէ բախտո կլիք քեզ²⁹⁰»:

Ըստ Լոռիենսի՝ սիրո նուրբ զգացմունքը, որն առաջանում է բնազդներից, բացակայում է ժամանակակից աշխարհում: Սերն ու զգացմունքը այսօր նրա համար «կեղծիք» են, ինչի մասին գրում է «Լեդի Չաթերլիի սիրեկանի վերաբերյալ» էսեում²⁹¹: Լոռիենսը գիտակցում է, որ ինքը ևս թե՛ կեղծ և թե՛ ճշմարիտ սեր է զգացել: Այդուհանդերձ, նա շեշտում է, որ յուրաքանչյուր ոք պետք է իմանա, թե որն է ճշմարիտ սերը, և թե իրականում ինչ է ցանկանում և ըստ այդմ էլ գործի: Նա ցավով արձանագրում է, որ «իրական սիրո կրակը» մարվում է հասարակության մեջ²⁹²: Ահա սա է ամուսնության դժբախտությունը, քանի որ կիրքը և ամուսնության ցանկությունը հիմնված չեն ինտուիցիայի, հոգու ծայնի վրա, այլ հակառակը՝ հիմնված են Ես-ի կամքի վրա՝ հաշվարկելով առավելություններն ու վնասները՝ ըստ հասարակության եսասեր պահանջմունքների և ձևավորված իդեալների²⁹³: Նա շեշտում է, որ ամուսնությունը պետք է այլ նպատակ հետապնդի. «Կա նպատակ, և այդ նպատակը երանության հասնելն է»²⁹⁴: Երանությունը գալիս է միայն տիեզերքից, և պետք է ազատվես գիտակցությունից, որպեսզի զգաս այն, քանի որ գիտակցությունը անկարող է ըմբռնել տիեզերքից եկող երանությունը: Միայն բնազդներով առաջնորդվելով է հնարավոր հասնել դրան: Լոռիենսը բացատրում է այդ միտքը «Սեր» («Love», 1936) էսեի վերջին տողերում. «Ահա սա է բանալին դեպի իրական ամուսնություն: Տղամարդու և կնոջ միասնությունը աետք է զերծ լինի գիտակցությունից և չպետք է եսասեր նպատակներ հետապնդի»²⁹⁵: Այս տողերը ընսարդատության են Ենթարկվել Էլիսե Վիվասի կողմից «Դ.Ռ. Լոռիենս, Արվեստի ծախողումը և հաղթանակը» («The Failure and the Triumph of Art», 1960) էսեում. «Այս

²⁹⁰ Նոյն տեղում, էջ 525:

²⁹¹ Lawrence D., Lady Chatterley's Lover and a Propos of Lady Chaterley's Lover (Edited by Michael Squires), Cambridge: Cambridge University Press, 1993, p. 312.

²⁹² Squires M. and Keith C., The Challenge of D.H Lawrence. Madison: University of Wisconsin Press, 1990, p. 18.

²⁹³ Lawrence D., Lady Chatterley's Lover and a Propos of Lady Chaterley's Lover (Edited by Michael Squires), Cambridge: Cambridge University Press, 1993, p. 314:

²⁹⁴ Lawrence D., Love, The Posthumous Papers of D.H. Lawrence, Phoenix (Edited with an Introduction by Edward D. McDonald), London, William Heinemann Ltd., 1936, p. 153.

²⁹⁵ Նոյն տեղում, էջ 156:

մտքերը Լոուրենսի տիաս, դյուրաբորբոք, Եսակենտրոն, շեղված մտքերի արտահայտությունն են»²⁹⁶:

Վիվասի, ինչպես և Ռասելի քննադատությունները Լոուրենսի մտքերը սխալ հասկանալու հետևանք են: Լոուրենսի՝ բնազդներին հետևելու խորհուրդը հիմնված է «արյան գիտակցության» իր «հավատի» վրա: Ըստ Լոուրենսի՝ բնազդը կամ, ինչպես ինքն է այն հաճախ է անվանում՝ «հոգու ազդակը» («soul's impulse»), ավելի հուսալի է, քան գիտակցությունը: «Արյան գիտակցությունը» երբեք չի կարող մարդուն սխալ ուղիղով տանել: Միայն բանականությունը, միտքը կամ կամքը կարող են մոլորեցնել նրան: Նրա «Կույսն ու գնչուն», «Զատիկ» պատմվածքներում իր հերոսուհիները՝ կույս առջիկը, Ձուլիետը և Շաֆնին, հետևում են իրենց հոգու ազդակին, որպեսզի բավարարեն իրենց բնատուր ցանկությունները:

«Զատիկ» պատմվածքը արտացոլում է Լոուրենսի այն գաղափարը, որ սերը, կիրքը և ցանկությունը կարող են ապաքինել մարդու տկար հոգին և մարմինը: Այստեղ նա շարադրում է սիրո և ամուսնության վերաբերյալ իր պատկերացումները: Կոմս Յոհան Դիոնիսը, որը մահացու վնասվածք է ստացել պատերազմի ժամանակ, այնքան էլ երջանիկ չէ իր միապաղաղ ամուսնությունից: Կնոջ հետ հարաբերությունները զուտ ամուսնական պարտականություն են իր համար: Կրակը չի բռնկվել նրանց հոգում, ինչն էլ կոմսին ստիպում էր դժբախտ զգալ. «Բայց կնոջս հետ տասը տարի ապրեցի առանց խենթության: Հիմա ես զատկի խենթություն եմ ուզում»²⁹⁷: Խենթություն էր ուզում այն պահից ի վեր, երբ տեսել էր Շաֆնիին:

Չենք կարող չհամաձայնվել Լոուրենսի այն մտքի հետ, որ զուտ ամուսնալու համար ամուսնանալը պարզապես հիմարություն է: Նոյն կերպ Լեդի Շաֆնիի ամուսնությունն էր կառուցված խարկանքի վրա: Նրան թվում էր, թե սիրում է իր ամուսնուն՝ պատերազմ մեկնած մայորին, սակայն կոմսին հանդիպելուց ի վեր նրա տկար հոգում սկսում է բռցավառվել այն կրակը, որը նա մինչ այդ իբր զգում էր իր ամուսնու

²⁹⁶ Vivas E., D.H. Lawrence, The Failure and the Triumph of Art, Evanston: Northwestern University Press, 1960, p. 44.

²⁹⁷ Լորդս Դ., Զատիկ / Թարգմանություններ (թրգմ.) Սամվել Մկրտչյան), Գիրք Ա, Երևան, Հեղինակային հրատարակություն, 2009, էջ 563:

նկատմամբ: Հատկանշական են պատմվածքի այն տողերը, երբ Դաֆնին և ամուսինը գիտակցում են, որ իրենց կապը պարզապես ամուսնական պարտականություն է եղել, ուրիշ ոչինչ և որոշում են այլս չմոտենալ իրար. «Բեզիլ, եկ այլս սրանից ավել չմոտենանք իրար... մարմնապես: Ես ինքս էլ մտածում եմ, որ մեր սեռական կյանքը սխալ է եղել»²⁹⁸:

Լոուրենսը այս պատմվածքով ցանկանում է ցույց տալ, որ երբեմն մարդը կարող է իրական սեր և կիրք զգալ նաև ամուսնությունից հետո, և սխալ է այդ ցանկությունը սպանել իր մեջ՝ հաշվի առնելով այն մարդկանց կարծիքը, որոնք շրջապատում են քեզ²⁹⁹: Պետք է նշել, որ այսօր թեև շատ մարդիկ հավատում են Աստծուն, սակայն դա ամուսնալուծվելու համար խոչընդոտ չէ և, անգամ չամուսնալուծվելով, նրանք ազատ վայելում են իրական սերը: Լոուրենսը չէր հավատում Աստծուն, նա հավատում էր իր բնական ազդակներին: Այն ինչ բնական էր նրա համար, ճիշտ էր և մաքուր: Մինչդեռ այսօրվա մարդիկ կեղծ հավատացյալներ են:

«Զատիկ» պատմվածքի վերնագիրը պատահական չէր ընտրված, քանի որ զատիկը գարնան խորհրդանիշն է, երբ մարդու էությունը կարիք է ունենում սիրելու, երբ ցանկությունը իշխում է գիտակցությանը: Ահա այսպես բնազդաբար սիրելու ցանկություն է առաջանում կնոջ սրտում մի հիվանդ կոմսի նկատմամբ, ում տեսել էր դեռևս տասնյոթ տարեկանում: Նա պայքարում է այդ ցանկության դեմ, քանի որ գիտակցությունը դեռևս ամբողջովին չի զիշել իր տեղը բնազդներին: Նա պայքարում է անընդմեջ իր ամուսնուն հիշելով, մտաբերելով, թե ինչպես են իրար սիրել: Սակայն յուրաքանչյուր անգամ կոմսին հիվանդանոց այցելելիս նրա սրտում ակամա ինչ-որ բան է փոխվում. «Ինչ էր պատահել Դաֆնիին, նա անվերջ մտածում էր ու մտածում: Կնոջ գիտակցությունն ասես քարե հուշարաններ լիներ, որոնք ծանրաբեռնում էին նրան: Նա, ով ցանկանում էր մուտք գործել նրա կյանքը, նախ պետք է հերթով կոտրել այդ հուշարանները»³⁰⁰: Սակայն

²⁹⁸ Լորըն Դ., Զատիկ / Թարգմանություններ (թրգմ.) Սամվել Մկրտչյան), Գիրք Ա, Երևան, Հեղինակային հրատարակչություն, 2009, էջ 518:

²⁹⁹ Black M., The Literature of Fidelity, New York: Barnes & Noble, 1975, էջ 191:

³⁰⁰ Լորըն Դ., Զատիկ / Թարգմանություններ (թրգմ.) Սամվել Մկրտչյան), Գիրք Ա, Երևան, Հեղինակային հրատարակչություն, 2009, էջ 572-573:

«արյան գիտակցությունը» շուտով գալու էր փոխարինելու իր բանականությանը. «Երբ մտածում էր կոմսի մասին, թվում էր, թե աշխարհը հեռանում է իրենից»³⁰¹: Իրական զգացմունքը, ըստ Լոռիրենսի, հենց այսպես պետք է լինի, երբ մարդ կտրվում է միջավայրից և հոգսերից և մտածում է միայն սիրած էակի մասին:

Այստեղ Լոռիրենսն ընթերցողին ցույց է տալիս, թե ինչ է իր պատկերացմամբ սերը: Նրան նյարդայնացնում են ժամանակակից կնոջ և տղամարդու վերաբերմունքը միմյանց նկատմամբ, որոնք ամուսնանալիս ծկացնում են, թե իբր սիրում են միմյանց: Այդ սերը և այդ հարաբերությունները Լոռիրենսը մեկ բառով անվանում էր «սպիտակ»: Այս գաղափարը նա ներկայացրել է հետևյալ տողերում, երբ կոմսը Դաֆնիին բացատրում է, թե ինչ է սպիտակ սերը. «Նույն է և սերը, մեր այս սպիտակ սերը: Նա միայն իսկական սիրո շուտ տված պատկերն է, նրա սպիտակեցրած դամբարանը: Իսկական, ճշմարիտ սերը մութ է, տրոփյուն՝ խավարում, ինչպես վայրի կատուն գիշերվա մեջ, երբ բացվում է կանաչ ակնաթաղանթը, և աչքերը նայում են խավարին»³⁰²: Սիրո մասին Լոռիրենսի պատկերացումները պատմվածքում ի հայտ են գալիս Դաֆնիի ամուսնու՝ մայոր Բեզիլի միջոցով. «Գիտե՞ք, - ասաց մայորը, - ինձ թվում է, որ միայն մեկ գերագույն կապ կա՝ սիրո կապ: Չմոռանաք, որ սերը կարող է բազմազան դրսնորումներ ունենալ: Իսկ իմ կարծիքով սիրո ոչ մի դրսնորում չի կարող սխալ լինել, քանի դեռ կա սեր, և մարդ մեծարում է իր արածը: Սերը տեսակների բացառիկ զանազանություն է, և իմ կարծիքով կյանքի միակ արժեքավոր բանը: Սակայն հավաստիացնում եմ ձեզ, եթե ժխտում եք սիրո զանազանությունը, ապա ժխտում եք սերն ամբողջովին: - Իսկ ինչո՞ւ այդ ամենը սեր կոչել, - հարցրեց կոմսը: - Որովհետև նա հենց սեր է, որ կա, այն հզոր ուժը, որ ձգում է մարդ արարածներին»³⁰³:

Լոռիրենսը սերը համեմատում է վայրի կատվի հետ, քանի որ կատուն բնական էակ է, որը հետևում է իր բնագդներին: Լոռիրենսը իր հերոսներին՝ կոմսին և Դաֆնիին, նույնպես համեմատում է կատվի հետ: Զի՞՞ որ նրանց միջևն բոցավառվել էր բնական

³⁰¹ Նույն տեղում, էջ 572-573:

³⁰² Նույն տեղում, էջ 558:

³⁰³ Նույն տեղում, էջ 596:

ցանկությունը, որն առաջացել էր բնազդաբար. «Ես գիշերվա մեջ լացող արու կատու եմ, և այստեղ է, որ ինձանից դուքս է ժայթօւմ կրակը»³⁰⁴: Կինը զգում է այդ կրակը, որը շուտով իրեն էլ է պարուրելու. «Գիտակցեց անտեսանելի կատվային կրակը, որ գալիս էր դեպի իրեն»³⁰⁵: Կոմսի նկատմամբ կնոջ սերը Լոուրենսը համեմատում է կրակի հետ, որն այնքան ուժգին է, որ կարելի է տեսնել անզեն աչքով. «Ինչպես միշտ, կոմսը կոկիկ հագել էր հիվանդանոցային համազգեստը, որի խղճուկ տեսքը չէր ստվերում նրա մարմնի կենսական և հագուստի միջով թափանցող կրակը»³⁰⁶:

Դաֆնիի թոքերը հիվանդ են: Նրա արյունը մինչ կոմսին տեսնելը սառած էր երակներում: Կյանքն այլս դադարել է իմաստ ունենալ նրա համար, քանի որ պատերազմը խել է իր եղբայրներին, սակայն սերը, կիրքը, Լոուրենսի կարծիքով, ունակ են մարդուն հանել այդ վիճակից, այն սերը, որն առաջացել է կոմսի և Դաֆնիի միջև. «Եվ իհարկե՛ կոմսը: Վերջինիս մեջ ինչ-որ տաք և անտեսանելի բան կար, կյանքի թաքուն կրակ, որ կարող էր ցերմացնել Դաֆնիի արյան սառն ու սպիտակ հոլը»³⁰⁷: Կոմսը նոյնպես զգում է այն կրակը, որը հոսում է Դաֆնիի հոգուց. «Կոմսին պարուրած կրակը կարծես լուր օրորում էր նրան»³⁰⁸: Լոուրենսի կարծիքով, ահա այսպիսին է ճշմարիտ զգացմունքը, երբ արբում ես սիրուց և կարծես վերանում ես աշխարհի երեսից՝ միաձուվելով տիեզերքին, սակայն երբ մարդը ցանկանում է կենսահաղորդակցությունը նսեմացնել, դարձնել ստոր, կեղտոտ երևոյթ, ապա դա է անբարոյականությունը: Նա վստահ է, որ 19-րդ դարի գրականությունը լի է անբարոյականության տարրերով, ինչը և ընթերցողին ստիպում է նոյն կերպ վերաբերվել կենսահաղորդակցությանը»³⁰⁹: Իրավիճակը հետզհետե վատթարանում է, ինչը հասարակության հիվանդ լինելու նշան է: Անբարոյական աշխարհայացք ունեցող մարդը տանել չի կարողանում Բոկաչչոյին, քանի որ իտալացի հոչակավոր գրողի ստեղծած թարմ, առողջ տեսարանները ժամանակակից

³⁰⁴ Նոյն տեղում, էջ 571:

³⁰⁵ Նոյն տեղում, էջ 571:

³⁰⁶ Նոյն տեղում, էջ 591:

³⁰⁷ Նոյն տեղում, էջ 610:

³⁰⁸ Նոյն տեղում, էջ 616:

³⁰⁹ Lawrence D., Pornography and Obscenity, Phoenix, The Posthumous Papers of D.H. Lawrence (Edited with an Introduction by Edwards D. McDonald), London: William Heinemann Ltd., 1968, p. 177.

անբարոյական աշխարհայացք ունեցող մարդուն ստիպում են իրեն աղբ, ճիճու զգալ, հենց այն, ինչ նա իրականում կա: Այդ իսկ պատճառով Լոուրենսը խորհուրդ է տալիս կարդալ Բոկաչչո, քանի որ նա հակաթույն է ժամանակակից հասարակության համար, որը կարող է «բուժել հոգու վերքերը»³¹⁰: Լոուրենսը բացատրում է, որ անբարոյականության և կենսահաղորդակցության միջև տարբերությունն այն է, որ անբարոյականությունը սերտորեն կապված է գաղտնիության հետ, իսկ «բնական մարդ»ը, հետևելով ինտուիցիային, առաջնորդվելով բնագդով, կենսահաղորդակցությունը դիտում է որպես մաքուր, բնական գործընթաց, ըստ այդմ, նա այն գաղտնի պահելու որևէ պատճառ չունի³¹¹:

Լոուրենսի պատվածքներում իր հերոսները ընտրում են ազատ ապրելու ճանապարհը: Նրանք երազում են ազատության մասին, ինչպես «Արև» պատմվածքի հերոսուիի Զովիետը, որը չի ցանկանում վերադառնալ քաղաք՝ ամուսնու մոտ՝ նախընտրելով ապրել խոլ գյուղում, որտեղ ազատ է անելու այն ամենը, ինչ հատուկ է «բնական մարդ»ուն:

«Մրմունջ» պատմվածքում կինը չի կարող ամբողջությամբ տրվել բնագդներին: Նրա համար կարևոր է բիոհաղորդակցվելու վայրը, իսկ «բնական մարդ»ը ձգտում է մեկուսանալ ժամանակակից աշխարհից: Տանը տղամարդու զգացմունքները չեն կարող այնքան ուժգին լինել, որքան բլիփ վրա: Սակայն տղամարդկային այդ մաքուր, բնական զգացումը բավարարելու համար նա ուժով տիրում է կնոջը և չի կարողանում ներել նրան՝ հետագայում պատժելով կնոջը կենսահաղորդակցություն ունենալով նրա հետ. «Այսպես նրանք սկսել են փոխադարձաբար վախենալ իրարից, բայց տղամարդը՝ ավելի հաճախ: Եթե կինը երբևէ, սիրո ինչ-որ խորհրդավորությամբ, զգացել էր նրա կարիքը, տղամարդը խորտակել էր նրա բուրվառներն ու ուխտերը և պիղծ սիրով ապականել էր կնոջ սրբազն տաճարը: Եվ ամուսինն ասել էր. – Եթե մենք չենք կարող երեխա ունենալ, դու կարող ես ունենալ ուրիշ տղամարդուց...»³¹²: Լոուրենսը այսպես պատժում է իր հերոսուիուն՝

³¹⁰ Նոյն տեղում, էջ 177:

³¹¹ Նոյն տեղում, էջ 177:

³¹² Նոյն տեղում, էջ 212:

բնական ազդակներով չառաջնորդվելու համար: Այսինքն՝ ամենադաժան բանը, որ կինը երբսէ լսել էր ամուսնուց: Ուրեմն ինքն այնքան քիչ է ամուսնուն պատկանում, որ վերջինս կարող է իրեն հանձնել առաջին պատահածին և չափսոսալ: Տղամարդը չէր կարող ապրել առանց կենսահաղորդակցության: Կնոջը մերժելով՝ նա տուն էր բերում՝ ում կամենար, սկսած մոլորդականներից: Իսկ ինքը կինը՝ պետք է հանրային լիներ: Ինչպես ամուսնու կացարանը³¹³:

Զորջ Միդը գրում է. «Հասարակությունը, ինչպես գիտեք, չի կարող գոյատևել, առանց անհատների: Մենք անհատականություն ձեռք ենք բերում միայն հասարակության շնորհիվ ու նրա պահանջով»³¹⁴: Իր գրածը շեշտելու համար Միդը ասում է, որ մարդիկ իրենց անհատականությունը, Ես-ը ցույց են տալիս միայն հասարակության մեջ՝ այլ մարդկանց հետ հարաբերություն հաստատելու շնորհիվ³¹⁵: Նա կարծում է, որ միայն շրջապատն է դրդում մարդուն դառնալու անհատ: Անհատի գոյությունն անհմաստ է առանց հասարակության. «Անհատականությունը մի մեխանիզմ է, որը թույլ է տալիս, որպեսզի մարդիկ հաղորդակցվեն միմյանց հետ»³¹⁶: Միդը նշում է, որ հասարակությունը կամ հասարակական կառուցները ձևավորվում են անհատական կարծիքների շնորհիվ, ուստի հասարակությունը ինքնին նույնպես չի կարող առանց մարդկանց փոխհարաբերության գոյություն ունենալ»³¹⁷: Անհատականությունը իր հերթին բաղկացած է «Ես»-ից և «Ինձ»-ից: «Ինձ»-ը հասարակական գործընթաց է, իսկ «Ես»-ը հասարակության հետ կապ չունի, այն բնագդային, ինքնաբուխ գործընթաց է³¹⁸:

Զորջ Սիմելը, ի տարբերություն Միդի, կարծում է, որ մարդը ծնվելիս արդեն իսկ անհատ է: Սակայն հասարակությունը կարող է փոխել մարդու անհատականությունը³¹⁹:

³¹³Նոյն տեղում, էջ 212:

³¹⁴Mead G., Mind, Self, and Society: From the Standpoint of a Social Behaviorist (Edited by C.W. Morris), Chicago: University of Chicago Press, 1934, p. 227.

³¹⁵Նոյն տեղում, էջ 26:

³¹⁶Նոյն տեղում, էջ 26:

³¹⁷Նոյն տեղում, էջ 211, 261-262.

³¹⁸Նոյն տեղում, էջ 178:

³¹⁹. Simmel G, On Individuality and Social Forms (Edited by D.N. Levine), Chicago: University of Chicago Press, 1971, էջ 139:

Նա այն կարծիքին է, որ աշխատանքի բաժանումը, գումարը փոխում են մարդուն՝ նրան դրդելով տեղափոխվել գյուղից քաղաք՝ փոխելով մարդու պարզ էությունը³²⁰:

Վիլյամ Ջեյմսը, որն առաջին անգամ սկսեց ուսումնասիրել մարդու Ես-ը «Հոգեբանության սկզբունքները» («The Principles of Psychology», 1890) գրքի «Անհատի գիտակցությունը» («The Consciousness of Self») գլուխում, քննում է մարդու էությունը. «Մարդու էությունը ոչ միայն իր մարմինն է, այլև կենսակերպը»³²¹: Մարդու Ես-ին գուգահեռ նա առաջ է քաշում հասարակական անհատի գաղափարը³²²: Եվ եթե Լոուրենսի համար գոյություն ունի անհատ/զույգ/հասարակություն մոդելը, ապա Ջեյմսը տարանջատում է Ես-ի չորս տարբեր տեսակներ՝ ֆիզիկական, սոցիալական, նյութական և հոգևոր³²³: Ֆիզիկական և սոցիալական Ես-ի գաղափարները համապատասխանում են Լոուրենսի անհատ/հասարակություն տեսությանը:

«Կույսն ու Գնչուն» պատմվածքում Լոուրենսը Իվեթին մեկուսացնում է բոլորից գետի մոտ, որպեսզի նա կարողանա մտածել, թե ինչ է իրականում ցանկանում: Իսկ նրա սիրտը գնչուին էր տեսչում. «Իվեթը հեռվից բռավոց լսեց. Շուտ եկավ և տեսավ խեժափիճիների արահետով վազող գնչուին: Գնչուն ձեռքերով ինչ-որ բան էր փորձում հեռվից հասկացնել»³²⁴: Լոուրենսի պատմվածքում գետը վարարում է, որպեսզի Իվեթին և գնչուին ավելի մտերմացնի: Փախչելով տուն՝ նրանք մտնում են սենյակ: Գնչուն հրամայում է աղջկան հանվել և անկողին մտնել, որպեսզի չմեռնի ցրտից³²⁵: Աշխարհից մեկուսացած՝ նրանք գոյություն ունեն միայն միմյանց համար, և իրենցից բացի այլս ոչ ոք գոյություն չուներ: Գետի վարարումը պատրվակ էր նրանց համար՝ առանձնանալու և բնագդներին հետևելու. «Հանվի՞ր, այս սրբիչով կշիեմ քեզ: Ես էլ նույնը կանեմ: Հազարվ ու սարսուալով, նա փորձեց հանել իր բլուզը, բայց ոչ մի կերպ չեր կարողանում: Իվեթը

³²⁰ Simmel G., The Philosophy of Money (Trans. By T. Bottomore and D. Frisby), London: Routledge and Kegan Paul, 1978, էջ 421:

³²¹ William J., The Principles of Psychology, New York: Dover Publications, 1890, p. 291.

³²² Նոյն տեղում, էջ 293:

³²³ Նոյն տեղում, էջ 295-296:

³²⁴ Լորրնս Դ., Կույսն ու Գնչուն / Թարգմանություններ (թրգմ.՝ Սամվել Մկրտչյան), Գիրք Ա, Երևան, Հեղինակային հրատարակչություն, 2009, էջ 528-529:

³²⁵ Նոյն տեղում, էջ 529:

խոնարհաբար բռնեց բլուզի ծայրից և ամբողջ ուժով քաշեց: Բլուզը դուրս եկավ և երևացին տաքատակալները³²⁶: Լոութենսը մտերմիկ տեսարան է նկարագրում, որի մասին երազում էր այս զույգը, սակայն ոչ մի կերպ նրանց այս հանդիպումը չէր ստացվում. «Հանվի՞ր և շփվի՞ր այս սրբիչով,- հրամայեց գնչուն: Նա սրբիչ վերցրեց և սկսեց փութով շփել մարմինը: Իվեթը հասկացավ, որ ինքն էլ նոյնը պիտի անի և փորձեց ազատվել իր զգեստից: Գնչուն քաշեց-հանեց սարսափելի կայչուն զգեստը, հետո զգուշորեն մոտեցավ դրանն ու շարունակեց շփվել: Նա կանգնեց այստեղ մերկ ու քարացած: Եվ դողալով իր սրբիչով նա բռնեց Իվեթի ուսից և սկսեց շփել նրա մարմինը. Դանդաղ, անձայն շփում էր աղջկա գեղեցիկ մարմինը, նոյնիսկ փորձեց մազերը չորացնել»³²⁷:

Լոութենսը այս զույգին գիտակցական աշխարհից տեղափոխում է անգիտակցական աշխարհ, որտեղ բնազդներն են իշխում. «-Տաքացրո՛ւ ինձ, - կափկափելով շշնջաց աղջիկը: - Տաքացրո՛ւ ինձ: Ես կմեռնեմ դողից: Գնչուն գլխով արեց և մամլակի պես սեղմեց աղջկան կրծքին՝ իր իսկ սարսուող դադարեցնելու համար: Իվեթին թվաց, թե գնչուի մամլականման ձեռքերը իր գիտակցության միակ հաստատուն կետն են»³²⁸: Լոութենսը նկարագրում է «բնական մարդու»կերպարը ի դեմս գնչուի, որն ուժեղ էր և մկանուտ: Հատկանշական է, որ Լոութենսի բնական կերպարները, հատկապես տղամարդիկ, մկանուտ են, առնական. «Ու թեև աղջկան գրկած գնչուի ճկուն, ուժեղ մարմինը շոշափուկների պես ալեկոծվում էր էլեկտրական հոսանքից, սակայն մկանների կարծր լարվածությունը կայունացրեց երկուսին. Աստիճանաբար մոլեգին սարսուող տեղի տվեց նախ՝ գնչուի մարմնում, հետո՝ աղջկա, և ջերմությունը վերածնվեց նրանց միջև: Եվ մինչ այն բողբոքվեց, նրանց տառապած ու կիսագիտակից մտքերը դարձան անգիտակից, և նրանք խորը քուն մտան»³²⁹:

Իվեթը քաղաքակիրթ աշխարհի մի մասնիկն էր, իսկ գնչուն այս պատմվածում ներկայացնում էր «բնական մարդ»ուն: Իվեթին հոգնեցնում է հասարակության կարծիքը, նրանց ազդեցությունը իր անձի վրա: Նա ազատություն է ցանկանում, իսկ գնչուն ինքն էր

³²⁶ Նոյն տեղում, էջ 531-532:

³²⁷ Նոյն տեղում, էջ 532:

³²⁸ Նոյն տեղում, էջ 533:

³²⁹ Նոյն տեղում, էջ 533-534:

տնօրինում իր կյանքը: Նա ազատ էր անելու այն ամենը, ինչ նրա մարմինն էր ցանկանում: Սարքերից ու ժամանակակից աշխարհից հեռու լինելով՝ գնչուն հասարակ կյանքով է ապրում սայլակի մեջ կամ քարանձավում: Ունենալով կին և երեխաներ՝ նա չի զսպում իվեթի հետ բիոհաղորդակցվելու ցանկությունը, քանի որ այն ճանաչողական գործընթաց է կնոջ և տղամարդու միջև. «Մի օր մի տղամարդ ասաց ինձ, որ չի կարող հավատալ, որ Անգլիան կարող է վերածնվել կենսահաղորդակցության միջոցով: Ես նրան պատասխանեցի, որ իհարկե չի կարող: Նա փորձում էր ինձ ասել, որ իրեն վեր է դասում այնպիսի աղքից, ինչպիսին կենսահաղորդակցությունն է: Նա տիպիկ եսամոլ մարդու կերպար է, ով պարփակված է ինքն իր մեջ: Իսկ ի՞նչ է կենսահաղորդակցությունը. այն ֆիզիկական շփում է, որի միջոցով զոյգերը կարողանում են ճանաչել միմյանց: Կենսահաղորդակցությունը, ըստ իս, ճանաչողական գործընթաց է տղամարդու և կնոջ միջև: Այդ շփումը կարելի է նկարագրել որպես երկու կողք կողքի ընթացող գետերի միաձուլում»³³⁰:

«Մենք միմյանց կարիքն ունենք» («We Need One Another», 1929) էսսեում Լոուրենսը գրում է, որ պետք է ընդունենք, որ տղամարդիկ և կանայք միմյանց կարիքն ունեն. «Մենք բոլորս անհատներ ենք և ցանկանում ենք ազատ և անկախ լինել, սակայն մեր էությունը ծգտում է մեկ այլ էության, և մենք պետք է մեզ համար համապատասխան զույգ գտնենք: Եվ ես պետք է խոստովանեմ: Աստված իմ, ես չեմ կարող ապրել առանց կնոջ: Երբ ես ասում եմ չեմ կարող ապրել առանց կնոջ, ես նկատի չունեմ միայն բիոհաղորդակցվելը նրա հետ: Դա կարող է լինել մարդկային ցանկացած հարաբերություն: Դժվար թե գտնվի որևէ մեկը, որ կարող է գոյատևել առանց կնոջ հետ հաղորդակցվելու: Եվ նույնը կարող եմ ասել կանանց մասին: Նրանք նույնպես կարիք ունեն շփվելու տղամարդկանց հետ»³³¹:

Այսպիսով, «Կույսն ու գնչուն» պատմվածքում Լոուրենսը սկզբում իվեթին առանձնացնում է հասարակությունից, որպեսզի նա կարողանա մտածել միայն գնչուի մասին, ապա գնչուի հետ նրանց տեղափոխում է մի աշխարհ, որտեղ միայն նրանք

³³⁰ Lawrence D., We Need One Another, Phoenix, The Posthumous Papers of D.H. Lawrence (Edited by Edward D. McDonald), New York: The Viking Press, 1968, p. 190.

³³¹ Նոյն տեղում, էջ 189:

գոյություն ունեին: Հեռանալով հասարակությունից, առանձնանալով ամայի վայրում՝ Իվերի մեջ արթնանում է անհատական գիտակցությունը, ինչն էլ դրդում է հետևելու բնագղներին: Իսկ գնչուի հետ Իվերի մեջ արթնանում է նաև սեռական բնագդը³³²:

Սանդերսը գրում է. «Լոուրենսի արտահայտված մտքերից ակներև է դառնում, որ նա հստակ տարանջատել է «բնական մարդ»ուն հասարակությունից: Նրա ստեղծագործություններում հաճախ կարելի է հանդիպել արդեն իսկ ծանոթ դիսուտոմիաներին՝ բանականություն/մարմին, հասարակական/բնական գիտակցություն, բնագդ/միտք»³³³:

Անհատ/զույգ/հասարակություն մոդելը կարելի է ներկայացնել աղյուսակի տեսքով:

Անհատ	Զույգ	Հասարակություն
«Արև» պատմվածքի հերոսուհուն՝ Զովիետին, Լոուրենսը մեկուսացնում է հասարակությունից իր անհատականությունն ավելի լավ ճանաչելու համար:	Զովիետը սկսում է մտածել զյուղացու մասին, որը կնոշ մեջ բիոհաղորդակցվելու ցանկություն է առաջացել:	Կնոշ մայրը, ամուսինն ու երեխան հասարակության լիիրավ անդամներ են:
«Կինը, որը հեռացավ» պատմվածքի հերոսուհին ցանկանում է փախչել՝ ազատություն ձեռք բերելու համար:	«Կինը, որը հեռացավ» պատմվածքի հերոսուհու գիտակցությունը մթագնում է, եթե սկսում է զրուցել հնդկացու հետ:	«Կինը, որը հեռացավ» պատմվածքի հերոսուհու ամուսինը՝ Լեդերմանը, հասարակության բացասական ազդեցության տակ է:

³³² Լորընս Դ., Զատիկ / Թարգմանություններ (թրգմ.) Սամվել Մկրտչյան), Գիրք Ա, Երևան, Հեղինակային հրատարակչություն, 2009, էջ 534:

³³³ Sanders S., D.H.Lawrence: The World Of the Major Novels, New York: Viking Press 1973, p. 84.

Շարունակությունն է «Մարդը, որը մահացավ» պատմվածքում աքաղաղը, որը մարմնավորում է Քրիստոսին, ազատություն է ծեռք բերում, որպեսզի գտնի ապրելու ճշմարիտ ուղին:	Պատմվածքի վերջում, հերոսը առանձնանում է հեթանոս աստվածութու տաճարում, որտեղ նրա մեջ հեթանոս աստվածութու նկատմամբ զգացմունքներ են առաջանում:	Աքաղաղի ոտքերը կապած գյուղացին ներկայացնում է հասարակությունը:
«Տղամարդը, որը սիրում էր կղզիները» պատմվածքի հերոսը հեռանում է հասարակությունից՝ բնական կենսակերպ վարելու համար	«Տղամարդը, որը սիրում էր կղզիները» պատմվածքի հերոսը չի գտնում իր զույգին այս պատմվածքում և իր կյանքն ավարտում է միայնության մեջ	Նա մի կղզուց տեղափոխվում է մյուսը: Առաջին երկու կղզիներից պատմվածքի հերոսը հեռանում է լիովին մենակ լինելու համար, քանի որ դրանք քիչ թե շատ բնակեցված էին:
«Արքայադուստր» պատմվածքում հերոսութին հոր մահից հետո առանձնանում է մի հեռավոր ազարակում, որպեսզի հասկանա, թե ինչ է ցանկանում:	Արքայադուստրն ազարակում հանդիպում է մի մեքսիկացու, որը բնական, նախակենցաղ կենսակերպ է վարում: Ուսմեռն նրան տանում է հեռավոր լեռները, որտեղ նրանք բիոհաղորդակցվում են:	Արքայադստեր հայրը, ով հասարակության անբաժանելի մասն է, գիտակցում է դրա բացասական կողմերի մասին և փորձում է աղջկան հեռու պահել հասարակության ազդեցությունից:
«Սուրբ Մավ»	Կինը սկսում է մտածել ձիու,	Նրա ամուսինն ու երեցը

Շարունակությունն է		
պատմվածքի հերոսուիի Լուին գրավում է կենդանիների աշխարհը, որտեղ նրանք ազատ են և անկաշկանդ: Նա մտովի տեղափոխվում է այդ աշխարհ՝ կտրվելով ժամանակակից աշխարհից:	նրա աշխարհի մասին: Զին տղամարդու է մարմնավորում այս պատմվածքում: Կինը շատ հանգիստ և ազատ է զգում, երբ ձիռւ կոռոցին է: 	հասարակական գիտակցությամբ են առաջնորդվում, ինչն ամենայն Լուի սրտով չէ: Հասարակության մեջ մարդը չի կարող առաջնորդվել բնական ազդակներով, ինչպես օրինակ՝ կենդանիների աշխարհում:

Այսպիսով, ամփոփելով վերոնշյալը՝ կարող ենք եզրակացնել, որ Լոուրենսն անհատական և հասարակական գիտակցությունները հստակորեն տարանջատել է: Անհատական գիտակցության ժամանակ մարդը սկսում է ճանաչել իր անձը, իր ցանկությունները, որոնցից ամենակարևորը, ըստ Լոուրենսի, կենսահաղորդակցության ցանկությունն է, իսկ հասարակական գիտակցությունը բնորոշ է այն մարդկանց, որոնք իրենց կյանքը չեն պատկերացնում առանց հասարակական կարծիքի և արհեստական կանոնների: Գիտակցելով, որ թե՛ մարդկանցից ամբողջովին մեկուանալը և թե՛ հասարակության անբաժանելի մասնիկը լինելը կարող են բացասաբար անդրադառնալ մարդու վրա, Լոուրենսն այլընտրանք է առաջարկում, ըստ որի՝ յուրաքանչյուր մարդ պետք է գտնի իր զուգընկերոջը՝ թողնելով, որ բնական ազդակներն ու ցանկություններն ազատորեն դրսենորվեն:

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՄԱՐԴՈՒ ԵՎ ՏԻԵԶԵՐՔԻ ԿԱՊԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ Դ.Հ. ԼՈՌԻՐԵՆՍԻ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐՈՒՄ ԵՎ ԷՍՍԵՆԵՐՈՒՄ

20-րդ դարասկզբին բրիտանացի արձակագիրներից միայն Դ.Հ. Լոռիրենսը ժառանգեց Թոմաս Հարդիի գաղափարների զգալի մասը, ուստի վերջինիս կարելի է համարել գրողի «հոգևոր հայրը»: Լոռիրենսի ստեղծագործություններն ուղղակիորեն կրում են Հարդիի՝ կին-տղամարդ հարաբերությունների և տիեզերական տարրերի նկարագրությունների ազդեցությունը³³⁴.

1914 թ. գրված «Թոմաս Հարդի» («Study of Tomas Hardy», 1936) աշխատության մեջ, որը Լոռիրենսի ամենալուրջ և ամենածավալուն ստեղծագործություններից է, գրողն ինքն էլ ընդունում է, որ Հարդին իր ուսուցիչն է և նրա ազդեցությունն իր գործերում ակնհայտ է³³⁵: Չնայած այս հանգամանքին՝ Ռոբերտ Լանգբաումը նշել է, որ Լոռիրենսը ստեղծագործել է յուրահատուկ, ինքնատիպ ոճով: Այդուհանդերձ, չպետք է անտեսել այն, որ Լոռիրենսի՝ կյանքի նկատմամբ ունեցած վերաբերմունքը շատ նման է Թոմաս Հարդիի՝ կյանքի մասին պատկերացումներին: Մասնավորապես, Լոռիրենսը ևս իր ստեղծագործություններում գրում է մարդկային գոյության և տիեզերական մարմինների առեղծվածային կապի մասին: Նա իր ստեղծագործություններում փորձում է արթնացնել մարդկանց սերը արևի, լուսնի նկատմամբ, ինչպես Հարդին իր պատմվածքներում և բանաստեղծություններում³³⁶:

Հարդիի մտքերը թանկ էին Լոռիրենսի համար, քանի որ դրանցում կարևորում էին մարդու դերը, նրա փոխհարաբերությունը տիեզերական մարմինների հետ: Վերականգնելով հինավորց կապը նյութական տիեզերքի և մարդու միջև՝ թե՛ Հարդին, թե՛ իր հետևող Լոռիրենսը, ձգտել են դարձնել մարդկային կերպարը զարմանահրաշ,

³³⁴ Langbaum R., Lawrence and Hardy (Edited by Jeffrey Meyers, etc.), London: The Athlone Press, 1985, p. 71.

³³⁵ Lawrence D., Study of Tomas Hardy and Other Essays (Edited by Bruce Stelle), Cambridge: Cambridge University Press, 1985, p. XXVIII.

³³⁶ Langbaum R., Lawrence and Hardy (Edited by Jeffrey Meyers, etc.), London: The Athlone Press, 1985, p. 69.

տարբերվող այն կերպարներից, որոնք ռեալիստ արձակագիրներն էին փորձում կերտել³³⁷:

Պետք է նշել, որ այնուամենայնիվ Լոուրենսի կերպարները դինամիկ էին, ինքնուրույն՝ ի տարբերություն Հարդիի ողբերգական և պասիվ հերոսների: Լոուրենսի հերոսները ներկայացնում էին կյանքի վերաբերյալ գրողի արժեքներն ու պատկերացումները³³⁸: Սակայն ինչպես Հարդին, Լոուրենսը ևս կարծում էր, որ տիեզերական մարմինների, մասնավորապես՝ արևի, լուսի ազդեցությունը մարդու էության վրա զգալի է, և որ ժամանակակից արդյունաբերական մշակույթը փորձում է ոչնչացնել այն: Անգլիայում այդքան մեծ ծավալի հասնող արդյունաբերությունը չարիք է, ինչը զրկում է տղամարդկանց և կանանց բնական ազդակներով առաջնորդվելուց և անհատական ազատությունից:

Լոուրենսը Հարդիի ստեղծագործություններում հայտնաբերում է նոր մոտեցում մարդ-տիեզերք կապին³³⁹: Ըստ Հարդիի՝ այդ երկուսի միջև կա ամուր կապ³⁴⁰: Ինչպես իր ուսուցիչը, Լոուրենսը ևս հավատում էր, որ մարդը զրկվում է իր ազատությունից սոցիալական և կրոնական սովորությունների պատճառով: Թե՛ Հարդիի և թե՛ Լոուրենսի համար մարդկային կյանքը բաժանվում է գիտակցված՝ ռացիոնալ գոյության և չգիտակցված՝ բնական գոյության միջև: Մարդը շեղվել է բնական ճանապարհից՝ փախչելով և ընդունելով ժամանակակից արդյունաբերական քաղաքակրթությունը, որը պարտադրում է կամայական օրենքներ և արհեստական կարգեր, որոնք անհամատելի են բնական օրենքների հետ: Ինչպես Հարդին, Լոուրենսը ևս կարծում էր, որ «կրոնի հեթանոսական ծեսերը» գերիշխում են քրիստոնեության նկատմամբ՝ էական կապ հաստատելով տիեզերքի և մարդու միջև³⁴¹:

³³⁷ Paterson J., Lawrence's Vital Source: Nature and Character in Thomas Hardy (Edited by G. B. Tennyson, etc.), University of California Press, 1977, p. 462.

³³⁸ Langbaum R., Lawrence and Hardy (Edited by Jeffrey Meyers, etc.), London: The Athlone Press, 1985, p. XXVIII:

³³⁹ Hochman B., Another Ego: The Changing View of Self and Society in the Work of D. H. Lawrence, Columbia: University of South Carolina Press, 1970, p. 42.

³⁴⁰ Alcorn J., The Nature Novel from Hardy to Lawrence, London: Macmillan, 1977, p. 83.

³⁴¹ Pinion F., A D.H. Lawrence Companion, Life, Thought and Work, Edition I, London: Macmillan, 1979, p. 81.

Լոուրենսի և Հարդիի պատկերացմամբ՝ արժեքների հիմքում ընկած է ֆիզիկական փորձառությունը: Ֆիզիկական սիրո ուժը գերիշխում էր Լոուրենսի ստեղծագործություններում³⁴²: Փոխադարձ և կատարյալ սերը մարդկային գոյության կարևորագույն տարրերից են³⁴³: Թեև Լոուրենսը ժխտել էր Հարդիի՝ մարդու հոռետեսական և ողբերգական տեսլականը, նա կիսում էր նրա՝ «մարմնի և գիտակցության» միջև հավերժական պայքարի գաղափարը³⁴⁴:

Դ.Ռ. Լոուրենսի «Թոմաս Հարդի» աշխատությունը հնարավորություն է ընձեռել Լոուրենսին ներկայացնելու սեփական տեսակետները կյանքի և «բնական մարդու» կենսակերպի վերաբերյալ: Հարդիի նման Լոուրենսը ևս մերժում էր ավանդական «վիկտորիանական հասարակության» բարոյական նախադրյալները: Նա նաև մերժում էր քրիստոնեական եկեղեցու ուսմունքը³⁴⁵: Նրա կարծիքով, քրիստոնեությունը միշտ իդեալականացրել է հոգին և նսեմացրել է մարմինը: Լոուրենսը ևս կարծում էր, որ քրիստոնեությունը հասարակական հիվանդությունների պատճառ էր: Նա մերժում էր քրիստոնեությունը, քանի որ կարծում էր, որ այն դարձել է «մահվան կրոն», որը ծգուում է դեպի երկնային կյանք՝ անտեսելով երկրային կյանքի կարևորությունը³⁴⁶:

Իր ստեղծագործություններում Լոուրենսը փորձում է ձևավորել մարդկային նոր գիտակցություն, որը հիմնված է ազատ ընտրության վրա՝ խրախուսելով իր ընթերցողներին առաջնորդվել բնագդներով և ինտուիցիայով: Նյութապաշտության, սոցիալական, կրոնական սովորությունների և ժամանակակից իրերի նկատմամբ ունեցած նրա բացասական վերաբերմունքի հիմքում ընկած է նախակենցաղ կենսակերպի գաղափարը:

³⁴² Russell B., Marriage and Morals, London: Routledge. 2009, p. 46.

³⁴³ Langbaum R., Lawrence and Hardy (Edited by Jeffrey Meyers, etc.), London: The Athlone Press, 1985, p. XXLX:

³⁴⁴ Նոյն տեղում էջ 73:

³⁴⁵ Panichas G., Adventure in Consciousness: The Meaning of D. H. Lawrence's Religious Quest, Vol. 3, The Hague: Mouton & Co., 1964, p. 138.

³⁴⁶ Paterson J., Lawrence's Vital Source: Nature and Character in Thomas Hardy (Edited by G. B. Tennyson, etc.), University of California Press, 1977, p. 464:

Վիյամ Թինդալը «Դ.Հ. Լոուրենսը և իր կովը՝ Սյուզանը» («D. H. Lawrence & Susan His Cow», 1939) էսսեում գրում է. «Ես ցանկանում եմ, որ աշխարհը դառնա այնպիսին, ինչպիսին «վայրենինների աշխարհն է», քանի որ այն դեռ պահպանում է իր բնական մաքրությունը, և դեռ ոչ ոք չի հասցրել ապականել այն»³⁴⁷: Ահա այս ցանկությանը ականատես ենք դառնում կյանքի վերջին տարիներին Լոուրենսի գրած էսսեներում և ստեղծագործություններում: Այնուհետև Թինդալը Լոուրենսին անվանում է «մեր ժամանակի «բնական մարդ»», որը կոչ է արել մարդկանց առաջնորդվել բնագրով, զգացմունքներով, հոգով, ինտուիցիայով, այն ամենով, ինչ բնությունը տվել է մարդկությանը, իսկ քաղաքակրթությունը ոչնչացրել: Նախնադարյան մարդկանց ապրելակերպը հիացրել է Լոուրենսին: Նրանց վարած կյանքը հոգեհարազատ էր նրան: Նախակենցաղ գիտակցությանը վերադառնալը և նախնադարյան պարզ կենսակերպ վարելը նշանակում է ավելի մոտ լինել տիեզերքին՝ արևին, լուսին, որոնց երկրպագել են հնադարյան մարդիկ: Այն նշանակում է նաև հին եգիպտացիների, հնդկացիների, Մեքսիկայի հնդկացիների նման ուժ ստանալ տիեզերքից³⁴⁸:

1922 թ. «Նյու Յորք Թայմս» ամսագրի համար գրված էսսեներում Լոուրենսը ցանկանում էր հետաքրքրություն առաջացնել բնիկ հնդկացիների մշակույթի նկատմամբ, ինչը կարող էր հիմք դառնալ հետագայում «նոր աշխարհի» ստեղծման համար. «Հնդկացիները վառ են պահում հավերժական սուրբ կրակը՝ հավատալով տիեզերական ուժին: Եթե հասարակությունը չկիում իր բռնած ուղին, որը տանում է դեպի կործանման, ապա ես չեմ կարող պատկերացնել, թե ինչ կարող է լինել մի քանի տասնամյակ հետո մեր երեխաների, թռոների և ծոռների հետ»³⁴⁹:

1922-1928 թթ. Լոուրենսը բնակություն է հաստատում Նոր Մեքսիկայում: Այս ընթացքում նա կատարում է մի քանի ճամփորդություններ դեպի Հին Մեքսիկա և Եվրոպա: Հին և Նոր Մեքսիկաներն էին, որ շարժում են նրա երևակայությունն այդ տարիների ընթացքում: Դա մի ստեղծագործական ժամանակաշրջան էր, որի ընթացքում

³⁴⁷ Tindall W., D.H. Lawrence and Susan his Cow, New York: Columbia University Press, 1939, p. 86.

³⁴⁸ Նոյն տեղում, էջ 91:

³⁴⁹ Lawrence D., Certain Americans and an Englishman, New York Times Magazine, 1922, p. 9.

նա գրում է «Սուլք Մավր» («St. Mawr», 1925), «Արքայադուստր» («The Princess», 1924), Կինը, որը հեռացավ» («The Woman Who Rode Away», 1928) ստեղծագործությունները, իր ճամփորդական գիրքը՝ «Առավոտները Մեքսիկայում» («Mornings in Mexico», 1918) և մեզ ծանոթ մի քանի էսսեներ, որոնցից մեկում նա հնագույն կրոններին, հիմնականում հնդկացիների, ացտեկների և մայանների կրոններին, վերաբերվում է որպես կարևոր «հոգևոր աղբյուրների», որոնց պետք է վերադառնա մարդը. «Դա նշանակում է, որ մարդը պետք է հրաժարվի եվրոպական արժեքներից, հասարակության ստեղծած կարծրատիպերից³⁵⁰»:

Նոր Մեքսիկայում հնդկացիների հետ ապրելու Լոուրենսի սեփական փորձը ազատում է նրան ժամանակակից քաղաքակրթության ազդեցությունից: «Նոր Մեքսիկա» էսսեում նա գրում է. «Կարծում եմ, որ Նոր Մեքսիկան իմ կյանքի ամենամեծ փորձն է, որ երբսէ ունեցել եմ: Այն ամբողջովին փոխել է իմ էությունը: Կարող է շատ տարօրինակ հնչել, սակայն Նոր Մեքսիկան էր, որ ազատեց ինձ ներկայիս քաղաքակրթության ազդեցությունից, նյութապաշտ դարաշրջանից»³⁵¹: Նա իրեն ազատ է համարում, քանի որ զգացել է «տիեզերքի ուժը», ինչը զգալու գործում մեծ նշանակություն են ունեցել ամերիկյան հնդկացիների հետ շփումները. «Ես երբսէ նման զգացում չեմ ունեցել նախքան Նոր Մեքսիկա գալս»³⁵²: Ամերիկյան հնդկացիների հավատքը ապշեցրել է նրան, և այդ պահից ի վեր նա իրեն «հավատացյալ» է համարել: Նա դարձավ «հավատացյալ»՝ շնորհիվ ամերիկյան հնդկացիների և ոչ թե Սիցիլիայի կաթոլիկների: Միայն ամերիկյան հնդկացիների «կրոնում» է, որ Լոուրենսը այդքան մեծ կապ է տեսնում մարդկության և տիեզերքի միջև: Առաջին անգամ կարմրամորթ մարդու հետ շփվելով, լսելով իին հնդկացիների ծիսական քարոզությունը՝ նրան պարուրում է մի անհասկանալի տիսրություն, թախիծ: Նա անմիջապես գիտակցում է այն մեծ տարածությունը, որ կա սպիտակամորթ մարդկանց քաղաքակրթության և նախնադարյան կրոնների միջև: «Հնդկացիները և անգլիացին» («Indians and an Englishman», 1923) էսսեում նա գրում է.

³⁵⁰ Lawrence D., America, Listen to your Own, Phoenix, London: William Heinemann Ltd., 1961, p. 90.

³⁵¹ Lawrence D., New Mexico, Reprinted in Phoenix, New York: The Viking Press, 1968, p. 142.

³⁵² Նույն տեղում, էջ 142:

«Հնադարյան այդ ձայնը իմ ականջների համար չէր, սակայն հոգիս լցնում էր կորցրած անցյալի թախիծով»³⁵³: Այդ պահին Լոուրենսը գիտակցում է, որ ինքը և իին հնդկացիները պետք է, որ սերված լինեն նույն «կարմրամորթ» հորից: Լոուրենսը կարծում է, որ թե՛ կարմրամորթները և թե՛ սպիտակամորթ մարդիկ առաջացել են միևնույն նախահորից: Սպիտակամորթ ամերիկացիների համար շատ դժվար է հասկանալ, թե ում կամ ինչ են երկրպագում հնդկացիները, քանի որ նրանց խորթ է տիեզերական ուժերին երկրպագելը: Սակայն նրանք պետք է ընդունեն այն փաստը, որ միայն այս «կրոնում» է, որ ոչ միայն չեն խախտվում տիեզերական օրենքները, այլև երկրպագվում են: «Կարծում եմ՝ հետաքրքիր կլինի իմանալ, թե ինչ զգացի ես, երբ առաջին անգամ հանդիպեցի մի հնդկացու: Ճիշտ է՝ մենք երկուս էլ մարդիկ էինք, սակայն, միևնույն ժամանակ, շատ էինք տարբերվում միմյանցից: Ես երբեք չեմ մոռանա այն երեկոն, երբ փորձեցի առաջին անգամ շփվել կարմրամորթ մարդու հետ: Այդ շփումը ամենայն այն չէր, ինչ ակնկալում էի: Կարծես ցնցված լինեի այդ հանդիպումից և մեր շփումից: Կրկին ինչ-որ բան կոտրվեց իմ հոգում, և ես կարծես ետ գնացի ռեպի հեռավոր և անվերադառնալի անցյալ: Սկսեցի հասկանալ, որ նույն արյունն է հոսում իմ և հնդկացու երակներում, և որ մենք նույն նախնադարյան արմատներն ունենք: Եթե ժամանակակից սպիտակամորթ մարդիկ գիտակցեն այդ, ապա իրենց վեր չեն դասի նրանցից, հակառակը՝ կփորձեն հաղորդակցվել նրանց հետ, այդ «բնական մարդ»կանց հետ, որոնք կերակրվում են բնության ձեռքից: Իսկ ժամանակակից մարդը բարձր է դասում իրեն այն ամենից, ինչ բնական է՝ մոռանալով, որ ինքը նույնպես «բնական մարդ» է»³⁵⁴:

Լոուրենսը հակադրում է ժամանակակից մարդու բանականությունն ինքնաբուխ կյանքին, բնագդին: Նրա կարծիքով, կարծես այդ մարդիկ գուրկ լինեն զգացմունքներից: Մինչդեռ հնդկացիների գիտակցությունն ամբողջովին տարբերվում է սպիտակամորթ մարդկանց եսասեր գիտակցությունից: «Կինը, որը հեռացավ» պատմվածքը ներկայացնում է Լոուրենսի «կրոնական փորձը», թե ինչպես սպիտակամորթ կնոջ գիտակցությունը տեղի է տալիս հնդկացիների նախնակենցաղ մշակույթին: Կնոջը

³⁵³ Lawrence D., Indians and an Englishman, Phoenix, London: Heinemann Ltd., 1965, p. 99.

³⁵⁴ Նույն տեղում, էջ 95:

պահում էին Զիլուիսի ցեղերով շրջապատված հովտում, որոնք հին ացտեկների ժառանգներն էին, և որոնք պահպանում էին ացտեկների հնագույն կրոնը, ինչը դրսնորվում էր մարդկանց զոհաբերելով³⁵⁵: Կնոջ վրա ծիսակատարություն էին կատարում, նախապատրաստում էին նրան զոհաբերելուն: Քաղցրահամ բույսերից պատրաստված ըմպելիքը թմրեցրել էր կնոջ միտքը և փոխել էր նրա գիտակցությունը: Նրան պարութել էր բոլոր իրերի և երևոյթների հետ ներդաշնակ լինելու զգացումը: Նա այժմ ոչ միայն տեսնում էր երկնքում առկայժող աստոերը, որոնց շարժումները նմանվում էին պարի, այլև լսում էր դրանց «զրուցը»: Այժմ հնդկացիների տիեզերական գիտակցությունը իշխում էր նրա «սպիտակ» գիտակցությանը: Հնդկացիները կնոջը չեն վերաբերվում ո՞չ որպես իրենց թշնամու և ո՞չ էլ որպես ընկերոջ: Կինը նրանց համար անսեռ մի երևոյթ էր, որին նրանք պատրաստվում էին զոհաբերել: Սակայն կինը զգում էր նրանց անբացատրելի ատելությունը, տարօրինակ վերաբերմունքը իր նկատմամբ³⁵⁶: Նրանք կնոջը չեն անձնավորում կամ անհատականացնում: Ամուր կապով կապված լինելով տիեզերքի հետ՝ հնդկացիները երբեք տարանջատում չեն դրել արևի, լուսի, տղամարդու կամ կնոջ միջև:

Հետաքրքիր է պատմվածքում երիտասարդ հնդկացու արհամարհական վերաբերմունքը սպիտակամորթ մարդկանց նկատմամբ. «Սպիտակ մարդիկ ոչինչ չգիտեն: Նրանք շատ նման են երեխաների, որոնք միշտ խաղալիքներով են խաղում: Մենք ճանաչում ենք արևը, ճանաչում ենք լուսինը»³⁵⁷:

Այսպիսով, ըստ հնդկացիների կրոնական հավատքի, շատ կարևոր է և անհրաժեշտ զոհաբերել սպիտակամորթ կնոջը արևին և լուսին, որպեսզի վերջիններս միավորվեն, և հնդկացիների կյանքը վերականգնվի: Երբ սպիտակամորթ կնոջ գիտակցությունը տեղի է տալիս «տիեզերական գիտակցությանը», նա իշխանություն, ուժ է տեսնում այդ հնադարյան մարդկանց աչքերում³⁵⁸: Այս ուժը բխում է տիեզերքից:

³⁵⁵ Lawrence D., *The Woman Who Rode Away*, Cambridge: Cambridge University Press, 1995, p. 49.

³⁵⁶ Նույն տեղում, էջ 77:

³⁵⁷ Նույն տեղում, էջ 72:

³⁵⁸ Նույն տեղում, էջ 83:

Այս պատմվածքում Լոռիթենսի հիմնական նպատակն է ցույց տալ, որ կինը հնդկացիների շնորհիվ ի վերջո ազատվում է իր «սպիտակ գիտակցությունից», որ հնդկացու «կրոնական գիտակցությունը» վերջապես սկսում է իշխել սպիտակամորթ մարդու գիտակցությանը: Իսկ ինչ վերաբերում է սպիտակամորթ կնոջը զոհաբերելուն, վերջինս չէր դիմադրում, քանի որ նրա գիտակցությանը փոխարինելու էր եկել «տիեզերական գիտակցությունը»:

Այսպիսով, Մեքսիկայում դառնալով հնդկացիների նախնական մշակույթի անդամ՝ Լոռիթենսը քաջատեղյակ էր նրանց «տիեզերական գիտակցությանը»: «Ծլած եգիպտացորենի պարը» («Dance of the Sprouting Corn», 1927) էսեում Լոռիթենսը գրում է հնդկացիների ծիսական արարողությունների մասին, որոնց միջոցով նրանք շնորհակալություն են հայտնում երկրին և երկնքին իրենց գոյության համար: Նրանք երգում և պարում են երկնքի տակ՝ չոր հողի վրա: Նրանց կյանքը կապված է ողջ տիեզերքին³⁵⁹: «Երկնքում ապրում են արևը, լուսինը, աստղերը, անձրևը, քամին, ձյունը: Երկիրն իր հերթին բաղկացած է գետերից և լճերից, անթիվ անհամար լեռներից՝ շրջապատված հարուստ բուսականությամբ: Եվ ինչպես կարող է մարդն անտեսել տիեզերական առեղծվածային այս երևույթները, առանց որոնց նա չի կարողանա գոյատևել, ինչպես, օրինակ, եգիպտացորենի հասկը չի կարող ծել և աճել առանց օդի, ջրի, արևի: Իսկ հնդկացիները, ի տարբերություն ժամանակակից մարդկանց, գիտակցում են, որ իրենց կերակրողը բնությունն է, որին նրանք երկրպագում են: Սպիտակամորթ մարդիկ պետք է շուտափույթ փոխեն իրենց գիտակցությունը: Միայն «տիեզերական գիտակցություն» ձեռք բերելով մարդը կարող է գոյատևել հետզհետեւ կործանվող ժամանակակից աշխարհում: Միայն այս կերպ մարդը կկարողանա բացահայտել տիեզերքի ուժը»³⁶⁰:

«Ծլած եգիպտացորենի պարը» էսեում Լոռիթենսը գրում է. «Նոր Մեքսիկան այնքան չքնաղ է: Թվում է, թե էներգիա է հորդում տիեզերական յուրաքանչյուր երևույթից: Հնագույն կրոնում ամեն ինչ կենդանի է, բնական: Հնդկացիները հավատում են, որ իրենք

³⁵⁹ Lawrence D., Dance of the Sprouting Corn, Penguin Books Ltd., 1971, p. 64.

³⁶⁰ Նույն տեղում, էջ 70:

ողջ տիեզերքի մի մասնիկն են: Յանկություն է առաջանում նրանց հետ շփվելով ավելի և ավելի զգալ բնական ուժն իմ երակներում և ստանալ մեզ համար այդքան անհրաժեշտ էներգիան»³⁶¹: Լոուրենսը, ինչպես և հնդկացիները, ուժ էր ստանում տիեզերքից՝ արևից, լուսնից³⁶²:

Ըստ Լոուրենսի՝ քրիստոնեությունը ոչնչացրել է մեքսիկացիների նախնական մշակույթը, որը պետք է վերականգնել՝ վերադառնալով իին կրոնին. «Մարդիկ, հատկապես կրթված մարդիկ, կորցրել են տիեզերքը: Արևը, լուսինը կարևոր պայման են ապրելու համար, այդուհանդերձ մարդկանց մեծ մասը չի գիտակցում դա: Դրանք մեծ ազդեցություն ունեն մարմնի վրա, սակայն քրիստոնյաներն ընդհանրապես մերժում են մարմինը: Նրանք ֆիզիկական ցանկություններին ուշադրություն չեն դարձնում: Շատ ափսոս: Մենք կորցրել ենք արևը: Արևին ուշադրություն դարձնելու փոխարեն մեզ սարքերն են հետաքրքրում: Արևը այլևս ուժ չի տալիս մեզ, և ոչ ել լուսինը: Այժմ մենք պետք է կապ հաստատենք տիեզերքի հետ, սակայն դա այդքան էլ հեշտ չէ: Երկար ժամանակ կապահանջվի դրա համար: Երբ ես լսում եմ, որ ժամանակակից մարդիկ միայնակ են, հասկանում եմ, թե ինչն է պատճառը³⁶³: Նրանք կորցրել են կապը տիեզերքի հետ: Արևն ու լուսինը պետք է մեր մարմնի անբաժանելի մասը դառնան, իսկ դա հնարավոր է միայն արևին և լուսին երկրպագելով: Միայն արևի տակ պառկելը բավարար չէ: Արևի, լուսնի ազդեցությունը մարմնի վրա պետք է զգալ արյան միջոցով»³⁶⁴: Թինդալը եզրափակում է. «Վերածնունդը հնարավոր կլինի միայն կրոնական արարողությունների միջոցով»³⁶⁵: Վերջինս «Դ. Հ. Լոուրենսը և իր կովը՝ Սյուլանը» էսեում գրում է, որ տարբեր մայրցամաքներում ունեցած փորձից բացի, Լոուրենսի վրա նաև խորը տպավորություն են գործել մարդաբանական, հնագիտական, հոգեվերլուծական և պատմական գրքերը, որոնցից են Զեյն Հարիսոնի «Հնագույն արվեստը և ծիսակարգը»

³⁶¹ Նոյն տեղում, էջ 67:

³⁶² Lawrence D., The Real Thing, A Selection from Phoenix, Scribner's Magazine, 1930, p. 379.

³⁶³ Taylor Ch., Sources of the Self: The Making of Modern Identity, Cambridge: Cambridge University Press, 1986, p. 145.

³⁶⁴ Lawrence D., Apocalypse and the Writings on Revelation (Edited by Mara Kalnins), Cambridge: Cambridge University Press, 1980, p. 78.

³⁶⁵ Tindall W., D.H. Lawrence and Susan his Cow, New York: Columbia University Press, 1939, p. 113.

(«The Ancient Art and Ritual», 1913), Է. Թեյլորի «Նախակենցաղ մշակույթ և մարդաբանություն» («Primitive Culture and Anthropology», 1871), Լեո Ֆրոբենիուսի «Աֆրիկայի ձայնը» («The Voice of Africa», 1913)³⁶⁶:

1916 թ. իր նամակներից մեկում Լոուրենսը բացահայտում է իր գիտելիքի աղբյուրը. «Ես կարդացել եմ Արևելքի պատմությունը: Այդ պահին կարծես մի բան առկայծեց իմ մեջ, և ես սկսեցի հասկանալ այն իին, մահացած ազգերին և սկսեցի սիրել նրանց»³⁶⁷: Լոուրենսը փորձել է իր էսաներում և ստեղծագործություններում գեղարվեստորեն վերարտադրել այն ամենը, ինչ կարդացել է և ինչն իր վրա մեծ տպավորություն է թողել: Ֆրոբենիուսի «Աֆրիկայի ձայնը» էսանում արծարծվող թեմաները՝ հնագույն կրոնի ուժն ու հզորությունը, անցյալի տարօրինակ իմաստնությունը Լոուրենսին ամենաշատը սկսել են հետաքրքրել հատկապես նրա կյանքի վերջին տասնամյակում:

Նոյն նամակում Լոուրենսը գրում է. «Ես գիտեմ, որ վաղ թե ուշ մենք վերադառնալու ենք մեր իին արմատներին, իին կենսակերպին: Պարզապես պետք է վերականգնել մեր բնական կապը տիեզերքի հետ»³⁶⁸: Ակնհայտ է, որ Լոուրենսը չի ցանկանում ապրել վայրենիների նման: Նա քաջ գիտակցում է այն փաստը, որ այսօրվա սպիտակամորթ մարդը երջանիկ չի լինի, եթե սկսի վարել, օրինակ, հնդկացիների կենսաձևը. «Ես հոգնել եմ կրկնել, որ ուզում եմ՝ մարդիկ ապրեն բնական, ինչպես ապրում էին նրանց նախնիները: Պարզապես մենք շատ ենք հեռացել բնական կենսակերպից: Մենք չենք կարող վերադառնալ նախակենցաղ կյանքին՝ գնալ որսի նետ ու աղեղով»³⁶⁹: «Հնդկացին և անգլիացին» էսանում Լոուրենսը նկարագրում է իր զգացողությունները՝ ընդգծելով, որ ցանկություն չունի ապրելու այդ սևամորթ մարդկանց մեջ. «Ես չեմ ցանկանում ապրել նրանց հետ, օ՛, ամենին: Ես առհասարակ չեմ ցանկանում ապրել ցեղերի մեջ»³⁷⁰: Նա այդ ամենը գրում է փոխաբերական իմաստով. «Քաղաքակիրթ լինելու

³⁶⁶ Նոյն տեղում, էջ 98:

³⁶⁷ Lawrence D., The Letters (Edited with an Introduction by Aldous Huxley), London: William Heinemann Ltd., 1932, p. 318.

³⁶⁸ Նոյն տեղում, էջ 605:

³⁶⁹ Lawrence D., Pan in America, New York: Viking Press, 1936, p. 31.

³⁷⁰ Lawrence D., Indians and an Englishman, Phoenix, London: Heinemann Ltd., 1965, p. 99.

համար պետք է կրկին ցանենք վայրի սերմերը»³⁷¹: Լոուրենսը ցանկանում էր ասել, որ քաղաքակիրթ լինելու համար մարդը չպետք է հեռանա այն ամենից, ինչ բնական է, հակառակը՝ պետք է հարգի և գնահատի այն: Հնդկացի ցեղերի հետ շփումը օգնեց Լոուրենսին հասկանալու, թե որքան բնական են նրանք, թե որքան ամուր է նրանց կապը արևի, լուսնի հետ և մի պահ իրեն շատ հարազատ զգաց նրանց: Լոուրենսը հուսով է, որ ժամանակակից մարդը վերջապես կգիտակցի, որ ինքը նույնպես բնական էակ է³⁷²:

Ձեսսի Զեմբերսը մտաբերում է, որ Լոուրենսը դպրոցական տարիներից հրապուրված է եղել տիեզերքի հավերժական առեղծվածով: Նրան միշտ հետաքրքրել են «տիեզերական մարմինները»՝ փորձելով գտնել իրերի ետևուածքանը իրականությունը³⁷³: Նա գրում է իր հիշողություններում, որ Լոուրենսին հիացնում էին Ե. Բլավատսկայայի «Բացահայտված Իզիդ» («Разоблаченная Изида», 1877) և «Գաղտնի ուսմունք» («Тайная Доктрина», 1888) գրքերը, և երբ նա կարդում էր, ժայռ էր առաջանում նրա դեմքին³⁷⁴:

Ես-ի և տիեզերքի խորհրդավոր մեկնաբանությունը, ըստ երևոյթին, հաստատեց Լոուրենսի կրոնական ըմբռնումը, և նա ավելի ուշ դարձավ «խորհրդավոր» տեսության մոլի ընթերցողը: Թինդալը Ե. Բլավատսկայայի աստվածիմացական մտքերը քննարկելիս գրում է. «Նախակենցաղ մարդը ժամանակակից գիտնականներին գերազանցում է ճշմարտությունը բացահայտելու առումով, քանի որ դրան հասնելու համար նա առաջնորդվում է բնական ազդակներով և ինտուիցիայով: Առանց այս կարևոր ունակության, որը հատուկ է «բնական մարդ»ուն, և որի կողմնակիցն էր Ե. Բլավատսկայան, հնարավոր չէ բացահայտել կյանքը և տիեզերքը»³⁷⁵: Լոուրենսը քաջ ծանոթ էր հնագույն առեղծվածային պատմություններին: Նա հպարտանում էր իր գիտելիքներով՝ ասելով իր բուդիստ ընկեր Բրևսթերին, որ հնդկացիները, ացտեկները,

³⁷¹ Lawrence D., The Novel and the Feelings, Phoenix (Edited by D. McDonald), New York: Viking, 1936, pp. 758-759.

³⁷² Lawrence D., Indians and an Englishman, Phoenix, London: Heinemann Ltd., 1965, p. 99.

³⁷³ Lawrence D., A Personal Record (Edited by J. D. Chambers), London: Frank Cass & Co. Ltd, Publishers, 1965, p. 59.

³⁷⁴ Նույն տեղում, էջ 101:

³⁷⁵ Tindall W., D.H. Lawrence and Susan His Cow, New York: Columbia University Press, 1939, pp. 127-128.

իին մեքսիկացիները երկար տարիներ հիացրել և շարունակում են հիացնել իրեն. «Ինչ-որ խորհրդավորություն և մոգություն կա նրանց մեջ»³⁷⁶:

1927 թ. Լոուրենսը Տրիգանտ Բըրովին գրում է, որ մարդը, դժբախտաբար, իրեն հեռու է պահում տիեզերքից: Ապա շարունակում է. «Այս ամենի պատճառը միայն այն է, որ հասարակությունը սխալ ուղի է ընտրել»³⁷⁷: Նա եզրափակում է իր խոսքերը «Ապոկալիպսիս» («Apocalypse», 1930) գրքում. «Այն, ինչին մենք ծգտում ենք, բոլոր ոչ օրգանական կապերի խզումն է, հատկապես այն կապերի, որոնք առնչվում են փողի հետ: Պարզակենցաղ մարդիկ չունեն այդ ոչ օրգանական կապերը, քանի որ նրանք չեն կառավարվում փողով և ոչ Էլ այլ նյութական արժեքներով»³⁷⁸: Երբ նա թառում էր, նկատեց, որ հնդկացիները շատ քիչ են մտածում փողի մասին, ինչը, նրա կարծիքով, նրանց անմեղության, բնական լինելու հիմնական պատճառն է: Սպիտակամորթ մարդիկ, հակառակը, ապրում են միայն հանուն փողի, որը ճակատագրական է, քանի որ փողը նրանց կապը խզում է կենդանի արևի և լուսի հետ: Լոուրենսի նման Բեն Վիլիսը ևս քննադատում է ժամանակակից մարդու այն մտածելակերպը, թե որքան շատ փող ունենա, այնքան ավելի լավ կապահովի իր անվտանգությունը: Դա ժամանակակից քաղաքակրթության ողբերգությունն է, և այդ ողբերգությունից խուափելու միակ ճանապարհը իր նախնական Ես-ին վերադառնալն է, բնազդներով, ինքնաբուխ ապրելը և փող ու կարողություն կուտակելուն վերջ դնելը³⁷⁹»:

Բնազդաբար ապրելը Լոուրենսի համար նշանակում է գտնվել այնպիսի վիճակում, երբ մարդն ամբողջովին զգում է իր ներքինը («deepest self»), որի մասին նա գրում է «Տեղանքի ոգի» («The Spirit of the Place», 1923) էսաեում: Նա տարանջատում է մարդու ներքինը, որը բնազդներով է առաջնորդվում, վայելում է իր ազատությունը, մարդու գիտակցական Ես-ից («conscious self»): Երբ մարդն ամբողջովին ապրում է իր համար, ազատ է լինում ցանկացած անհանգստությունից, մեղքի զգացումից, վախերից,

³⁷⁶ Brewster E., D.H. Lawrence: Reminiscences and Correspondence, London: Martin Secker, 1934, p. 38.

³⁷⁷ Նոյն տեղում, էջ 688:

³⁷⁸ Lawrence D., Apocalypse and the Writings on Revelation (Edited by Mara Kalnins), Cambridge: Cambridge University Press, 1980, p. 200.

³⁷⁹ Willis B., The Tao of Art, London: Hutchinson Ltd., 1987, p. 136.

բարկությունից, նա զգում է իր Ես-ն ամբողջությամբ³⁸⁰: Այս գաղափարը Լոռիբենսը վերցրել է դաստիարակման: Այստեղ բնագդներով առաջնորդվելը, սեփական Ես-ը զգալը ազատության բարձրագույն վիճակն է: Լառ Ցզիի գրքում ներքին Ես-ը («Inner self») նկարագրվում է որպես հոգի, ոգի, որն ունի նույն բնույթը, ինչ դառն: Ներքին Ես-ը մարդու ճշմարիտ Ես-ն է, և որպեսզի նա զգա, ճանաչի, հասկանա իր ճշմարիտ Ես-ը, պետք է ցանկանա ապրել առանց այլ մարդկանց կարծիքների և կախում չունենա նրանցից³⁸¹: Լոռիբենսը ներքին («Inner») բառը փոխարինել է խորը («deep») բառով:

Լառ Ցզին բնութագրում է ճշմարիտ, իրական Ես-ը որպես «պարզություն»: Լոռիբենսը նույնպես հորդորում էր իր ընթերցողին կյանքը պարզեցնել, հասկանալ իր ներքինը, ապրել դրա ցանկություններին համահուն³⁸²: Լառ Ցզիի կարծիքով, նա, ով իր անձը նվիրում է ինքնաճանաշմանը, ինքնագոհացմանը և կախում չունի այլ մարդկանց կարծիքից՝ իրեն լիովին երջանիկ զգալու համար, լավագույն օրինակ է մյուսների համար³⁸³: Լոռիբենսը վստահաբար այն վառ օրինակն է, որի երջանկությունը կախված չէ այլ մարդկանց կարծիքից: Նա ինքն է պատասխանատու իր կյանքի, արարքների համար. «Արդյոք նմա՞ն եմ այլ մարդկանց, թե՛ յուրահատուկ եմ: Արդյոք ունե՞մ այն խիզախությունը, որ անհրաժեշտ է վայելելու ազատությունը, ոչ թե մյուսների նման միայն գոյատևելու»³⁸⁴: Այո՛, նա այն մարդկանցից էր, ով խիզախություն ուներ ապրելու իր բնագդներով, զգալու իր ներքին Ես-ը, ամուսնանալու Ֆրիդա անունով գերմանացի ազնվական մի կնոջ հետ, որը չափազանց տարբեր էր իրենից: Այսպիսի կենսակերպ ընտրելով իր համար, այնուհետև բնական կերպարներ կերտելով փոքր արձակում՝ Լոռիբենսը ձեռք է բերում թշնամիներ: Բնագդներին հետևելու, կյանքն ինքնաբուխ

³⁸⁰ Lawrence D., Studies in Classic American Literature (Edited by Ezra Greenspan, etc.), Cambridge: Cambridge University Press, 2003, p. 13.

³⁸¹ Laozi, Dao De Jing (Translated as “Nature and Intelligence” by Archie J. Bahm), New York: The Continuum Publishing Company, 1988, Ch. 13, p. 20.

³⁸² Lawrence D., D.H. Lawrence, The Posthumous Papers, Democracy, Phoenix (Edited with an Introduction by Edwards D. McDonald), London: William Heinemann Ltd., 1968, էջ 710:

³⁸³ Laozi, Dao De Jing (Translated as “Nature and Intelligence” by Archie J. Bahm), New York: The Continuum Publishing Company, 1988, Ch. 13, p. 20.

³⁸⁴ Schneider D., The Consciousness of D.H. Lawrence, An Intellectual Biography, Lawrence’s Early Beliefs and Novels, University Press of Kansas, 1986, pp. 52-53.

ապրելու նրա հիմնական նպատակը մտքից, գիտակցության ազդեցությունից ազատվելու հիմնական պատճառն է: Ինքնաբուխ ապրել նշանակում է ոչ միայն հետևել բնագդներին, այլև զգալ տիեզերական մարմինների ազդեցությունն իր վրա: Եվ որպեսզի մարդը կարողանա զգալ արևի, լուսնի ազդեցությունը թե՛ իր ներքինի և թե՛ իր մարմնի վրա, նա ամբողջովին պետք է առաջնորդվի «արյան գիտակցությամբ»: Այս միտքը ևս Լոռիբենսը վերցրել է դառսիզմից, ըստ որի՝ մարդը պետք է ազատ լինի ռացիոնալ գործընթացների միջամտությունից: Միայն այսպես՝ առանց մտավոր գործունեության, մարդը կարող է ապրել բնագդաբար³⁸⁵:

Բուդդիզմում բնագդաբար ապրելը կոչվում է «գուան», որը նշանակում է «զգալ առանց ձգտելու»³⁸⁶: Բառացի թարգմանությամբ այն նշանակում է «լուս դիտում կամ զննում»³⁸⁷: Ալան Վոթսը հետևյալ կերպ է նկարագրում «գուան» տերմինը. «Սա մի վիճակ է, երբ մարդը չի ձգտում զննել շրջապատող աշխարհի տարրերը, այլ ձգտում է հասկանալ իր Ես-ը»³⁸⁸: Ըստ Վոթսի՝ երբ մարդը ձգտում է մի բան անել, ավելի շատ էներգիա է վատնում³⁸⁹: Լոռիբենսի «Արև» պատմվածքում Զովիետը էներգիա չի վատնում արևի ուժն իր մարմնի վրա զգալու համար: Հակառակը՝ նա էներգիա է ստանում արևից³⁹⁰: Զովիետը բնագդաբար սկսում է գիտակցել արևի ուժը: Այն զգալու համար նրան բավական էր միայն, որպեսզի արևի ճառագայթները ներթափանցեն իր մարմինը: Որևէ գիտելիք հարկավոր չէր հասկանալու այդ ամենը: «Մրմունջ» պատմվածքում տղամարդը երեկոյան դիտավորյալ կնոջը հեռացնում է տնից, որպեսզի կինը էներգիա ստանա լուսնից, որը սիրվելու ցանկություն կարթնացնի նրա մեջ³⁹¹: Տղամարդը զգացել էր, որ իր մեջ սեռական բնագդն արթնանում է լուսնի լուսի ներք և համոզված լինելով, որ միայն լուսինը կարող է

³⁸⁵ Willis B., The Tao of Art, London: Hutchinson Ltd., 1987, p. 69.

³⁸⁶ Kaza S., American Buddhist Response to the Land: Ecological Practice at Two West Coast Retreat Centers in Buddhism and Ecology (Edited by Mary Evelyn Tucker and Duncan Ryuken Williams), Cambridge, Mass.: Harvard Divinity School Centre for the Study of World Religions, 1997, p. 215.

³⁸⁷ http://www.newworldencyclopedia.org/entry/Guan_Yin.-20.04.2016.

³⁸⁸ Watts A., Introduction, Nature, Man and Woman, New York: Vintage Book Edition, 1991, p. 77.

³⁸⁹ Նույն տեղում, էջ 78:

³⁹⁰ Lawrence D., The Woman Who Rode Away, Cambridge: Cambridge University Press, 1995, pp 19-22.

³⁹¹ Լոռիբենս Դ., Մրմունջ (թղթմ.)՝ Սոնա Սեֆերյան) / Գր. համալս., Խ, Երևան, 2004, էջ 211:

կնոց մեջ սեռական բնագդն արթնացնել, փորձում է նրան հանել տնից, որպեսզի լուսնի լուսը ներթափանցի կնոց մարմինը:

Լոուրենսը մեծ նշանակություն էր տալիս բնագդներին, ինչը լայնորեն արտահայտվել է նրա ստեղծագործություններում: Նա գրել է այն, ինչ սիրտն է իրեն թելադրել, ինչ իրականում ցանկացել է գրել՝ չվախենալով, որ դա կարող է քննադատության ենթարկվել³⁹²: Նա չի ստեղծագործել իր ընթերցողին հաճոյանալու համար, այլ ծառայեցրել է իր ստեղծագործությունները իր գաղափարները, տեսակետը, աշխարհայացքը ներկայացնելու համար, քանի որ վստահ էր, որ մարդը միայն բնագդներով կարող է ճանաչել իր ես-ը և իր շրջապատող աշխարհը: Նա այս գաղափարը վերցրել է դառսիզմից, որտեղ կիրառվում է «առանց գիտելիքի գիտելիք ստանալու» սկզբունքը: Այս մեթոդը կիրառվում է նաև Արևմուտքում: Դրա բացատրությունը հետևյալն է. «Գիտական հետազոտություն կատարելիս պետք է թույլ տալ, որպեսզի միտքը երբեմն տեղի տա և բնագդներն արթնանան»³⁹³:

Պատահական չէ, որ գիտության մեջ ամենահետաքրքրիր հայտնագործությունները կատարվել են բնագդներով առաջնորդվելու շնորհիվ, երբ մարդը անտեսել է բոլոր արհեստական կանոնները: Օրինակ՝ Էնշտեյնի հավանականության տեսությունը կամ Նյուտոնի ծգողականության ուժի հայտնագործությունը, ամենայն հավանականությամբ, հենց անգիտակցականի արդյունքում են առաջացել:

Լոուրենսը բազմիցս է քննադատվել իր ստեղծագործություններում ձևի բացակայության պատճառով: Նրա ընկեր Ջ. Մյուրին գրում է, որ նրան չէր հետաքրքրում արվեստը. «Նա դիտավորյալ չցանկացավ արվեստագետ լինել: Պատմվածքները նրա համար միշտ էին, որպեսզի արտահայտեր իր մտքերը «արյան գիտակցության» և «տիեզերական գիտակցության» վերաբերյալ: Նա չէր ցանկանում փոխվել, քանի որ արվեստը նրա նպատակը չէր»³⁹⁴: Մյուրին ակնհայտորեն սխալվում է Լոուրենսին կոչելով

³⁹² Potter S., D.H. Lawrence: A First Study, California: University of California, 1930, 159, p. 28.

³⁹³ Watts A., Introduction, Nature, Man and Woman, New York: Vintage Book Edition, 1991, p. 77.

³⁹³ Սույն տեղում, էջ 67:

³⁹⁴ Murry J., D.H. Lawrence: Son of Woman, London: Jonathan Cape, 1954, p. 173.

«վատ արվեստագետ»³⁹⁵: Սակայն անընդունելի դատողություններով հանդերձ՝ մի բանում նա միանգամայն իրավացի է, որ Լոուրենսը իսկապես չէր մտածում ձևի, կաղապարի մասին, նրան հետաքրքրում էր միայն բովանդակությունը: Իսկապես, Լոուրենսի փոքր արձակում հստակ կաղապար չկա: Նա իր պատմվածքները գրել է իրար հետևից՝ նպատակ հետապնդելով ընթերցողին ցույց տալ կյանքի ճշմարիտ ուղին, նրանց մեջ նախնական, «բնական մարդու»նկատմամբ հետաքրքրություն առաջացնել, փոխել նրանց աշխարհայացքը: Այսպիսով, Մյուլիի տեսակետը, թե Լոուրենսը ստեղծագործում է միայն բովանդակության վրա կենտրոնանալով, անհիմն չէ: Լոուրենսը առհասարակ դեմ էր արհեստական օրենքներին, որոնք ստեղծված էին մարդու կողմից: Նա ուրախ էր, որ ազատվել է նման օրենքներից, կարծրատիպերից. «Մենք կարող ենք ազատվել կարծրատիպերից, որոնք մեզ թելադրում են, թե ինչպես ապրել, ինչպես ստեղծագործել: Մենք կարող ենք անտեսել այդ արհեստական սովորույթները և լինել ինքնաբուխ և ճկուն, ինչպես կրակը»³⁹⁶: Նրա ստեղծագործություններում դեպքերն արագ են զարգանում: Նա կարծես մեկ շնչով է գրում դրանք: Գրահամ Հոուն նկատում է. «Իրավամբ՝ Լոուրենսի հաջողությունը նրա բնագդաբար ստեղծագործելու մեջ է»³⁹⁷: Լոուրենսի ստեղծագործելու սկզբունքը ակնհայտորեն ժխտում է ժամանակակից աշխարհի թելադրած կամայական կանոնները: Նրա՝ բնագդաբար ստեղծագործելու մեթոդը շատ նման է դառսիզմի «մեթոդ առանց մեթոդի» սկզբունքին: Այն ամենը, ինչ բխում է ներքին Ես-ից, ոչ մի կապ չունի արհեստածին կանոնների հետ, որոնք կարող են սահմանափակել մարդու ազատ արտահայտվելու կարողությունը: Առանց արհեստական ազդեցության կարելի է հասնել հրաշալի արդյունքի: Այս մեթոդը կիրառվում է դառսիզմում նկարելիս³⁹⁸:

«Փոքր ժանրի» նկատմամբ Լոուրենսի դրսևորած հետաքրքրությունը նկատելի է իր ամբողջ ստեղծագործական կյանքում: Նրա ստեղծագործությունների ճանաչված ուսումնասիրող Ֆ.Ռ. Լսիսը բարձր է գնահատել Լոուրենսին որպես վիպասան և գրել է,

³⁹⁵ Նույն տեղում, էջ 174:

³⁹⁶ Lawrence D., Prefaces and Introductions to Books, The Posthumous Papers of D.H. Lawrence, Phoenix (Edited with an introduction by Edward D. McDonald), London, William Heinemann Ltd., 1968, p. 221.

³⁹⁷ Hough G., The Dark Sun: A Study of D. H. Lawrence. London: Gerald Duckworth and Co. Ltd., 1970, p. 218.

³⁹⁸ Willis B., The Tao of Art, London: Hutchinson Ltd., 1987, p. 55.

որ անկախ այն հանգամանքից, թե Լոուրենսը մյուս ժանրերում ինչ հաջողությունների է հասել, պատմվածքներ գրելու նրա տաղանդը նրան պատվավոր տեղ է ապահովել բրիտանական արձակի վարպետների առաջին շարքում³⁹⁹:

Մարդու կյանքի և տիեզերքի անքակտելիությունը ակնհայտորեն երևում է Լոուրենսի փոքր արձակում, հատկապես «Արև», «Մրմունց» և «Զատիկ» պատմվածքներում:

Լոուրենսը գրում է. «Ես մնում եմ այնպիսին, ինչպիսին որ կամ, միայն այն բանի շնորհիվ, որ թույլ եմ տալիս՝ ստեղծագործ ուժը ներթափանցի իմ մեջ, և չեմ ընդդիմանում դրան»⁴⁰⁰: Լոուրենսի կարծիքով, տիեզերքի անհայտ ուժը անտեսանելի է, անհասկանալի և իշխում է մեզ, ուղղորդում, ոչնչացնում, երբ մենք չենք ընդունում դրա ուժը⁴⁰¹: Ընդունելով տիեզերքն այնպիսին, ինչպիսին որ կա, մարդը կարող է հասնել իր նպատակներին: Տիեզերքը կտա նրան այն ամենը, ինչի կարիքը նա ունի⁴⁰²: Խելացի մարդը կապ է հաստատում տիեզերքի հետ և օրինակ է ծառայում այլ մարդկանց համար⁴⁰³: Եթե մարդը կարողանա համբերատար լինել և սպասել, ապա նրա բնագները կդրդեն գտնել այլընտրանքային ուղին և ապա ճիշտ գործողություն իրականացնելով՝ նա կարող է լուծել իր խնդիրը: Այսպիսով, ըստ չինական փիլիսոփայության, որի կողմնակիցն էր Լոուրենսը, ցանկացած խնդիր կարող է լուծում ստանալ առեղծվածային ուժի շնորհիվ: Լոուրենսն իր և իր հերոսների խնդիրները թողնում է տիեզերքի անհայտ, հզոր ուժին: Ժամանակակից մարդու համար Լոուրենսի արարքը անհասկանալի է: Պատճառն այն է, որ մարդիկ կորցրել են իրենց հոգևոր կապը տիեզերքի հետ: Մարդը երկրպագում է իր ստեղծած մեքենաները և հիանում է իր ստեղծագործություններով⁴⁰⁴:

³⁹⁹ Leavis F., D.H. Lawrence – Novelist, Harmondsworth, Middlesex, Penguin Books, 1968, p. 257.

⁴⁰⁰ Lawrence D., The Posthumous Papers, The Reality of Peace, Phoenix (Edited with an Introduction by Edwards D. McDonald), London: William Heinemann Ltd., 1936, p. 678.

⁴⁰¹ Lawrence D., The Collected Letters, Volume I (Edited with an Introduction by Harry T. Moore), London: Heineman Ltd., 1962, p. 291.

⁴⁰² Ebbatson R., Lawrence and the Nature Tradition: A Theme in English Fiction, 1859-1914, New York: Harvester Press, 1980, pp. 239-250.

⁴⁰³ Laozi, Dao De Jing (Translated as “Nature and Intelligence” by Archie J. Bahm), New York: The Continuum Publishing Company, 1988, Ch. 22, p. 27.

⁴⁰⁴ Willis B., The Tao of Art, London: Hutchinson Ltd., 1987, p. 77.

Կյանքից վերցրած իրական դեպքերի, իրադարձությունների շնորհիվ Լոուրենսը փորձում է ներկայացնել մարդու կյանքի և տիեզերքի առեղծվածը: Լոուրենսը «Օրինյալ է ուժեղագույնը» («Blessed are the Powerful», 1925) ակնարկում գրում է. «Այս անձանոթ, անբացատրելի ուժը բոլոր առեղծվածներից ամենամեծն է և ամենաառաջինը: Այդ առեղծվածը գոյություն է ունեցել նախքան մարդկային գոյությունը»⁴⁰⁵:

Տիեզերական երևոյթների, մասնավորապես՝ արևի և լուսնի մասին ունեցած գիտելիքը Լոուրենսը վերցրել է առանձին ժողովուրդների առասպելաբանությունից, որոնք և արտացոլվել են իր պատմվածքներում:

Տարբեր մշակույթներում արևը, ջերմության և լուսի խորհրդանիշը լինելուց բացի, նաև բնութագրվում է արական սեղի հատկանիշներով⁴⁰⁶:

Անտիկ գրողները նշում են իրենց ստեղծագործություններում կելտական տոնակատարությունների՝ հատկապես պտղաբերության ծեսերի, մարդու զոհաբերությունների մասին Սավինի⁴⁰⁷ ընթացքում: Մարդկանց խեղդում կամ այրում էին զամբյուղներում՝ զոհացնելու արևին⁴⁰⁸:

Արևին առավել իրեշավոր զոհաբերություններ են արվել Ամերիկայում: Ինկերն ու ացտեկները իրականացրել են արյունալի զոհաբերության ծեսեր: Ինկերի կայսրության երկրագության հիմնական ձևը արևի պաշտամունքն էր, որը տեղի էր ունենում Կուսեյկոյի Կորիկանչա տաճարում: Տաճարը բաղկացած էր մի քանի սենյակներից, որոնցից մեկը նվիրված էր Արև-աստծուն, որը բնութագրվում էր արական սեռով: Այս սենյակն ամբողջովին պատված էր ոսկով: Երկրորդ սենյակը զարդարված էր արծաթով՝ ի պատիվ լուսնի: Լուսինը՝ Կիլան, ինկերի նախնիների իգական սեղի պտղաբերության աստվածութին էր⁴⁰⁹:

⁴⁰⁵ Lawrence D., Blessed are the Powerful, Phoenix II, Uncollected Writings (Edited by Warren Roberts, etc.), New York: The Viking Press, 1959, p. 442.

⁴⁰⁶ McKenzie M., Michael and Prime, Richard and George, Lisa and Dunning, Mythologies of the World: the Illustrated Guide to Mythological Beliefs and Customs, New York: Checkmark Books, 2001, p. 34.

⁴⁰⁷ Samhain՝ կելտական կառասոն՝ նվիրված բերքահավաքի ավարտին և ձմռան սկզբին:

⁴⁰⁸ McKenzie M., Michael and Prime, Richard and George, Lisa and Dunning, Mythologies of the World: the Illustrated Guide to Mythological Beliefs and Customs, New York: Checkmark Books, 2001, pp. 69, 72.

⁴⁰⁹ Նույն տեղում, էջ 25-27:

Ացտեկները հավատում էին՝ որպեսզի արևը շարունակի իր երկնային աշխատանքը, որը նաև նշանակում էր պահպանել ացտեկների կայսրության միասնությունը, պետք է շարունակաբար սնվի մարդկանց արյունով։ Զոհաբերություններն ապահովելը ուազմիկների խնդիրն էր։ Երբ բավարար թվով գերիներ կամ կամավորներ չկային, ուազմիկները ստիպված էին զոհաբերել սեփական կյանքն արևին։ Ակնհայտ էր, որ արևի «քաղցն» արյան նկատմամբ անվերջ էր։ Մեծ տաճարում զոհաբերում էին նաև երեխաներին։ Յուրաքանչյուր տարի զոհաբերման արարողությունների ժամանակ շուրջ քսան հազար մարդ էր սպանվում։ Արևը կենտրոնական տեղ էր զբաղեցնում ացտեկների օրացույցում⁴¹⁰։

Տիեզերքի նկատմամբ արտասովոր զգացմունքայնությունը մղում է Լոռութենսին շատ անմիջականորեն զգալու տիեզերական երևույթները։ Ըստ նրա՝ արևը, լուսինը մարդկային էակների հետ միասին տիեզերական ընտանիքի անդամներն են։ Այս գաղափարները հետագայում շարադրում է «Ապոկալիպսիսում», որտեղ նա գրում է, որ աշխարհում գոյություն ունեցող բոլոր կենդանի էակները կապված են միմյանց հետ. «Այն, որ ես երկրի մի մասնիկն եմ, իմ ոտքերը դա շատ լավ գգում են։ Ես իմ տեսակով իմ ընտանիքի մի մասնիկն եմ։ Ես ողջ տիեզերքի մի մասնիկն եմ և դրանից չեմ փախչի»⁴¹¹։

Լոռութենսի կարծիքով արևը ոչ միայն իր հայրն է, այլև ժողովրդավարության, ազատության, ուժի, պարկեշտության և մեծահոգության խորհրդանիշը։ Այն հաճախ զուգորդվում է ամբողջականությանը, փառքին և ճշմարտությանը։ Լոռութենսը հպարտանում է ինքն իրենով՝ համարելով իրեն «մարդ-արև»։ «Ինձ զգում եմ, ինչպես մի ազնվական, երբ արևի ճառագայթը անցնում է մարմնիս միջով»⁴¹²։ Նա ցանկանում էր, որ մարդիկ ավելի ազնվական դառնան՝ ավելի մոտ լինելով արևին։ Նրա կարծիքով ազնվական մարդուն կարելի է հակադրել «մահացած մարդուն»՝ նյութապաշտին։ Լոռութենսը քննադատում է միջին դասի մարդկանց սահմանափակ մտածելակերպը, որոնք

⁴¹⁰ Նոյն տեղում, էջ 129-136։

⁴¹¹ Lawrence D., *Apocalypse and the Writings on Revelation* (Edited by Mara Kalnins), Cambridge: Cambridge University Press, 1980, p. 149.

⁴¹² Lawrence D., *The Complete Poems* (Edited by Vivian de Sola Pinto, etc.), London: Penguin Books, 1993, p. 525.

շատ հեռու են արևից, փոխարենը ունեն մի չափանիշ կյանքում՝ փողը։ Նա գրում է, որ միջին բուրժուական խավը թղթադրամների գերին է և անտեսում է իրական երջանկության աղբյուրը։ Նա երազում էր, որ մարդիկ ավելի լավ ճանաչեն արևը։ Արևի մասին իրազեկվածությունը նրա կյանքի սկզբունքն էր։ «Նա, ով մերժում է արևին ավելի մոտ լինելը, մերժում է նաև կյանքը և անբարոյական է»⁴¹³։

Լոուրենսի՝ արևի նկատմամբ վերաբերմունքը իրաշալիորեն դրսևորվում է «Արև» պատմվածքում, որտեղ նա գրում է, թե ինչպիսի ազդեցություն է ունենում արևը մարդու մարմնի և մտքերի վրա։ Այս պատմվածքում հստակորեն արտացոլվում է Լոուրենսի՝ արդյունաբերական, ժամանակակից հասարակությունից փախչելու և արևին ավելի մոտ լինելու գաղափարը։ Հիվանդ կինը սկզբում այնքան էլ չէր հավատում թժկի այն խորհրդին, որ բուժվելու համար իրեն արև է հարկավոր։ Լոուրենսի ընկալմամբ արևը կյանքի աղբյուր է, որը կարող է ջերմացնել մարդկանց սրտերը, բուժել նրանց հիվանդությունները։ Ուշագրավ է այն տեսարանը, որ ընթերցողի առջև է բացվում։ «Նա նստեց և կուրծքն ուղղեց արևին՝ նույնիսկ այդ պահին ցավից հոգոց հանելով, որ ստիպված է տառապելով հանձնվել Արևին»⁴¹⁴։

Քաղաքակրթությունից դժվարությամբ հեռացած կինը հետագայում այնքան է կապվում արևին, որ չի պատկերացնում իր կյանքը առանց դրա։ Եվ երբ ամուսինը գալիս է քաղաքից, նա հայտնում է, որ չի կարող գնալ նրա հետ, չի կարող դավաճանել արևին։ Ամբողջովին մերկ կինը, ով ոսկեգոյն երանգ էր ստացել արևից, այնքան ներդաշնակ էր բնության հետ, որ նրա մերկությունը դիտվում էր շատ բնական, ինչպես բնական է տիեզերքի յուրաքանչյուր մասնիկ։ Իսկ գորշ կոստյումով, գորշ գլխարկով, երկչուտ, գործարարին հատուկ մենակյացի դեմքով ամուսինը ոչ մի կերպ չէր տեղավորվում այդ պատկերում⁴¹⁵։

Մարդու և բնության փոխարաբերությունը հիանալի է նկարագրված այն տողերում, որտեղ կինը գեղջուկի երեխային իր սրտի տակ կրելու ցանկություն է ունենում։

⁴¹³ Նոյն տեղում, էջ 526-527։

⁴¹⁴ Լոուրենս Դ., Թարգմանություններ, Արև (թղթմ.) Լյուդմիլա Հովհաննիսյան) // Աստղիկ 24, Սահակ Պարթև հրատ., 2013-2014, էջ 98։

⁴¹⁵ Լոուրենս Դ., Մրմունց (թղթմ.) Սոնա Սեֆերյան) / Գր. համալս., X, Երևան, 2004, էջ 109։

Իսկ այդ ցանկությունը նրա մեջ առաջանում է այն պահից սկսած, երբ նա իրեն գգում է բնության անբաժանելի մասնիկը: Գեղջուկը բնությանն ավելի մոտ էր, նա «բնական մարդ» էր և ամբողջ օրն անցկացնում էր դաշտում⁴¹⁶:

Լոուրենսը հակադրում է ցանկությունը իդեալին: Ցանկությունը առաջանում է «բնական մարդու»մեջ, իսկ իդեալը հասարակության կարծրատիպերի հետևանք է: Իդեալը, ըստ նրա, ձևավորվում է մտքի արդյունքում, այն կայուն է: Մինչդեռ ցանկությունը առաջանում է տիեզերքից, այն ինքնարբուս է, բնական, ինչպես բնական օրենքը⁴¹⁷: Գրողը ցանկանում է, որ ժամանակակից մարդիկ սովորեն կոտրել կարծրատիպերը, որպեսզի թույլ տան, որ իրենց սրտից բխի ցանկությունը: Ցանկությունը, ի տարբերություն մեխանիկական իդեալների, օգնում է մարդուն ազատություն ձեռք բերելու: Լոուրենսը բացատրում է. «Ցանկությունն ինքնին պարզ երևույթ է, ինչպես արևի ճառագայթը, կրակը կամ անձրւը: Ցանկությունն է, որ դրդում է ինձ լինել ազատ թռչունների և կենդանիների նման, վայելել արևի ճառագայթները կամ գիշերը»⁴¹⁸: Լոուրենսը բացատրում է, որ լինել այնպիսին, ինչպիսին մարդն ի բնե է, նշանակում է բացել սիրտը տիեզերքի առջև, զգալ դրանից բխող ուժը⁴¹⁹: Մարդու մեջ առաջացած ցանկությունը տիեզերքից եկող ցանկությունն է: Նա «Սեր» («Love», 1936) էսսեում գրում է. «Այդ ցանկությունը բխում է միայն տիեզերական ուժից, և ցանկություններն իրականացնելուն դրդում է այդ ուժը»⁴²⁰:

Լոուրենսի կիրառած լեզվառնական հնարների՝ փոխաբերության, համեմատության, ինչպես նաև մակդիրների միջոցով ընթերցողի առջև է բացվում մարդ-արև փոխարաբերության աննկարագրելի տեսարաններ. «Հետո նորից լուսը բացվեց, և ծովեզրին ցոլալով վեր ելավ Արևը՝ մերկ ու բոստը: Տունը նայում էր դեպի հարավ-արևմուտք: Անկողնում պառկած Զովիետը դիտում էր, թե ինչպես է Արևը ծագում: Թվում

⁴¹⁶ Նույն տեղում, էջ 113:

⁴¹⁷ Lawrence D., Democracy, Phoenix, The Posthumous Papers of D. H. Lawrence (Edited by Edward D. McDonald), New York: Viking, 1970, p. 712:

⁴¹⁸ Lawrence D., Love was Once a Little Boy, Phoenix II. Uncollected Writings (Edited by .Warren Roberts, etc.), New York: The Viking Press, 1959, p.455.

⁴¹⁹ Նույն տեղում, էջ 457:

⁴²⁰ Lawrence D., Love, The Posthumous Papers of D.H. Lawrence, Phoenix (Edited with an introduction by Edward D. McDonald), London, William Heinemann Ltd., 1936, p. 156.

էր, թե կինը երբեք արևածագ չէր տեսել նախակինում: Չէր տեսել, թե ինչպես է մերկ արևը ոտքի ելնում ծովեզրի վրա, ուաերից վայր նետելով գիշերվա թաց թիկնոցը⁴²¹: Կինը կարծես կախարդվում է նման գեղեցկությունից: Նրա մոտ թաքուն ցանկություն է առաջանում մեկուսանալ արևի տակ՝ մարդկանցից և տնից հեռու: Արևի տակ մերկ պառկած Զովյիետը զգում էր, թե ինչպես են արևի ճառագայթները ներթափանցում նրա ոսկորները: Դեռ ավելին, այն մեծ ներգործություն էր ունենում նրա զգացմունքների և մտքերի վրա: Նրա մտքերում կուտակված սև ամպերը հետզիետե անհետանում են. «Նա զգում էր, ինչպես է Արևը թափանցում ոսկորների մեջ: Նրա ներսում բոյն դրած լարումը սկսեց տեղի տալ, խորախորհուրդ մտքերի հանգույցներն սկսեցին տարրալուծվել: Նրա ուժասպառ, սառած սիրտը հալվում էր, հալվելով անէանում»⁴²²:

Լոուրենսը ցանկանում է ցույց տալ, որ կնոջ հիվանդ մարմինը և ցավով ու դառնությամբ լցված սիրտը, որ նախքան արևի հետ մեկուսանալը միանգամայն հուսաբեկ էին, սկսում են ջերմանալ: Արևը փոխել էր նրա վերաբերմունքը կյանքի նկատմամբ. «Կնոջ մտքերը Արևի, նրա վեհության, նրա զուգընկերը դառնալու շուրջ էին պտտվում: Լուսաբացից առաջ նա մշտապես պառկած դիտում էր, թե ինչպես է գորշությունը ոսկեզօծվում, ինչպես են ամպերը ծովեզրին իջնում: Նրան մեծապես հրճվանք էր պատճառում Արևի մերկությունը, երբ վերջինս ամբողջովին բոստրագուն, կապտասպիտակ բոց էր շողարձակում գունատ երկնքում»⁴²³:

Լոուրենսը ջանասիրաբար փորձել է ընթերցողի վրա տպավորություն գործել, որպեսզի վերջինս կարողանա զգալ այն, ինչ ինքն է ցանկանում փոխանցել նրան: Ահա այսպես Լոուրենսը ցանկանում էր պատկերել կնոջ հոգեվիճակը, որը կարծես կտրվել էր առօրյա հոգսերից, քանի որ այնքան մոտ էր իրեն զգում արևին: Այժմ կնոջ ողջ կյանքը մի ծիսակատարություն էր դարձել:

Այս պատմվածքը արտացոլում է Լոուրենսի երևակայությունը «արև-հոր» ուժի և մեծահոգության վերաբերյալ, որն, անկասկած, կապված է հեթանոսների հին

⁴²¹ Լոուրենս Դ., Թարգմանություններ, Արև (թրգմ.) Լյուիմիլա Հովհաննիսյան) // Աստոիկ 24, Սահակ Պարթև հրատ., 2013-2014, էջ 98:

⁴²² Նոյն տեղում, էջ 99:

⁴²³ Նոյն տեղում, էջ 100:

բաղաքակրթությունների հետ և ամերիկյան հնդկացիների նախնադարյան տիեզերական գիտակցության հետ. «Նրանց պատկերացմամբ՝ արևը կյանքի աղբյուր է երկրի վրա գտնվող ցանկացած երևոյթի համար: Ամերիկյան հնդկացիները, ինչպես Աֆրիկայի և հին Եգիպտական ցեղերը, կրոնական ծիսակատարությունների միջոցով երկրագում են իրենց հորը՝ արևին: Նոր Մեքսիկայում ես սկսեցի ավելի լավ հասկանալ, թե ինչու էին ացտեկները զոհաբերում մարդկանց սրտերը արևին: Արևը միայն ջերմացնելու, կիզելու համար չէ: Նրան բնորոշ են աննման պարզությունն ու մաքրությունը...»⁴²⁴:

Լոուրենսը նշում է, որ տիեզերքում գոյություն ունի երկու ձև՝ արական և իգական: «Թոմաս Հարդի ուսումնասիրությունը» էսսեում նա գրում է. «Ինչո՞ւ ենք մտածում, որ արական և իգական ձևերը պետք է վերագրել միայն մարդկանց՝ տղամարդ և կին հասկացությանը»⁴²⁵: Նա բացատրում է, որ տիեզերքում գոյություն ունեցող յուրաքանչյուր երևոյթ բաժանվում է արական և իգական ձևերի: Արական ձևը գոյություն ունի, որպեսզի արարի, գործի, ստեղծի, իսկ իգականը բնորոշվում է իր գոյությամբ: Արական ձևը գոյություն ունի, որպեսզի իրականացնի իր նպատակը, իսկ իգականը գոյություն ունի հանուն նպատակի⁴²⁶: Այս կերպ Լոուրենսը ցանկանում է ցույց տալ տիեզերական մարմինների և մարդկային էակների նմանությունը և թե ինչ կապ կա նրանց միջև:

Լոուրենսի մտածողության տիեզերական ասպեկտը նրան կապում է Յունգի հետ, ում հետաքրքրում էր աստղաբանությունը, քանի որ դրա միջոցով նա կարողանում էր բացահայտել մարդու ներաշխարհը⁴²⁷: 1913 թ. Խոզելով իր կապը Ֆրոյդի հետ՝ Յունգը առաջ քաշեց արխետիպեր եզրոյթը (psychology of archetypes), որով տարանջատեց անհատական և կոլեկտիվ անգիտակցականները: Անհատական անգիտակցականը ներառում է հիշողությունը, անձնական փորձառությունը, իսկ հավաքական անգիտակցականը համընդհանուր է, ինչպես նաև ոչ հոգեբանական և բաղկացած է

⁴²⁴ Lawrence D., New Mexico, Reprinted in Phoenix, New York: The Viking Press, 1968, p. 142.

⁴²⁵ Lawrence D., Study of Thomas Hardy (Edited by J.V. Davies), London: Heinemann Educational, 1973, p. 55.

⁴²⁶ Նույն տեղում, էջ 55:

⁴²⁷ Knox J., Archetype, Attachment, Analysis, Jungian Psychology and the Emergent Mind, New York: Brunner-Routledge, 2003, p. 11.

սիմվոլներից և պատկերներից: Արխետիպերը անգիտակցական մակարդակում են ձևավորվում դարերի ընթացքում: Սիմվոլներն արխետիպերի մի տեսակ են⁴²⁸:

Լոուրենսի մտածողության ասպեկտները հնարավորություն են տալիս նրան ստեղծելու իրաշալի, տպավորիչ պատկերներ և սիմվոլներ, որոնց միջոցով գրողը բացահայտում է ոչ մարդկային աշխարհի՝ արևի, խորհրդավոր «տիեզերական ազդեցության» կարևորությունը⁴²⁹: Արևը Լոուրենսի փիլիսոփայության մեջ էական դեր և նշանակություն ունի: Ինչպես նշել ենք, նա արևին վերագրում է սեռային հատկանիշ: Նրա ստեղծագործություններում արևը շատ հաճախ բնութագրվում է որպես տղամարդկային ուժ, որն օգնում է «վերակենդանացնելու», բուժելու կնոջը: Մինչդեռ լուսինը կնոջն է խորհրդանշում, որը դրսևորվում է այն տեսարաններում, երբ տղամարդ կերպարները ներքին ճգնաժամ են ապրում: Արևը, ի տարբերություն լուսինի, դրական ազդեցություն է գործում կանանց վրա Լոուրենսի ստեղծագործություններում, քանի որ լուսինի ազդեցության տակ լինելով՝ Լոուրենսի հերոսների վարքագիծը դառնում է վայրի: «Արև» պատմվածքում գրողը ցանկանում է ընթերցողի ուշադրությունը սկսել կնոջ և արևի միջև եղած հարաբերության վրա՝ մի քանի տող նվիրելով միայն տղամարդ կերպարներին՝ կնոջ ամուանուն և գյուղացուն, որը արևայրութից ավելի առնական և բնական տեսք էր ստացել կնոջ աչքերում: Ճիշտ է՝ Զովիետը ինտիմ հարաբերություն չի ունենում գյուղացու հետ, սակայն նրա մեջ մտովի գյուղացու երեխան կրելու ցանկություն է առաջանում: Այս պատմվածքը ընթերցողին փորձում է ցուց տալ, որ արևի ճառագայթների ներթափանցումը Զովիետի մարմնի մեջ կարող է վարքագծի և ինքնազգացողության փոփոխության պատճառ դառնալ: Զովիետի առողջության վերաբերյալ պատմվածքում որևէ կոնկրետ տեղեկատվություն չի հաղորդվում. պատմվածքը սկսվում է բժշկի խոսքերով, որը խորհուրդ է տալիս կնոջը արևոտ մի վայր մեկնել⁴³⁰, խորհուրդ, որ տվել էին նաև Լոուրենսին առողջական խնդիրներ ունեցած ժամանակ: Արևն ու գյուղացին՝

⁴²⁸ Նույն տեղում, էջ 39:

⁴²⁹ Lawrence D., *The Woman Who Rode Away*, Cambridge: Cambridge University Press, 1995, p. 26.

⁴³⁰ Նույն տեղում, էջ 18:

Երկուսն էլ «բուժիչ ուժի» աղբյուր են ինչպես հոգու, այնպես էլ մարմնի համար⁴³¹, քանի որ ինտիմ ցանկության արթնացումը նաև կյանքով է լցում Զովիետին, և կոչ «արյան գիտակցության» քնած կենտրոնները կրկին սկսում են կենդանանալ, մի բան, որը Լոուրենսի կարծիքով, շատ կարևոր է տկար մարմնի համար:

Վերլուծաբան Քեսլերը նույնպես հաստատում է արևի, լուսի և տիեզերքի կարևորությունը Լոուրենսի ստեղծագործություններում՝ շեշտելով, որ գրողի նպատակն է ցոյց տալ տիեզերական մարմինների ազդեցությունը մարդու անգիտակցականի վրա⁴³²: Լոուրենսի մտածողության այս «տիեզերական» ասպեկտը նրան կապում է Յունգին, ով հետաքրքրված էր նմանատիպ խորհրդավոր համակարգերով, ինչպիսիք են աստղաբանությունն ու ալքիմիան⁴³³:

«Արև» պատմվածքում Լոուրենսը շեշտում է այն միտքը, որ անգիտակցականի քնած կենտրոնները կարող են «վերակենդանանալ»՝ տիեզերական ուժերի հետ կորած կապը վերահաստատելու շնորհիվ⁴³⁴: Լոուրենսը «Ապոկալիպսիսում» գրում է, որ Քրիստոսի ծնունդից առաջ գոյություն ունեցող հին քաղաքակրթությունները, որոնք կապված էին արևին և լուսին, չեն վերացել երկրի երեսից, գիտակցության հին ծների մնացորդները ապրում են ժամանակակից մարդու հոգում: Պատահական չէ, որ եթե Լոուրենսը փորձում է վերահաստատել տիեզերքի հետ կապը, նա դա անում է այն մշակույթների, ցեղերի միջոցով, որոնք դեռևս արժնորում են «հին կրոնական» գաղափարները և չեն ընդունում քրիստոնեությունը⁴³⁵:

Լոուրենսը շարունակում է գրել «Ապոկալիպսիսում». «Հիմա իմ արտահայտած մտքերը գուցե անհեթեթ թվան ժամանակակից մարդկանց, քանի որ նրանք հիմար են:

⁴³¹ Նույն տեղում, էջ 26:

⁴³² Kessler J., D.H. Lawrence's Primitivism, Texas Studies in Literature and Language, 1964, էջ 479:

⁴³³ Dawson T., The Cambridge Companion to Jung, Freud, Jung, and Psychoanalysis (Edited by Polly Young-Eisendrath), Cambridge: Cambridge University Press, 1997p. 52.

⁴³⁴ Salman S., The Creative Psyche: Jung's Major Contributions (Edited by T. Dawson, etc.), Cambridge: Cambridge University Press, 1997, p. 5.

⁴³⁵ Costin J., D.H. Lawrence's Quest for Blood-Consciousness: From Cornwall to America, University of Exeter, 2011, p. 2.

Ներքին կապ գոյություն ունի մեր մարմնի և արևի միջև, ինչպես նաև ներքին կապ կա մեր նյարդային համակարգի և լուսնի միջև»⁴³⁶:

Լոուրենսն արևին օժտում է մարդուն բնորոշ հատկանիշներով, որոնք ավելի պատկերավոր են դարձնում նրա խոսքը: Լոուրենսի պատկերացմամբ՝ արևը տղամարդ էր. «Այս գիշեր... այս գիշեր կծաղկեն ծաղիկները նրա համար: Այս գիշեր ես ծաղիկների մահիճ կիխնեմ նրա համար, թարմ, քաղցրաբույր նարգիզներ, որոնք կցնցվեն երջանկությունից, երբ նա բերի իր տաք-տաք արևաշողը, իորի պես փիսրեցնի խավարը և բահի փոխարեն արևաշող ունենա ձեռքին: Քանզի երկուսն են արևները. նա, որ երկնքում է, և նա, ավելի ջերմը, որի ճառագայթները մեր լուսեղեն մարմիններն են: Նա է իմ արևը, որ գալով լուսավորում է իմ սիրտը և ամեն ինչ կենդանացնում»⁴³⁷: Լոուրենսը ցանկանում է, որ մարդիկ միաձուվեն տիեզերքին, գնահատեն տիեզերքում գոյություն ունեցող յուրաքանչյուր երևոյթ, քանզի դրանցից յուրաքանչյուրը մեծ ազդեցություն ունի մարդու կյանքի վրա: Նա ձգտում էր, որ իր հերոսները դառնան տիեզերքի անբաժանելի մասնիկը, որը հստակ երևում է հետևյալ տողերում. «Կինն արդեն զգում էր Արևին մարմնի բոլոր բջջիջներով, ոչ մի սառը ստվեր չէր մնացել նրա ներսում: Կինը լավ էր ճանաչում Արևին՝ կապուտ, շիկացած, ճերմակին տվող բոցեղեն եզրերով, որը հոր էր ճառագում: Եվ թեև Արևը լուսավորում էր ողջ աշխարհը, նա կենտրոնանում էր կնոջ վրա, երբ վերջինս պառկում, մերկանում էր նրան ընդառաջ»⁴³⁸:

Սա է գրողի ընկալմամբ արևի մեծագույն հրաշքը: Այն շողում է միլիոնավոր մարդկանց համար, բայց և շարունակում է լինել այն միակ ճառագող, փառահեղ արևը, որը միայն կնոջ վրա է սևեռվում:

Լոուրենսի կարծիքով, իր ժամանակակիցները չեն ընկալում արևն ավելի խորը, ինչպես ունակ էին ընկալելու հին քաղաքակրթության մարդիկ: Նրանք վերաբերվում են արևին գիտականորեն՝ որպես փոքրիկ լուսատուի: Դարեր առաջ՝ նախքան եզեկիելը,

⁴³⁶ Lawrence D., *Apocalypse and the Writings on Revelation* (Edited by Mara Kalnins), Cambridge: Cambridge University Press, 1980, p. 77.

⁴³⁷ Լոուրենս Դ., Մրմունջ (թրգմ.)՝ Սոնա Սեֆերյան) / Գր. համալս., X, Երևան, 2004, էջ 211:

⁴³⁸ Լոուրենս Դ., Թարգմանություններ, Արև (թրգմ.)՝ Լյուդմիլա Հովհաննիսյան) // Աստղիկ 24, Սահակ Պարթև հրատ., 2013-2014, էջ 101:

արևը ուժի աղբյուր էր մարդկանց համար, իսկ Լուլենսի համար այն ոչ միայն ուժի, այլև երջանկության աղբյուր էր:

Լուլենսը Զովիետին մեկուսացնում է հասարակությունից՝ ազատելու հասարակության արհեստական օրենքներից, որոնք խոչընդոտում էին նրան վայելելու կյանքը, տրվելու զգացմունքներին, մնալու իր Ես-ի հետ, հասկանալու, թե ինչ է ուզում⁴³⁹: Գրողը հասկանում է, որ շատ բարդ է պատկերել մի մարդու, որը ժամանակակից կյանքը թողնելով՝ առանձնանա մի խոլ գյուղում՝ արևի հետ մենակ մնալու համար: Ուստի նա ստիպված կերտում է այնպիսի հերոսուհու, որը հիվանդ է, և միայն արևի ճառագայթները կարող են բուժել նրան: Ժամանակակից աշխարհի ներկայացուցիչը ճարահատյալ է հույսը դնում արևի վրա: Այսպիսով, Լուլենսը այս պատմվածքով հակադրում է ժամանակակից և «բնական մարդ»կանց՝ փորձելով ցույց տալ, թե որքան տարբեր է նրանց կենսաձը և մտածելակերպը: Զովիետը օրեցօր սկսում է սիրել արևը, հարմարվել դրա ներկայությանը և անհամբեր սպասել դրա հայտնվելուն: Արևի բացակայությունը կինը շատ է զգում: Կարծես կախվածություն է ձեռք բերում դրանից: Մոռանում է իր ամուսնու և այն մարդկանց մասին, որոնք վիկտորիանական ժամանակաշրջանի ներկայացուցիչներն են: Լուլենսը Զովիետին «բնական մարդ» է դարձնում: Նա սկսում է մերկանալ, երբ արևը հայտնվում է երկնքում՝ առանց վախենալու, թե ինչ կմտածեն գյուղի բնակիչները: Միայն «բնական մարդ»ուն է հատուկ մերկ լինելու մասին չմտածելը և արևի ճառագայթները լիովի զգալը, ինչը հետզհետե հեռացնում է նրա վրայից ժամանակակից աշխարհի հետքը: Զովիետը մոռացել էր ամոթի մասին, քանի որ առաջնորդվում էր բնագդներով: Ամոթը բնորոշ է ժամանակակից մարդկանց, ովքեր կանոններ են սահմանում, որոնց պետք է հետևի հասարակությունը և չխախտի դրանք, իսկ Զովիետը ազատ էր անելու այն ամենը, ինչ զգում էր այդ պահին, ինչ ցանկանում էր մարմինը: Այժմ նա հավատում էր միայն արևին, դրա հզոր ուժին: Տիեզերական տարրերը, մասնավորապես՝ արևն ու լուսինը, համարվում են որպես «աստվածային միջավայր», ինչը հնարավորություն է ընձեռում

⁴³⁹ Tenenbaum, E., The Problematic Self: Approaches to Identity in Stendhal, D.H. Lawrence, and Malraux, Massachusetts: Harvard University Press, 1977, p. 12.

մարդկանց ապրելու ավելի ազատ, ավելի ներդաշնակ և խաղաղ, քան կարող են ապրել ներկայիս հասարակության մեջ⁴⁴⁰:

Լոռիրենսի ստեղծագործություններում հաճախ հանդիպում ենք այնպիսի հերոսների, որոնք իրենց կենսակերպով, աշխարհայացքով շատ են տարբերվում մյուսներից: Գրողի համոզմամբ՝ 20-րդ դարի արդյունաբերական Անգլիան արգելք է դառնում անհատների համար, որպեսզի վերջիններս զգան արևի և լուսնի ազդեցությունը, ինչը կարող է ազատություն պարզել նրանց⁴⁴¹: Արդյունաբերական աշխարհը, որը Լոռիրենսը նկարագրում է իր ստեղծագործություններում, ներկայացված է երկաթգծերի, ջրանցքների, քարհանքերի տեսքով, որոնց կարիքը «բնական մարդ»ը ամենափառ չունի: Մեխանիկական աշխարհը հակառակած է այն աշխարհին, որտեղ ապրում է Զովիետը:

Լոռիրենսն «Արև» պատմվածքում իր մարմնի և հոգու վրա ունեցած ներգործությունը Զովիետի միջոցով է փորձում արտացոլել: Նա պաշտում էր արևը, քանի որ այն իր վրա մեծ ներգործություն էր ունենում. «Այն պահին, երբ ես տեսա արևի ոսկեգոյն վաղորոյան ճառագայթը Սանտա Ֆեի անապատի վրա, իմ հոգին սիրով լցվեց, և ես կանգ առա՝ հիանալու տեսարանով: Նոր Մեքսիկայի առավոտը բացվում էր և իմ հոգուն տալիս էր հաճելի զգացողություններ»⁴⁴²:

Արևի ուժի մասին Լոռիրենսի պատկերացումները արտահայտված են նաև «Զատիկ» պատմվածքում: Հիվանդ կոմսը արևի կարիք ուներ, քանի որ զգում էր, որ այն կբուժի իր վերքերը. «Չէ որ ես ռազմագերի եմ: Բայց ուզում եմ, որ արևը շողա: Ուզում եմ, որ արևը շողա դեմքիս»⁴⁴³: Կոմսի վերաբերմունքը արևի նկատմամբ լիովին արտահայտում է Լոռիրենսի պատկերացումները. «Արևը ոչ անգլիական է, ոչ գերմանական, ոչ բոհեմական, - ասաց նա: Ես արևի հպատակն եմ: Ես արևն եմ պաշտում, - գիտե՞ք»⁴⁴⁴: Այս տողերը Լոռիրենսի տիեզերական գիտակցության վառ

⁴⁴⁰ Sanders S., D.H. Lawrence, The World of the Major Novels, New York: Viking Press, 1973, p. 84.

⁴⁴¹ Նոյն տեղում, էջ 207:

⁴⁴² Lawrence D., The Letters (Edited with an Introduction by Aldous Huxley), London: William Heinemann Ltd., 1932, p. 142.

⁴⁴³ Լորըն Դ., Զատիկ / Թարգմանություններ (թրգմ.՝ Սամվել Մկրտչյան), Գիրք Ա, Երևան, Հեղինակային հրատարակչություն, 2009, էջ 571:

⁴⁴⁴ Նոյն տեղում, էջ 557:

ապացույցն են: Նա ևս պաշտում էր արևը, քանի որ արևը ջերմացնում էր իր մարմինը և ցանկությամբ, սիրով լցնում հոգին: Արևը ոչ միայն բուժիչ հատկություն ունի, այլև մարդու մեջ արթնացնում է բնազդային ազդակներ՝ ապրելու, կյանքը վայելելու և սիրահարվելու:

Նախքան արևի շողերը կոմսի մարմին ներթափանցելը վերջինս մոայլ էր և ցանկանում էր մահանալ, սակայն այն օրվանից, երբ սկսել էր նայել արևին, նրա մեջ ապրելու ցանկություն էր առաջացել: Նա սկսել էր նկատել իրեն այցի եկող Դաֆնիի գեղեցկությունը և հրապուրվել դրանով⁴⁴⁵:

Մրմունջ («The Overtone», 1933) պատմվածքում տղամարդը չէր կարողացել երջանկացնել կնոջը, ուստի չէր կարող արև լինել նրա համար. «Սակայն տղամարդը եկավ՝ որպես մի դառն առավոտ: Նա երբեք արև չեկավ կնոջ համար, այլ մոայլ մի օր՝ նստած նրա սրտին և ծածկված անթափանց թուխաբերով»⁴⁴⁶:

Լոուրենսի ստեղծագործություններում բազմաթիվ են մարդու գիտակցության վրա լուսնի ազդեցության վերաբերյալ տեսարանները, որոնցից կարելի է հանգել այն եզրակացության, որ գրողը կարևորում էր նաև լուսնի ազդեցությունը մարդու կյանքի և կենսածկի վրա: Լուսինը, ըստ նրա, սոսկ մեռած արբանյակ չէ, որն արտացոլում է արևի լույսը, ինչպես հավաստիացնում են գիտնականները: Այն կարող է մարդուն հասցնել մտահափշտակության աստիճանի, երջանկացնել նրան: Լոուրենսի կարծիքով, լուսնի լույսը մեծ նշանակություն ունի սիրային հարաբերությունների համար: Երբ զուգերը լուսնկա գիշերը միասին զբոսնում են, նրանք ամբողջովին զգում են լուսնի ուժը և կորցնում են տեղի, ժամանակի զգացողությունը, կտրվում են իրականությունից, և բանականությունը տեղի է տալիս զգացմունքներին: Հակառակ դեպքում, երբ գիտակցությունն արթնանում է, այն բոլորովին բացասական ազդեցություն է ունենում այդ հարաբերության վրա և դառնում է ճակատագրական⁴⁴⁷. «Վարդագույն լիալուսինը ցածում

⁴⁴⁵ Նոյն տեղում, էջ 558:

⁴⁴⁶ Լոուրենս Դ., Մրմունջ (թրգմ.) Սոնա Սեֆերյան / Գր. համալս., Խ, Երևան, 2004, էջ 211:

⁴⁴⁷ LaChappelle D., D.H. Lawrence, Future Primitive, Texas: University of North Texas Press, 1996, p. 30.

ճախրող կարմրաթեսիկ թռչունի պես դուրս եկավ արևելքի մշուշից: Այդ գեղեցկությունից կնոջ դյուրագրգիռ թախսիծը մեղմացավ և փարատվեց»⁴⁴⁸:

«Մրմունջ» պատմվածքը սկսում է լուսնկա գիշերվա գեղեցիկ և խորհրդավոր նկարագրությամբ: Հեղինակը այս փոքրիկ պատմվածքում համեմատության և փոխաբերության միջոցով, ինչպես նաև սիմվոլների կիրառմամբ ստեղծում է անկրկնելի, գողտրիկ պատկերներ, տեսարաններ, բացահայտվում է նրա ողջ աշխարհընկալումը:

Լոուրենսի արտառոց զգայունությունը լիալուսի առեղծվածային ուժի նկատմամբ անդրադարձել է ոչ միայն իր ստեղծագործությունների, այլև իր կյանքի վրա: Զեսսի Չեմբերսը մտաբերում է այն պահերը, երբ Լոուրենսը հուսահատության գիրկն էր ընկնում լիալուսի ժամանակ, նրա պահվածքը դառնում էր տարօրինակ⁴⁴⁹: Մի անգամ՝ լիալուսից առաջ, երբ նրանք զբոսնում էին լողափին, Զեսսին նկատում է, թե ինչպես մի մոլորդ ուժ աստիճանաբար տիրում է Լոուրենսին, և երբ վերջապես այդ գեղեցիկ լիալուսինը հայտնվում է նրանց գլխավերևում, թվում է, թե ինչ-որ մի բան պայթում է Լոուրենսի ներսում. նրա բառերը դառնում են վայրի, սառը և կարծես ամբողջովին կորցնում է իրականության զգացումը: Մեկ ուրիշ անգամ, լուսնկա մի գիշեր, Լոուրենսը վախեցնում է Զեսսին իր ոչ մարդկային վարքագծով, և մի պահ Զեսսին երկմտում է, թե արդյո՞ք իր առջև կանգնած Լոուրենսը մարդկային էակ է⁴⁵⁰:

Լոուրենսը, քննադատելով ժամանակակից մարդու արհամարհանքը «մայր լուսնի» նկատմամբ, գրում է, թե ինչպիսի ազդեցություն ունի լուսինը մեր նյարդային համակարգի և մարմնի վրա. «Մենք կորցրել ենք լուսինը՝ արծաթագույն, սառը, տարբերվող լուսինը: Նա հոգ է տանում մեր նյարդերի մասին՝ իր մետաքսե ձեռքը հպելով դրանց: Լուսինն է մեր նյարդային համակարգի մայրը: Օ՛, նա կարող է խաղաղեցնել մեր հոգիները և բուժել մեզ, ինչպես Արտեմիսի ձեռքերում էին բուժվում շատերը: Սակայն մենք կորցրել ենք

⁴⁴⁸ Լոուրենս Դ., Կնունք (թրգմ.) Սոնա Սեֆերյան) // Արտ. գրականություն, 2011, VII, 2011, Էջ 26:

⁴⁵⁰ Lawrence D., A Personal Record (Edited by J. D. Chambers), London: Frank Cass & Co. Ltd. Publishers, 1965, p. 127-128.

նրան մեր հիմարության պատճառով: Մենք արհամարհում ենք նրան, և նա բարկացած է նայում մեզ վերևից»⁴⁵¹:

Դոկտոր Լեռնարդ Զ. Ռավիթը լուսնային ազդեցության մասին իր աշխատությունում գրում է, որ լիալուսինը ազդում է հատկապես այն մարդկանց վրա, որոնք ունեն մտավոր խանգարումներ կամ արտասովոր զգայուն են⁴⁵²: Չիկագոյի համալսարանի դոկտոր Վիլյամ Փեթերսոնն էլ նշում է, որ լիալուսինը հզոր ազդեցություն ունի այն մարդկանց վրա, որոնք հիվանդ են պալարախստով: Հիվանդությունը սրվում է լիալուսից յոթ կամ տասնմեկ օր առաջ, որը հաճախ ավարտվում է մահով⁴⁵³: Լոուրենսն իր ողջ կյանքում տառապել է պալարախստով և պայքարել դրա դեմ, ինչը նույնպես պատճառ է դարձել, որ նա այդքան զգայուն լինի լիալուսի նկատմամբ: Գրողը քաջ գիտակցում էր, թե ինչպիսի ներգործություն ունի լուսինը իր մարմնի վրա: Նա գիտեր, թե ինչ են զգում մարդիկ, երբ լիալուսի ազդեցության տակ են ընկնում:

Լոուրենսն իրեն անբաժան էր համարում արևից, լուսնից: Նա դատապարտում էր քրիստոնեությունը՝ մարդու հնագույն կապը տիեզերքի հետ խզելու համար: Ժամանակակից մարդու համար լուսինը պարզապես բնական արբանյակ է և ոչ ավելին, սակայն հեթանոսի համար տիեզերքը շատ ավելին էր: Նա ապրում էր տիեզերքում՝ այն շատ լավ ճանաչելով⁴⁵⁴: Ժամանակակից մարդու տիեզերական գիտակցության պակասը, ըստ նրա, ողբերգություն է: «Մենք կորցրել ենք տիեզերքը, մեր կապը խզել ենք նրա հետ, և դա ժամանակակից մարդու դժբախտությունն է: Մենք և տիեզերքը մի մարմին ենք: Արևը շերմացնում է մեր մարմինը, մեր արյունը, որը հոսում է մեր երակներում, իսկ լուսինը ազդում է մեր նյարդային համակարգի վրա: Նա, ով նրանց հետ չէ, նրանց թշնամին է: Ահա սա է տիեզերքի սկզբունքը»⁴⁵⁵:

⁴⁵¹ Lawrence D., *Apocalypse and the Writings on Revelation* (Edited by Mara Kalnins), Cambridge: Cambridge University Press, 1980, p. 77.

⁴⁵² LaChappelle D., D.H. Lawrence, *Future Primitive*, Denton: University of North Texas Press, 1996, p. 31.

⁴⁵³ Նոյն տեղում, էջ 31:

⁴⁵⁴ Lawrence D., *Apocalypse and the Writings on Revelation* (Edited by Mara Kalnins), Cambridge: Cambridge University Press, 1980, p. 41.

⁴⁵⁵ Նոյն տեղում, էջ 45:

«Ապոկալիպսիս» վերջում նա գրում է. «Այն ամենը, ինչին ես ձգտում եմ, խզված կապերի վերականգնում է տիեզերքի հետ: Եկե՛ք սկսենք արևից, իսկ մնացածն իր հունով կընթանա»⁴⁵⁶:

Լոռիրենսի «Մրմունց» պատմվածքն ակնհայտորեն ընթերցողի առջև բացում է մարդ-տիեզերք փոխհարաբերության մի տեսարան, երբ Էլզա Լաքելը անձնատուր է լինում գիշերվա խավարին: Նա այնքան է միաձուվում տիեզերքին, որ կարծես չի լսում կանանց խոսակցությունը. «Էլզա Լաքելը նստել էր երազկոտ դիրքով: Տանտիրուիու և տանտիրոջ զգացմունքները, սպիտակ լուսնի, ցախկեռասի տարաշխարիիկ ծանրության և գիշերաթիթեռի հետ միաձուված, հոսում էին նրա հոգու խորքերը: Մութը, լուսինը, գիշերաթիթեռը Վիլ և Էդիթ Բենշոնորն ու ինքը կային միայն՝ որպես ներդաշնակություն»⁴⁵⁷:

Լոռիրենսի պատկերացմամբ՝ անհնարին է մարդու կյանքն առանց տիեզերքի երևույթների և դրանց հետ փոխհարաբերության⁴⁵⁸: Ուշագրավ է այն տեսարանը, երբ ամուսին Վիլը, դրսում՝ կրակի մնացորդների մոտ նստած, նայում է գյուղական վայրի հարթությանն ու փայլարձակող մթնշաղին: Լոռիրենսը մարդուն և տիեզերքը միաձուվում, դարձնում է մեկ ամբողջություն. «Գիշերվա մեծ շրջանը աչքի բիբն էր նրա՝ լի խորհրդով, կյանքի անճանաչ հրով, որը երբեք չի հանգում, այլ վառվում է անհագուրդ»⁴⁵⁹: Տղամարդը սարսում է՝ այս ամենին ականատես լինելով: Ինչպիսի կենդանություն կար լուսե գիշերվա մեջ, փաղաքշանք, սարսուտ ու թրթիռ՝ հոգու թրթիռ, երբ աչքերը ոչինչ չեն տեսնում կարծես, բայց երբ զգում ես հոգով, մարմնով և դառնում այս ամենի անբաժանելի մասը. «Նա սիրում էր կնոջը, իսկ գիշերը տիկին Ռենշոյի աչքի բիբ էր. այնտեղ էր ամեն ինչ»⁴⁶⁰:

⁴⁵⁶ Նույն տեղում, էջ 200:

⁴⁵⁷ Լոռիրենս Դ., Մրմունց (թրգմ.) Սոնա Սեֆերյան) / Գր. համալս., X, Երևան, 2004, էջ 206:

⁴⁵⁸ Sagar K., The Art of D. H. Lawrence, Cambridge: Cambridge University Press, 1976, էջ 45:

⁴⁵⁹ Լոռիրենս Դ., Մրմունց (թրգմ.) Սոնա Սեֆերյան) / Գր. համալս., X, Երևան, 2004, էջ 207:

⁴⁶⁰ Նույն տեղում, էջ 206:

⁴⁶⁰ Նույն տեղում, էջ 207:

Փոխաբերության շնորհիվ Լոուրենսը խոսքին ուժ է հաղորդում, ինչն ավելի խորը տպավորություն է գործում ընթերցողի վրա: Նա պատկերում է գունեղ տեսարաններ և փորձում ընթերցողին ևս միաձուել վարպետորեն կերտված առեղծվածային աշխարհին: Լոուրենսը տիկին Ռենչոյի և լուսնի միջև տանում է ուշագրավ զուգահեռներ: Քանի որ հակասություններ կային ամուսինների միջև, տղամարդն անկարող էր իրեն մոտ զգալ լուսնին՝ կնոջը, որովհետև նրան նույնացնում էր լուսնի հետ. «Նա չէր կարողանում զգալ մաքուր, վճիտ լուսինը»⁴⁶¹: Տղամարդը ցանկանում էր կրկին զգալ լուսինը՝ իր կնոջը. «Տղամարդը նայեց լուսնին, նայեց լուսաշողին՝ իր ձեռքերի վրա, ասես թիթեռ լիներ՝ ձեռնոցին նստած, որն ինքը տեսնում էր, սակայն չէր զգում: Նա ուզեց ազատվել ձեռնոցից, ուզեց լինել մաքուր ու բաց՝ լուսնի և ամեն ինչի դեմ»⁴⁶²: Ահա այս տողերում Լոուրենսը լուսաշողի, թիթեռի և կնոջ միջև զուգահեռներ է անցկացնում: Նա մի կողմից համեմատում է լուսաշողը թիթեռի հետ, քանի որ վերջինս այնքան թեթև է, որ հազիվ թե մարդ կարողանա զգալ դրա ծանրությունը իր ձեռքի վրա, մյուս կողմից ենթագիտակցաբար այդ թիթեռը համեմատում է կնոջ հետ, քանի որ այլս անկարող է զգալ նրան որպես ամուսին: Նա ցանկանում էր ազատվել ձեռնոցից: «Լուսինը շողջողում էր կնոջ մատներին, մինչ ամուսինը փայփայում էր դրանք»⁴⁶³:

Մարդ-տիեզերք այս ներդաշնակության մեջ Լոուրենսը փորձում էր ցույց տալ իր հերոսների հարաբերությունները բնության առեղծվածային երևույթի՝ լուսնի հետ. «Տղամարդը թափանցել էր գիշերվա մեջ, ինչպես կնոջ աչքի բիբի մեջ, և հիմա ամոթից, խավարից ու շփոթմունքից պիտի դուրս գար հոգին մաքրված, ինչպես լուսինը, որը մերկ քայլում է գիշերվա միջով: Բովանդակ գիշերը կնոջից էր արտահոսում, ամբողջությամբ նրանն էր. Լուսնային արտահոսքը, կատարյալ մերկությունը, որ միաձուլում էր կնոջն ամեն ինչին: Իսկ զգեստն անջրպետ էր, ինչպես թուխապը լուսնի համար»⁴⁶⁴: Լոուրենսը կնոջը, գիշերը, լուսինը միաձուլել էր իրար և դարձրել մեկ անբաժանելի մասնիկ:

⁴⁶¹ Նույն տեղում, էջ 208:

⁴⁶² Նույն տեղում, էջ 208:

⁴⁶³ Նույն տեղում, էջ 208:

⁴⁶⁴ Նույն տեղում, էջ 206:

⁴⁶⁴ Նույն տեղում, էջ 207:

Լուրենսի կերպարների՝ ինտիմ հարաբերություն ունենալու ցանկությունը պայմանավորված է նրանց վրա տիեզերական, բնական ուժի ազդեցությամբ, որն իր հերթին նրանց մեջ կիրք և բնական ազդակներ է արթնացնում: Նա փորձել է իր կերպարների համար այնպիսի միջավայր ստեղծել, որը հեռու է քաղաքակրթության ազդեցությունից: Շրջապատված լինելով տիեզերական տարրերով՝ մարդն ավելի է կենտրոնանում իր անձի վրա, նրա մեջ արթնանում են բնագդային ազդակները: Եվ այս համատեքստում պետք է նշել, որ նա մարդու մեջ արթնացնում է կենդանական, ֆիզիոգիական պահանջները: Պետք է նշել նաև, որ 21-րդ դարում ամենախն հեշտ չէ հավատալ, որ արևի կամ լուսի ազդեցությամբ տղամարդը կամ կինը միանգամից անձնատուր կլինեն իրենց բնական ցանկություններին: Եվ դա ամենախն քաղաքակրթության կարծրատիպերի պատճառով չէ, այլ այն բանի, որ այսօրվա մարդիկ չեն զգում այդ տիեզերական մարմինների ազդեցությունն իրենց վրա: Չի կարելի բացառել, որ սիրահար զուգերը սիրում են զբոսնել լուսի ներքո, սակայն այս հանգամանքը կարելի է բացատրել գեղեցիկ պատկերի տեսանկյունից: Ժամանակակից գիտնականները դեռ փնտրում են այս հարցերի պատասխանները, իսկ պատասխանները կարելի է ստանալ միայն սեփական փորձառությամբ:

Մենք ամբողջությամբ կորցրել ենք մեր նախնիների զգայական իրազեկվածությունը, ինչը իհմնված էր բնագդների, ինտուիցիայի վրա և ոչ թե բանականության⁴⁶⁵: Պլատոնը հավատում էր, որ միակ երջանկությունը մարդու համար այն է, երբ միտքը կառավարում է մարմնին: Սակայն, օրինակ, գիտակցությամբ առաջնորդվող թագավորները միայն խառնաշփոթ են ստեղծել իրենց շուրջը: Այն թագավորությունը, որը կառավարվում է բանականությամբ, երջանիկ լինել չի կարող: Լուրենսը հայտարարում է՝ թող որ ո՞չ մի թագավորություն, ո՞չ մի օրենք, ո՞չ մի կանոն չինի, և թող որ մարդը հետևի իր բնական ազդակներին⁴⁶⁶: Մարդը սարսափելի սխալ է գործել: Միտքը միայն գործիք է, այն չի կարող կառավարել մեր կյանքը: Միտքը միջոց է

⁴⁶⁵ Lawrence D., *Apocalypse and the Writings on Revelation* (Edited by Mara Kalnins), Cambridge: Cambridge University Press, 1980, p. 91.

⁴⁶⁶ Նույն տեղում, էջ 198:

այս կամ այն առարկաները ճանաչելու համար: Մարդիկ պետք է հասկանան արյան գիտակցության և գիտակցության միջև եղած տարբերությունը: Երբ մարդը կապ է հաստատում տիեզերքի հետ, նրա մարմնի կենտրոնները ակտիվ են, իսկ երբ մարդը գործի է դնում իր բանականությունը, մարմնի կենտրոններն անջատվում են, և մարդ-տիեզերք կապն անհետանում է⁴⁶⁷:

Ակնհայտ են Լոուրենսի պատմվածքների թեմատիկ ընդարձակությունը և ժանրային բազմազանությունը, որոնք գրողը մեծ մասամբ խմբավորել է «Պրուսական սպա» («The Prussian Officer», 1914), «Անգլիա իմ Անգլիա» («England my England», 1922), «Կինը, որը հեռացավ» («The Woman Who Rode Away», 1928) երեք ժողովածուներում:

Պատմվածքները հիմնականում գրված են առաջին դեմքով: Հերոսների կերպարները և նրանց զգացմունքները, կրքերը, մտքերը, տրամադրությունը, վարքը փոխանցվում են՝ շնորհիվ փոխաբերությունների և սիմվոլների գործածության: Պատմվածքներում հստակորեն իրար են հակադրված երկու հոգական-սիմվոլիստական հոսքեր, մի կողմից՝ կրակ, գույների պայծառություն, հարթ ճանապարհներ, ցանկություն և կարողություն նայելու դեպի վեր, դեպի կյանք, մյուս կողմից՝ խավար, միանմանություն, հոգնածություն, կեղտ, փոշի և այլն:

Լոուրենսի՝ բնագդներով, արյան գիտակցությամբ, տիեզերական գիտակցությամբ առաջնորդվելու տեսությունը ծևավորվել է մի շարք գրողների, փիլիսոփաների գաղափարները ուսումնասիրելու արդյունքում: Նրա մտքերը, կիրառած տեխնիկան, ոճը մեծ մասամբ նման են ռոմանտիկ գրողների մտքերին, ոճին, տեխնիկային: Զեսսի Չեմբերսը նշում է, որ այն, ինչ Լոուրենսը կարդացել է, հետագայում իր ստեղծագործություններում ներկայացրել է սեփական դիտանկյունից՝ ինչպես ինքն է պատկերացրել⁴⁶⁸:

Լոուրենսի վրա մեծ տպավորություն է թողել Հարոլդ Բլումի «Ազդեցության մտահոգությունը» («The Anxiety of influence», 1973) գիրքը: Լոուրենսը կարծում է, որ

⁴⁶⁷ Նոյն տեղում, էջ 199:

⁴⁶⁸ Lawrence D., A Personal Record (Edited by J. D. Chambers), London: Frank Cass & Co. Ltd. Publishers, 1965, p. 113.

ցանկացած ազդեցություն բացասական հետևանք կարող է ունենալ մարդու վրա, բացառությամբ արևի և լուսնի ազդեցություններից, որոնք միայն դրական ներգործություն են ունենում մարդու ներաշխարհի և մարմնի վրա: Թեև Լոուրենսը ժխտում է հասարակության ազդեցությունը իր վրա, այնուամենայնիվ հայտնի գրողների ազդեցությունը իր ստեղծագործություններում ակնհայտ է ոչ միայն ոճի, թեմաների, կիրառած տեխնիկայի, այլև փիլիսոփայության, աշխարհայացքի առումով: Լոուրենսն ինքն ընդունում է, որ իր գաղափարներից շատերը ծևավորվել են բազմաթիվ գիտական գրքերի ուսումնասիրության արդյունքում: Նա որոշ մտքեր վերցրել է յոգայից, Պլատոնից, Հերակլիտեսից⁴⁶⁹: Լոուրենսը չափազանց մեծ ուշադրություն է դարձնում իր հերոսների կյանքի ինտիմ կողմերին, որոնք ակնհայտորեն երևում են նրա ստեղծագործություններում՝ հաստատելով նախամարդու անգիտակցականի առավելությունը գիտակցականի նկատմամբ, ֆիզիոլոգիականի առավելությունը հոգևորի նկատմամբ:

Լոուրենսի կարծիքով, «արյան գիտակցության» ուժը ոչ միայն մարդու մարմնի մասն է, այլև զուգորդվում է վերմարդկային աշխարհի՝ տիեզերքի հետ: Ինչպես Լոուրենսն է նշում, «արյան գիտակցության» և տիեզերքի միջև հատակ կապ գոյություն ունի. «Եթե միայն առեղծվածային ուժը, որն ուղղորդում է իմ դեկը, միշտ մնար իր տեղում, ապա իմ ոտնակները ինքնաբերաբար կպտտվեին և երբեք կանգ չէին առնի, և ոչ մի արգելք չէր խաթարի իմ հավերժ շարժումները, և ես կլինեի անմահ ու կթոշեի անսահմանության միջով ...»⁴⁷⁰:

Արյան գիտակցության տեսությունը հենց Լոուրենսին է, որտեղ նա գրում է բնական ազդակների, տիեզերական գիտակցության մասին. «Թերևս ամենամեծ տարբերությունը, որ կա մեր և հեթանոսների միջև, տիեզերքի նկատմամբ ունեցած վերաբերմունքն է: Արևը մեզ անհրաժեշտ է ջերմանալու համար, իսկ լուսավորում

⁴⁶⁹ Lawrence D., The Collected Letters, Vol. I (Edited by Harry T. Moore), UK: William Heinemann Ltd., 1962, էջ 184:

⁴⁷⁰ Lawrence D., Psychoanalysis and the Unconscious (Edited by Bruce Steele), Cambridge: Cambridge University Press, 2004, p. 96-97.

է գիշերը: Ի տարբերություն մեզ՝ հեթանոսները իրենց մարմնի վրա զգում էին արևի և լուսնի ազդեցությունը և դրանց ավելի լավ էին ճանաչում, քան իրենք իրենց»⁴⁷¹:

Այն հարցին, թե ինչ է իրականում արյան գիտակցությունը, Լոռութենսը պատասխանում է «Հոգեվերլուծություն և անգիտակցական» աշխատության մեջ: Ըստ նրա՝ արյան գիտակցությունը առաջանում է յուրաքանչյուր մարդու օրգանիզմում դեռևս մոր արգանդում, որի շնորհիվ դեռ չձևավորված երեխան հետզհետեւ սկսում է կապ հաստատել տիեզերքի հետ: Այսպիսով, անգիտակցական տերմինը կյանքի հոմանիշն է⁴⁷²: Անգիտակցականը վերացական հասկացություն չէ: Իրականում այն կարող է մեծ ազդեցություն ունենալ նյարդային համակարգի և իր կենտրոնների վրա⁴⁷³: Լոռութենսը անգիտակցականի, նյարդային համակարգի և իր կենտրոնների վերաբերյալ գիտելիք է ստացել՝ ընթերցելով Մ. Փրիզի «Բացահայտված ապոկալիպսիսը» («Apocalypse Unsealed», 1941): Այն ոգեշնչել է Լոռութենսին յոգայի էությունը լիովին հասկանալու: Փրիզը գրում է, որ մարդու մարմինը բաղկացած է յոթ չակրանների («chakra»)՝ հոգեէներգետիկ կենտրոններից, որոնցից յուրաքանչյուրը մարդու կյանքը տիեզերքի հետ կապող հանգույց է: Այսինքն՝ մարդու մարմնի յուրաքանչյուր օրգան կապված է տիեզերքին: Մարդու արյունը կապված է լուսնին, կրծքավանդակը՝ արևին⁴⁷⁴: Լոռութենսը գրում է «Հոգեվերլուծություն և անգիտակցական» աշխատությունում. «Անգիտակցականը ուսումնասիրելիս պետք է շարժվենք մի չակրայից մյուսը»⁴⁷⁵: Լոռութենսը վերցրել է Փրիզի յոթ չակրանների նկարագրությունը, սակայն դրանցից միայն չորսն է կիրառում:

Լոռութենսի սեփական տարբերակը նյարդային համակարգի վերաբերյալ տեղակայված է անգիտակցականի մակարդակում, որն ունի չորս հիմնական կենտրոններ և բաժանված է երկու՝ ստորին և վերին մակարդակների: Ստորին մակարդակում գտնվում

⁴⁷¹ Lawrence D., *Apocalypse and the Writings on Revelation* (Edited by Mara Kalnins), Cambridge: Cambridge University Press, 1980, p. 76.

⁴⁷² Lawrence D., *Fantasia of the Unconscious and Psychoanalysis and the Unconscious*, Phoenix, London: William Heinemann Ltd., 1971, p. 241.

⁴⁷³ Նոյն տեղում, էջ 241-242:

⁴⁷⁴ Tindall W., D.H. Lawrence and Susan his Cow, New York: Cooper Square Publishers Inc., 1972, pp. 150-151.

⁴⁷⁵ Lawrence D., *Fantasia of the Unconscious and Psychoanalysis and the Unconscious*, Phoenix, London: William Heinemann Ltd., 1971, p. 90.

Են արևային հանգուցը և ողնաշարի չակրան, իսկ վերին մակարդակում կրծքային և սրտային կենտրոններն են⁴⁷⁶: Ստորին կենտրոնները, որոնք տեղակայված են «արևային հանգուցում», ըստ Լոուրենսի, զգացմունքների կենտրոնն են, որոնք ավելի սուբյեկտիվ են: Իսկ վերին մակարդակում, կրծքավանդակի շուրջ տեղակայված է նյարդային համակարգը, որը պատասխանատու է սիրային գործառությունների համար: Բոլոր կենտրոններից առավել Լոուրենսը շեշտում է «արևային հանգուցը», որն ամենահզոր և կարևոր կենտրոնն է մեր գիտակցության մեջ⁴⁷⁷: Թեպետ իր տեսությունը անհմաստ է հնչում, այնուամենայնիվ Լոուրենսը փորձում է բառերով հստակեցնել սիրո և բիոհաղորդակցվելու վերաբերյալ իր տեսակետը: Ֆրեդերիկ Քարթերը, որի «Հայտնության վիշապը» («The Dragon of Revelation», 1931) գրքի հիման վրա Լոուրենսը գրում է իր վերջին՝ «Ապոկալիպսիս» գիրքը, նշում է, որ Լոուրենսը չակրաների յոթ կենտրոնների մասին տեղեկատվությունը վերցրել է Վեդանտայի⁴⁷⁸ վերաբերյալ որոշ ամերիկյան գրքերից⁴⁷⁹: Լոուրենսի «ամենահզոր նյարդային համակարգի» տեսությունը հիմնված է արևելյան փիլիսոփայության՝ ոչ միայն յոգայի, այլև չինական թայ-չի և ճապոնական այկիդո արվեստի ծևերի վրա: «Արևային հանգուցը», որը գտնվում է որովայնի խոռոչում, ըստ Լոուրենսի՝ ամենակարևոր նյարդային կենտրոնն է, որը կապում է մարդու մարմինը ողջ տիեզերքին, և մարմինը կարողանում է ամբողջովին զգալ տիեզերքի ուժն իր վրա: Ռայս Դավիսը իր «Դ.Հ. Լոուրենսը Բանդոլում» («D. H. Lawrence in Bandol», 1940) աշխատության մեջ գրում է իր և Լոուրենսի միջև տեղի ունեցած երկխոսության մասին, որի ժամանակ Լոուրենսն ասում է իրեն. «Երբ պետք է մի բան որոշես, ինչ էլ որ գիտակցությունդ թելադրի քեզ, հետևի՞ր զգացմունքների՞ր»: Ապա արագ շարժումով նա ձեռքերը դնում է իր որովայնի վրա. «Հետևի՞ր սրան, թե ինչ ես զգում այստեղ, այլ ոչ թե նրան, թե ինչ է ուղեղդ թելադրում»⁴⁸⁰:

⁴⁷⁶ Նոյն տեղում, էջ 90:

⁴⁷⁷ Նոյն տեղում, էջ 22:

⁴⁷⁸ Վեդանտան տիեզերական գիտակցության վիճակ է:

⁴⁷⁹ Carter F., D.H. Lawrence and the Body Mystical, New York: Haskell House Publishers Ltd, 1972, p. 25.

⁴⁸⁰. LaChappelle D, D.H. Lawrence, Future Primitive, Denton: University of North Texas Press, 1996, p. 98.

Երբ առաջին անգամ Լոուրենսը հանդիպում է Բրևսթերին, խորհուրդ է տալիս նրան առաջնորդվել ոչ թե հոնքերի հատվածում գտնվող կենտրոններով, այլև «արևային հանգույցով»⁴⁸¹: Լոուրենսը մարմնի ստորին մակարդակին վերաբերվում է որպես մարդու կյանքի կարևորագույն մասի: Այն հավասարակշռության հասնելու և ուժ տալու աղբյուր է: Նա ասում է Բրևսթերին. «Մենք չպետք է անցնենք տառապանքների միջով: Դու կարող ես հզրություն, ուժ ստանալ, հավասարակշռության հասնել, եթե հետևես «արևային հանգույցի» կենտրոնին»⁴⁸²: Նա շարունակաբար նշում է իր էսսեում, որ այս հանգույցի շնորհիվ մարդը սկսում է գիտակցել սեփական գոյությունը տիեզերում⁴⁸³:

Լեդի Ասքուիֆը այնպիսի զգացողություն ուներ, որ Լոուրենսը գործում էր այնպես, ինչպես իր բնազդներն էին թելադրում: Նա մտաբերում է, որ Լոուրենսը ավելի շատ «արևային հանգույցով» էր «մտածում», քան իր ուղեղով, ինչն էլ նրան առանձնացնում էր մյուսներից. «Այս ունակության շնորհիվ նա ավելի շատ էր զգում արևի, լուսնի ազդեցությունը իր վրա»⁴⁸⁴:

Ուշարդ Ալիինգթոնը Լոուրենսի ստեղծագործությունների մասին գրել է, որ դրանք առաջացել են ոչ թե Լոուրենսի գիտակցության, այլ նրա բնազդների շնորհիվ⁴⁸⁵: «Արևային հանգույցի» նկատմամբ Լոուրենսի հետաքրքրությունը ավելի շատ է ծաղրի ենթարկվել արևմտյան քննադատների կողմից, քան նրա այլ գաղափարներ: Մինչդեռ Լոուրենսի «արևային հանգույցի» վերաբերյալ մտքերը անհասկանալի չեն Արևելքի համար: Այս «այլ ուղեղը», որը գտնվում է հենց որովայնի հատվածում, ճապոնացիները կոչում են «հարա», չինացիները՝ «դիան թիան»: Վարժանքների, վարժությունների միջոցով այս կենտրոնը կարելի է բացել դեպի արտաքին աշխարհ և Էներգիա ստանալ տիեզերքից: Այն այնպիսի գործառույթ է իրականացնում, որը հավասարակշռում է

⁴⁸¹ Brewster E., D.H. Lawrence: Reminiscences and Correspondence, London: Martin Secker, 1934, p. 18.

⁴⁸² Lawrence D., A Composite Biography, Vol. II (Edited by Edward Nehls), The University of Wisconsin Press 1958, p. 60.

⁴⁸³ Lawrence D., Fantasia of the Unconscious and Psychoanalysis and the Unconscious, Phoenix, London: William Heinemann Ltd., 1971, p. 22.

⁴⁸⁴ Asquith C., Remember and Be Glad, London: James Barrie, 1952, pp. 144, 189.

⁴⁸⁵ Aldington R., Introduction to Last Poems, Vol. II (Edited by Vivian de Sola Pinto and etc.) London: Heinemann, 1964, p. 595.

Էներգիայի հոսքը մտքի և մարմնի, Ես-ի և արտաքին աշխարհի միջև: Մարդու մարմնի գործառույթների ուսումնասիրությունն ապացուցել է, որ ստորին ողնաշարի հատվածը ինքնաբերաբար ղեկավարում է ողնաշարի շարժումը⁴⁸⁶: Լոուրենսը շատ էր կարևորում այն, որ մարդ կարողանա ստորին կենտրոնների միջոցով կապ հաստատել արևի, լուսնի հետ: Արևը, ըստ Լոուրենսի, կապված է մարդու «արևային հանգույցի», իսկ լուսինը՝ ողնաշարի կենտրոնի հետ⁴⁸⁷:

Մի շարք քննադատներ նշել են, որ «Արև» պատմվածքում կրկնվում են այն բառերը, որոնք ուղղված են եղել Լոուրենսին, քանի որ վերջինս նույնպես հիվանդ էր, և 1925 թ. բժիշկը նրան խորհուրդ էր տվել առանձնանալ Նոր Մեքսիկայի ազարակում⁴⁸⁸: Ըստ այդմ՝ ընթերցողը կարող է կենսագրական որոշ նմանություններ գտնել Լոուրենսի և գլխավոր հերոսուհու միջև: Այս պատմվածքում ակներև է նաև Նիցշեի գաղափարների ազդեցությունը Լոուրենսի վրա: Նիցշեն պնդում էր, որ գիտակցությունը վտանգավոր, լուրջ հիվանդության պատճառ է⁴⁸⁹: Լոուրենսը, Զովիետին հեռացնելով հասարակությունից, նրան հնարավորություն է տալիս կազմուրվելու ոչ միայն ֆիզիկապես, այլև հոգեպես: Լոուրենսը դիտավորյալ պատմվածքի երկրորդ տողում նշում է, որ Զովիետը հասարակական գիտակցություն ունեցող մարդ է, որը թերահավատությամբ է վերաբերվում արևի ուժին. «Կինն այնքան էլ չէր հավատում, որ արևն իրեն օգուտ կտա»⁴⁹⁰: Թերահավատությունը կրթության, գիտելիքի արդյունք է: Այդուհանդերձ Զովիետը թույլ է տալիս, որ իրեն, երեխային, դայակին ու մորը տանեն ծովափնյա երկիր՝ Սիցիլիա, որտեղ նա պետք է բուժվեր⁴⁹¹: Կինը մտածում էր, որ դա անհնար է և չէր կարողանում համակերպվել այդ մտքին. «Գիտես չէ՞ Զովիետ, բժիշկը քեզ խորհուրդ է տվել պառկել արևի տակ բոլորովին մերկ: Ինչո՞ւ այդպես չես վարվում, -

⁴⁸⁶ LaChappelle D., D.H. Lawrence, Future Primitive, Denton: University of North Texas Press, 1996, p. 99.

⁴⁸⁷ Lawrence D., Fantasia of the Unconscious and Psychoanalysis and the Unconscious, Phoenix, London: William Heinemann Ltd., 1971, pp. 150-151.

⁴⁸⁸ Meyers J., D.H. Lawrence and the Experience of Italy, Philadelphia: University of Pennsylvania Press, 1982, p. 154.

⁴⁸⁹ Nietzsche F., On the Genealogy of Morality, Cambridge: Cambridge University Press, 1994, p. 61.

⁴⁹⁰ Լոուրենս Դ., Թարգմանություններ, Արև (թրգմ.՝ Լյուդմիլա Հովհաննիսյան) // Աստղիկ 24, Սահակ Պարթև հրատ., 2013-2014, էջ 96:

⁴⁹¹ Նոյն տեղում, էջ 96:

ասաց մայրը: - Երբ ի վիճակի լինեմ, կանեմ: Ուզում ես ինձ սպանե՞լ, ինչ է, - վրդովված վրա բերեց կինը: - Սպանե՞լ, իհարկե ո՞չ: Միայն քո օգտի համար»⁴⁹²: Ակզբնական շրջանում, երբ Զովիետը դեռ նոր էր տեղափոխվել արևոտ երկիր և դեռ չէր զգացել արևի ուժը իր վրա, ներամփոփ էր, ներսում կուտակված բարկությամբ և հուախաբությամբ համակված և չէր կարող որևէ իրական բան զգալ⁴⁹³: Նրան բարկացնում էր այն միտքը, որ պատասխանատու է երեխայի համար. «Երեխան ազդում էր նյարդերի վրա, խախտում մտքի անդորրը: Կինն ահավոր, սոսկայի պատասխանատվություն էր զգում երեխայի համար, նրան թվում էր, թե պատասխանատու է երեխայի ամեն մի շնչի համար: Իսկ դա տառապանք էր պատճառում կնոջը»⁴⁹⁴: Այդ տառապանքը Լոուրենսը նկարագրում է հետևյալ տողերում. «Կինն այնքան երկար էր մտածել երեխայի մասին՝ տառապելով պատասխանատվությունից, ասես նրան ծնունդ տալով՝ պետք է կրեր նրա գոյության ծանրությունը»⁴⁹⁵:

Հենց այս պատասխանատվության մասին է, որ Նիցշեն խոսում է «Ծագումնաբանություն» («Genealogy», 1887) գրքում, որտեղ նա գրում է, որ պատասխանատվության զգացումն առաջանում է գիտակից մարդու մեջ⁴⁹⁶: Գիտակցությունը ճնշել էր Զովիետի բնազդները, իսկ արևի տակ պառկելով սկսում է զգալ արևի ուժը իր կրծքում. «Սակայն շուտով կինը զգաց, որ Արևն իր ներսում է, կրծքի մեջ և շերմ է սիրո նման, կաթի նման, մանկան թաթիկների նման»⁴⁹⁷: Սա առաջին կապն էր, որ հաստատվեց Արևի և Զովիետի միջև: Լոուրենսը փորձում է ազատել Զովիետին մայրական պարտականությունից, որպեսզի նա վայելի իրական ազատությունը: Արևը սկսում է շողալ նրա մարմնի բոլոր մասերի վրա. «Այդ հիասքանչ կապույտը տրոփում էր,

⁴⁹² Նոյն տեղում, էջ 97:

⁴⁹³ Նոյն տեղում, էջ 97:

⁴⁹⁴ Նոյն տեղում, էջ 97:

⁴⁹⁵ Նոյն տեղում, էջ 100:

⁴⁹⁶ Nietzsche F., On the Genealogy of Morality, Cambridge: Cambridge University Press, 1994, p. 39.

⁴⁹⁷ Լոուրենս Դ., Թարգմանություններ, Արև (թրգմ.՝ Լյուլմիլա Հովհաննիսյան) // Աստղիկ 24, Սահակ Պարթև հրատ., 2013-2014, էջ 98:

շնչում և եզրերից սպիտակ բոց ճառագում, գիրկն էր առնում կնոջ կուրծքը, դեմքը, կոկորդը, նրա անզգայացած որովայնը, ծնկները, ազդրերն ու ոտնաթաթերը»⁴⁹⁸:

Այստեղ պետք է ուշադրություն դարձնել, որ Լոուրենսը մարմնի մասերը թվարկելիս չի նշում Զովիետի գլուխը, որտեղ տեղի են ունենում մտավոր գործընթացները: Գլուխը այլևս դադարում է մարմնի կարևորագույն մասը համարվել: Ուշագրավ է այն հանգամանքը, որ Լոուրենսը պատմվածքը սկսում է՝ կենտրոնանալով Զովիետի կրծքային կամ սրտային կենտրոնի վրա, չէ՞ որ դրա միջոցով Զովիետը կապ է հաստատում արևի հետ: Լոուրենսը նշում է արևի շողերի ներթափանցումը նաև Զովիետի որովայն, որտեղ գտնվում է «արևային հանգույցը», ինչը կապված է բնազդների հետ:

«Արև» պատմվածքում հրաշալիորեն արտացոլվել է Լոուրենսի «տիեզերական գիտակցության» մասին տեսությունը, ինչի մասին նա գրում է «Հոգեվերլուծություն և անգիտակցական» աշխատության մեջ: Վերջինս գրվել է «Արև» պատմվածքի առաջին տարբերակի լուս տեսնելուց չորս տարի առաջ: Այստեղ նա մանրամասնորեն գրում է անգիտակցականի և մարդու մարմնի մասերի կամ կենտրոնների կապի մասին. «Գիտակցությունը ոչ մի կապ չունի ճանաչման գործընթացի հետ: Այն նույն է, ինչ և կենդանիների մոտ: Ճանաչման գործընթացը տեղի է ունենում «արևային հանգույցում»՝ որովայնի առջևի մասում գտնվող նյարդային կենտրոնում: Հենց այս կենտրոնի շնորհիվ է, որ մարդը ճանաչում է արտաքին աշխարհը»⁴⁹⁹... «Հենց այս կենտրոնի միջոցով մենք կարող ենք կապ հաստատել տիեզերքի հետ և զգալ դրանից բխող ուժը»⁵⁰⁰: Արևի ազդեցությունը հետզհետեւ սկսում է Զովիետին զրկել գիտակցությունից, որից նա անտարբեր է դառնում իր երեխայի նկատմամբ: Կինը երեխային նույնպես ազատություն է տալիս՝ հանելով նրա շորերը և թողնելով, որ թոշկոտի արևի տակ⁵⁰¹: Քանի որ երեխան նույնպես հասարակական գիտակցությամբ էր օժտված, այդ ազատությունից և իր

⁴⁹⁸ Նույն տեղում, էջ 99:

⁴⁹⁹ Lawrence D., Psychoanalysis and the Unconscious and Fantasia of the Unconscious (Edited by. Bruce Steele), Cambridge: Cambridge University Press, 2004, p. 79.

⁵⁰⁰ Նույն տեղում, էջ 83:

⁵⁰¹ Լոուրենս Դ., Թարգմանություններ, Արև (թրգմ.՝ Լյուիմիլա Հովհաննիսյան) // Աստղիկ 24, Սահակ Պարթև հրատ., 2013-2014, էջ 99:

մերկությունից սկսում է վախենալ. «Ետ նայեց մորը՝ նվվալով ու լացակումաց, վախեցած իր իսկ մերկությունից»⁵⁰²: Սակայն Զովիետը ինքն ապշած էր երեխայի վախի նկատմամբ իր անտարբերությունից: Նա ցանկանում էր, որ երեխան սկսի վարժվել արևի ներկայությանը և չնմանվի հորը. «- Նա չպետք է նմանվի հորը,- ասաց ինքն իրեն: - Չպետք է մեծանա այն որդի նման, որը երբեք Արևի երես չի տեսել: Կնոջ կյանքը մի ողջ ծիսակատարություն էր դարձել»⁵⁰³: Այս պատկերը մենք տեսնում ենք նաև մեզ արդեն հայտնի «Կինը, որը հեռացավ» փոքր պատմվածում: Շուտով արևի ազդեցությունից երեխան սկսում է այլս մոր կարիքը չզգալ. «Մանկիկը նոյնպես ուրիշ էր, յուրահատուկ հանդարտությամբ, արևահարված, ինքնամոռաց մի էակ, որ հանգիստ խաղում էր, և հարկ չկար, որ մայրը հետևեր նրան: Թվում էր, մանկիկն այլս չէր նկատում, թե երբ է մենակ լինում»⁵⁰⁴:

Այսպիսով, ամփոփելով վերոնշյալը, կարող ենք եզրակացնել, որ Դ.Հ. Լոռիենսի տիեզերական աշխարհընկալման գործում մեծ ազդեցություն են ունեցել մի շարք գրողներ, որոնց ստեղծագործությունների հիման վրա Լոռիենսը մշակել է մարդ-տիեզերք կապի վերաբերյալ սեփական, յուրօրինակ գաղափարները, որոնք արտացոլվել են իր փոքր արձակում: Լոռիենսի պատմվածքներում արտացոլված են տարբեր ժողովուրդների առասպելաբանությունները արևի, լուսի մասին, որոնց ազդեցությունը մարդու էության վրա ակնհայտորեն պատկերված է «Արև» և «Մրմունց» պատմվածքներում: Այս պատմվածքներում նա իր հերոսներին օժտում է այնպիսի հատկանիշներով, որոնք հատուկ են «բնական մարդկանց», որոնց համար բնազդներով առաջնորդվելն առաջնային է կյանքում:

⁵⁰² Նույն տեղում, էջ 100:

⁵⁰³ Նույն տեղում, էջ 100:

⁵⁰⁴ Նույն տեղում, էջ 105:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ատենախոսությունում փաստարկները քննարկելուց հետո հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

- «Արյան գիտակցությունը» Դ.Հ. Լոուրենսի տեսությունն է, որի հիման վրա գրողը իր պատմվածքներում փորձում է կերտել «բնական մարդկանց»: Ըստ այս տեսության՝ մարդու գիտակցությունից բացի, գոյություն ունի ուղեղի համակարգից լիովին անկախ մեկ այլ գիտակցություն: Վերոնշյալ տեսության մասին գրողն առաջին անգամ գրում է «Հոգեվերլուծություն և անգիտակցական» և «Անգիտակցականի երևակայություն» էսսեներում, որտեղ ընթերցողի համար հիմնավորում է, որ «արյան գիտակցությամբ» առաջնորդվելը մարդուն ազատություն է պարգևում: Գրողի ստեղծագործություններում իր հերոսների համար «արյան գիտակցությամբ» առաջնորդվել նշանակում է հետևել բնագրներին, ցանկություններին, ինտուիցիային, որոնք ճնշվում են սոցիալական նորմերի, քրիստոնեական արժեքաբանության կողմից:
- Լոուրենսի պատմվածքներում «բնական մարդ» հասկացության ձևավորմանը նպաստել են Դարվինի, Հաբսիի, Շոպենհաուերի, Սպենսերի, Հեգելի գիտական տեսակետները, Էդվարդ Քարփենթերի գաղափարները, մասնավորապես «նոր երկինք և երկիր» ստեղծելու նախագիծը, որոնց ելակետն այն էր, որ մարդը պետք է տրվի իր ցանկություններին և զգացմունքներին: Բացի այդ՝ «արյան գիտակցություն» տեսության համար հիմք են դարձել Ֆրազերի «Ուկե ճյուղ», «Տոտեմիզմ» և «Էքսոգամիա» գրքերը: Ֆրազերի մարդաբանական և խորհրդավոր ուսումնասիրությունները էական ազդեցություն են ունեցել Լոուրենսի տեսության վրա: Նիցշեի «միտք-մարմին» տեսությունը նույնպես նպաստել է Լոուրենսի «արյան գիտակցության» տեսության ձևավորմանը:
- Անգիտակցականի մասին Լոուրենսի «արյան գիտակցության» տեսությունը, որի հիման վրա գրողն իր արձակում կերտել է «բնական մարդկանց», մեծամասամբ հիմնված է Զ. Ֆրոյդի՝ անգիտակցականի մասին գաղափարների վրա: Սակայն Լոուրենսի համար անգիտակցականը գիտակցության սահմաններից դուրս է, ի

- տարբերություն Ֆրոյդի, որն անգիտակցականը չի առանձնացնում գիտակցականից, այլ դրա անբաժանելի մասն է համարում: Լոուրենսը տարանջատում է միտքը, բանականությունը, գիտակցությունը բնազդից, «արյան գիտակցությունից», իսկ Ֆրոյդը միտքը բաժանում է երկու մասի՝ գիտակից մտքի և անգիտակից մտքի: Վերջինս ներառում է այն բոլոր մտավոր գործընթացները, որոնցից մարդն անտեղյակ է: Լոուրենսը բացառում է միտքը: Մտքում կատարվող բոլոր գործընթացները, ըստ նրա, բանականության, գիտակցության արդյունք են, ուստի նա առաջ է քաշում սեփական տեսությունը, որի համաձայն՝ երկու մակարդակ, հարթություն է առաջարկում՝ վերին և ստորին: Վերին հարթության վրա է գտնվում մարդու գիտակցությունը, որը բաղկացած է «գիտակցական մտքից», իսկ ստորին՝ զգայական մակարդակում գտնվում է անգիտակցականը, այսինքն՝ «արյան գիտակցությունը»:
- Զգայական մակարդակում գտնվող բնազդների միջոցով Լոուրենսի պատմվածքների հերոսները դառնում են ավելի ազատ և սկսում են հետևել իրենց բնական ցանկություններին, որոնցից մեկը կենսահարաբերվելու ցանկությունն է: Լոուրենսը մեծ ուշադրություն է դարձրել «արյան գիտակցությամբ» կենսահարաբերմանը: Ինչպես և Ֆրոյդը, նա չի վախեցել բարձրածայնել այդ թեման: Սակայն նրա և Ֆրոյդի՝ կենսահարաբերության վերաբերյալ գաղափարներն ամբողջովին տարբերվում են միմյանցից:
 - Լոուրենսը կենսահարաբերությունը բնութագրում է որպես երկու արյան միաձուլում, ինչը հրաշալիորեն պատկերված է իր արձակում: Այն այնքան բնական է, որքան ֆիզիոլոգիական մյուս պահանջմունքները, իսկ Ֆրոյդը կենսահարաբերումը դիտում է որպես ամոթալի գործընթաց, որի ցանկությունը պետք է ճնշվի գիտակցության կողմից: Ըստ Ֆրոյդի՝ այդ ցանկությունն առաջանում է մտքում, իսկ Լոուրենսի համար մերձենալիս մարդու գիտակցությանը փոխարինելու է գալիս մեկ այլ գիտակցություն՝ «արյան գիտակցությունը», որը ոչ մի կապ չի կարող ունենալ գիտակցության, մտքի, բանականության հետ: Կենսահարաբերվելը Լոուրենսի պատմվածքներում

տղամարդուն և կնոջը միաձուլում է ողջ տիեզերքին, և նրանք դառնում են մեկ ամբողջություն: Այն զգացմունքներն արտահայտելու ամենալավ միջոցն է:

- Նա իր ստեղծագործություններում տարանջատում է այն կենսահարաբերությունը, որը կատարվում է զուտ պահի ազդեցության ներքո, կամ որը պարզապես ամուսնական պարտականություն է, այն ինտիմ հարաբերություններից, որոնց հիմքում ընկած է անսահման սերը, ցանկությունը, կիրքը: Նման կենսահարաբերությունը Լոուրենսն իր պատմվածքներում համեմատում է արևի շողերի հետ, որոնք ջերմացնում են մարդկանց մարմինը և հաճելի զգացումներ պարզեցնում: Իրական կիրք, սեր զգալով՝ Լոուրենսի հերոսները հեռանում են իրենց ընտանիքից («Կույսն ու Գնչուն» պատմվածքում քահանայի կինը հանուն սիրո լքում է իր մանկահասակ երեխաներին), դավաճանում են իրենց կողակցին («Կույսն ու Գնչուն» պատմվածքում, գնչուն, ընտանիք ունենալով, միմիայն մտածում է իվելին տիրանալու մասին) ապօրինի երեխա են ունենում («Կնունք» պատմվածքում Էմմայի երեխան ոչ երկարատև, սակայն ուժգին սիրո պտուղ է):
- Դ.Հ. Լոուրենսը իր պատմվածքներում մեծ ուշադրություն է դարձնում տիեզերական տարրերին՝ մասնավորապես արևին և լուսին, որոնք, իր կարծիքով, լուրջ ներգործություն են ունենում մարդու էության վրա՝ նրա մեջ արթնացնելով բնական ազդակներ, կիրք, սիրելու և սիրված լինելու ցանկություն: Առաջ քաշելով «տիեզերական գիտակցություն» հասկացությունը, որն «արյան գիտակցություն» տեսության մի մասն է, իր արձակում նա ընթերցողին է ներկայացնում մարդ-տիեզերք կապի նոր մոտեցում, ինչը հրաշալիորեն արտացոլվում է «Արև», «Զատիկ» և «Մրմունջ» պատմվածքներում: Տիեզերական մարմինների մասին գիտելիքներ Լոուրենսը ձեռք է բերել Թոմաս Հարդիի՝ կին-տղամարդ հարաբերությունների և տիեզերական մարմինների նկարագրության արդյունքում: Լոուրենսի «տիեզերական գիտակցության» ծևավորմանը նպաստել են նաև արևելքի պատմությունները, մասնավորապես՝ Ֆրոբենիուսի «Աֆրիկայի ձայնը», Բլավատսկայայի «Իզիդի բացահայտում» և «Գաղտնի ուսմունք» գրքերը: Հին ժողովուրդների

առասպելաբանությունը մեծ ազդեցություն է ունեցել Լոուրենսի՝ արևի և լուսի սեռային տարանջատման գործում, իսկ Յունգի արքետիպերը, որոնք առաջանում են անգիտակցականի մակարդակում, նրան հնարավորություն են տվել ավելի շատ գիտելիք ձեռք բերելու սիմվոլների մասին:

- Անհատ/զույգ/հասարակություն մոդելի միջոցով Լոուրենսը փորձում է իր հերոսների մեջ անհատական գիտակցություն ծևավորել, որպեսզի նրանք կարողանան ազատվել հասարակության ճնշող կարծիքից և ազատություն ձեռք բերել: Հասարակական գիտակցությունը բնորոշ է այն մարդկանց, որոնք իրենց կյանքը չեն պատկերացնում առանց հասարակության, նրա կողմից ծևավորված կարծրատիպերի: Այս ամենի մասին իր հայացքները նաև շարադրում է «Անհատական գիտակցություն/հասարակական գիտակցություն» էսեում: Իր մոդելում զույգը գտնվում է անհատի և հասարակության միջև, որպեսզի նախ և առաջ հավասարակշռություն պահպանվի այդ երկուսի միջև, և որպեսզի սեռական բնագդը կարողանա ազատորեն և բնականորեն դրսևորվել: Լոուրենսի անհատ/զույգ/հասարակություն մոդելը պատկերված է «Արև», «Կինը, որը հեռացավ», «Մարդը, որը մահացավ», «Տղամարդը, որը սիրում էր կղզիները», «Արքայադուստր», «Մրմունջ», «Կուսն ու Գնչուն», «Սուրբ Մավր» պատմվածքներում:
- Լոուրենսը հստակորեն տարանջատում է բնագդը բանականությունից: Բանականությունը սահմանափակում է մարդու ազատությունը, իսկ բնական ազդակները նրան տալիս են կյանքն ամբողջովին վայելելու հնարավորություն: Բնագդներով, ինտուիցիայով, կրծով, ցանկությամբ առաջնորդվող մարդկանց կենսակերպը Լոուրենսն առաջին անգամ նկարագրում է «Լեդի Չաթըրլիի սիրեկանը» ամենաքննարկվող վեպում, ինչը հնարավորություն է տալիս գործնականում տեսնելու, հասկանալու, տղամարդու և կնոջ բարդ փոխհարաբերությունները, «բնական մարդու»ցանկությունները: Այս վեպը հիմք է դառնում հետագայում պատկերելու «բնական մարդու» վարքագիծը նաև իր փոքր արձակում՝ «Հիվանդ հանքափորը», «Արև», «Կինը, որը հեռացավ», «Մարդը, որը մահացավ», «Տղամարդը, որը սիրում էր

կղզիները», «Արքայադուստր», «Մրմունջ», «Կուսն ու Գնչուն», «Սուլբ Մավր», «Դալիլան և պարոն Բիրքամշոն» պատմվածքներում, որոնցում «բնական մարդու»կերպարն անընդունելի և անգամ վայրի է թվում ժամանակակից հասարակությանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ա) ԲՆԱԳՐԵՐ

1. Lawrence D., Studies in Classic American Literature (Edited by Ezra Greenspan, etc.), Cambridge: Cambridge University Press, 2003, 148 pages. [42]
2. Lawrence D., Late Essays and Articles (Edited by James T. Boulton), Cambridge: Cambridge University Press, 2004, 464 pages. [228]
3. Lawrence D., Sex, Literature and Censorship, Edited by H. Moore), London: Heinemann, 1956, 269 pages. [120]
4. Lawrence D., Selected Literary Criticism (Edited by Anthony Beal), London: Heinemann, 1955, 435 pages. [125]
5. Lawrence D., Study of Thomas Hardy and Other Essays (Edited by Bruce Steele), Cambridge: Cambridge University Press, 1988, 322 pages. [142]
6. Lawrence D., The Letters, Volume II, June 1913 – October 1916 (Edited by George J. Zytaruk, etc.), Cambridge: Cambridge University Press, 1981, 710 pages. [36]
7. Lawrence D., The Letters, Volume I, September 1901 – May 1913 (Edited by James T. Boulton), Cambridge: Cambridge University Press, 1979, 616 pages. [72]
8. Lawrence D., Dance of the Sprouting Corn, Penguin Books Ltd., 1971, 200 pages. [359]
9. Lawrence D., Foreword to Sons and Lovers (Edited by Helen Baron and Carl Baron), Cambridge: Cambridge University Press, 1992, 675 pages. [97]
10. Lawrence D., Fantasia of the Unconscious (Edited by Bruce Steele), Cambridge: Cambridge University Press, 2004, 300 pages. [103]
11. Lawrence D., Why the Novel Matters, In Study of Tomas Hardy and Other Essays (Edited by Buce Steele), Cambridge: Cambridge University Press, 1985, 293 pages. [101]
12. Lawrence D., A Propos of Lady Chatterley's Lover, Phoenix II, (Edited by Harry T. Moore, etc), New York: Viking, 1968, 623 pages. [124]

13. Lawrence D., Phoenix, The Posthumous Papers of D.H. Lawrence (Edited and with an Introduction by Edward D. McDonald), London: William Heinemann Ltd., 1936, 852 pages. [88]
14. Lawrence D., Lady Chatterley's Lover and a Propos of Lady Chaterley's Lover (Edited by Michael Squires), Cambridge: Cambridge University Press, 1993, 451 pages. [291]
15. Lawrence D., The Complete Poems (Edited by Vivian de Sola Pinto and Warren Roberts), Volume I, London: Penguin Books, 1993, 1079 pages. [234]
16. Lawrence D., Certain Americans and an Englishman // New York Times Magazine, VI, December 24, 1922, 85 pages. [349]
17. Lawrence D., The Woman Who Rode Away (Edited by Dieter Mehl and Christa Jansohn), Cambridge: Cambridge University Press, 2001, 224 pages. [205]
18. Lawrence D., The Real Thing, A Selection from Phoenix // Scribner's Magazine, 1930, 684 pages. [362]
19. Lawrence D., The Woman Who Rode Away and Other Stories, Harmondsworth, England: Penguin Books Ltd., 1970, 256 pages. [106]
20. Lawrence D., Apocalypse and the Writings on Revelation (Edited by Mara Kalnins), FCambridge: Cambridge University Press, 1980, 241 pages. [364]
21. Lawrence D., The Letters (Edited with an Introduction by Aldous Huxley), London: William Heinemann Ltd., 1932, 893 pages. [205]
22. Lawrence D., A Personal Record (Edited by J.D. Chambers), London: Frank Cass & Co. Ltd. Publishers, 1965, 223 pages. [373]
23. Lawrence D., Blessed are the Powerful, Phoenix II, Uncollected Writings (Edited by Roberts W. and Moore H., etc.), New York: The Viking Press, 1968, 640 pages. [405]
24. Lawrence D., The Man Who Died, London: Dodo Press, 2008, 52 pages. [157]
25. Lawrence D., Reflection on the Death of a Porcupine and Other Essays, (Edited by Michael Herbert), Cambridge: Cambridge University Press, 1949, 481 pages. [102]

26. Lawrence D., *The Letters, Volume III, October 1916 – June 1921* (Edited by James T. Boulton, etc.), Cambridge: Cambridge University Press, 1984, 776 pages. [182]
27. Lawrence D., *A Composite Biography, Vol. II* (Edited by Edward Nehls), The University of Wisconsin Press, 1958, 537 pages. [20]
28. Lawrence D., *St. Mawr and Other Stories* (Edited by Brian Finney), Cambridge: Cambridge University Press, 1983, 245 pages. [43]
29. Լոռիքենս Դ., Թարգմանություններ, Լեդի Չաթրլիի սիրեկանը (թրգմ.' Ա. Արսենյան), Երևան, «Լուսակն» հրատ., 2014, 455 էջ: [217]
30. Լոռիքենս Դ., Լեդի Չաթրլիի սիրեկանը վեպը (դասախոսական նյութեր Վ. Արսենյանի կողմից), Երևան, ԵՊՀ հրատ., 2016, 68 էջ: [34]
31. Լորընս Դ., Թարգմանություններ, (թրգմ.' Ս. Մկրտչյան), Գիրք Ա, Երևան, «Հեղինակային հրատարակչություն», 2009, 642 էջ: [161]
32. Լոռիքենս Դ., Թարգմանություններ, (թրգմ.' Ս. Սեֆերյան), / Գրական համալսարան, Խ, Երևան, 2004, 219 էջ: [60]
33. Լորընս Դ., Թարգմանություններ, (թրգմ.' Ս. Սեֆերյան) // Արտգրականություն, VII, Երևան, 2011, 103 էջ: [62]
34. Լոռիքենս Դ., Թարգմանություններ, Արև (թրգմ.' Լ. Հովհաննիսյան) // Աստղիկ 24, Երևան, «Սահակ Պարթև» հրատարակչություն, 2013-2014, 371 էջ: [414]

բ) ԳՐԱՔՆԱՐԱՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

35. Adelman G., *Reclaiming D. H. Lawrence: Contemporary Writers Speak Out*, Lewisburg: Bucknell, 2002, 181 pages. [122]
36. Alcorn J., *The Nature Novel from Hardy to Lawrence*, London: Macmillan, 1977, 139 pages. [25]
37. Aldington R., *Introduction to Last Poems, Vol. II* (Edited by Vivian de Sola Pinto and etc.) London: Heinemann, 1964, 615 pages. [485]
38. Asquith C., *Remember and Be Glad*, London: James Barrie, 1952, 214 pages. [484]

39. Barlow A., *the Great War in British Literature*, Cambridge: Cambridge University Press, 2000, 130 pages. [1]
40. Beal A., D.H. Lawrence: *Selected Literary Criticism*, UK: W Heinemann, 1955, 435 pages. [16]
41. Beede H., *The Art of the Self in D. H. Lawrence*: Ohio: Ohio University Press, 1977, 164 pages. [178]
42. Becket F., *D.H. Lawrence: The Thinker as Poet*, London: MacMillan, 1997, 236 pages. [26]
43. Bell M., *D.H. Lawrence: Language and Being*, Cambridge: Cambridge University Press, 1992, 246 pages. [11]
44. Ben-Ephraim G., *The Moon's Dominion: Narrative Dichotomy and Female Dominance in Lawrence's Earlier Novels*, London: Associated University Presses, 1981, 255 pages. [151]
45. Bergson H., *and British Modernism* (Edited by Mary Ann Gillies), Canada: McGill Queen's University Press, 1959, 224 pages. [14]
46. Bergson H., *Creative Evolution*, New York: Dover Publications. 1998, 432 pages. [54]
47. Black M., *Lawrence and Modernism in the Cambridge Companion to D. H. Lawrence* (Edited by Anne Fernihough), Cambridge: Cambridge University Press, 2001, 316 pages. [10]
48. Black M., *The Literature of Fidelity*, New York: Barnes & Noble, 1975, 216 pages. [299]
49. Brewster E., *D.H. Lawrence: Reminiscences and Correspondence*, London: Martin Secker, 1934, 319 pages. [246]
50. Carter F., *D.H. Lawrence and the Body Mystical*, New York: Haskell House Publishers Ltd., 1972, 63 pages. [29]
51. Clark L., *The Minoan Distance: The Symbolism of Travel in D.H. Lawrence*, Tucson: University of Arizona Press, 1980, 428 pages. [105]

- 52.Cobb E., *The Ecology Imagination in Childhood*, Dallas: Spring Publications, 1998, 160 pages. [93]
- 53.Cook F., *The Jewel Net of Indra, Nature in Asian Traditions of Thought: Essays in Environmental Philosophy* (Edited by J. Baird Callicott, etc.), New York: State University of New York, 1989, 359 pages. [198]
- 54.Collinson D., *Fifty Major Philosophers: A Reference Guide*, London: Croom Helm, 1987, 176 pages. [6]
- 55.Costin, J., *D.H. Lawrence's Quest for Blood-Consciousness: From Cornwall to America*, UK: University of Exeter, 2011, 172 pages. [435]
56. Cowan J., *D.H. Lawrence and the Trembling Balance*, University Park, PA: Pennsylvania State University Press, 1990, 320 pages. [84]
- 57.Daleski H., *The Forked Flame: A Study of D.H. Lawrence*, London: Faber, 1965, 320 pages. [146]
58. Davies J., *D.H. Lawrence on Hardy and Painting, Study of Thomas Hardy and Introduction to These Paintings*, London: Heinemann Ltd., 1973, 168 pages. [55]
59. Dawson T., *The Cambridge Companion to Jung, Freud, Jung, and Psychoanalysis* (Edited by Polly Young-Eisendrath), Cambridge: Cambridge University Press, 1997, 333 pages. [433]
60. Delavenay E., *D.H. Lawrence and Edward Carpenter: A Study in Edwardian Transition*, New York: Taplinger Publishing Co., 1971, 228 pages. [28]
61. Ebbatson, R., *Lawrence and the Nature Tradition: A Theme in English Fiction, 1859-1914*, New York: Harvester Press, 1980, 271 pages. [402]
- 62.Edwards M., *But does the New Woman Really Want the New Man? Critical Issues in Contemporary Culture* (Edited by Christopher Gould and Ele Byington), Allyn & Bacon, 1996, 119 pages. [150]
- 63.Ellis H., *Sex and Marriage: Eros in Contemporary Life* (Edited by Gawsorth, John), USA: Greenwood Press Publishers, 1977, 219 pages. [284]

- 64.Freud S., Three Essays on the Theory of Sexuality, Volume VII, London: Hogarth Press, 1953, 134 pages. [79]
- 65.Freud, S., General Psychological Theory, New York: Macmillan Publishing Company, 1965, 151 pages. [80]
66. Fromm E., The Art of Loving, New York: Harper and Brothers, 1956, 133 pages. [118]
- 67.Graham P., D.H. Lawrence and Allan Sillitoe, from Critique to Critical Despair, Canada: Simon Fraser University Press, 1977, 215 pages. [21]
68. Gregory H., Pilgrim of the Apocalypse, A Critical Study, New York: Grove Press, 1957, 118 pages. [247]
69. Hager A, Encyclopedia of British Writers, 1800 to the Present, Second Edition, New York: Infobase Publishing, 2009, 817 pages. [22]
- 70.Harris L., The Island as a Mental Image of Withdrawal, Used in a Literary Work, D. H. Lawrence's The Man Who Loved Islands, In Imagery II (Edited by Russell D., Marks D. and Richardson J.) Dunedin, New Zealand: Human Performance Associates, 1986, 697 pages. [174]
71. Heilman R., The State of Letters, Escape and Escapism, Variaties of Literary Experience, the Sewanee Review, Vol. 83, Baltimore: John Hopkins University Press, 1975, 745 pages. [2]
- 72.Herzinger K., D.H. Lawrence in his Time, 1908-1915, Lewisburg: Bucknell University Press, London and Toronto: Associated University Presses, 1982, 237 pages. [137]
- 73.Hough G., The Dark Sun: A Study of D. H. Lawrence. London: Gerald Duckworth and Co. Ltd., 1970, 265 pages. [397]
- 74.Hochman B., Another Ego: The Changing View of Self and Society in the Work of D.H. Lawrence, Columbia: University of South Carolina Press, 1970, 278 pages. [339]
- 75.James W., The Principles of Psychology, Volume I and II, Cambridge: Harvard University Press, 1984, 1376 pages. [68]

- 76.Karl F., Lawrence's the Man Who Loved Islands: The Cruso Who Failed (Edited by H. T. Moore), Carbondale: Southern Illinois, 1958, 320 pages [177]
- 77.Kaza S., American Buddhist Response to the Land: Ecological Practice at Two West Coast Retreat Centers in Buddhism and Ecology: The Interconnectedness of Dharma and Deeds (Edited by Mary Evelyn Tucker and Duncan Ryuken Williams), Cambridge, Mass.: Harvard Divinity School Centre for the Study of World Religions, 1997, 248 pages. [386]
- 78.Kessler J., D.H. Lawrence's Primitivism / Texas Studies in Literature and Language V, Austin: University of Texas Press, 1964, 488 pages. [432]
- 79.Kinkead-Weekes M., D. H. Lawrence: Triumph to Exile 1912-1922, Cambridge: Cambridge University Press, 1996, 989 pages. [115]
80. Knoper R., Selected Works: Literature for Social Change: from Realism to Modernism, Amherst: University of Massachusetts, 2008, 424 pages. [5]
- 81.Knox J., Archetype, Attachment, Analysis, Jungian Psychology and the Emergent Mind, New York: Brunner-Routledge, 2003, 248 pages. [427]
- 82.LaChappelle D., D.H. Lawrence, Future Primitive, Texas: University of North Texas Press, 1996, 223 pages. [38]
- 83.Langbaum R., Lawrence and Hardy (Edited by Jeffrey Meyers, etc.), London: The Athlone Press, 1985, 157 pages. [334]
- 84.Laozi, Dao De Jing (Translated as "Nature and Intelligence" by Archie J. Bahm), New York: The Continuum Publishing Company, 1988, 129 pages. [381]
- 85.Leavis F., D.H. Lawrence-Novelist, Harmondsworth, Middlesex: Penguin Books, 1968, 393 pages. [399]
86. Marcus S., The Other Victorians: A Study of Sexuality and Pornography in Mid-Nineteenth-Century England, New York: Basic Books, 1964, 292 pages. [221]

- 87.Marcus, P., A Healed Whole Man: Frazer, Lawrence and Blood Consciousness, In Sir James Frazer and the Literary Imagination (Edited by Fraser, R.), London: MacMillan, 1990, 318 pages. [85]
88. Mead G., Mind, Self, and Society: From the Standpoint of a Social behaviorist (Edited by C.W. Morris), Chicago: University of Chicago Press, 1934, 536 pages. [314]
89. Meyers J., D.H. Lawrence and the Experience of Italy, Philadelphia: University of Pennsylvania Press, 1982, 224 pages. [488]
90. McKenzie M., and Prime, Richard and George, Lisa and Dunning, Mythologies of the World: The Illustrated Guide to Mythological Beliefs and Customs, New York: Checkmark Books, 2001, 160 pages. [406]
91. MacLeod Sh., Lawrence's Men and Women, London: Heinemann, 1985, 231 pages. [281]
92. Morley C., Modern American Literature, Edinburgh: Edinburgh University Press, 2012, 352 pages. [4]
93. Murry J., Son of Woman: The Story of D.H. Lawrence, London: Jonathan Cape, 1954, 396 pages. [73]
94. Myers, W., Human Personality and its Survival of Bodily Death, New York: Dover Publication, 2005, 416 pages. [204]
95. Nahal, Ch., D.H. Lawrence: An Eastern View. New Delhi: Atma Ram & Sons, 1971, 304 pages. [30]
96. Nietzsche F., A Nietzsche Reader (Selected and translated by R. J. Hollingdale), Middlesex: Penguin books Ltd., 1978, 228 pages. [89]
97. Nietzsche F., On the Genealogy of Morality, Cambridge: Cambridge University Press, 1994, 187 pages. [489]
98. Nietzsche F., The Antichrist: An Attempted Criticism of Christianity (Trans. by M. Ludovici), London: Wordsworth, 2007, 112 pages. [159]

99. Nirven A., D.H. Lawrence, *The Novels*. Cambridge: Cambridge University Press 1978, 200 pages. [220]
100. Panichas G., *Adventure in Consciousness: The Meaning of D.H. Lawrence's Religious Quest*, Vol. 3, The Hague: Mouton & Co., 1964, 225. [345]
101. Paterson J., *Lawrence's Vital Source: Nature and Character in Thomas Hardy, Nature and the Victorian Imagination* (Edited by Knoepfelmacher U. and Tennyson G.), Oakland: University of California Press, 1977, 519 pages. [31]
102. Pearce Ch., *Magic Child*, New York: E. P. Dutton, 1977, 272 pages. [94]
103. Pinion F., *A D.H. Lawrence Companion: Life, Thought and Work*, Edition I, London: Macmillan, 1979, 316 pages. [341]
104. Potter S., *D.H. Lawrence: A First Study*, California: University of California, 1930, 159 pages. [392]
105. Pound E., *The Letters* (Edited by D.D. Paige), New York: Harcourt, Brace and World Publisher, 1950, 358 pages. [13]
106. Reiff R., *Brave New World Writers and their Works* (Edited by Aldous Huxley), Marshall Cavendish: New York Press, 2009, 176 pages. [18]
107. Russell B., *Marriage and Morals*, London: Routledge. 2009, 208 pages. [342]
108. Sagar, K., *The Art of D.H. Lawrence*, Cambridge: Cambridge University Press, 1976, 276 pages. [458]
109. Salman S., *The Creative Psyche: Jung's Major Contributions* (Edited by T. Dawson, etc.), Cambridge: Cambridge University Press, 1997, 78 pages. [434]
110. Sanders S., *D.H. Lawrence, The World of the Major Novels*, New York: Viking Press, 1973, 224 pages. [32]
111. Schapiro, B., *Literature and the Relational Self*, New York: New York University Press, 1995, 220 pages. [147]
112. Schneider D., *The Consciousness of D.H. Lawrence, An Intellectual Biography, Lawrence's Early Beliefs and Novels*, University Press of Kansas, 1986, 207 pages. [67]

113. Schorer M., *Modern British Fiction*. Oxford: Oxford University Press, 1961, 438 pages. [113]
114. Schulze, C., *The Battle of the Sexes in D.H. Lawrence's Prose, Poetry and Paintings*, Heidelberg: Universitätsverlag C, 2002, 307 pages. [152]
115. Seelow, D., *Radical Modernism and Sexuality: Freud/Reich/D.H. Lawrence and Beyond*. New York: Palgrave, 2005, 163 pages. [12]
116. Shepard P., *Man in the Landscape: A Historic View of the Esthetics of Nature*, Athens: University of Georgia Press, 2002, 334 pages. [140]
117. Simpson, H., *D.H. Lawrence and Feminism*, London: Croom Helm, 1982, 174 pages. [148]
118. Simmel G., *On Individuality and Social Forms* (Edited by D. N. Levine), Chicago: University of Chicago Press, 1971, 412 pages. [319]
119. Simmel G., *The Philosophy of Money* (Trans. by T. Bottomore and D. Frisby), London: Routledge and Kegan Paul 1978, 535 pages. [320]
120. Slemen S., *Teaching and End of Empire*, College Literature, London: Routledge, 1992-1993, 161 pages. [133]
121. Spilka M., *D.H. Lawrence: A Collection of Critical Essays* (A Spectrum book. Twentieth Century Views), USA: Prentice-Hall, 1964, 182 pages. [215]
122. Spilka M., *The Love Ethic of D.H. Lawrence*. Bloomington: Indiana University Press, 1955, 244 pages. [46]
123. Squires M. and Keith C., *The Challenge of D.H Lawrence*. Madison: University of Wisconsin Press, 1990, 219 pages. [292]
124. Stade G., Karbiener K., etc., *Encyclopedia of British Writers, 19th Century and the 20th Centuries*, New York: Infobase Publishing, 2003, 844 pages. [24]
125. Stoll J., *The Novels of D.H Lawrence: A Search for Integration*, Columbia: University of Missouri Press, 1971, 263 pages. [189]

126. Taylor Ch., *Sources of the Self: The Making of Modern Identity*, Cambridge: Cambridge University Press, 1986, 624 pages. [363]
127. Tenenbaum, E., *The Problematic Self: Approaches to Identity in Stendhal, D.H. Lawrence, and Malraux*, Massachusetts: Harvard University Press, 1977, 192 pages. [439]
128. Tindall W., *D.H. Lawrence and Susan his Cow*, New York: Cooper Square Publishers Inc., 1972, 242 pages. [104]
129. Travis, L., *D.H. Lawrence: The Blood-Conscious Artist*, American Imago, 25(2), USA: Johns Hopkins University Press, 1968, 190 pages. [53]
130. Vivas E., *D.H. Lawrence, The Failure and the Triumph of Art*, Evanston: Northwestern University Press, 1960, 180 pages. [296]
131. Watts A., *Introduction, Nature, Man and Woman*, New York: Vintage Book Edition, 1991, 224 pages. [232]
132. Watts A., *The Way of Zen*, New York, Pantheon Books: A Division of Random House, Inc., 1957, 257 pages. [199]
133. Widmer, K., *The Art of Perversity: D.H. Lawrence's Shorter Fictions*, Seattle: University of Washington Press, 1962, 271 pages. [153]
134. William J., *The Principles of Psychology*, New York: Dover Publications, 1890, 716 pages. [68]
135. Williams R., *The Social Thinking of D.H. Lawrence*, New York: Columbia University Press, 1958, 362 pages. [23]
136. Williams L., *Sex in the Head: Visions of Femininity and Film in D.H. Lawrence*, Detroit, Michigan: Wayne State University Press, 1993, 178 pages. [223]
137. Willis B., *The Tao of Art, The Inner Meaning of Chinese Art and Philosophy*, London: Hutchinson Ltd., 1987, 175 pages. [86]
138. Wohl R., *The Generation of 1914*, Cambridge: Harvard University Press, 1980, 324 pages. [3]

139. Woolf V., Mr Bennet and Ms Brown, Collected Essays (Edited by Leonard Woolf), Vol. 1, London: Hogarth, 1966, 288 pages. [8]
140. Woolf, V., Modern Fiction (Edited by McNeille Andrew) , Vol. 4, London: Hogart: 1984, 165 pages. [7]
141. Worthen J., D.H. Lawrence: The Early Years 1885-1912: The Cambridge Biography of D.H. Lawrence Vol. 1, Cambridge: Cambridge University Press, 1992, 692 pages. [17]
142. Wuchina, D., Destinies of Splendor: Sexual Attraction in D.H. Lawrence. New York: Peter Lang, 2009, 231 pages. [15]